| | 17. Հայաստանի ներդրումային հեղինակության բարելավում | Հայաստանի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների 2016 թվականի ծրագրի իրագործում՝<br>- Հայաստանի Հանրապետության ներդրումային քաղաքականության հայեցակարգի և հայեցա- | ՀՀ կառավարության 2014 թ. մայիսի 19-ի N 511-Ա որոշման հավելվածի 2.2.1-ին կետ<br>- 2.2.2-րդ կետի 2.2.2.4-րդ ենթակետ |

| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|
| | | կարգից բխող միջոցառումների ժամանակացույցի իրականացում<br>- Միջազգային ներդրումային ֆորումի անցկաց-ման համար անհրաժեշտ գործընթացների ապահովում<br>- ազգային ինովացիոն համակարգի բաղադրիչների զարգացում | |
| ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքա-ցիական ավիացիայի գլխավոր վարչություն | 18. Հայաստանի Հանրապետության օդային տարածքում և օդանավակայաններում քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ԻԿԱՕ) բնութագրերի վրա հիմնված նավիգացիայի (PBN) կոնցեպցիայի ներդրում | - բնութագրերի վրա հիմնված՝ «Շիրակ» աերոդրոմում նավիգացիայի (PBN) վայրէջքային սխեմաների հաշվարկում<br>- «Զվարթնոց» աերոդրոմի սխեմաների արդիականացում և համապատասխանեցում ԻԿԱՕ-ի բնութագրերի վրա հիմնված նավիգացիայի (PBN) կոնցեպցիային<br>- ՀՀ օդային տարածքում մայրուղիների արդիականացում և համապատասխանեցում ԻԿԱՕ-ի շրջանային նավիգացիայի (ԱՐՆԱՎ/RNAV) պահանջներին<br>- անվտանգության մակարդակի գնահատում և անվտանգության փաթեթի մշակում<br>- շահագրգիռ գերատեսչությունների հետ նախագծի համաձայնեցում և հաստատում<br>- «Զվարթնոց» և «Շիրակ» աերոդրոմներում նավիգացիայի (PBN) վայրէջքային սխեմաների հրապարակում | ՀՀ կառավարության 2014 թ. մայիսի 19-ի N 511-Ա որոշման հավելվածի 2.2.8.3-րդ ենթակետ |

| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|
| ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն | 19. Հայաստանի Հանրապետության տարածքում սեյսմիկ վտանգի գնահատման հուսալիության բարձրացում | սեյսմիկ պաշտպանության ծառայության դիտա-ցանցի արդիականացում՝ Գառնիի երկրաֆիզի-կական դիտարանում դեֆորմոգրաֆի ամբողջա-կան վերականգնում, մասնավորապես՝ հյուսիս-հարավ բաղադրիչին համալրող արևելք-արևմուտք բաղադրիչի վերականգնում, փորձարկում և գործարկում | ՀՀ կառավարության 2012 թ. մարտի 15-ի N 374-Ա որոշման 3-րդ կետի 3-րդ ենթակետ |
| | 20. Համայնքների խոշորացման պիլոտային ծրագրերի շարունակականության ապահովում | - խոշորացման գործընթացի կիրարկումն ապահովող անհրաժեշտ իրավական ակտերի մշակում<br>- այցելություններ պիլոտային ծրագրում ներառ-ված համայնքներ՝ տեղական ինքնակառավար-ման մարմինների և բնակչության հետ խոշորաց-ման գործընթացի վերաբերյալ իրազեկող ու պար-զաբանող բնույթի հանդիպումներ անցկացնելու նպատակով<br>- պիլոտային ծրագրում ներառված համայնքնե-րում միասնական ցանցային կառավարման էլեկտրոնային համակարգերի ստեղծման աշխատանքների իրականացում | ՀՀ կառավարության 2011 թ. նոյեմբերի 10-ի նիստի N 44 արձանագրային որոշում<br><br>ՀՀ կառավարության 2014 թ. մայիսի 19-ի N 511-Ա որոշման հավելվածի 2.5.2-րդ կետ |
| ՀՀ բնապահպանության նախարարություն | 21. Սևանա լճում և նրա ջրահավաք ավազա-նում ձկան ու խեցգետնի պաշարների հաշվառման աշխատանքների իրականացում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին նախատեսված 7624.3 հազ. դրամով Սևանա լճում և նրա ջրահավաք ավազանում՝<br>- սիգի արդյունագործական պաշարների, զիրացող և ձվադրող վտառի, գծային ու քաշային աճի որոշում և գիտականորեն հիմնավորված որսաչափի գնահատում<br>- կարասի արդյունագործական պաշարների, բեղունության, ձվադրավայրերի, ձվադրման ժամկետների, գծային ու քաշային աճի որոշում և | ՀՀ կառավարության 2014 թ. մայիսի 19-ի N 511-Ա որոշման հավելվածի 2.4.4-րդ կետ |

| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|
| | | գիտականորեն հիմնավորված որսաչափի գնահատում<br>- էնդեմիկ ձկնատեսակների (գեղարքուն, ամառային իշխան, կողակ) վտառի, ձվադրավայրերի վիճակի գնահատում, ձվադրմանը գնացող ժամկետների, քանակի, կենսաբանական վիճակի, ձվադրմանը խոչընդոտող պայմանների որոշում<br>- խեցգետնի սննդառության, արդյունագործական պաշարների, սեզոնային բաշխվածության՝ ըստ խորության և տարածքի, գծային և քաշային աճի՝ ըստ տարիքաչափային խմբերի, բեղունության որոշում և գիտականորեն հիմնավորված որսաչափի գնահատում | |
| | 22. Էկոտուրիզմի տեղեկատվական կենտրոնի ստեղծում | Երևանում գտնվող «Հայաստանի բնության պետական թանգարան» ՊՈԱԿ-ի տարածքում միջազգային ֆինանսավորմամբ Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքներում Էկոտուրիզմի տեղեկատվական կենտրոնի ստեղծում | ՀՀ կառավարության 2014 թ. մայիսի 19-ի N 511-Ա որոշման հավելվածի 2.4.4-րդ կետ |
| ՀՀ քաղաքաշինության նախարարություն | 23. Քաղաքաշինության ոլորտում ներդրումային միջավայրի գրավչության խթանում, կառուցապատման ընթացակարգերի պարզեցում | Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման ներդրումային միջավայրի շարունակական բարելավում՝ հնարավորինս պարզեցված պայմաններով (ըստ օբյեկտների ռիսկայնության աստիճանի) թույլտվությունների տրամադրման ընթացակարգերի կատարելագործման և դրանցում կոռուպցիոն ռիսկերի հետևողական նվազեցման միջոցով: Այդ թվում՝<br>- ավարտված շինարարության ընդունող հանձնաժողովներում ՀՀ քաղաքաշինական պետա- | ՀՀ կառավարության 2014 թ. մայիսի 19-ի N 511-Ա որոշման հավելվածի 2.2.6-րդ կետ |

| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|
| | | կան տեսչության պարտադիր ներգրավվածության ապահովումը նախատեսել՝ ելնելով շինարարության օբյեկտների ռիսկայնության աստիճանի դասակարգումից<br>- պարզեցնել շինարարության իրականացման և տեխնիկական հսկողության լիցենզիաների տրամադրման կարգերը՝ հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված նորմերը<br>- հստակեցնել քաղաքաշինական համալիր փորձաքննության իրականացման կարգը՝ հիմք ընդունելով «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքով սահմանված նորմերը<br>- ճշգրտել կառուցապատման էլեկտրոնային թույլտվությունների տրամադրման կարգը՝ ՀԲ-ի կողմից տրամադրված դրամաշնորհի (ԻԶՀ No. TF012782) միջոցներով՝ Քաղաքաշինական թույլտվությունների էլեկտրոնային մշակման և մեկ պատուհանից տրամադրման՝ ներկայումս ավարտված ծրագրին լիարժեք համապատասխանությունն ապահովելու նպատակով | |
| | 24. Հայաստանի Հանրապետության համայնքներում քաղաքաշինական ծրագրային (տարածական պլանավորման) փաստաթղթերի համակարգի համալրում՝ դրանց մշակման և հաստատման գործառույթների օպտիմալացման ու պարզեցման նոր լծակների ամրագրման միջոցով | Քաղաքաշինական ծրագրային (տարածական պլանավորման) փաստաթղթերի բացակայության հետևանքով բազմաթիվ համայնքներում իրականացվող անկանոն կառուցապատման կանոնակարգում, թույլտվությունների տրամադրման վերաբերյալ սուբյեկտիվ որոշումների կայացման հնարավորությունների և, հետևաբար նաև, կոռուպցիոն դրսևորումների բացառում: Այդ թվում՝ հիմք ընդունելով «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքով սահմանված նորմերը՝<br>- կանոնակարգել մինչև 15000 բնակիչ ունեցող համայնքների խմբերի (միկրոտարածաշրջա- | ՀՀ կառավարության 2014 թ. մայիսի 19-ի N 511-Ա որոշման հավելվածի 2.2.6-րդ կետ |

| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|
| | | նային միավորների) համար գլխավոր հատակագծերի և պարզեցված գոտիավորման նախագծերի (հողօգտագործման ու կառուցապատման կանոնների) մշակման ու հաստատման գործառույթները՝ մեկ ընդհանուր՝ համակցված միկրոտարածաշրջանային տարածական պլանավորման փաստաթղթում դրանք ամփոփելու միջոցով<br>- գործող իրավական ակտերը համապատասխանեցնել համակցված միկրոտարածաշրջանային տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման և հաստատման նոր կարգավորումներին<br>- իրականացնել համակցված միկրոտարածաշրջանային տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման և համակարգման գործառույթներ | |
| | 25. Կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացում | Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման աշխատանքների համակարգում, այդ թվում՝<br>- տարածքների կառուցապատման հայեցակարգերի և ներդրումային փաթեթների մշակում (ներառյալ՝ ծավալատարածական և գործառութային համալիր լուծումները)<br>- ներդրողների հետ բանակցային գործընթացի համակարգում | ՀՀ կառավարության 2014 թ. մայիսի 19-ի N 511-Ա որոշման հավելվածի 2.2.6-րդ կետ |
| | 26. Շինարարական աշխատանքների արժեքի գնագոյացման նոր մեթոդաբանության մշակում | - գնագոյացման ոլորտում նոր մեթոդաբանության վերաբերյալ առաջարկությունների մշակում<br>- ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 23-ի N 879-Ն որոշման 3-րդ կետով հաստատված կարգի մեջ համապատասխան փոփոխությունների կատարում | «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $10^{1}$ հոդված<br><br>ՀՀ կառավարության 2003 թ. փետրվարի 20-ի N 156-Ն որոշման 1-ին կետ |

| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|
| | | - շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման նոր կարգի մշակում<br>- շինարարությունում գնման գործընթացի պարզեցման նպատակով առաջարկների մշակում | |
| ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե | 27. Հայաստանի Հանրապետությունում գույքահարկի և հողի հարկի 2017-2019 թվականների հարկման բազաների ձևավորում | «Գույքահարկի մասին» և «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքների պահանջների համաձայն՝ նոր եռամյա ժամանակահատվածի՝ 2017-2019 թթ. հարկման բազաների ձևավորման համար 2016 թ. հուլիսի 1-ի դրությամբ հաշվառված տվյալների հիման վրա իրականացված՝ ՀՀ տարածքում գտնվող, հարկվող օբյեկտ համարվող շենքերի և շինությունների, հողամասերի կադաստրային արժեքների նոր գնահատությունները ՀՀ կառավարության 2003 թ. մայիսի 22-ի N 641 որոշմամբ հաստատված կարգի 2.3-րդ կետի «ա» ենթակետի պահանջների համաձայն հարկվող օբյեկտ համարվող, տվյալ տարվա հուլիսի 1-ի դրությամբ հաշվառված ու գնահատված շենքերի, շինությունների ամփոփ ցուցակները մինչև գնահատման (վերագնահատման) տարվա սեպտեմբերի 1-ը կտեղադրվեն կադաստրի պետական կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքում: Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թ. ապրիլի 19-ի N 465 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ կետի 1-ին ենթակետի պահանջների համաձայն՝ հողի հարկ վճարողներին սեփականության կամ անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով պատկանող հողամասերի հաշվառման ու գնահատման տվյալների ամփոփ ցուցակները մինչև գնահատման (վերագնահատման) տարվա օգոստոսի 1-ը կտեղադրվեն կադաստրի պետական կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքում | «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ և «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածներ |

| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|
| | 28. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների (շահառուների) համար Երևան քաղաքում բազային երկրատեղեկատվական համակարգի ներդրում | Հիմք ընդունելով «Գեոդեզիայի և քարտեզագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ մասի «թ» և 5-րդ հոդվածի «գ» ենթակետերի, ՀՀ կառավարության 2005 թ. հունվարի 20-ի «Հայաստանի Հանրապետության երկրատեղեկատվական համակարգի ստեղծման և վարման հայեցակարգը հաստատելու մասին» N 197-Ն որոշման պահանջները՝ Երևան քաղաքում ստեղծել բազային երկրատեղեկատվական համակարգ:<br>Սույն ծրագրի նպատակը Երևան քաղաքում ժամանակակից պահանջները բավարարող բազային երկրատեղեկատվական միասնական համակարգի ներդրումն է: Երևան քաղաքում ներդրվող բազային երկրատեղեկատվական համակարգը հիմք է հանդիսանալու գերատեսչական տարբեր բնագավառների, այդ թվում՝ քաղաքաշինական, բնապահպանական, արդյունաբերական, անշարժ գույքի կադաստրի, տարածքների պլանավորման, հողերի օգտագործման և գոտիավորման սխեմաների կազմման, գույքահարկի և գնահատման բազաների ճշգրտման, վարչական և տնտեսական գործունեության, անտառտնտեսության, արտակարգ իրավիճակների ժամանակ օպտիմալ և օպերատիվ որոշումների կայացման, համայնքի և առանձին տարածքների զարգացման, օպտիմալ պլանավորման և այլ բնագավառների խնդիրների լուծման համար: Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է կատարել հետևյալ միջոցառումները՝<br>**Առաջին տարում՝**<br>- բազային երկրատեղեկատվական համակարգի | ՀՀ կառավարության 2005 թ. հունվարի 20-ի N 197-Ն որոշում |

| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|
| | | ստեղծման ու վարման համար ծրագրային փաթեթի ձեռքբերում<br>- բազային երկրատեղեկատվական համակարգի համար տվյալների նույնականացում, համակցում՝ ըստ համայնքների, տեղափոխում նոր ծրագրային միջավայր<br>- բազային և թեմատիկ երկրատեղեկատվական համակարգերի ստեղծման ու վարման համար համապատասխան սերվերների և տվյալների պահոցի ձեռքբերում<br>- բազային երկրատեղեկատվական համակարգի թվային պայմանական նշանների մշակում և էլեկտրոնային դասակարգչի ստեղծում<br>- բազային և թեմատիկ երկրատեղեկատվական համակարգի ստեղծման և ներդրման համար խորհրդատվական ծառայություններ<br>- երկրատեղեկատվական համակարգի ստեղծ-ման և վարման համար կադրերի ուսուցում<br>- Երևան քաղաքի բազային երկրատեղեկատվա-կան համակարգի քարտեզագրական հիմքերի տեղափոխումը WGS-84 կոորդինատային համակարգի UTM պրոյեկցիա<br>- բազային երկրատեղեկատվական քարտեզների և անշարժ գույքի տեղեկատվական համակարգի տվյալների փոխանակման կարգի մշակում, ծրագրային ապահովածության ստեղծում<br>- երկրատեղեկատվական համակարգի ստեղծ-ման և ներդրման համար անհրաժեշտ նորմատիվ իրավական ակտերի ստեղծում:<br>Աշխատանքների գումարը առաջին տարում կկազմի 554 211 000 դրամ:<br>**Երկրորդ տարում՝**<br>- բազային երկրատեղեկատվական համակարգի | |

| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|
| | | համար տվյալների համար ծրագրավորման աշխատանքներ<br>- բազային երկրատեղեկատվական համակարգի թվային պայմանական նշանների մշակում և էլեկտրոնային դասակարգչի ստեղծում<br>- բազային և թեմատիկ երկրատեղեկատվական համակարգի ստեղծման և ներդրման համար խորհրդատվական ծառայություններ,<br>- երկրատեղեկատվական համակարգի ստեղծման և վարման համար կադրերի ուսուցում<br>- Երևան քաղաքի բազային երկրատեղեկատվական համակարգի քարտեզագրական հիմքերի տեղափոխումը WGS-84 կոորդինատային համակարգի UTM պրոյեկցիա<br>- բազային երկրատեղեկատվական քարտեզների և անշարժ գույքի տեղեկատվական համակարգի տվյալների փոխանակման կարգի մշակում, ծրագրային ապահովածության ստեղծում<br>- երկրատեղեկատվական համակարգի ստեղծման և ներդրման համար անհրաժեշտ նորմատիվ իրավական ակտերի ստեղծում<br>- բազային երկրատեղեկատվական համակարգի տեղեկատվական բանկի ստեղծման, պահպանման, թարմացման, տեղեկատվության փոխանակման և տրամադրման կարգի մշակում:<br>Աշխատանքների գումարը երկրորդ տարում կկազմի 135 200 000 դրամ:<br>Պետական մակարդակով երկրատեղեկատվական համակարգերի վարումը և ներդրումը թույլ կտա բացառել ոչ բավարար հիմնավորում ունեցող որոշումների ընդունումը և անցնել պետական կառավարման որակապես նոր մակարդակի: Պետական կառավարման և տեղական ինքնա- | |

| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|
| | | կառավարման բնագավառում ժամանակակից երկրատեղեկատվական համակարգի օգտագործումը կնպաստի՝<br>- Երևան քաղաքի տնտեսական ծրագրերի արդյունավետ մշակմանը<br>- կառավարման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման և մշակման ստանդարտացման աստիճանի բարձրացմանը<br>- տնտեսության տարբեր ոլորտներում օգտագործվող տարածական տեղեկատվության անհարկի կրկնօրինակման և տվյալների հակասականության բացառմանը<br>- տարածական տվյալների ստեղծման գործընթացի հեշտացմանը, օպերատիվության բարձրացմանը և ծախսերի նվազեցմանը<br>- տարածական տվյալների մատչելիության ապահովմանը<br>- հանրության համար տեղեկատվության հասանելիության ապահովմանը<br>- տվյալների ամբողջականության, հավաստիության, ճշտության ստուգման ներքին մեխանիզմների մշակմանը<br>- տարածական տվյալների արդիականության և անընդհատության ապահովմանը:<br>Երևան քաղաքի երկրատեղեկատվական համակարգի ներդրման, վարման ծախսերը կազմում են 689 411 000 դրամ:<br>Համապատասխան ֆինանսավորման դեպքում աշխատանքները կիրականացվեն երկու տարում: | |
| ՀՀ կառավարության առընթեր միջուկային | 29. Հայկական ԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի | շահագործող կազմակերպության կողմից ներկայացված՝ Հայկական ԱԷԿ-ի N 2 էներգա- | ՀՀ կառավարության 2014 թ. մայիսի 19-ի N 511-Ա որոշման |

| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|
| անվտանգության կարգավորման պետական կոմիտե | երկարաձգման առաջին փուլի լիցենզավորում | բլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարաձգման աշխատանքների առաջին փուլի լիցենզավորում՝ անվտանգությունը և հուսալիությունը հիմնավորող փաստաթղթերի քննարկում, վերլուծություն, շահագործման ժամկետի երկարացման տեխնիկական հնարավորության գնահատում, քննարկման արդյունքների հիման վրա հավանություն տալը կամ լրացուցիչ աշխատանքների իրականացման պահանջ ներկայացնելը | հավելվածի 2.2.8.1-ին ենթակետ |
| ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե | 30. Ջրամատակարարման տևողության աստիճանական ավելացում, ջրի կորուստների կրճատում՝ շուրջ 7-10 տոկոսով, Արմավիր և Մեծամոր քաղաքների համար կեղտաջրերի մաքրման կայանների կառուցման նախապատրաստական աշխատանքների իրականացում, ջրամատակարարման ու ջրահեռացման ոլորտներում շուրջ 300 կմ ջրագծերի և կոյուղագծերի վերանորոգման ու կառուցման աշխատանքների իրականացում, Արփա-Սևան թունելի առանձին վթարված հատվածների վերականգնում | վարկային, դրամաշնորհային, ինչպես նաև ջրամատակարար կազմակերպությունների սեփական միջոցների հաշվին ծրագրերի իրականացում | ՀՀ կառավարության 2014 թ. մայիսի 19-ի N 511-Ա որոշման հավելվածի 2.2.8.2-րդ ենթակետ<br><br>ՀՀ կառավարության 2015 թ. հուլիսի 8-ի N 755-Ն որոշման 14.1.1-ին գլուխ |
| | 31. Ջրամբարաշինության (Վեդի, Կապս, Եղվարդ, Մաստարա) և ենթակառուցվածքների արդիականացման ծրագրերի նախապատրաստում | միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ նոր ներդրումային ծրագրերի համար բանակցությունների վարում | «ՀՀ ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդված<br><br>ՀՀ կառավարության 2014 թ. մայիսի 19-ի N 511-Ա որոշման հավելվածի 2.2.8.2-րդ ենթակետ |
| | 32. «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական | ջրամատակարար ընկերությունների կողմից սպասարկվող գույքի՝ վարձակալությամբ փոխանցման մրցույթի նախապատրաստման, անցկացման և | ՀՀ ջրային օրենսգրքի 49-րդ հոդված |

| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|
| | ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի օգտագործման իրավունքը վարձակալությամբ փոխանցելու գործընթացի իրականացում՝ վարձակալի ընտրություն | արդյունքների ամփոփման ապահովում | ՀՀ կառավարության 2014 թ. մայիսի 19-ի N 511-Ա որոշման հավելվածի 2.2.8.2-րդ ենթակետ<br><br>ՀՀ կառավարության 2014 թ. օգոստոսի 14-ի N 883-Ն որոշման հավելվածի 6-րդ և 8-րդ ու N 888-Ն որոշման 1-ին կետեր |
| ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն | 33. Երիտասարդական հասարակական կազմակերպությունների կարողությունների զարգացմանն աջակցություն, մասնակցային գործընթացների խթանում | - ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության երիտասարդական պետական քաղաքականության շրջանակներում գործող առցանց դրամաշնորհային համակարգի արդիականացում<br>- ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության երիտասարդական պետական քաղաքականության շրջանակներում գործող առցանց դրամաշնորհային համակարգում գրանցված հասարակական կազմակերպությունների անդամների վերապատրաստում<br>- ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության երիտասարդական պետական քաղաքականության շրջանակներում գործող առցանց դրամաշնորհային համակարգի փորձագետների վերապատրաստում<br>- «Լավագույն երիտասարդական հասարական կազմակերպություն» մրցանակաբաշխության կանոնակարգի հաստատում և մրցանակաբաշխության իրականացում | ՀՀ կառավարության 2014 թ. մայիսի 19-ի N 511-Ա որոշման հավելվածի 2.4.6.2-րդ ենթակետ |
| | 34. Հայաստանի Հանրապետությունում մանկապատանեկան սպորտի զարգացման խթանում | - անկապատանեկան սպորտի զարգացման հայեցակարգի մշակում<br>- մանկապատանեկան սպորտի ոլորտը կարգավորող իրավական և մեթոդական դաշտի | ՀՀ կառավարության 2014 թ. մայիսի 19-ի N 511-Ա որոշման հավելվածի 2.4.6.3-րդ ենթակետ |

| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|
| | | կատարելագործում<br>- մարզական հերթափոխի պատրաստման համար անհրաժեշտ պայմանների բարելավում՝ նյութատեխնիկական բազայի ամրապնդում և բարելավում, կադրերի վերապատրաստում | |
| | 35. «Հայկական ազգային կոխ» ըմբշամարտ» մարզաձևի զարգացման խթանում | - «Հայկական ազգային կոխ» ըմբշամարտ» մարզաձևի զարգացման հայեցակարգի մշակում «Հայկական կոխ ըմբշամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հետ համատեղ<br>- «Հայկական ազգային կոխ» ըմբշամարտ» մարզաձևին վերաբերվող նորմատիվ իրավական ակտերի մշակում և հաստատում<br>- «Հայկական ազգային կոխ» ըմբշամարտ» մարզաձևի կամավոր հիմունքներով ստեղծվող միավորումներին, սիրողական և պրոֆեսիոնալ մարզական ակումբներին, ասոցիացիաներին և այլ կազմակերպություններին, մանուկների և երիտասարդների շրջանում «Հայկական ազգային կոխ» ըմբշամարտ» մարզաձևի հանդեպ առաջնահերթության սերմանում<br>- հանրապետության ըմբշամարտի (ազատ և հունա-հռոմեական), սամբոյի և ձյուդոյի մարզիչների վերապատրաստում, «Հայկական ազգային կոխ» ըմբշամարտ» մարզաձևի մասնագետների պատրաստում, որակավորման բարձրացում<br>- «Հայկական ազգային կոխ» ըմբշամարտ» մարզաձևի մրցումների կանոնների մշակում «Հայկական կոխ ըմբշամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հետ համատեղ և հրատարակում, գիտամեթոդական ու հանրամատչելի գրականության հրատարակում և տարածում<br>- «Հայկական ազգային կոխ» ըմբշամարտ» մար- | «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդված |

| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|
| | | զանի քարոզչություն՝ մամուլի, զանգվածային լրատվամիջոցներով և նախարարության կայքէջի միջոցով<br>- «Հայկական ազգային կոխ» ըմբշամարտ» մարզաձևի պարապմունքների համար մարզադահլիճներով և բաց հրապարակներով ապահովում<br>- «Հայկական ազգային կոխ» ըմբշամարտ» մարզաձևի մեծահասակների և պատանիների ՀՀ առաջնությունների, զավաթի խաղարկությունների և այլ պաշտոնական մրցումների կազմակերպում և անցկացում<br>- սփյուռքի հայկական համայնքներում և Արցախում «Հայկական ազգային կոխ» ըմբշամարտ» մարզաձևի զարգացման ծրագրի տարածում<br>- «Հայկական ազգային կոխ» ըմբշամարտ» մարզաձևի ընդգրկում Համահայկական խաղերի ծրագրում | |
| ՀՀ սփյուռքի նախարարություն | 36. Հայրենիք վերադարձող սփյուռքահայերի, այդ թվում՝ սիրիահայերի, հասարակությանն ինտեգրման գործընթացի և կառուցակարգերի կատարելագործում | Հայաստան տեղափոխված սփյուռքահայերի խնդիրների լուծմանն օժանդակություն՝<br>- մասնակցություն սփյուռքահայերի ինտեգրման, կրթական, մշակութային խնդիրների լուծմանը նպաստող ծրագրերի մշակմանը և իրականացմանը (արևելահայերենի ու ռուսաց լեզվի դասընթացների կազմակերպում՝ առնվազն 30 անձի համար)<br>- աջակցություն սիրիահայ ուսանողների կրթական խնդիրների լուծմանը (առնվազն 130 ուսանողի համար)<br>- սիրիահայերի հիմնախնդիրներով զբաղվող կառույցների առնվազն 3 միջոցառմանն օժանդակություն<br>- աջակցություն Հայաստանում գործող սփյուռքահայերի հասարակական միավորումներին (3 կառույցի) | ՀՀ կառավարության 2009 թ. օգոստոսի 20-ի նիստի N 34 արձանագրության 29-րդ կետով հավանության արժանացած արձանագրային որոշման հավելվածի 56-րդ կետի «ժ» ենթակետ |

| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|
| | | - ՀՀ օրենսդրությանը ծանոթացում՝ դասընթաց-ներ կազմակերպելու միջոցով<br>- սփյուռքահայերի կողմից արտադրված ապ-րանքների ցուցահանդեսների կազմակերպում՝ Հայաստանի Հանրապետության 25-ամյակին նվիրված | |
| | 37. Այլ պետություններում հայ երիտասար-դության շրջանում հայոց լեզվի իմացության մակարդակի բարձրացմանը նպաստում | - «Արի տուն» ծրագրի շրջանակում մայրենի լեզվի և հայրենագիտության դասընթացների ներառում<br>- «Սփյուռք» ամառային դպրոց» ծրագրով առնվազն 115 սփյուռքահայ երիտասարդի համար հայոց լեզվի (արևմտահայերենի և արևելահայե-րենի) արագացված դասընթացների կազմակեր-պում<br>- հայոց լեզվի հեռուստադպրոցի մինչև 40 հաղորդման կազմակերպում<br>- աջակցություն սփյուռքահայ երիտասարդությանը՝ մայրենիի ուսուցման համացանցային հեռավար ծրագրերը համայնքներում տարածելու միջոցով<br>- հայկական վիրտուալ համալսարանի խմբերի անհատ ունկնդիրների ավելացում՝ մինչև 50 անձ | ՀՀ կառավարության 2009 թ. օգոստոսի 20-ի նիստի N 34 ար-ձանագրության 29-րդ կետով հավանության արժանացած արձանագրային որոշման հավել-վածի 56-րդ կետի «ե» ենթակետ |

| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|
| | 38. Համայնքներում կրթական և մշակութային կյանքի զարգացմանն ու աշխուժացմանը նպաստում, այդ թվում՝<br>- Հայաստանի Հանրապետության անկախության 25-ամյակին նվիրված ծրագրերի իրականացում<br><br>- «Սփյուռք» ամառային դպրոց» ծրագրի ընդլայնում<br><br>- ՀՀ տնտեսության մեջ ներդրումային ծրագրերի մասին սփյուռքի տեղեկատվության մակարդակի բարձրացում | Համայնքների կրթական խնդիրներին աջակցություն՝<br>- «Սփյուռք» ամառային դպրոց» ծրագրի շրջանակներում՝<br>ա. հայոց լեզվի և հայագիտական առարկաների առնվազն 60 ուսուցչի վերապատրաստում,<br>բ. սփյուռքում գործող երգի-պարի խմբերի ղեկավարների վերապատրաստում<br>- հայոց լեզվի և հայագիտական առարկաների առնվազն 50 ուսուցչի վերապատրաստում սփյուռքում (Հյուսիսային Ամերիկայում)<br>- «Մայրենի լեզվի ուսուցման խնդիրները Ռուսաստանի Դաշնության հայ համայնքներում» հայոց լեզվի ուսուցիչների տարածաշրջանային գիտագործնական եռօրյա համաժողովի կազմակերպում (ՌԴ հարավային դաշնային օկրուգ)<br>- Ռուսաստանի Դաշնության և ԱՊՀ երկրների հայ համայնքներում սփյուռքի մեկօրյա դպրոցներում հայոց լեզվի դասավանդման նոր մեթոդների փորձարկում<br>- սփյուռքի տարածաշրջանների առանձնահատկություններին համապատասխան, ինչպես նաև լեզուների հիմքով՝ դասագրքերի, ուսումնաօժանդակ և մեթոդական նյութերի, արագացված ուսուցման ձեռնարկների, զրուցարանների ձեռքբերում ու տրամադրում հայկական կրթօջախներին<br>- տարբեր դպրոցների (մեկօրյա, ամենօրյա՝ արևմտահայերեն, արևելահայերեն) հայոց լեզվի ծրագրերի վերանայում և օրինակելի ծրագրերի առաջարկում՝ կոնկրետ համայնքներում<br>- արևելահայերեն-արևմտահայերեն փոխվերծանող ծրագրի զարգացում և սփյուռքահայ այցելուների շրջանակների ընդլայնում (առնվազն 5000 բառ)<br>- «Քույր դպրոցներ» ծրագրով համագործակցու- | ՀՀ կառավարության 2009 թ. օգոստոսի 20-ի նիստի N 34 արձանագրության 29-րդ կետով հավանության արժանացած արձանագրային որոշման 56-րդ կետի «դ» և «է» ենթակետեր |

| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|
| | | թյան հաստատում առնվազն 20 հայաստանյան և սփյուռքյան դպրոցների միջև<br>- Հայաստանի գործարար ու ներդրումային միջավայրի բարեփոխումների և նախատեսվող ներդրումային ծրագրերի մասին սփյուռքի գործարարներին և առևտրաարդյունաբերական պալատներին ու համահայկական մասնագիտացված ընկերակցություններին տեղեկատվության տրամադրում<br>Նպաստում համայնքների մշակութային կյանքի զարգացմանը՝ Հայաստանի անկախության 25 – ամյակին նվիրված՝<br>- «Հայաստանի Հանրապետության անկախության 25-ամյակին նվիրված «Իմ Հայաստան» համահայկական փառատոնի կազմակերպում՝ սփյուռքի գեղարվեստական խմբերի և անհատ կատարողների մասնակցությամբ (ազգային երգ, պար, երգչախմբային արվեստ, սամունք, դուդուկ)՝ առնվազն 600 մասնակից<br>- սփյուռքի մշակութային գործիչներին նվիրված միջոցառումների, մեծարման երեկոների կազմակերպում՝ Հայաստանի անկախության առթիվ<br>- «Մեր մեծերը» ծրագրի իրականացում | |
| ՀՀ առողջապահության նախարարություն | 39. Առողջապահական համակարգի արդիականացում | մարզային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների կառուցում, հիմնանորոգում և վերազինում վարկային ծրագրերի շրջանակներում՝<br>- 5 գյուղական համայնքների ամբուլատորիաների կառուցման ավարտ (ՀՀ Արագածոտնի մարզի Բյուրականի, ՀՀ Լոռու մարզի Ուռուտի, ՀՀ Վայոց ձորի մարզի Շատինի, ՀՀ Արարատի մարզի Մխչյանի և Լանջազատի համայնքներ)<br>- ՀՀ Արարատի մարզի Արտաշատի բժշկական | ՀՀ կառավարության 2014 թ. մայիսի 19-ի N 511-Ա որոշման հավելվածի 2.4.2-րդ կետ |

| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|
| | | կենտրոնի հիվանդանոցային մասնաշենքի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ավարտ, շինարարական աշխատանքների մեկնարկ<br>- ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանի բժշկական կենտրոնի հիվանդանոցային մասնաշենքի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ավարտ, շինարարական աշխատանքների մեկնարկ<br>- մարզային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններին բժշկական սարքավորումներով ապահովում և կահույքով հագեցում<br>- արդիականացված մարզային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունները բժշկական անհրաժեշտ կադրերով ապահովելուն ուղղված առաջարկությունների ներկայացում ՀՀ կառավարություն | |

| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|
| | 40. Հայաստանի Հանրապետությունում արյունաբանական և ուռուցքաբանական բժշկական օգնության ու սպասարկման որակի բարելավման նպատակով ենթակառուցվածքների ստեղծում | - ՀՀ ԱՆ «Պրոֆ. Ռ. Հ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ-ի հիմնանորոգման և կցակառույցի կառուցման շինարարական աշխատանքների ավարտ և հագեցում բժշկական կահույքով ու սարքավորումներով<br>- ոսկրածուծի փոխպատվաստման նոր բաժանմունքի ստեղծման աշխատանքների ավարտ<br>- ՀՀ առողջապահության նախարարության «Պրոֆ. Ռ. Հ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության բժշկական անձնակազմի, այդ թվում՝ նաև ոսկրածուծի փոխպատվաստման ստեղծվող բաժանմունքի առնվազն վեց բժշկի վերապատրաստում արտասահմանում | ՀՀ կառավարության 2014 թ. մայիսի 19-ի N 511-Ա որոշման հավելվածի 2.4.2-րդ կետ |
| | 41. Հայաստանի Հանրապետության բնակչության ռիսկային խմբերում ոչ վարակիչ հիվանդությունների վաղ հայտնաբերում և վերահսկում | ոչ վարակիչ հիվանդությունների անվճար սկրինինգների իրականացում ՀՀ բնակչության ռիսկային խմբերի համար՝ ըստ հետևյալ հիվանդությունների՝<br>- հիպերտոնիա<br>- շաքարային դիաբետ<br>- արգանդի պարանոցի քաղցկեղ | ՀՀ կառավարության 2014 թ. մայիսի 19-ի N 511-Ա որոշման հավելվածի 2.4.2-րդ կետ |
| | 42. Առանձին ոլորտներում Հայաստանի Հանրապետության բնակչության առողջապահական կարիքների գնահատում | - գնահատում իրականացնելու համար անհրաժեշտ մեթոդաբանության մշակում<br>- մշակված մեթոդաբանությանը համապատասխան՝ շաքարային դիաբետի և ուղեղի արյան շրջանառության սուր խանգարումների բուժման մասով հանրապետության բնակչության (տնային տնտեսություններ) առողջապահական կարիքների գնահատման իրականացում | |
| | 43. Առողջապահության տարբեր ոլորտների | - առողջապահության ոլորտում ընդունված ու իրականացված չորս ռազմավարությունների և | |

| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|
| | բարելավման նպատակով ընդունված և իրականացված ռազմավարությունների ու ծրագրերի արդյունավետության գնահատում | ծրագրերի արդյունավետության գնահատման մեթոդաբանության մշակում<br>- մշակված մեթոդաբանության հիման վրա ռազմավարությունների և ծրագրերի արդյունավետության ու առողջապահության համակարգի վրա ազդեցության գնահատում<br>- գնահատման արդյունքների հիման վրա նույն ոլորտներում նոր ռազմավարությունների և ծրագրերի ընդունման կամ շարունակման անհրաժեշտության հիմնավորում | |
| ՀՀ կրթության և գիտության նախարարություն | 44. Նախադպրոցական կրթության մատչելիության բարձրացում | շուրջ 30 նախակրթարանի հիմնում և նախադպրոցական կրթությունում ընդգրկվածության մեծացում՝ շուրջ 600 երեխա | ՀՀ կառավարության 2014 թ. մայիսի 19-ի N 511-Ա որոշման հավելվածի 2.4.3-րդ կետ |
| | 45. Հանրակրթության որակի և արդյունավետության բարձրացում | - 12 ավագ դպրոցի հիմնանորոգման մեկնարկ<br>- կրթության զերազանցության ազգային ծրագրի ներդնում<br>- «Ազգային երգ ու պար» առարկայի ներդնում ՀՀ Շիրակի մարզի՝ 163, ՀՀ Արմավիրի մարզի՝ 118, Երևանի 100 ուսումնական հաստատությունների 5-րդ դասարաններում<br>- տեղեկատվական տեխնոլոգիաներ, հեռահաղորդակցության հիմունքներ և միկրոէլեկտրոնիկա առարկաների ներդրում 10 ավագ դպրոցում<br>- ազգային փոքրամասնությունների դպրոցների համար 4 անուն դասագրքի վերահրատարակում (եզդիերեն)<br>- հանրակրթական դպրոցների եզդիերենի՝ շուրջ 20 և քրդերենի՝ շուրջ 16 ուսուցչի վերապատրաստում | ՀՀ կառավարության 2014 թ. մայիսի 19-ի N 511-Ա որոշման հավելվածի 2.4.3-րդ կետ |
| | 46. Հայաստանի Հանրապետության նախնական (արհեստագործական) և միջին | Մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) պլանավորման ու կատարողականի | ՀՀ կառավարության 2012 թ. հուլիսի 4-ի նիստի N 27 արձա- |

| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|
| | մասնագիտական կրթության համակարգի զարգացում և եվրոպական մասնագիտական կրթական տարածքին ինտեգրում | կառավարման կարողությունների հզորացման նպատակով ՄԿՈՒ ուսումնական հաստատու-թյունների շուրջ 145 տնօրենների, փոխտնօրեն-ների, վարչական աշխատողների վերապատ-րաստման իրականացում | նագրության 16-րդ կետով հավանության արժանացած արձանագրային որոշման հավելվածի 1-ին և 2-րդ կետեր «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդված |
| | 47. Բարձրագույն և հետբուհական մասնա-գիտական կրթության արդյունավետության բարձրացում՝ Բոլոնիայի գործընթացի սկզբունքների իրագործմամբ | - առնվազն երկու բարձրագույն ուսումնական հաստատության անցում կազմակերպաիրավա-կան նոր ձևի<br>- առնվազն երկու բարձրագույն ուսումնական հաստատության ինստիտուցիոնալ կամ ծրագրային հավատարմագրում<br>- 6 բարձրագույն ուսումնական հաստատությու-նում նորարարական ծրագրերի իրականացում | ՀՀ կառավարության 2014 թ. մարտի 27-ի N 442-Ն որոշման հավելվածի 460-րդ կետի 4-րդ և 6-րդ ենթակետեր<br><br>2014 թ. մայիսի 23-ի ՀՀ ու Վերա-կառուցման և զարգացման միջազգային բանկի միջև ստորագրված «Կրթության բարելավման ծրագիր» վարկային համաձայնագիր |
| ՀՀ մշակույթի նախարարություն | 48. Ժամանակակից հայ կերպարվեստի հանրահռչակում | ժամանակակից կերպարվեստի հանրահռչակմանն ուղղված գործընթացների խթանում՝<br>- ժամանակակից հայ կերպարվեստի շտեմարանի ստեղծում<br>- Առաջին երևանյան միջազգային բիենալեի կազմակերպում<br>- նպատակային ցուցահանդեսների կազմակերպմանն աջակցում (2)<br>- միջազգային նախագծերին մասնակցության ապահովում (5) | ՀՀ կառավարության 2014 թ. մայիսի 19-ի N 511-Ա որոշման հավելվածի 2.4.5-րդ կետ |
| | 49. Հայ մշակույթի զարգացմանն ուղղված ժամանակակից գործընթացների խթանում | **թանգարանների արդիականացում և նոր մշտական ցուցադրությունների կազմակերպում՝**<br>- անվանի արվեստագետների վերանորոգված | ՀՀ կառավարության 2014 թ. մայիսի 19-ի N 511-Ա որոշման հավելվածի 2.4.5-րդ կետ |

| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|
| | | տուն-թանգարանների վերաբացում՝ նոր մշտական ցուցադրություններով (4)<br>- միջազգային ցուցահանդեսի կազմակերպում (4)<br>- մշակութային արժեքների շտեմարանի ներբեռնում<br>**երաժշտարվեստի ոլորտում՝**<br>- առաջին հայկական երաժշտական հանրա-գիտարանի հրատարակչական աշխատանքների իրականացում<br>- «Կոմիտաս» միջազգային գիտական համա-ժողովի և փառատոնի կազմակերպում<br>**կինոարվեստի ոլորտում՝**<br>- «Հայկական կինո» տեղեկատվական շտեմարանի ստեղծում<br>- համատեղ կինոարտադրության խթանում (4)<br>- ֆիլմերի թվայնացում (7 ֆիլմ)<br>**հրատարակչական ծրագրերի խթանում՝**<br>- ալբոմային գրականության հրատարակում (7 գիրք-ալբոմ)<br>**պատմության և մշակույթի անշարժ հուշար-ձանների կադաստրի կազմման և վարման ծրագրի մշակում՝**<br>- պետական միասնական կադաստրում գրանցման նպատակով համապատասխան տվյալների ձեռքբերում, պահանջվող ձևաչափով (թվային) տվյալների մշակում, նորերի կազմում, ներդրում և տրամադրման ապահովում | |
| | 50. Հայաստանի Հանրապետության անկախության 25-րդ տարեդարձի շրջանակներում ստեղծագործական ծրագրերի իրականացմանն աջակցում | **նպատակային ծրագրերի իրականացում տարբեր ոլորտներում՝**<br>- երաժշտական ծրագրերի իրականացում (3)<br>- թատերական նախագծերի իրականացում (1)<br>- պարային բեմադրությունների իրականացում (1)<br>- կերպարվեստի ցուցահանդեսների | ՀՀ Նախագահի 2010 թ. հոկտեմբերի 2-ի N ՆԿ-160-Ա կարգադրություն |

| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|
| | | կազմակերպում (1)<br>- գրքերի տպագրություն (2)<br>**մասնակցություն միջազգային ծրագրերին՝**<br>- «Անկախ կենսապատկեր» խորագիրը կրող ցուցահանդեսով մասնակցության ապահովում 15-րդ միջազգային ճարտարապետական բիենալեին | |
| | 51. Ավանդական մշակույթի արդիականացում | տարազի ավանդական և ժամանակակից դրսևորումների ցուցադրություն ու կատալոգի հրատարակում | ՀՀ կառավարության 2014 թ. մայիսի 19-ի N 511-Ա որոշման հավելվածի 2.4.5-րդ կետ |
| ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | 52. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանն ուղղված բարեփո-խումների իրականացում | հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալա-կան ներառումն ապահովող միջոցառումներ՝<br>- հաշմանդամության բնագավառի օրենսդրու-թյան կատարելագործում<br>- Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիա-լական ներառման 2016-2021 թթ. համալիր ծրագրի մշակում<br>- առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման հիման վրա հաշմանդամության սահմանման նոր չափորոշիչների մշակում, փորձնական կիրառում և առաջարկությունների ներկայացում | ՀՀ կառավարության 2014 թ. մայիսի 19-ի N 511-Ա որոշման հավելվածի 2.4.1-ին կետ |
| | 53. Ինտեգրված սոցիալական ծառայություն-ների տրամադրման զիտելիքահեն գործընթացի ներդրում և համալիր սոցիալական ծառայու-թյուններ տրամադրող նոր տարածքային կենտրոնների ստեղծում | սոցիալական աշխատողների համընդհանուր վերապատրաստում և համալիր սոցիալական ծառայություններ տրամադրող նոր տարածքային կենտրոնների գործարկման պայմանների ստեղծում՝<br>- սոցիալական համագործակցության ինստիտու-ցիոնալիզացիայի նպատակով սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների, ՏԻՄ-երի և սոցիալական ծառայու- | ՀՀ կառավարության 2014 թ. մայիսի 19-ի N 511-Ա որոշման հավելվածի 2.4.1-ին կետ |

| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|
| | | թյուններ տրամադրող կազմակերպությունների միջև համագործակցության մեխանիզմներին վերաբերող հանդիպումների, կլոր սեղանների, սեմինարների, ուսուցման դասընթացների կազմակերպում<br>- «Սոցիալական աշխատանք» մասնագիտացման կամ որակավորման բարձրացման դասընթացների ծրագրերի մշակում, կազմակերպում<br>- սոցիալական աշխատողների ռեգիստրի ձևավորում<br>- համալիր սոցիալական ծառայություններ տրամադրող և 20 տարածքային կենտրոնների գործարկման պայմանների ապահովում | |
| | 54. Երեխաների խնամքի տրամադրման այլընտրանքային սոցիալական ծառայությունների զարգացում | երեխաների խնամքի տրամադրման այլընտրանքային սոցիալական ծառայությունների համակարգի զարգացում՝ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների (մանկատուն և երեխաների խնամքի գիշերօթիկ հաստատություն) վերակազմակերպման միջոցով՝<br>- ՀՀ-ում երեխաների խնամքի տրամադրման այլընտրանքային սոցիալական ծառայությունների քարտեզագրում և ըստ մարզերի ծառայությունների կարիքների գնահատում<br>- ըստ գնահատված կարիքների՝ երեխաների խնամքի տրամադրման այլընտրանքային սոցիալական ծառայությունների ստեղծման պլան-ժամանակացույցի մշակում և հաստատում<br>- բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների (մանկատուն և երեխաների խնամքի գիշերօթիկ հաստատություն) վերակազմակերպմանն ուղղված իրավական ակտերի մշակում<br>- վերակազմակերպվող հաստատությունների | ՀՀ կառավարության 2014 թ. մայիսի 19-ի N 511-Ա որոշման հավելվածի 2.4.1-ին կետ |

| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|
| | | աշխատողների վերապատրաստման, վերաորակավորման միջոցառումների իրականացում | |
| ՀՀ արդարադատության նախարարություն | 55. Հայաստանի Հանրապետության քրեակատարողական հիմնարկներում բժշկական ծառայությունների արդիականացում | - քրեակատարողական հիմնարկներում բժշկական ծառայությունների մատուցմանը վերաբերող օրենսդրության արդիականացում<br>- քրեակատարողական ծառայողների համար մարդու իրավունքների և բժշկական էթիկայի վերաբերյալ կրթական ծրագրերի մշակում<br>- 800 քրեակատարողական ծառայողի համար մարդու իրավունքների և բժշկական էթիկայի վերաբերյալ դասընթացների իրականացում<br>- 10 քրեակատարողական հիմնարկի բուժմասերի հագեցում առողջության առաջնային պահպանման ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ սարքավորումներով և պարագաներով | ՀՀ կառավարության 2014 թ. փետրվարի 27-ի N 303-Ն որոշման հավելվածի 3-րդ կետ |

| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | 56. Հայաստանի Հանրապետության զինված ուժերում «Հրամանատրում՝ առաջադրանքի միջոցով» համակարգի ներդրում | - պատերազմի (ռազմական և մարտական գործողությունների) վարման առավել օպտիմալ ձևերի ու եղանակների մշակում<br>- ՀՀ ԶՈւ կառավարման համակարգում կառավարման մարմինների լիազորությունների և գործառույթների շրջանակների որոշում<br>- համակարգի ներդրման շրջանակներում ՀՀ ԶՈՒ անձնակազմի վերապատրաստման նպատակով գործընկեր երկրների ռազմաուսումնական կենտրոններում անցկացվող դասընթացներին (անհատական պատրաստություն) և զորավարժություններին (հավաքական պատրաստություն) մասնակցություն<br>- ՀՀ ԶՈւ կառավարման մարմինների, կառավարման կետերի կառուցվածքի և տեխնիկական միջոցներով հագեցվածության վերանայում, համապատասխան կարգավորիչ և ղեկավար փաստաթղթերում փոփոխությունների ու լրացումների կատարում (ըստ անհրաժեշտության՝ նոր փաստաթղթերի մշակում) | |
| ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն | 57. Համայնքային ոստիկանության գործունեության ընդլայնում | - համայնքային ոստիկանության 4 հենակետի ստեղծում, անհրաժեշտ գույքի և տեխնիկական միջոցների ձեռքբերմանն ուղղված աշխատանքների իրականացում<br>- համայնքային ոստիկանության ծառայողների վերապատրաստում | ՀՀ կառավարության 2015 թ. հուլիսի 30-ի N 871-Ն որոշման N 2 հավելվածի 1-ին կետ |
| | 58. ՀՀ Տավուշի մարզում տրանսպորտային միջոցների գրանցման և հաշվառման ստորաբաժանման ենթակառուցվածքների ստեղծում, վարորդական վկայական հատկացնելու գործընթացի արդյունավետությունն ապահովող | - ՀՀ Տավուշի մարզում հաշվառման-քննական ստորաբաժանման վարչական շենքի և քննական ավտոդրոմի կառուցմանն ուղղված աշխատանքների իրականացում (վարչական շենքի ու քննական ավտոդրոմի կառուցում և կահավորում | ՀՀ կառավարության 2015 թ. հուլիսի 30-ի N 871-Ն որոշման N 2 հավելվածի 13-րդ կետ |

| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|
| | կազմակերպական միջոցառումների իրականացում | համապատասխան գույքով և տեխնիկական միջոցներով)<br>- ՀՀ Տավուշի մարզի հաշվառման-քննական ստորաբաժանման կողմից տրանսպորտային միջոցների գրանցման և հաշվառման՝ «հոսքագծի» եղանակով իրականացմանն ուղղված աշխատանքների իրականացում | |
| | 59. Հանցագործությունների նախականխման, կանխման և բացահայտման աշխատանքների արդյունավետության բարձրացում տեղեկատվական շտեմարանների օգտագործմամբ | - ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանությունում օպերատիվ գործունեություն իրականացնող ստորաբաժանումների վարույթում առկա հաշվառման գործերի թվայնացմանն ուղղված աշխատանքների իրականացում<br>- օպերատիվ-հետախուզական տեղեկատվական շտեմարանի ստեղծում<br>- դիմապատկերի միջոցով անձի նույնականացման հնարավորությունն ապահովող տեխնիկական միջոցների և համակարգչային ծրագրերի ձեռքբերում<br>- ոստիկանությունում օպերատիվ-տեղեկատվական ստորաբաժանման ստեղծում | ՀՀ կառավարության 2015 թ. հուլիսի 30-ի N 871-Ն որոշման N 2 հավելվածի 10-րդ կետ |
| ՀՀ արտաքին գործերի նախարարություն | 60. Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ուրվագծված արտաքին քաղաքական ուղենիշների, տրված հանձնարարականների և Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի կատարման աշխատանքներ | *ՀՀ արտաքին գործերի նախարարությունը շարունակելու է Հայաստանի Հանրապետության արտաքին անվտանգության հետագա ամրապնդման, զարգացման համար անհրաժեշտ արտաքին բարենպաստ պայմանների ու երաշխիքների ապահովման, համաշխարհային և տարածաշրջանային գործընթացներում առավել ընդգրկման, բարեկամ և գործընկեր երկրների հետ երկկողմ ու բազմակողմ հարաբերությունների առավել զարգացման ու ամրապնդման, միջազգային կազմակերպություններում գործուն մասնակցության ապահովման արտաքին քաղաքական ուղեգիծը՝ առաջնահերթ քայլերը նպատակաուղղելով՝* | ՀՀ Նախագահի նախընտրական ծրագրի 2-րդ (արտաքին հարաբերություններ և անվտանգություն) և 3-րդ (մրցակցային, նորամուծական տնտեսություն) գլուխներ<br><br>ՀՀ կառավարության 2014 թ. մայիսի 19-ի N 511-Ա որոշման հավելվածի 2.1.2-րդ կետ |

| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|
| | | - արցախյան հիմնախնդրի խաղաղ կարգավորմանը<br>- արտաքին անվտանգության ռազմաքաղաքական բաղադրիչի ամրապնդմանը<br>- Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչ-մանն ու դատապարտմանը<br>- Ռուսաստանի հետ դաշնակցային փոխգործակ-ցության և ռազմավարական հարաբերությունների առավել խորացմանն ու ընդլայնմանը<br>- Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ սերտ գործընկերության ամրապնդմանը<br>- եվրոպական երկրների հետ երկկողմ համագոր-ծակցության հետագա զարգացմանն ու ամրապնդմանը<br>- անմիջական հարևանների՝ Վրաստանի և Իրանի հետ հարաբերությունների հետագա զարգացմանը<br>- հայ-թուրքական հարաբերությունների՝ առանց նախապայմանների կարգավորմանը<br>- փոխշահավետ համագործակցության ծավալման ուղղությամբ իրական քայլեր ձեռնարկող ԱՊՀ մասնակից պետությունների հետ հարաբերություն-ների խորացմանը<br>- Չինաստանի, Հնդկաստանի, Ճապոնիայի և Ասիայի այլ երկրների, Աֆրիկայի պետությունների հետ համագործակցության զարգացմանը<br>- Մերձավոր Արևելքի ավանդական գործընկեր երկրների հետ փոխգործակցության զարգացմանը<br>- Կանադայի և Հարավային Ամերիկայի երկրների հետ համագործակցության զարգացմանը | |

| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|
| | | - Եվրասիական տնտեսական միության շրջանակ-ներում ծավալվող համագործակցության ակտիվ մասնակցությանը<br>- ՀԱՊԿ-ի շրջանակում համագործակցության շարունակական խորացմանը ՀԱՊԿ –ում ՀՀ նախագահության առաջնայնությունների իրականացմանը<br>- Եվրոպական միության հետ հարաբերությունների շարունակական զարգացմանն ու ընդլայնմանը, Եվրոպական միության հետ երկկողմ համագործակ-ցության նոր իրավական շրջանակի ձևավորմանը<br>- ԱՊՀ շրջանակներում ընթացող գործընթացներին ակտիվ մասնակցությանը<br>- ՄԱԿ-ում, ԵԱՀԿ-ում, ԵԽ-ում և այլ միջազգային կազմակերպություններում առավել ակտիվ ներ-գրավվածությանը և ՀՀ շահերի պաշտպանությանը<br>- ՏՀԿ-ի շրջանակներում համագործակցության իրականացմանը՝ ըստ կառույցում ՀՀ իրավական կարգավիճակի<br>- ՆԱՏՕ -ի հետ քաղաքական երկխոսության շարունակմանը, Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի հետևողական իրականացմանը<br>- միջազգային և տարածաշրջանային տնտեսական և ֆինանսական կառույցների հետ հարաբերու-թյունների զարգացմանը և ակտիվ համագործա-կցության ծավալմանը, այդ թվում՝ Հայաստանում ապաստանած սիրիահայերի խնդիրների լուծման համատեքստում | |

| 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|
| | | - Հայաստանի տնտեսական անվտանգության ապահովմանը, հաղորդակցության ուղիների ապաշրջափակմանը, զարգացմանն ու դիվերսիֆի-կացմանը, հայրենական արտադրանքի արտա-հանման համար նոր շուկաների բացահայտմանը և արտաքին ներդրումների խրախուսմանը<br>- մշակութային համագործակցության խթանմանը, հայկական մշակութային ժառանգության պահպանմանը<br>- միջազգային ասպարեզում ՀՀ արտաքին քաղաքականության դիրքորոշումներն ավելի լսելի և ընկալելի դարձնելուն ուղղված քայլերի իրականացմանը<br>- արտերկրում Հայաստանի քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների ու շահերի պաշտպանությանը | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2016 թվականի
հունվարի 14-ի N 131 - Ն որոշման

# Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ Ն Ե Ր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| NN ը/կ | **Հիմնավորումներ** |
|---|---|
| | **Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն** |
| 1. | **«Շենքերի էներգաարդյունավետության բարձրացման վերաբերյալ տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելը**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը**<br>«Շենքերի էներգաարդյունավետության բարձրացման վերաբերյալ տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է ՀՀ էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ազգային ծրագրի, ՀՀ էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ազգային ծրագրի կատարմանն ուղղված ՀՀ կառավարության գործողությունների ծրագրի N 2 աղյուսակի, 2-րդ կետի՝ ՀՀ էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգի դրույթների կատարման անհրաժեշտությամբ:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ կառավարության 2007 թվականի հունվարի 18-ի նիստի N 2 արձանագրության 1-ին կետով հավանության արժանացած՝ ՀՀ էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ազգային ծրագրի գնահատականով շենքերի էներգախնայողության ներուժը կազմում է 40 %, որն առ այսօր Հայաստանի Հանրապետությունում չի օգտագործվում:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է ՀՀ կառավարության որոշմամբ հաստատել շենքերի էներգաարդյունավետության բարձրացման վերաբերյալ տեխնիկական կանոնակարգը:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Բարելավել շենքերի էներգաարդյունավետության ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական դաշտը, որը կապահովի էականորեն շենքերում օգտագործվող վառելիքաէներգետիկ ռեսուրսների սպառման ծավալների նվազեցումը: |
| 2. | **«2016-2018 թվականների Հայաստանի Հանրապետության էներգախնայողության գործողությունների ծրագրի երկրորդ փուլին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելը**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը**<br>ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի նիստի N 43 արձանագրության 1-ին կետով հավանու- |

| | |
|---|---|
| | թյան է արժանացել էներգախնայողության գործողությունների ծրագրի (ԷԳԾ) 1-ին փուլը, որի միջոցառումների գործողությունների ժամկետները սահմանված են 2011-2013 թթ. համար: Նշված արձանագրային որոշման հավելվածի 14-րդ կետով նախանշվել են ԷԳԾ-ի հաջորդ փուլերի իրականացման ժամկետները: 2015 թվականին ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը նախաձեռնել է նշված արձանագրային որոշման հավելվածի 14-րդ կետով սահմանված ԷԳԾ-ի հաջորդ՝ 2-րդ, 3-րդ, 4-րդ փուլերի ժամկետների փոփոխություն: Ուստի, անհրաժեշտություն է առաջանում մշակել ԷԳԾ-ի 2-րդ փուլը:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Գործողությունների ծրագիրը սահմանում է հստակ գործողություններ մինչև 2018 թ., որոնց արդյունքում կգրանցվեն 2018 և 2020 թթ. համար սահմանված էներգաարդյունավետության թիրախային մեծությունները:<br>Ծրագիրը միաժամանակ կհամակարգի ոլորտային ծրագրերում էներգետիկ ցուցանիշների հաշվառումը և միասնական տեղեկատվական հիմք կհանդիսանա տարբեր ծրագրերի ֆինանսավորման և իրագործման համար:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է ՀՀ կառավարության արձանագրային որոշմամբ հավանության արժանացնել ՀՀ էներգախնայողության գործողությունների ծրագրի 2-րդ փուլի միջոցառումները:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Բարելավել ՀՀ էներգաարդյունավետության ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական դաշտը, որը կապահովի օգտագործվող վառելիքաէներգետիկ ռեսուրսների սպառման ծավալների նվազեցումը: |
| 3. | **«Արևային ֆոտովոլտային (ՖՎ) կայանի (կայանների) կառուցման ներդրումային ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելը**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը**<br>ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N 836-Ն որոշման հավելվածի 10-րդ կետի պահանջն է Արևային ՖՎ կայանի (կայանների) կառուցման կազմակերպումը, որի համար անհրաժեշտ է նախ մշակել ներդրումային ծրագիր:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Արևային կայանի (կայանների) կառուցման ներդրումային ծրագրում կամրագրվեն տեխնիկատնտեսական համապատասխան ցուցանիշներ, որոնք հիմք կհանդիսանան ՀՀ էլեկտրաէներգետիկ համակարգում մրցութային կարգով ընդունելի սակագների սակարկումը պատշաճ կերպով կազմակերպելու համար: ՀՀ Նախագահի 2015 թվականի հուլիսի 23-ի ՆՀ-471-Ն հրամանագրով հաստատվել է «Արդյունաբերական մաուշտաբի արևային էներգիայի ծրագրի նախապատրաստման համար» N TFOA0418 դրամաշնորհի համաձայնագիրը, որի շրջանակներում են իրականացվելու նշված ներդրումային ծրագրի մշակման աշխատանքները:<br>Կլիմայի ներդրումային հիմնադրամների (Climate Investment Funds կամ CIF) Ցածր եկամուտ ունեցող երկրներում վերականգնվող էներգետիկայի խթանման ծրագրի (Program for Scaling up Renewable Energy Program for Low Income Countries կամ SREP) ֆինանսական միջոցների շրջանակներում նախատեսված է համապատասխան միջոցների տրամադրում՝ մոտ 40-50 ՄՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային (ՖՎ) էլեկտրակայան (էլեկտրակայաններ) կառուցելու նպատակով: Մասնավորապես, SREP-ի միջոցներից 28 մլն ԱՄՆ-ի դոլարի չափով դրամաշնորհային և «փափուկ» վարկային միջոցներ են տրամադրվելու ցանցային ՖՎ էլեկտրակայան (էլեկտրակայաններ) կառուցելու համար:<br>ՀՀ Նախագահի 2015 թվականի հուլիսի 23-ի ՆՀ-471-Ն հրամանագրով հաստատվել է «Արդյունաբերական |

| | |
|---|---|
| | մասշտաբի արևային էներգիայի ծրագրի նախապատրաստման համար» N TFOAO418 դրամաշնորհի համաձայնագիրը, որով մոտավորապես 2 մլն ԱՄՆ-ի դոլար դրամաշնորհը նախատեսված է արդյունաբերական մասշտաբի արևային ՖՎ կայանի (կայանների) կառուցման նախապատրաստման համար:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է ՀՀ կառավարության արձանագրային որոշմամբ հաստատել Արևային ՖՎ կայանի (կայանների) կառուցման ներդրումային ծրագիրը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Արևային ՖՎ կայանի (կայանների) կառուցման ապահովումը:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Այս խթան կհանդիսանա ներդրումներ ներգրավելու համար՝ էլեկտրաէներգետիկական համակարգում տարեկան լրացուցիչ մինչև 100 մլն կՎտ.ժ էլեկտրաէներգիայի արտադրության համար: Այդ կայանների կառուցման արդյունքում կնվազի Հայաստանի Հանրապետության կախվածությունը ներկրվող էներգակիրներից: |
| 4. | **«Հայաստանի Հանրապետության հիդրոէներգետիկայի զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելը**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը**<br>ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N 836-Ն որոշման հավելվածի 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ կետեր և ՀՀ կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 10-ի N 54-Ա որոշման 13-րդ կետի կատարման իրավական ապահովում:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ կառավարության 2009 թվականի հունվարի 22-ի նիստի N 3 արձանագրության 1-ին կետով հավանության է արժանացել փոքր հիդրոէլեկտրակայանների (ՓՀԷԿ) զարգացման սխեման, իսկ ՀՀ կառավարության 2011 թ. սեպտեմբերի 8-ի նիստի N 35 արձանագրության 12-րդ կետով հավանության է արժանացել Հայաստանի Հանրապետության հիդրոէներգետիկայի ոլորտի ռազմավարական զարգացման ծրագիրը: Անհրաժեշտ է համադրել սխեմայում և ծրագրում ընդգրկված և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող համձնաժողովի կողմից տրամադրված լիցենզիաների համաձայն շահագործվող և կառուցման փուլում գտնվող ՓՀԷԿ-ի ցուցանիշները, ինչպես նաև հաշվի առնել ոլորտում զարգացումները և մարտահրավերները:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է ՀՀ կառավարության որոշմամբ հավանության արժանացնել Հայաստանի Հանրապետության հիդրոէներգետիկայի զարգացման հայեցակարգին:<br>2. **Կարգավորման առարկան**<br>ՀՀ հիդրոէներգետիկայի զարգացման հայեցակարգի մշակում:<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հիդրոէլեկտրակայանների զարգացման հայեցակարգը կձևավորի ՀՀ կառավարության տեսլականը՝ ՀՀ հիդրոէներգետիկայի հետագա զարգացման համար: |
| **ՀՀ ֆինանսների նախարարություն** | |
| 5. | **«Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի գործունեության ծրագրի կատարումն ապահովող միջոցառումներում ներառնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Գնումների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու նպատակը նշված օրենքը |

ԱՀԿ գնումների համաձայնագրի նոր տեքստին և Եվրասիական տնտեսական միության պայմանագրին համապատասխանեցնելն է:

1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

1. Առևտրի Համաշխարհային կազմակերպության պետական գնումների համաձայնագրին անդամակցության բանակցությունների գործընթացն սկսվել է 2009 թվականի սեպտեմբերին, երբ Հայաստանի Հանրապետությունը ներկայացրել էր համապատասխան հայտ: 2010 թվականի դեկտեմբերին ԱՀԿ Պետական գնումների կոմիտեն ընդունեց որոշում, որով Հայաստանը հրավիրվում էր ընդունելու ԱՀԿ Պետական գնումների համաձայնագիրը և 2011 թվականի սեպտեմբերի 15-ին Հայաստանը միացավ նշված համաձայնագրին: 2012 թվականի մարտին ընդունվեց ԱՀԿ Պետական գնումների համաձայնագրի վերանայված տեքստը, որն ուժի մեջ մտավ 2014 թվականի ապրիլին: Հայաստանի Հանրապետությունը, ինչպես ԱՀԿ Պետական գնումների համաձայնագրի մյուս անդամներ երկրները, ևս պետք է իրականացներ ներպետական օրենսդրությամբ սահմանված գործընթացները՝ նոր տեքստի վավերացման համար: 2015 թվականի փետրվարի 23-ին ՀՀ Նախագահն իր ՆՀ-217-Ն հրամանագրով վավերացրել է ԱՀԿ Պետական գնումների համաձայնագրի նոր տեքստը:

Քանի որ ԱՀԿ Պետական գնումների համաձայնագիրը սահմանում է գնումների ազգային համակարգի և համաձայնագրի միջև համապատասխանության պահանջ, «Գնումների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումների կատարման առանցքային պահանջներից մեկը լինելու է օրենքի դրույթների համապատասխանեցումը ԱՀԿ Պետական գնումների համաձայնագրի փոփոխված պահանջներին:

2. Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) ստեղծմանն ուղղված պայմանագիրը Բելառուսի, Ղազախստանի և Ռուսաստանի Դաշնության առաջնորդների կողմից ստորագրվել է 2014 թվականի մայիսի 29-ին և ուժի մեջ է մտել 2015 թվականի հունվարի 1–ին: Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի անդամակցությանն ուղղված համաձայնագիրն ստորագրվել է 2014 թվականի հոկտեմբերի 9-ին: Հայաստանի անդամակցությանը վերաբերող համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2015 թվականի հունվարի 2-ին:

ԵԱՏՄ պայմանագիրը սահմանում է պետական և համայնքային գնումների նպատակներն ու սկզբունքները՝ անդամ պետությունների համապատասխան ներպետական օրենքների և միջազգային պարտավորությունների հարաբերությունների համատեքստում (հոդված 88.1): ԵԱՏՄ պայմանագրի դրույթները սահմանում են գնումների քաղաքականության ընդհանուր հայեցակարգերը, որոնք պետք է արտացոլվեն ԵԱՏՄ անդամ պետությունների կողմից պետական գնումներին վերաբերող իրենց ներպետական օրենսդրություններում: Պետական գնումների ոլորտում Հայաստանի Հանրապետության այլ միջազգային պարտավորություններն անհամատեղելի չեն ԵԱՏՄ պայմանագրի շրջանակներում ստանձնած պարտավորությունների հետ, սակայն «Գնումների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելիս պետք է հաշվի առնվեն այս բոլոր պարտավորությունների ներառումը նախագծում: Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել ԵԱՏՄՀ 88-րդ հոդվածում և N 25 հավելվածում ներառված դրույթներին: Կարևոր է ընդգծել նաև այն փաստը, որ ԵԱՏՄՀ անդամների հետ համեմատած՝ ներկայումս Հայաստանն առաջատար դիրքերում է գտնվում միջազգային չափորոշիչների համապատասխանության առումով՝ լինելով ԵԱՏՄ անդամ պետությունների շարքում միակ երկիրը, որն արդեն իսկ հանդիսանում է ԱՀԿ Պետական գնումների համաձայնագրի լիիրավ անդամ, մինչդեռ ԵԱՏՄ այլ անդամ երկրները հանդիսանում են ԱՀԿ Պետական գնումների համաձայնագրի դիտորդներ՝ որպես ԱՀԿ նոր անդամ՝ դրան անդամակցելու պարտավորությամբ:

1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Ներկայացված նախագծով առաջարկվում է փոփոխություններ և լրացումներ կատարել «Գնումների մասին» ՀՀ օրենքում՝ այն համապատասխանեցնելով ԱՀԿ գնումների համաձայնագրի նոր տեքստին, ինչպես նաև ԵՏՄ 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին:

| | |
|---|---|
| | **2. Կարգավորման առարկան**<br>Նախագծի կարգավորման առարկան «Գնումների մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների և լրացումների կատարումն է:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է դրանով կարգավորվող հարաբերությունները համապատասխանեցնել ԱՀԿ գնումների համաձայնագրի նոր տեքստին, ինչպես նաև ԵՏՄ 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի պահանջներին: |
| 6. | **«Ծրագրային բյուջետավորման ներդրման մանրամասն գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության 2016 թվականի գործունեության ծրագրի կատարումն ապահովող միջոցառումներում ներառելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Նշված նախագծի ընդունումը նախատեսված է ՀՀ կառավարության 2015 թվականի օգոստոսի 13-ի նիստի N 38 արձանագրության 12-րդ կետով հավանության արժանացած՝ Հայաստանի Հանրապետությունում ծրագրային բյուջետավորման ամբողջական ներդրման ռազմավարության իրագործման գործողությունների 2015-2017 թթ. ծրագրով և պայմանավորված է ՀՀ կառավարության 2015 թվականի օգոստոսի 13-ի նիստի N 38 արձանագրության 12-րդ կետով հավանության արժանացած՝ Հայաստանի Հանրապետությունում ծրագրային բյուջետավորման (այսուհետ՝ ԾԲ) համակարգի ամբողջական ներդրմանն ուղղված 2015-2017 թթ. գործողությունների ծրագրի կատարման համար անհրաժեշտ քայլերն առավել մանրամասնեցված տեսքով սահմանելու անհրաժեշտությամբ:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>2013 թվականի ապրիլի 30-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների ընդունմամբ ԾԲ-ն ամրագրվեց որպես բյուջետավորման պարտադիր մոտեցում:<br>Չնայած այս ոլորտում 2004 թվականից իրականացված մեծածավալ աշխատանքներին, ԾԲ-ի ներդրման հարցում առկա են բազմաթիվ և տարաբնույթ հիմնական խնդիրներ (ինչպես հայեցակարգային և ռազմավարական բնույթի մարտահրավերներ կամ խնդիրներ, այնպես էլ մեթոդաբանական բնույթի, մարդկային ռեսուրսների և տեխնիկական կարողությունների, ԾԲ-ի տեղեկատվության որակի և ԾԲ-ի գործնական ներդրման ինստիտուցիոնալ խնդիրներ և այլն): Այս ոլորտում արդեն իսկ ձեռք բերված նվաճումները պահպանելու և դրանց նոր ընթացք տալու համար նշված գործողությունների տրամաբանական շարունակություն դարձավ ՀՀ կառավարության կողմից ծրագրային բյուջետավորման համակարգի ներդրման ռազմավարության և վերջինիս իրագործման գործողությունների ծրագրի սահմանումը (ՀՀ կառավարության 2015 թվականի օգոստոսի 13-ի նիստի N 38 արձանագրության 12-րդ կետով հավանության արժանացած արձանագրային որոշում):<br>Սակայն, չնայած այն հանգամանքին, որ արդեն իսկ սահմանված է Հայաստանի Հանրապետությունում ծրագրային բյուջետավորման համակարգի ամբողջական ներդրմանն ուղղված 2015-2017 թթ. գործողությունների ծրագիրը, այնուամենայնիվ, հաշվի առնելով նախատեսված գործողությունների բազմաբնույթ ուղղվածությունը և դրանց կատարման գործընթացում ներգրավվելիք մարմինների լայն շրջանակը, գործողությունների ծրագրի իրականացման գործընթացն առավել մանրամասն ձևով սահմանելու անհրաժեշտություն է առաջացել: |

| | |
|---|---|
| | 1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Վերոգրյալի պատճառով, նշված խնդրի լուծման նպատակով նախագծով նախատեսվում է հաստատել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ՀՀ Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի հանձնաժողովի և ՀՀ վերահսկիչ պալատի (այդ մարմինների համաձայնությամբ) մասնակցությամբ մշակված ԾԲ-ի ներդրման մանրամասն գործողությունների ծրագիրը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Նախագծի ընդունմամբ կկարգավորվի ԾԲ-ի ներդրման գործընթացում ներգրավված պետական մարմինների կողմից գործողությունների իրականացման գործընթացը:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>ԾԲ-ի ներդրման մանրամասն գործողությունների ծրագրի հաստատումը հնարավորություն կընձեռի պետական մարմինների համակարգված գործողությունների իրականացման համար, որի արդյունքում կստեղծվեն անհրաժեշտ նախադրյալներ՝ սկսած 2018 թվականից, հանրապետությունում լիարժեք ծրագրային բյուջետավորման անցնելու համար: |
| 7. | **«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության 2016 թվականի գործունեության ծրագրի կատարումն ապահովող միջոցառումներում ներառելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Նշված նախագծի ընդունումը նախատեսված է ՀՀ կառավարության 2015 թվականի օգոստոսի 13-ի նիստի N 38 արձանագրության 12-րդ կետով հավանության արժանացած՝ Հայաստանի Հանրապետությունում ծրագրային բյուջետավորման (այսուհետ՝ ԾԲ) ամբողջական ներդրման ռազմավարության իրագործման գործողությունների 2015-2017 թթ. ծրագրով և պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում, սկսած 2018 թվականից, լիարժեք ծրագրային բյուջետավորման անցնելու համար անհրաժեշտ նախադրյալներ ստեղծելու համար (համաձայն ՀՀ Ազգային ժողովի կողմից 2014 թվականին հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «2.2.4-րդ՝ Բյուջետային համակարգ» կետի հինգերորդ պարբերության երկրորդ ենթակետի դրույթի (ստեղծվելու են անհրաժեշտ նախադրյալներ լիարժեք ծրագրային բյուջետավորման անցնելու համար՝ սկսած 2018 թվականից) իրավական հիմքերի ամրապնդման և զարգացման անհրաժեշտությամբ:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>2013 թվականի ապրիլի 30-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների ընդունմամբ ԾԲ-ն ամրագրվեց որպես բյուջետավորման պարտադիր մոտեցում: Սակայն, ներկայումս ՀՀ Ազգային ժողովի կողմից հաստատվող պետական բյուջեի ծախսերի կառուցվածքի հիմքում օրենքի ուժով դրված են բյուջետային ծախսերի գործառական, տնտեսագիտական և գերատեսչական դասակարգումները, իսկ բյուջետային ծախսերի ծրագրային դասակարգմամբ ներկայացվող պետական բյուջեի նախագծի աղյուսակները ներկայումս ունեն ընդամենը բյուջետային քննարկումներին օժանդակող նյութերի կարգավիճակ: Նույն իրավիճակն է նաև պետական բյուջեի կատարման գործընթացում:<br>Նկատի ունենալով այն հանգամանքը, որ հենց ԾԲ-ի ներդրումն է ապահովում հանրային ծախսերի առաջնահերթությունների սահմանման բարելավումը և հանրային ֆինանսների կառավարման թափանցիկության, հաշվետվողականության, արդյունավետության և արդյունքայնության բարձրացումը, ինչպես նաև հնարավորություն է տալիս բյուջետային տեղեկատվությունը ներկայացնելու այնպիսի կառուցվածքով, որը հնարավորություն կընձեռի վերահսկելու, թե ինչպես է բյուջեն օգտագործվում ընդունված քաղաքականու- |

| | |
|---|---|
| | թյուններն իրականացնելու համար, արդիական է դառնում ՀՀ Ազգային ժողովի կողմից հաստատվող պետական բյուջեի ծախսերի ներկայիս կառուցվածքի փոփոխման խնդիրը՝ ներկայիս գործող ծախսերի կառուցվածքը ծրագրային դասակարգման հիմքի վրա կազմված կառուցածքով փոխարինելու համար, որին հետևելու են նաև փոփոխություններ պետական բյուջեի կատարման, հաշվետվությունների կատարման, մոնիթորինգի և արտաքին աուդիտի ոլորտներում:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նշված խնդիրների իրավական լուծումը նախատեսվում է տալ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների և լրացումների կատարման եղանակով:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Նախագծով նախատեսվում է կարգավորել ԾԲ-ի կիրառության առանձնահատկությունները բյուջետային ցիկլի բոլոր փուլերում, գործընթացներում ներգրավված հիմնական կողմերի իրավասությունների և պարտականությունների շրջանակները, ինչպես նաև տեղեկատվական հոսքերը:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>1. «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքում և դրա կիրարկումն ապահովող այլ իրավական ակտերում կկատարվեն փոփոխություններ և լրացումներ, որով ֆորմալ առումով բյուջետային ծախսերի ծրագրային դասակարգումը կսահմանվի որպես բյուջետային հատկացումների հիմնական դասակարգում:<br>2. Կսահմանվեն ԾԲ-ի կիրառության առանձնահատկությունները բյուջետային ցիկլի բոլոր փուլերում, գործընթացներում ներգրավված հիմնական կողմերը դրանց իրավասությունների և պարտականությունների շրջանակները, ինչպես նաև բյուջետային գործընթացում ԾԲ-ին առնչվող հիմնական որոշումները և հիմնական տեղեկատվական հոսքերը:<br>3. Կսահմանվեն նաև ԾԲ-ի ամբողջական անցման պարագայում բյուջետային փաստաթղթերում բյուջետային տեղեկատվության ներկայացման կառուցվածքը և դրա դետալացման մակարդակը, ինչպես նաև հարկաբյուջետային հիմնական կանոնները ԾԲ-ի ենթատեքստում: |
| **Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարություն** | |
| 8. | **«Հայաստանի Հանրապետության փոստային վճարման պետական նշանների հրատարակման և գործողության մեջ դնելու, ինչպես նաև հատուկ փոստային դրոշմակների կիրառման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Հայաստանի Հանրապետության փոստային վճարման պետական նշանների հրատարակման և գործողության մեջ դնելու, ինչպես նաև հատուկ փոստային դրոշմակների կիրառման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2014 թվականի մայիսի 19-ի N 511-Ա որոշման ծրագրի 2.2.8.4-րդ կետի կատարման ապահովմամբ, ինչպես նաև փոստային վճարման պետական նշանների տարեկան ծրագրերի մշակման հիմնական սկզբունքների սահմանման, դրանց հրատարակման, գործողության մեջ դնելու, տարածման և հատուկ փոստային դրոշմակների կիրառման հետ:<br>1.1. **Կարգավորման ենթակա հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս օրենսդրորեն կարգավորված չեն փոստային վճարման պետական նշանների տարեկան ծրագրերի մշակման հիմնական սկզբունքները, դրանց հրատարակման, գործողության մեջ դնելու, տարածման, ինչպես նաև հատուկ փոստային դրոշմակների կիրառումը, որից և բխում է ՀՀ կառավարության որոշման ընդունման անհրաժեշտությունը: |

| | |
|---|---|
| | 1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>«Փոստային կապի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի «ա» ենթակետին համապատասխան փոստային կապի բնագավառում պետական քաղաքականությունն իրականացնում է փոստային կապի բնագավառում ՀՀ կառավարության լիազորած մարմինը` ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը, ինչպես նաև «դ» ենթակետի համաձայն ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությանն է վերապահված փոստային վճարման պետական նշանների նմուշների, անվանագների, տպաքանակի, գործողության ժամկետների սահմանումը և դրանց հրատարակման ու տարածման կազմակերպումը:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Որոշման նախագծի նպատակը փոստային վճարման պետական նշանների տարեկան ծրագրերի մշակման հիմնական սկզբունքների, դրանց հրատարակման, գործողության մեջ դնելու, տարածման, ինչպես նաև հատուկ փոստային դրոշմակների կիրառման կարգի սահմանումն է:<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Փոստային կապի ոլորտի կարգավորման առավել ընդգրկուն օրենսդրական դաշտի ստեղծումը: |
| 9. | **«Հայաստանի Հանրապետության համար ռազմավարական նշանակություն ունեցող մեկից ավելի համայնքների տարածքներ ընդգրկող տրանսպորտային օբյեկտների՝ ավտոմոբիլային ճանապարհների, արհեստական կառույցների, ընդհանուր օգտագործման երկաթուղային գծերի կառուցման, վերակառուցման, հիմնանորոգման նպատակով քաղաքաշինական գործունեության իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը** (նպատակը)<br>«Հայաստանի Հանրապետության համար ռազմավարական նշանակություն ունեցող մեկից ավելի համայնքների տարածքներ ընդգրկող տրանսպորտային օբյեկտների` ավտոմոբիլային ճանապարհների, արհեստական կառույցների, ընդհանուր օգտագործման երկաթուղային գծերի կառուցման, վերակառուցման, հիմնանորոգման նպատակով քաղաքաշինական գործունեության իրականացման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2014 թվականի մայիսի 19-ի N 511-Ա որոշման ծրագրի 2.2.8.4-րդ կետի կատարման ապահովմամբ, ինչպես նաև ճանապարհաշինական խոշոր՝ մեկից ավելի համայնքներ ընդգրկող ծրագրերի իրականացման արդյունավետության բարձրացման նպատակով: Տվյալ մոտեցումն ավելի լայն իմաստով սահմանված է «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 18.1-ին հոդվածով:<br>1.1. **Կարգավորման ենթակա հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Քաղաքաշինական գործունեությունը կանոնակարգող առկա ընթացակարգերը որոշ խոչընդոտներ են առաջացնում մի քանի համայնքների տարածքներ ընդգրկող գծային օբյեկտների կառուցման ընթացքում, քանի որ գծային օբյեկտի կառուցման ընթացակարգը պետք է դիտարկի օբյեկտն ամբողջությամբ, միևնույն ժամանակ առկա ընթացակարգերի համաձայն տրվում են նախագծման և շինարարության թույլտվություններ և ավարտված շինարարական օբյեկտի շահագործման ակտերը՝ ըստ առանձին համայնքներում ընդգրկված գծային օբյեկտի հատվածների:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախագծով առաջարկվում է Հայաստանի Հանրապետության համար ռազմավարական նշանակություն ունեցող մեկից ավելի համայնքների տարածքներ ընդգրկող տրանսպորտային օբյեկտների կառուցման նպատակով քաղաքաշինական գործունեության կանոնակարգում՝ առանձնահատուկ կարգա- |

| | |
|---|---|
| | վիճակ ունեցող օբյեկտների շարքին դասելու միջոցով:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Հայաստանի Հանրապետության համար ռազմավարական նշանակություն ունեցող մեկից ավելի համայնքների տարածքներ ընդգրկող տրանսպորտային օբյեկտների կառուցման համար քաղաքաշինական ընթացակարգերի պարզեցում:<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Կանոնակարգված քաղաքաշինական գործունեության առանձնահատուկ ընթացակարգ, որն ապահովում է պետության, հասարակության և քաղաքացիների շահերի ներդաշնակեցումը: |
| 10. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի նոյեմբերի 15-ի N 1442-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը** (**նպատակը**)<br>Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի նոյեմբերի 15-ի N 1442-Ն որոշմամբ կարգավորվող գործառույթների հստակեցում:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Շանթ-2015 զորավարժությունների ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի նոյեմբերի 15-ի N 1442-Ն որոշման պահանջները կիրառելիս ի հայտ են եկել որոշակի խնդիրներ, որոնք անհրաժեշտ է կարգաբերել, մասնավորապես, կապված Իրավասու մարմնի կողմից հայտերի ընդունման, դրանց պահանջների բավարարման գործընթացի հետ:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Նախագծով հստակեցվում են Իրավասու մարմնի, օպերատորների և պետական մարմինների փոխհարաբերությունները ռազմական դրության և արտակարգ իրավիճակների ժամանակ՝ կապուղիների տրամադրման հարցում<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ռազմական դրության և արտակարգ իրավիճակների ժամանակ կապուղիների տրամադրման գործընթացի ավելի օպերատիվ իրականացում: |
| 11. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի նիստի N 54 արձանագրության 20-րդ կետով հավանության արժանացած արձանագրային որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը** (**նպատակը**)<br>Նախագծի անհրաժեշտությունը բխում է ԱՋԲ-ի ենթակառուցվածքների զարգացման վարկային ծրագրի պահանջներից:<br>1.1. **Կարգավորման ենթակա հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս ավտոմոբիլային ճանապարհների առաջնահերթության որոշման համար գործող ցուցանիշները ամբողջովին չեն արտացոլում ճանապարհների վիճակը և վերանորոգման անհրաժեշտության աստիճանը:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է նոր մոտեցումների կիրառմամբ կատարելագործել ճանապարհների առաջնահերթության որոշման համար սահմանված ցուցանիշները: |

| | |
|---|---|
| | 2. **Կարգավորման առարկան**<br>Փոփոխված ցուցանիշների կիրառմամբ վերանորոգման առավել կարիք ունեցող ճանապարհների դասակարգում և ըստ առաջնահերթության վերանորոգում:<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Առաջնային վերանորոգում պահանջող ճանապարհների հայտնաբերում և վերանորոգում: |
| 12. | **«Ավտոմոբիլային ճանապարհների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Այլընտրանքային վճարովի ավտոմոբիլային ճանապարհների առկայություն:<br>1.1. **Կարգավորման ենթակա հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս օրենսդրորեն կարգավորված չեն վճարովի ավտոմոբիլային ճանապարհներին առնչվող խնդիրները: Առաջարկվում է, որպես այլընտրանքային տարբերակ ՀՀ-ում ներդնել վճարովի ավտոմոբիլային ճանապարհների կառուցման հնարավորությունը:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներից բացի առաջարկվում է ՀՀ օրենքով սահմանել նաև այլընտրանքային տարբերակ՝ վճարովի ավտոմոբիլային ճանապարհների կառուցում՝ սահմանելով նաև այդ ճանապարհների կառուցման կարգն ու պայմանները:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Այլընտրանքային ճանապարհների կառուցում և դրանց պահպանման և շահագործման գործընթացի կարգավորում:<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>ՀՀ-ում այլընտրանքային ճանապարհների առկայություն: |
| **Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն** | |
| 13. | **«Հայաստանի Հանրապետության հողօգտագործողներին 2016 թվականի գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է գյուղատնտեսության մեջ օգտագործվող կարևորագույն ռեսուրսների, մասնավորապես, հանքային պարարտանյութերի մատչելի գներով մատակարարման ծրագրի շարունակմամբ: Իրավական ակտով կսահմանվեն ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի՝ Հայաստանի Հանրապետության մարզերի մատակարարման չափաքանակները և այլ պայմաններ:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Նման ուղղվածության ծրագիր իրականացվում է նաև 2015 թվականին, սակայն 2016 թվականին ծրագրի շարունակման համար անհրաժեշտ է սահմանել մատակարարվող ռեսուրսների ծավալները, ըստ մարզերի և առանձին տնտեսավարողների (ընկերություններ, կազմակերպություններ), պահանջվող ֆինանսական ռեսուրսները, գները և այլն: Վերջինիս համար անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ ընդունել համապատասխան ծրագիր: |

| | |
|---|---|
| | 1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>2016 թվականին ծրագրի շարունակման համար անհրաժեշտ է, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության մարզերի և առանձին տնտեսավարողների հայտերը, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունել Հայաստանի Հանրապետության հողօգտագործողներին 2016 թվականի գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագիրը:<br>2. **Կարգավորման առարկան**<br>2016 թվականին Հայաստանի Հանրապետության մարզերի և գյուղատնտեսությունում տնտեսավարողների հայտերի հիման վրա ազոտական, ֆոսֆորական, կալիումական պարարտանյութերի մատչելի գներով մատակարարման գործընթացի կանոնակարգումն է:<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվում են հետևյալ արդյունքները՝<br>-գյուղատնտեսությունում տնտեսավարողների համար պայմաններ կստեղծվեն գյուղատնտեսական մշակաբույսերի մշակության ագրոտեխնիկական պահանջների կատարման համար,<br>-կբարձրանա գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը և արտադրության արդյունավետությունը, կավելանան արտադրության ծավալները,<br>-կբարձրանա բուսաբուծական մթերքների մրցունակությունը և ինքնաբավության մակարդակը,<br>-պայմաններ կստեղծվեն հողային ռեսուրսների նպատակային օգտագործման մակարդակի բարձրացման համար: |
| 14. | **«Հայաստանի Հանրապետության հողօգտագործողներին** 2016 **թվականի գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով դիզելային վառելանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է գյուղատնտեսության մեջ օգտագործվող կարևորագույն ռեսուրսների, մասնավորապես, դիզելային վառելանյութի մատչելի գներով մատակարարման ծրագրի շարունակմամբ: Իրավական ակտով կսահմանվեն դիզելային վառելանյութի՝ Հայաստանի Հանրապետության մարզերի մատակարարման չափաքանակները և այլ պայմաններ:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Նման ուղղվածության ծրագիր իրականացվում է նաև 2015 թվականին, սակայն 2016 թվականին ծրագրի շարունակման համար անհրաժեշտ է սահմանել մատակարարվող ռեսուրսի ծավալները, ըստ մարզերի և առանձին տնտեսավարողների (ընկերություններ, կազմակերպություններ), պահանջվող ֆինանսական ռեսուրսները, գները և այլն: Վերջինիս համար անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ ընդունել համապատասխան ծրագիր:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>2016 թվականին ծրագրի շարունակման համար անհրաժեշտ է, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության մարզերի և առանձին տնտեսավարողների հայտերը, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունել Հայաստանի Հանրապետության հողօգտագործողներին 2016 թվականի գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով դիզելային վառելանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագիրը: |

| | |
|---|---|
| | 2. **Կարգավորման առարկան**<br>2016 թվականին Հայաստանի Հանրապետության մարզերի և գյուղատնտեսությունում տնտեսավարողների հայտերի հիման վրա դիզելային վառելանյութի մատչելի գներով մատակարարման գործընթացի կանոնակարգումն է:<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվում են հետևյալ արդյունքները՝<br>-գյուղատնտեսությունում տնտեսավարողների համար պայմաններ կստեղծվեն գյուղատնտեսական աշխատանքներն ագրոտեխնիկական ժամկետներում կատարման համար,<br>-կբարձրանա գյուղատնտեսական հողերի նպատակային օգտագործման մակարդակը,<br>-կբարձրանա գյուղատնտեսական մթերքների մրցունակությունը և կավելանան տնտեսավարողների եկամուտները,<br>-պայմաններ կստեղծվեն գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալների ավելացման և ինքնաբավության մակարդակի բարձրացման համար: |
| 15. | **«Հայաստանի Հանրապետությունում մեղվաբուծության զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Հայաստանի Հանրապետությունում մեղվաբուծության զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է 2009 թվականի ապրիլի 8-ին ընդունված «Մեղվաբուծության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետությունում մեղվաբուծության հարուստ փորձը կուտակվել է դարեր շարունակ՝ այս ոլորտում իրականացված բազմաբնույթ գործունեության արդյունքում: Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների, Հայաստանի Հանրապետությունում 2015 թվականի հունվարի 1-ի դրությամբ հաշվառվել է շուրջ 235214 մեղվաընտանիք: Ներկայումս հանրապետությունում տարեկան արտադրվում է 3500-4000 տոննա մեղր: Արտադրվող մեղրի որակական հատկանիշները հնարավորություն են ընձեռել այն սահմանափակ քանակությամբ արտահանել ԱՊՀ երկրներ, ԱՄՆ, Չինաստան, Կիպրոս և այլն: Հաշվի առնելով այն, որ Հայաստանում մեղվաբուծության զարգացման համար կան բավականին լավ նախադրյալներ, ինչպես նաև, որ հանրապետությունում արտադրվող մեղրն աչքի է ընկնում իր համային և որակական հատկանիշներով, որի արդյունքում մեծ է պահանջարկը, ուստի նախատեսվում է 2016-2020 թվականներին ավելացնել ինչպես մեղվաընտանիքների քանակությունը, այնպես էլ մեղրի արտահանման ծավալները:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Խնդիրների լուծման համար հայեցակարգի նախագծով առաջարկվում է՝<br>- նվազեցնել հանրապետությունում ստացվող ապրանքային մեղրի վրա կատարվող ծախսերը,<br>- բարելավել մեղվանոցների զոոտեխնիկական և անասնաբուժասանիտարական սպասարկումը,<br>- կատարելագործել կրթական համակարգը և մեղվաբուծության բնագավառում բարձրացնել կադրերի վերապատրաստման և որակավորման մակարդակը:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Հայաստանի Հանրապետությունում մեղվաբուծության ոլորտի զարգացմանն ուղղված հայեցակարգային մոտեցումների մշակում: |

| | |
|---|---|
| | 3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի իրականացման արդյունքում սահմանամերձ համայնքներում, որտեղ խիստ վտանգավոր է զբաղվելու հողագործությամբ, հնարավորություն կստեղծվի բնակչությանը զբաղվել մեղվաբուծությամբ և ունենալու որոշակի եկամուտ:<br>Հանրապետությունում մեղվաբուծության զարգացման հայեցակարգի ընդունումը կնպաստի նաև ինչպես մեղրի արտադրության, այնպես էլ մեղրի արտահանման ծավալների ավելացմանը: |
| 16. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 666-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 666-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի անհրաժեշտությունը պայմանավորված է «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի պահանջով:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 666-Ն որոշմամբ սահմանվում է գյուղատնտեսական կենդանիների և թռչունների սպանդից գոյացած մթերքի դրոշմման կարգը, որի առանձին դրույթները հակասում են Եվրասիական տնտեսական միության գործող իրավական ակտերի պահանջներին:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Խնդրի լուծման համար առաջարկվում է լրամշակել Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 666-Ն որոշումը և համապատասխանեցնել այն Եվրասիական տնտեսական միության գործող իրավական ակտերի պահանջներին:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Նախագծով կսահմանվի Եվրասիական տնտեսական միության պահանջներին համապատասխանող գյուղատնտեսական կենդանիների և թռչունների սպանդից գոյացած մթերքի դրոշմման կարգը:<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունմամբ հնարավոր կլինի գյուղատնտեսական կենդանիների և թռչունների սպանդից գոյացած մթերքի դրոշմման կարգի հստակեցմամբ արտադրության վերամշակման և սպառման փուլերում սննդամթերքի անվտանգության ապահովումը: |
| 17. | **«Գործունեության իրականացման ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Գործունեության իրականացման ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների |

նախագծերի ընդունումը պայմանավորված է խաղողի օղիների արտադրությունը խթանելու անհրաժեշտությամբ:

1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

ՀՀ գործող օրենսդրությամբ խաղողի օղու թորվածքի և խաղողի օղու արտադրության հետ կապված գործունեության տարեկան պետական տուրքը կազմում է 15 մլն դրամ: Այդ պատճառով Հայաստանում խաղողի օղի չի արտադրվում: Գինու առանձին տեսակների (աղանդերային, կիսաաղանդերային, խերեսային, պորտվեյն, մադերա և այլն) արտադրության տեխնոլոգիայով պահանջվում է դրանց ավելացնել բացառապես խաղողի օղի, մինչդեռ խաղողի օղու բացակայության պատճառով ավելացվում է ցորենի օղի, որն արգելված է ԵՄ-ի և ՌԴ-ի օրենսդրությամբ: Մյուս կողմից, գինու արտադրությամբ զբաղվող տնտեսավարողները հնարավորություն չեն ունենում օղու արտադրության նպատակով թորել գինու արտադրության համար ոչ պիտանի գինենյութը, վերամշակել բավականին մեծ ծավալ (շուրջ 25%) կազմող մնացորդները, ինչպես նաև իրականացնել խաղողի մի շարք սորտերի մթերումներ, որոնք չեն մթերվում գինու և կոնյակի արտադրության նպատակով:

1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Առաջարկվում է «Գործունեության իրականացման ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով խաղողի օղու թորվածքի և խաղողի օղու արտադրության գործունեությունն ընդգրկել Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 2208 ծածկագրին դասվող՝ միայն պտուղներից և հատապտուղներից թորված 40 տոկոս և ավելի սպիրտ պարունակող ալկոհոլային խմիչքների արտադրության հետ կապված գործունեությունների շարքում և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով խաղողի օղու թորվածքի և խաղողի օղու արտադրության գործունեության համար գանձվող տուրքը հավասարեցնել պտուղներից և հատապտուղներից թորված 40 տոկոս և ավելի սպիրտ պարունակող ալկոհոլային խմիչքների արտադրության գործունեության համար սահմանված տարեկան 50 հազ. դրամ տուրքի դրույքաչափին:

2. **Կարգավորման առարկան**

Գործարար միջավայրի բարելավում և ակտիվացում, նոր արտադրատեսակի՝ խաղողի օղու արտադրության խթանում, որը կավելացնի արդյունաբերության արտահանելի հատվածը:

3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**

Իրավական ակտերի ընդունման դեպքում կլուծվեն մի շարք խնդիրներ, մասնավորապես՝

1) կսկսեն մթերել խաղողի մի շարք սորտեր, որոնք չեն մթերվում գինու և կոնյակի արտադրության համար.

2) գինու արտադրությամբ զբաղվող տնտեսավարողները հնարավորություն կունենան օղու արտադրության նպատակով թորելու գինու արտադրության համար ոչ պիտանի գինենյութը, ինչպես նաև վերամշակելու բավականին մեծ ծավալ (շուրջ 25 %) կազմող մնացորդները.

3) կապահովվի գինու առանձին տեսակների (աղանդերային, կիսաաղանդերային, խերեսային, պորտվեյն, մադերա և այլն) արտադրության տեխնոլոգիայով ԵՄ-ի և ՌԴ-ի օրենսդրության պահանջները և գինու նշված տեսակներին ցորենի օղու փոխարեն կավելացվի բացառապես խաղողի օղի.

4) կսկսվի նոր արտադրատեսակի՝ խաղողի օղու արտադրություն, որն ունի իրացման, հատկապես արտահանման ծավալային մեծ պոտենցիալ.

5) կավելանան տնտեսավարողների եկամուտները, որոնք կուղղվեն արտադրության զարգացմանն ու ընդլայնմանը:

| | |
|---|---|
| 18. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի փետրվարի 28-ի N 338-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի փետրվարի 28-ի N 338-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 1.1-ին մասի պահանջով:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Անասնաբուժության բնագավառում ստուգաթերթեր չլինելու պատճառով հնարավոր չէ իրականացնել ստուգումներ, ինչի արդյունքում պետական վերահսկողությունն իրականացվում է ոչ լիարժեք, ստուգաթերթերի պահանջը սահմանված է Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 1.1-ին մասով:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Խնդրի լուծման համար առաջարկվում է մշակել անասնաբուժության ոլորտում ստուգում իրականացնելու համար ստուգաթերթ՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի փետրվարի 28-ի N 338-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման միջոցով:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Նախագծով կսահմանվեն կենդանիների առողջության, պահպանման, հիվանդությունների կանխարգելման և վերացումն ապահովող ստուգման համար պահանջվող հարցեր:<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունումը թույլ կտա զգալիորեն լրացնել անասնաբուժության բնագավառում պետական վերահսկողությունը քանակապես և որակապես կբարձրացնի արդյունավետությունը, և հնարավորություն կտա իրականացնելու հստակ և հասցեական խնդիրների լուծմանն ուղղված թիրախային ստուգումներ, ինչպես նաև անասնաբուժության ոլորտում պլանավորելու ստուգումները՝ հաշվի առնելով տնտեսավարողների ստուգման արդյունքները: |
| 19. | **«Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսության սուբսիդավորման ուղղությունների հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Ներկայումս հանրապետության գյուղատնտեսությունում իրականացվում են մի շարք ծրագրեր, որոնք ներառում են սուբսիդավորման մեխանիզմներ, մասնավորապես, դա վերաբերում է սերմնապահովության, գյուղատնտեսության մեջ օգտագործվող կարևորագույն ռեսուրսների մատակարարմանը, վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորմանը: Դրանք իրականացվում են առանձին ծրագրերի շրջանակներում, և կիրառվում են առանձին մոտեցումներ:<br>Այս բնագավառում միասնական մոտեցումներ ձևավորելու, համակարգված քաղաքականություն իրականացնելու համար հիմքեր ստեղծելու նպատակով անհրաժեշտ է համարվել մշակել և ընդունել գյուղատնտեսության սուբսիդավորման ուղղությունների հայեցակարգ: |

| | |
|---|---|
| | 1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Դեռևս ՀՀ կառավարության 2005 թվականի հոկտեմբերի 27-ի «Գյուղատնտեսության սուբսիդավորման ուղղությունների և մեխանիզմների հայեցակարգի մասին» N 2310-Ն որոշմամբ սահմանվել են հանրապետության գյուղատնտեսության ոլորտում սուբսիդավորման ընդհանուր մոտեցումները, սկզբունքները և ուղղությունները: Նշված հայեցակարգի դրույթներին համապատասխան՝ հանրապետության մարզերի համայնքներում 2008-2010 թթ. իրականացվել են գյուղատնտեսության տարբեր բնագավառներում սուբսիդավորման փորձնական և հանրապետության տարածքն ընդգրկող ծրագրեր:<br>Ներկա փուլում էլ հանրապետության գյուղատնտեսությունում իրականացվում են մի շարք սուբսիդավորման ծրագրեր: Սկսած 2011 թվականից՝ հանրապետության բոլոր մարզերում ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 31-ի N 349-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն իրականացվում է գյուղատնտեսությունում տնտեսավարողներին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիրը: Հանրապետության բոլոր մարզերում իրականացվում են նաև Հայաստանի Հանրապետության հողօգտագործողներին գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի ձեռքբերման նպատակով պետական աջակցության և Հայաստանի Հանրապետության հողօգտագործողներին գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով դիզելային վառելանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագրերը:<br>Սակայն, պետական քաղաքականության ներկայիս նոր մոտեցումների կիրառման անհրաժեշտությամբ պայմանավորված, նախկինում սահմանված դրույթները վերանայում են պահանջում, ինչն էլ պայմանավորում է նախագծի մշակումն ու ընդունումը:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Գոյություն ունեցող խնդիրների լուծման համար առաջարկվում է մշակել Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսության սուբսիդավորման ուղղությունների հայեցակարգի նախագիծ, որը հաշվի կառնի գյուղատնտեսությունում վարվող պետական քաղաքականության ներկայիս մոտեցումները:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Հայեցակարգով կհիմնավորվեն գյուղատնտեսության սուբսիդավորման գերակայությունները, դրանց իրականացման մոտեցումները, արդյունքների գնահատման չափանիշները:<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հայեցակարգի ընդունումը կնպաստի գյուղատնտեսությունում իրականացվող սուբսիդավորման ծրագրերի արդյունավետության բարձրացմանը, արտադրական ներուժի և ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը, գյուղատնտեսությունում տնտեսավարողների համար նպաստավոր մրցակցային միջավայրի ձևավորմանը: |
| **Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն** | |
| 20. | **«Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման ծառայությունների 2017 թվականի ծրագիրը և ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը**<br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Ծրագրի իրականացման նպատակը Հայաստանում տեղեկատվական հասարակության և զարգացած տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) ոլորտի կայացմանը, աշխարհի առաջատար ՏՀՏ-ի երկրների շարքում Հայաստանը ՏՀՏ-ի ուղղվածությամբ դասվելուն, ոլորտի արդյունավետության աճի պահպանմանը և զարգացմանը, որակյալ աշխատուժի աճի շարունակական զարգացմանը նպաստելն է: |

| | |
|---|---|
| | 1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>– ՏՏ-ի ոլորտում գործունեության ծավալման, ՏՏ-ի գործիքների համատարած կիրառման համար ենթակառուցվածքների թերի լինելը և էլեկտրոնային գրագիտության անբավարար մակարդակը.<br>– ՏՏ-ի արտադրանքի և ծառայությունների արտահանման շուկաների սահմանափակությունը:<br><br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>– ՏՏ-ի լուծումների և արտադրանքի նկատմամբ տեղական պահանջարկի խթանում.<br>– հայկական ՏՏ-ի արտադրանքի առաջմղման, ոլորտի ապագա զարգացումների և հաջորդ սերնդի անելիքների քննարկման միջոցառումների իրականացում.<br>– ոլորտում հաջողությունների հասած երկրների և համապատասխան միջազգային կառույցների հետ համագործակցության հաստատում և ընդլայնում:<br>2. **Կարգավորման առարկան**<br>ՀՀ կառավարությունը, կարևորելով ՏՏ-ի զարգացումը որպես տնտեսության ընդհանուր առաջընթացի, արտադրողականության բարձրացման հիմնական գործոն, շեշտադրում է ոլորտի արդյունավետության շարունակական աճի ապահովումը, տնտեսության այլ բնագավառներում ոլորտի արտադրանքի և ծառայությունների կիրառումը:<br>3. **Իրավական ակտի ընդունման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտի կիրառման արդյունքում ակնկալվում է երկրում գիտելիքահենք տնտեսության ձևավորման ուղղությամբ իրական հնարավորությունների ստեղծում: |
| 21. | **«Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների գործունեության իրականացման 2017 թվականի ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Ծրագրի իրականացման նպատակը ՀՀ Շիրակի և Լոռու մարզերում տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների ոլորտների զարգացման համար անհրաժեշտ ժամանակակից ենթակառուցվածքների, բարենպաստ միջավայրի զարգացումն է:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>" ՀՀ Շիրակի և Լոռու մարզերում ՏՏ-ի և ԲՏ-ի ոլորտներում գործունեության ծավալման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների թերի լինելը.<br>" ՀՀ Շիրակի և Լոռու մարզերում ՏՏ-ի և ԲՏ-ի ոլորտների որակյալ մասնագիտական կադրերի ցածր թիվը, միջազգային ճանաչում ունեցող ՏՏ-ի և ԲՏ-ի ոլորտների ընկերությունների ցածր ներկայացվածությունը:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>" ՀՀ Շիրակի և Լոռու մարզերում ՏՏ-ի և ԲՏ-ի ոլորտների սկսնակ ընկերությունների և աշխատատեղերի ստեղծման համար բարենպաստ միջավայրի ապահովում.<br>" ՀՀ Շիրակի և Լոռու մարզերում ՏՏ-ի և ԲՏ-ի ոլորտների ուսումնական և գիտահետազոտական լաբորատորիաների հիմնում և վերջիններիս կողմից ՏՏ-ի և ԲՏ-ի ոլորտների բարձրորակ մասնագետների պատրաստմանն ու վերապատրաստմանն ուղղված ուսումնական դասընթացների, սեմինարների և այլ միջոցառումների կազմակերպում և անցկացում.<br>" Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոններում ՏՏ-ի և ԲՏ-ի ոլորտների վերազգային ընկերությունների ներգրավման ուղղությամբ բանակցությունների վարում: |

| | |
|---|---|
| | 2. **Կարգավորման առարկան**<br>Ծրագրային միջոցառումներն ուղղված են լինելու Գյումրի և Վանաձոր քաղաքներում ժամանակակից գիտելիքային և նորամուծական ենթակառուցվածքներով հագեցած տեխնոլոգիական կենտրոնների արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ ենթակառուցվածքների ապահովմանը:<br>3. **Իրավական ակտի ընդունման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ակնկալվում է ՀՀ Շիրակի և Լոռու մարզերում տեխնոլոգիատար ընկերությունների ու աշխատատեղերի ստեղծման, տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների ոլորտների որակյալ մասնագիտական ներուժի պահպանման ու զարգացման, երիտասարդ տեխնոլոգիական մասնագետների պատրաստման ու վերապատրաստման խթանում: |
| 22. | **«Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին» 2017 թվականի ծրագիրը և ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին» 2017 թվականի ծրագիրը և ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը կմշակվի՝ ելնելով «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի պահանջից:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Վերջին տարիներին նպատակային քաղաքականության արդյունքում ՓՄՁ-ի սուբյեկտների գործունեությանը և զարգացմանը խոչընդոտող բազմաթիվ օրենսդրական, ինչպես նաև ՓՄՁ-ի սուբյեկտների ֆինանսավորման (վարկավորման) և տեխնիկական աջակցության հետ կապված հիմնախնդիրները թեթևացել են, այդուհանդերձ, դեռևս առկա են մի շարք հիմնախնդիրներ: Մասնավորապես՝<br>" ՓՄՁ-ի սուբյեկտների համար ֆինանսական (վարկային) միջոցների մատչելիության ցածր մակարդակ.<br>" գործարար տեղեկատվության և խորհրդատվության ստացման ու կադրերի մասնագիտական ուսուցման հարցերում առկա դժվարություններ.<br>" ՓՄՁ-ի սուբյեկտների գործունեության միջազգայնացման՝ վերջիններիս կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) արտահանման և շուկաներում առաջմղման հետ կապված խնդիրներ.<br>" սկսնակ գործարարների համար ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու հետ կապված գործարար հմտությունների և ֆինանսական միջոցների պակաս.<br>" ՀՀ մի շարք տարածաշրջաններում ՓՄՁ-ին աջակցող ենթակառուցվածքների և մեխանիզմների բացակայություն և (կամ) դրանց թուլություն:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>ՓՄՁ-ի զարգացման համատեքստում առկա խնդիրների հաղթահարման նպատակով հարկ է, որ շարունակվի համապատասխան պետական քաղաքականության իրականացումը՝ միտված երկրում գործարար միջավայրի բարելավմանը, ինչպես նաև ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ծրագրերի իրականացման համար տրամադրվող ֆինանսական միջոցների ծավալների ավելացմանը:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Ծրագրի կարգավորման առարկան պետական աջակցության հարաբերություններն են՝ ուղղված պետական աջակցության մեխանիզմների (գործիքների) միջոցով երկրում ՓՄՁ-ի զարգացման խթանմանը, ՓՄՁ-ի զարգացման միջոցով երկրի, հատկապես, նրա հեռավոր և սահմանամերձ |

| | |
|---|---|
| | բնակավայրերի տնտեսական զարգացմանը և անհամամասնությունների հաղթահարմանը, ՓՄՁ-ի զարգացման միջոցով երկրի տնտեսության բազմազանեցմանը և զբաղվածության ապահովմանն ու ինքնազբաղվածության մակարդակի բարձրացմանը նպաստելուն:<br>«Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին» 2017 թվականի ծրագրով նախատեսվում են՝<br>" գործող և սկսնակ ՓՄՁ-ի սուբյեկտներին ձեռներեցությամբ զբաղվելու, ֆինանսական և ներդրումային հնարավորությունների ընդլայնում՝ նախապատվություն տալով հանրապետության մարզերում գործող և սկսնակ ՓՄՁ-ի սուբյեկտներին,<br>" կանանց՝ ձեռներեցությամբ զբաղվելու հնարավորությունների ընդլայնում,<br>" ՓՄՁ-ի սուբյեկտներին պետական աջակցության առկա գործիքների կիրառման շարունակականության ապահովում և նոր գործիքների ներդրում,<br>" ՓՄՁ-ի սուբյեկտների գործունեության միջազգայնացում, մասնավորապես, հեռանկարային և արտահանման ներուժ ունեցող ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցություն՝ գործող միջազգային կառույցներին և ցանցերին ինտեգրում,<br>" ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցող ենթակառուցվածքների հզորացմանն ուղղված միջոցառումների իրականացում,<br>" ծրագրի իրականացման շրջանակներում ավելի շատ ՓՄՁ-ի սուբյեկտների ներգրավում և նրանց ցուցաբերվող պետական աջակցության շրջանակների ընդլայնում:<br>3. **Իրավական ակտի ընդունման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ծրագրի կիրարկման արդյունքում ակնկալվում են ՓՄՁ-ի սուբյեկտների գործունեության ընդլայնում և նրանց մրցակցային կարողությունների ամրապնդում, ՓՄՁ-ի սուբյեկտների ֆինանսական և ներդրումային հնարավորությունների ընդլայնում, ՓՄՁ-ի սուբյեկտներում նորարարությունների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման հնարավորությունների ընդլայնում, ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար ուսուցողական, տեղեկատվական և խորհրդատվական ծառայությունների մատուցման հնարավորությունների ընդլայնում, ՓՄՁ-ի սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) տեսականու ընդլայնում ու արտահանման ծավալների ավելացում, ՓՄՁ-ի սուբյեկտների թվի աճ և արդյունքում՝ նոր աշխատատեղերի ստեղծում: |
| 23. | **«Հայաստանի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների** 2017 **թվականի ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Բարենպաստ գործարար միջավայրը ժամանակակից աշխարհում ներդրումների ներգրավման և երկարաժամկետ տնտեսական աճի հիմնական գրավականն է: Այս առումով ՀՀ կառավարությունը հետևողական քայլեր է կատարում գործարարությամբ զբաղվելը դյուրացնելու և անհարկի պետական միջամտության բեռը թեթևացնելու ուղղությամբ:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ գործարար միջավայրի բարելավման շրջանակներում աշխատանքներն ուղղված են լինելու շուկայական տնտեսության զարգացմանը խոչընդոտող դրույթների վերացմանը, պետության կողմից տնտեսավարող սուբյեկտներին մատուցվող ծառայությունների բարելավմանը և պարզեցմանը, ինչպես նաև ոլորտը կարգավորող իրավական ակտերի կրճատմանը, պարզեցմանը: Իրականացվելու են տնտեսապես ոչ արդյունավետ, աշխատատար, ծախսատար և աննպատակահարմար մեխանիզմների կրճատմանն ուղղված առաջարկությունների նախապատրաստում և համապատասխան միջոցառումների սահմանում: |

| | |
|---|---|
| | 1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Գործարար միջավայրի բարելավմանն ուղղված՝ ՀՀ կառավարության բարեփոխումների շարունակականության ապահովման և տարբեր ոլորտներում այդ ուղղությամբ իրականացվող առանձին միջոցառումների համալիր ու հասցեական իրագործման նպատակով ՀՀ կառավարության հաստատմանը կներկայացվի «Հայաստանի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների 2017 թ. ծրագրին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Աշխատանքներ կկատարվեն Հայաստանի գործարար միջավայրի բարեփոխման և «Գործարարությամբ զբաղվելը» դասակարգման համար հիմք հանդիսացող բաղադրիչների բարելավման ուղղությամբ:<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Արդյունքում, ակնկալվում է Հայաստանի Հանրապետությունը դարձնել գործարար և ներդրումային առավել բարենպաստ միջավայր ունեցող երկիր: |
| 24. | **«Զբոսաշրջությանն աջակցության ծառայություններ»** 2017 **թվականի ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը** (նպատակը)<br>Ծրագիրը նպատակաուղղված է հայկական զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացմանը, զբոսաշրջային սեզոնի երկարաձգմանը, հայկական զբոսաշրջային արդյունքի մրցունակության ամրապնդմանն ու բարձրացմանը:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանում զբոսաշրջությունն իր զարգացման տեմպերով և արդյունքներով հանրապետության դինամիկ զարգացող ճյուղերից է: Զբոսաշրջության բնագավառի պետական քաղաքականության նպատակն է մեծացնել զբոսաշրջության ներդրումն ազգային եկամտի ավելացման, համաչափ տարածքային զարգացման, բնակչության կենսամակարդակի բարձրացման և աղքատության նվազեցման գործում զբոսաշրջային այցելությունների թվի աճով, զբոսաշրջությունից ստացված եկամտի ավելացմամբ, նոր աշխատատեղերի ստեղծմամբ:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>2017 թվականին նախատեսվում է ապահովել Հայաստանի զբոսաշրջային արդյունաբերության ներկայացուցիչների մասնակցությունն առնվազն 6 միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսների: Նախատեսվում է առնվազն 20 օտարերկրյա լրագրողների՝ Հայաստան ճանաչողական այցի կազմակերպում և առնվազն երկու թիրախային շուկայում մարքեթինգային միջոցառումների կազմակերպում: Նախատեսվում է պետական մասնակցության ապահովում՝ Հայաստանի մարզերում առնվազն 6 ավանդական փառատոների և տոնակատարությունների անցկացմանը:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Ծրագիրն ուղղվելու է համաշխարհային շուկայում Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի մրցունակության բարձրացմանը՝ զբոսաշրջային ենթակառուցվածքների ու մարդկային ռեսուրսների զարգացմանը նպաստելու, զբոսաշրջային ներուժի բացահայտման և զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացման, զբոսաշրջային սեզոնի երկարաձգման, ինչպես նաև զբոսաշրջային շուկայում հայկական զբոսաշրջային արդյունքի մարքեթինգի և խթանման առավել ակտիվացման միջոցով:<br>3. **Իրավական ակտի ընդունման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ծրագրի իրականացումը կնպաստի Հայաստան զբոսաշրջային այցելությունների աճին, համայնքներում |

| | |
|---|---|
| | զբոսաշրջության զարգացմանը և զբոսաշրջության զարգացման ասպարեզում միջազգային համագործակցության ակտիվացմանը: |
| 25. | **«Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման 2017 թվականի ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը** (**նպատակը**)<br>Ծրագրի հիմնական նպատակը ՀՀ կառավարության արտահանման վրա հիմնված արդյունաբերական քաղաքականության ռազմավարության դրույթների իրագործումն է՝ կազմակերպությունների և արտահանման ներուժ ունեցող ոլորտների արդիականացմանն աջակցության, միջազգային մրցունակության աճին ուղղված նախաձեռնությունների խրախուսման և ինովացիոն համակարգի ձևավորման միջոցով:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Արտահանման վրա հիմնված արդյունաբերական քաղաքականության ռազմավարության շրջանակներում մշակվող և իրականացվող ոլորտային զարգացման ռազմավարությունների իրականացման միջոցառումների ծրագրերը ներառում են ինչպես մասնավոր հատվածի կողմից, այնպես էլ պետության աջակցությամբ և ֆինանսավորմամբ իրականացվելիք միջոցառումներ: Դրանք համակարգված և արդյունավետ կերպով կազմակերպելու նպատակով ամփոփվում են միջոցառումների միասնական ծրագրի ներքո, որի իրագործման համար ՀՀ պետական բյուջեով նախատեսվում է համապատասխան ֆինանսավորում:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Խնդիրների լուծման նպատակով կօգտագործվի հետևյալ գործիքակազմը. արտադրական գործունեության վարկավորման սուբսիդավորում, միջազգային սերտիֆիկացման համաֆինանսավորում, արդյունաբերական ոլորտի հանրաճանաչ կազմակերպությունների ներգրավման միջոցառումների իրականացում, շուկայական տեղեկատվության ապահովում, հայկական ապրանքների՝ նպատակային շուկաներում առաջմղման գործունեության իրականացում, հայկական ապրանքները ներկայացնելը, վերապատրաստման դասընթացների մշակման և իրականացման ֆինանսավորում, միջազգային ցուցահանդեսներին մասնակցության ապահովում:<br>2. **Կարգավորման առարկան**<br>ՀՀ արդյունաբերության արտահանելի հատվածի ավելացում՝ համաշխարհային շուկայում մրցունակ հայրենական ապրանքները ներկայացնելու միջոցով:<br>3. **Իրավական ակտի ընդունման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Միջոցառումների իրականացման արդյունքում ակնկալվում են տնտեսության արտահանելի հատվածի ընդլայնում և դիվերսիֆիկացիա, հայկական ապրանքների մրցունակության բարձրացում և արդյունքում՝ արտահանվող ապրանքների ծավալի աճ: |
| **Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությու** | |
| 26. | **«Պետական սեփականություն հանդիսացող գույքի նվիրաբերության կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը** (**նպատակը**)<br>Իրավական ակտի ընդունումը բխում է պետական սեփականություն հանդիսացող գույքի նվիրաբերության գործընթացի կանոնակարգման անհրաժեշտությունից |

| | |
|---|---|
| | 1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածով սահմանվել են գույքի նվիրաբերության նպատակները և նվիրաբերության շրջանակները: Պետական գույքի նվիրաբերության առանձնահատկությունները ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ դեռևս կանոնակարգված չեն, ուստի խնդիր է առաջացել սահմանել պետական սեփականություն հանդիսացող գույքի նվիրաբերության կարգը:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Որոշման ընդունմամբ առաջարկվում է սահմանել նվիրաբերության ենթակա պետական գույքի կազմը և նվիրաբերության սուբյեկտների տրամադրման պայմանները: Սահմանված չէ նաև նվիրաբերությամբ տրվող գուքի պայմանների կատարման նկատմամբ հսկողության կարգը:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Պետական սեփականություն հանդիսացող գույքի նվիրաբերության գործընթացի կանոնակարգում:<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Որոշման ընդունման դեպքում կկանոնակարգվեն պետական սեփականություն հանդիսացող գույքի նվիրաբերության դեպքերը, ինչպես նաև կսահմանվեն գույքի նվիրաբերության պայմանները և օգտագործման պայմանների նկատմամբ հսկողության կարգը: |
| 27. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի ապրիլի 29-ի N 474-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը բխում է պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունից:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների գործունեության արդյունքների հիման վրա ներկայացվող առաջարկությունների և պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների զարգացման առաջիկա հինգ տարիների հիմնական մոտեցումների հստակեցում:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների գործունեության արդյունքներից ելնելով՝ լիազոր պետական կառավարման մարմնի հետ քննարկման արդյունքում ՀՀ կառավարություն ներկայացնել կոնկրետ առաջարկություններ կազմակերպությունների մասնավորեցման, բաժնետոմսերով հավաստված իրավունքները հավատարմագրային կառավարման հանձնելու, վերակազմակերպման կամ լուծարման վերաբերյալ:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Առաջարկվում է սահմանված հստակ ցուցանիշների հիման վրա առաջարկություններ ներկայացնել տվյալ կազմակերպության վերաբերյալ, մասնավորապես, մասնավորեցման ծրագրում ընդգրկելու, կազմակերպությունը մասնավորեցնելու, կազմակերպության բաժնետոմսերով հավաստված իրավունքները հավատարմագրային կառավարման հանձնելու, վերակազմակերպելու, ինչպես նաև դիրքորոշում ներկայացնել լուծարման առաջարկվող կազմակերպությունների վերաբերյալ:<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>«Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի ապրիլի 29-ի N 474-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման արդյունքում կիրականացվի կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացում: |

| | |
|---|---|
| 28. | **«Կանոնադրական կապիտալում 50 տոկոսից պակաս պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսեր ունեցող առևտրային կազմակերպությունների պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի մասնավորեցման գործընթացը կանոնակարգելու և Հայաստանի Հանրապետության 1999 թվականի օգոստոսի 5-ի N 499 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը բխում է 50 տոկոսից պակաս պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի մասնավորեցման գործընթացը կանոնակարգելու անհրաժեշտությունից:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետության 1999 թվականի օգոստոսի 5-ի N 499 որոշմամբ կանոնակարգվել է կանոնադրական կապիտալում 50 տոկոսից պակաս պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսեր ունեցող ընկերությունների բաժնետոմսերի ազատ բաժանորդագրությունը, որը Հայաստանի Հանրապետությունում չի իրականացվում իրավական ակտերի (մասնավորապես «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի) հետ անհամապատասխանության և ազատ բաժանորդագրության համար ենթակառուցվածքների բացակայության պատճառով:<br>Ուստի մասնավորեցման ներկայացվող 50 տոկոսից պակաս պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների պետական սեփականություն հանդիսացող բաժնեմասի մասնավորեցման գործընթացի կանոնակարգման խնդիր է առաջացել:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջացած խնդիրը կանոնակարգելու նպատակով առաջարկվում է մշակել 50 տոկոսից պակաս պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսեր ունեցող առևտրային կազմակերպությունների պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի մասնավորեցման գործընթացը:<br>2. **Կարգավորման առարկան**<br>50 տոկոսից պակաս պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսեր ունեցող ընկերությունների բաժնետոմսերի արժեքի որոշման մասնավորեցման ձևի ընտրության և մասնավորեցման գործընթացի կանոնակարգում:<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>50 տոկոսից պակաս պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների պետական բաժնեմասի մասնավորեցման գործընթացի արդյունավետության բարձրացում: |
| **Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն** | |
| 29. | **«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության որակի հսկողության ազգային ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունման վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը**<br>Նշված Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունումը հնարավորություն կտա քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության ազգային ծրագրի արդյունավետությունն ապահովելու և համապատասխանեցնելու Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ԻԿԱՕ) N 17 «Անվտանգություն» հավելվածով և Եվրամիության «Անվտանգության կանոնակարգեր» Դոկ. 30 փաստաթղթով սահմանված չափորոշիչներին: |

| | |
|---|---|
| | **2. Ակնկալվող արդյունքը**<br>Որոշման նախագծի ընդունմամբ հնարավորություն կընձեռվի պարբերաբար գնահատել ավիացիոն անվտանգության Ազգային ծրագրի դրույթների, Միջազգային քաղաքացիական ավիացիայի կազմակերպության (ԻԿԱՕ) և Եվրոպական քաղաքացիական ավիացիայի կոնֆերանսի (ԵԿԱԿ) չափորոշիչների կատարման աստիճանը՝ ավելի բարձր մակարդակի հասցնելով օդանավակայաններում ավիացիոն անվտանգության մակարդակը:<br>3. **Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը**<br>Ավիացիոն անվտանգության ոլորտում որակի հսկողության միջոցառումների պարբերական իրականացումը նպատակ ունի երաշխավորել իրականացվող ավիացիոն անվտանգության միջոցառումների արդյունավետությունը, ուսումնասիրել օդանավակայաններում ուղևորների սպասարկման գործընթացի անվտանգության մակարդակը, գնահատել օդանավ շահագործողների և օդանավակայանների ավիացիոն անվտանգության ծառայությունների կողմից կիրառվող ավիացիոն անվտանգության ընթացակարգերը, բացահայտել դրանցում առկա թերություններն ու թույլ կետերը:<br>4. **Կարգավորման նպատակը**, **բնույթը**<br>Նշված Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունումը հնարավորություն կտա իրականացնելու Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում ներդրված ավիացիոն անվտանգության միջոցառումների արդյունավետության որակի ուսումնասիրում ու գնահատում, ինչպես նաև համապատասխանեցնելու Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ԻԿԱՕ) N 17 «Անվտանգություն» հավելվածով և Եվրամիության «Անվտանգության կանոնակարգեր» Դոկ. 30 փաստաթղթով սահմանված չափորոշիչներին:<br>5. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Որոշման նախագծի ընդունման դեպքում կիրականացվեն ավիացիոն անվտանգության ոլորտում որակի հսկողության միջոցառումներ՝ ավելի բարձր մակարդակի հասցնելով օդանավակայաններում ավիացիոն անվտանգության մակարդակը:<br>Ելնելով նշվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության աշխատակազմում կմշակվի որոշման նախագիծը: |
| | **Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ** |
| 30. | **«Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», «Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը** (նպատակը)<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Օրենսդրական փաթեթի ներկայացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կենտրոնական բանկի՝ ԱՀՄԿ (Արժեթղթերի հանձնաժողովների միջազգային կազմակերպություն) Խորհրդատվության, համագործակցության և տեղեկատվության փոխանակման վերաբերյալ փոխըմբռնման բազմակողմ հուշագրին (այսուհետ՝ ԱՀՄԿ հուշագիր) միացմամբ: ԱՀՄԿ-ն ստեղծվել է 1983 թվականին և համարվում է |

արժեթղթերի ոլորտում միջազգային ստանդարտներ սահմանող մարմին: ԱՀՄԿ-ի հուշագիրը մշակվել է 2002 թվականին և այն նպատակ ունի իրականացնելու անդրսահմանային վերահսկողություն և տեղեկատվության փոխանակում արժեթղթերի շուկաների կարգավորողների միջև: Վերջինս ուղղված է արժեթղթերի շուկայի օրենսդրության խախտումների, այդ թվում՝ արժեթղթերի շուկայի չարաշահումների՝ և՛ որպես զանցանքի, և՛ որպես հանցագործության կանխարգելմանը և բացահայտմանը:

Արժեթղթերի շուկան կարգավորող՝ գործող ՀՀ օրենսդրությամբ արժեթղթերի շուկայի չարաշահումների համար նախատեսված է միայն վարչական պատասխանատվություն, ընդ որում, պատասխանատվության կարող են ենթարկվել միայն ՀՀ կենտրոնական բանկի վերահսկողության ներքո գտնվող անձինք: Գործող օրենսդրությունը չի կարգավորում շուկայի չարաշահումների բացահայտման նպատակով ներպետական մարմիններից և այլ անձանցից տեղեկատվության ստացումը, սակայն, ինչպես վկայում է միջազգային լավագույն փորձը, շուկայի չարաշահումների բացահայտման նպատակով անհրաժեշտություն է առաջանում հավաքագրել տեղեկատվություն ոչ միայն վերահսկվող, այլ նաև երրորդ անձանցից: Այդպիսի պահանջ է ամրագրված ԱՀՄԿ-ի հուշագրով նախատեսված դրույթներում, որոնց համաձայն արժեթղթերի շուկայի կարգավորման և վերահսկողության գործառույթներով օժտված մարմինները պարտավոր են միմյանց հետ փոխանակել ոչ միայն իրենց տիրապետության տակ եղած տեղեկատվությունը, այլ նաև երրորդ անձանցից ձեռք բերած տեղեկատվությունը: Գործող օրենսդրությունը հակասող կարգավորում է պարունակում միջազգային համագործակցության շրջանակներում ՀՀ կենտրոնական բանկի կողմից փոխանցման ենթակա տեղեկությունների տեսակների վերաբերյալ: Այսպես, «Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ՀՀ կենտրոնական բանկը չի կարող գաղտնիք պարունակող տեղեկություններ փոխանակել արժեթղթերի շուկայի օտարերկրյա կարգավորողների հետ: ԱՀՄԿ-ի հուշագրին միանալու անհրաժեշտությունը կարևորվում է հատկապես ճգնաժամերի փուլում՝ հաշվի առնելով, որ արժեթղթերի շուկայի մասնակիցների գործունեությունը հաճախ միտված է չարաշահումների իրականացման, իսկ վերջիններիս բացահայտման նկատառումներից ելնելով՝ խիստ կարևորվում է օտարերկրյա կարգավորող մարմինների հետ սերտ համագործակցությունը, մասնավորապես, չարաշահումների վերաբերյալ տեղեկությունների փոխանակման տեսանկյունից:

1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

1. Մասնակիորեն քրեականացնել արժեթղթերի շուկայի չարաշահումները և համապատասխան համագործակցություն իրականացնել պետական մարմինների, այդ թվում՝ քրեական հետապնդման մարմինների հետ:

Արժեթղթերի շուկայի չարաշահումների համար նախատեսվող պատասխանատվության՝ նշված երկփեղկվածությունը պայմանավորում է արժեթղթերի շուկայի նկատմամբ վերահսկողություն իրականացնող ներպետական և օտարերկրյա մարմինների և իրավապահ մարմինների սերտ համագործակցության անհրաժեշտությունն ինչպես արժեթղթերի շուկայի չարաշահումների քրեական հետապնդմանն աջակցելու, այնպես էլ դրանց համար վարչական կարգով պատասխանատվություն կիրառելու նպատակով: Ուստի, սույն օրենսդրական փաթեթով առաջարկվում է քրեական պատասխանատվություն նախատեսել դիտավորությամբ կատարված գնային չարաշահում հանդիսացող իրավախախտումների և ներքին տեղեկությունների անբարեխիղճ օգտագործմամբ կատարված իրավախախտումների համար, եթե առկա է 25 մլն դրամը գերազանցող շահույթ կամ վնաս: Համապատասխանաբար, առաջարկվում է նախատեսել համագործակցություն պետական մարմինների՝ ներառյալ քրեական հետապնդում իրականացնող մարմինների և իրավաբանական անձանց միությունների միջև: Քրեական հետապնդման մարմինների և ՀՀ կենտրոնական բանկի միջև համագործակցությունը ենթադրում է արժեթղթերի շուկայի չարաշահումների կասկածի առկայության դեպքում ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաղորդման

| | |
|---|---|
| | տրամադրում և իրավապահ մարմինների կողմից շուկայի չարաշահման դեպքի կամ հիմնավոր կասկածի վերաբերյալ ՀՀ կենտրոնական բանկից տեղեկատվության խնդրարկում: Ընդ որում, տրամադրվող տեղեկատվությունը կարող է պարունակել գաղտնիք: Նախատեսվում է նաև այլ պետական մարմիններից և իրավաբանական անձանց միություններից, անհրաժեշտության դեպքում, տեղեկությունների ստացում:<br>Հարկ է նշել, որ ներպետական համագործակցության այսպիսի փորձ ՀՀ-ում առկա է ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգում:<br>2. ՀՀ կենտրոնական բանկին վերապահել իրավասություն՝ միջազգային համագործակցության շրջանակներում փոխանակելու գաղտնիք պարունակող տեղեկություններ.<br>Գործող օրենսդրությամբ ՀՀ կենտրոնական բանկը համագործակցում է օտարերկրյա պետության իրավասու մարմինների հետ, սակայն բաց է մնում գաղտնիք պարունակող տեղեկությունների փոխանակումը վերջիններիս հետ: Այսպիսով, ՀՀ կենտրոնական բանկին վերապահվել է նաև գաղտնիք պարունակող տեղեկությունների, մասնավորապես, բանկային գաղտնիքի և ծառայողական տեղեկատվության փոխանակման իրավասություն օտարերկրյա պետության իրավասու մարմինների հետ: Հստակեցվել են նաև տեղեկատվության փոխանակման նպատակները, տեղեկատվության տրամադրման մերժման հիմքերը և այլն:<br>3. ՀՀ կենտրոնական բանկին վերապահել ցանկացած անձից տեղեկություններ, այդ թվում՝ նաև փաստաթղթեր պահանջելու իրավասություն.<br>Այս իրավասությունն անհրաժեշտ է արժեթղթերի շուկայի չարաշահումների դեպքերի արդյունավետ բացահայտման համար, քանի որ միջազգային փորձը ցույց է տալիս, որ միայն վերահսկվող անձանցից տեղեկությունների հավաքագրումը բավարար չէ շուկայի չարաշահումների բացահայտման համար: Բացի դրանից՝ ցանկացած անձից տեղեկություններ պահանջելու իրավասության նախատեսման անհրաժեշտությունը բխում է ԱՀՄԿ-ի սկզբունքներից և նպատակներից:<br>Ընդ որում, տեղեկությունների տրամադրման պահանջի մերժման դեպքում նախատեսվել է պատասխանատվություն «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Արժեթղթերի շուկայի չարաշահումների դեմ պայքարի օրենսդրական մեխանիզմներ:<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>1. ԱՀՄԿ-ի հուշագրին միանալու անհրաժեշտությունը կարևորվում է, քանի որ արժեթղթերի շուկայի մասնակիցների գործունեությունը հաճախ միտված է չարաշահումների իրականացման, իսկ վերջիններիս բացահայտման նկատառումներից ելնելով՝ խիստ կարևորվում է օտարերկրյա կարգավորող մարմինների հետ սերտ համագործակցությունը, մասնավորապես, չարաշահումների վերաբերյալ տեղեկությունների փոխանակման տեսանկյունից: Հայաստանի Հանրապետության կողմից Արժեթղթերի շուկաների հանձնաժողովների միջազգային կազմակերպության ԱՀՄԿ-ի՝ Խորհրդատվության, համագործակցության և տեղեկատվության փոխանակության փոխըմբռնման Հուշագրին (IOSCO MMoU) միանալու վերջնաժամկետը 2013 թվականի հունվարի 1-ն էր, և, քանի որ Հայաստանի Հանրապետությունը նշված ժամկետում ԱՀՄԿ-ի հուշագրին չէր միացել, հայտնվել էր ԱՀՄԿ-ի կողմից հրապարակվող՝ ԱՀՄԿ-ի հուշագրին չմիացած երկրների ցանկում:<br>Իսկ 2013 թվականի մարտին կայացվել էր ԱՀՄԿ-ի նախագահական հանձնաժողովի որոշում, համաձայն որի 2014 թվականի սեպտեմբերի 30-ից այն երկրները, որոնք չեն միացել, զրկվեցին/դադարեցին քվեարկելու իրավունքից: Հայաստանը դրանց թվում էր: ՀՀ քվեարկելու իրավունքը կվերականգնվի միայն հուշագրին միանալու դեպքում:<br>Ստեղծել ներդրողների շահերի պաշտպանության լրացուցիչ երաշխիքներ. բարեխիղճ ներդրողներն |

| | |
|---|---|
| | առավել վստահությամբ մուտք կգործեն արժեթղթերի շուկա՝ գիտակցելով, որ շուկան չարաշահողների նկատմամբ կարող է կիրառվել նույնիսկ քրեական պատասխանատվություն:<br>2. Բարձրացնել շուկայի թափանցիկությունը. ներքին տեղեկատվություն տիրապետող շուկայի մասնակցիները կխուսափեն օգտագործել իրենց տեղեկատվական առավելություններն արժեթղթերի շուկայում գործարքներ կնքելիս: Հետևաբար, ներդրողներն իրենց ներդրումային որոշումները կայացնելիս կհիմնվեն բոլորին հասանելի տեղեկատվության հիման վրա, որն էլ հիմք կհանդիսանա շուկան առավել արդար և գրավիչ դարձնելու համար:<br>3. Համալրել փողերի լվացման համար նախորդող համարվող հանցագործությունների ցանկը. ներքին տեղեկությունների անբարեխիղճ օգտագործումը և գնային չարաշահումները հանդիսանում են փողերի լվացմանը նախորդող հանցագործություններ՝ «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման ու բռնագրավման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի և Ֆինանսական միջոցառումների աշխատանքային խմբի (ՖԱԹՖ) հանձնարարականների համաձայն: |
| 31. | **«Բնակարանային հիփոթեքային կրեդիտավորման մասին», «Սպառողական կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը** (նպատակը)<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>«Բնակարանային հիփոթեքային կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) ընդունումը պայմանավորված է բանկերի կողմից հիփոթեքային վարկերի տրամադրման պայմանների և կարգի վերաբերյալ միասնական կանոնների սահմանման և այդ կանոնների միջոցով սպառողների իրավունքների պաշտպանության անհրաժեշտությամբ, ֆինանսական համակարգի նկատմամբ հանրության վստահության բարձրացման, ֆինանսական միջնորդության ավելացման, հիփոթեքային շուկայի զարգացման միջոցով հիփոթեքային վարկերը հասարակության առավել լայն զանգվածներին հասանելի դարձնելու անհրաժեշտությամբ: Օրենքի նախագիծը սահմանում է այն վարկերը, որոնք հանդիսանում են բնակարանային հիփոթեքային կրեդիտներ և այն անձանց (կրեդիտառուների) շրջանակը, ովքեր օգտվում են օրենքի նախագծով նախատեսված իրավունքներից: Օրենքի նախագծով կարգավորվում են նաև կրեդիտավորման պայմանագրերից բխող հարաբերությունները, պարտադիր պայմանները, կրեդիտառուներին տեղեկատվության տրամադրումը, օժանդակ ծառայությունները և կրեդիտառուների իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանող այլ իրավահարաբերություններ:<br>«Սպառողական կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ |

կատարելու մասին», «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի ընդունումը պայմանավորված է «Բնակարանային հիփոթեքային կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ, ինչպես նաև հիփոթեքով ապահովված վարկերի տրամադրման և հետագա սպասարկման ընթացքում, մասնավորապես, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման, հիփոթեքի առարկայի իրացման և պատշաճ ծանուցման, նոտարական վավերացման հետ կապված օրենսդրական և պրակտիկ խնդիրների վերացման անհրաժեշտությամբ, ինչպես նաև նախատեսվել են տեխնիկական բնույթի փոփոխություններ՝ այլ օրենքների հետ հակասությունները վերացնելու նպատակով:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում օրենսդրորեն սահմանված չեն հիփոթեքային վարկերի տրամադրման պայմանների և կարգի վերաբերյալ միասնական կանոններ, ինչը հնարավորություն չի տալիս լիարժեքորեն պաշտպանելու սպառողների իրավունքներն ու օրինական շահերը: Բացի դրանից՝ առկա են նաև մի շարք օրենսդրական և պրակտիկ խնդիրներ, որոնք խոչընդոտում են նախ նոտարական վավերացման, հիփոթեքի առարկայի նկատմամբ իրավունքների պետական գրանցման, ապա նաև կրեդիտառուի կողմից պարտավորությունների չկատարման դեպքում դրա իրացման, իրացման հետ կապված պատշաճ ծանուցման սահուն ընթացակարգերի ապահովմանը:

1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

1. Կրեդիտավորման պայմանագրի նվազագույն պայմանները և սպառողին տրամադրվող տեղեկատվությունը

«Բնակարանային հիփոթեքային կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի նախագծով հստակ սահմանվում են այն պայմանները, որոնք պարտադիր պետք է ներառվեն կրեդիտավորման պայմանագրում: Այս կարգավորումը հնարավորություն կտա սպառողին պայմանագրի կնքման պահին համապարփակ տեղեկատվություն ստանալու պայմանագրի բոլոր էական պայմանների մասին:

2. Տրամադրված վարկի վաղաժամկետ մարում

«Բնակարանային հիփոթեքային կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի նախագծով հնարավորություն է տրվում վարկառուին վաղաժամկետ մարելու տրամադրված վարկը կամ դրա մի մասը՝ առանց որևէ տույժերի վճարման:

3. Օժանդակ ծառայություններ

Նախագծի հստակ կարգավորումների շնորհիվ կբացառվի այն իրավիճակը, երբ հիփոթեկային վարկ տրամադրելը պայմանավորվում է կրեդիտավորողի այլ ծառայություններից օգտվելու պայմանի հետ: Այս կարգավորումն ուղղված է սպառողի՝ վարկային բեռը թեթևացնելուն:

4. Երաշխավորություն տված անձի պաշտպանությունը

Նախագծով սահմանվում է, որ այն դեպքում, երբ կրեդիտառուի պարտավորությունների կատարման համար երաշխավորություն է տվել ֆիզիկական անձ, երաշխավորության պայմանագիրը պետք է առնվազն պարունակի կրեդիտավորման պայմանագրում առկա տեղեկությունները կամ երաշխավորություն տված անձին պետք է տրամադրվի կրեդիտավորման պայմանագրի պատճենը:

Այս կարգավորման նպատակն է բացառել այն իրավիճակները, երբ երաշխավորը կնքում է երաշխավորման պայմանագիր՝ առանց տեղյակ լինելու երաշխավորվող պարտավորության բոլոր էական պայմանների մասին:

2. **Կարգավորման առարկան**

Բնակարանային հիփոթեքային վարկավորման առկա խնդիրների լուծման գործուն մեխանիզմների ստեղծում:

| | |
|---|---|
| | 3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նշված նախագծերի ընդունումը հնարավորություն կտա հիփոթեքային վարկերի տրամադրման պայմանների և կարգի վերաբերյալ միասնական կանոնների սահմանման միջոցով առավել լիարժեք դարձնելու սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, ինչպես նաև անխոչընդոտ իրականացնելու հիփոթեքային վարկի տրամադրման և հետագա սպասարկման հետ կապված տարբեր ընթացակարգերը: Նշվածն իր հերթին կնպաստի հասարակության առավել լայն զանգվածների համար բնակարան ձեռք բերելու սոցիալական խնդրի լուծմանը: |
| 32. | **«Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը ՀՀ կառավարություն ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Ներկայացված ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի ընդունումը նպատակ ունի բանկային և ապահովագրական համակարգի կարգավորման և վերահսկողության դաշտը համապատասխանեցնելու միջազգային լավագույն փորձին:<br>2. **Առաջարկվող լուծումները**<br>Բազել 3-ով առաջարկված նոր գործիքների և մոտեցումների ներդրում ՀՀ բանկային համակարգում, ինչպես նաև միջազգային շրջանակներում կիրառվող լավագույն փորձի ՀՀ ապահովագրական համակարգում ներդրում:<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Բանկային և ապահովագրական համակարգի կարգավորման և վերահսկողության դաշտում միջազգային լավագույն փորձի ներդրման միջոցով ֆինանսական համակարգի կարգավորման և վերահսկողության դաշտի բարելավում: |
| 33. | **«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և դրանցից բխող իրավական ակտերի նախագծերի փաթեթը ՀՀ կառավարություն ներկայացնելու վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը** (նպատակը)<br>Նախագծերի փաթեթը նպատակ ունի ներդնելու ՀՀ-ում ածանցյալ գործիքների շուկայի զարգացման իրավական մեխանիզմներ և վերացնելու առկա օրենսդրական խոչընդոտները:<br>2. **Առաջարկվող լուծումները**<br>Նախագծերի փաթեթով առաջարկվում է ածանցյալ գործիքների ներդրման և կիրառման նպատակով ստեղծել բարենպաստ իրավական դաշտ, վերացնել գործնականում առկա բացերն ու խոչընդոտները, միջազգային շրջանակներում կիրառվող լավագույն փորձը ներդրնել ՀՀ շուկայում:<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունման արդյունքում կբարելավվի օրենսդրական դաշտը և կվերանան զարգացման խոչընդոտները, օրինակ, կսահմանվի սնանկության գործընթացում ածանցյալ գործիքներից ծագող իրա- |

| | |
|---|---|
| | վունքների և պարտավորությունների հաշվանցի հնարավորությունը: Ածանցյալների շուկան կդառնա առավել հասանելի և կանխատեսելի ինչպես տեղական, այնպես էլ օտարերկրյա ներդրողների համար: |
| 34. | **Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրության համակարգի ներդրման հաշվետվությունից բխող միջոցառումների իրականացման վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ-ում գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրության ներդրման հիմնական նպատակներն են՝<br>1) գյուղացիական տնտեսությունների ապահովագրությունը գյուղատնտեսական ռիսկերից.<br>2) ապահովագրության ոլորտի և գուղատնտեսության՝ որպես տնտեսության առանցքային ճյուղի զարգացում.<br>3) երկրի պարենային անվտանգության մակարդակի բարձրացում.<br>4) պետության գյուղատնտեսական քաղաքականության իրականացման արդյունավետ մեխանիզմների ներդրում:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Գյուղատնտեսությունը համարվում է Հայաստանի տնտեսության գերակա ճյուղերից մեկը և կարևորագույն ոլորտ ՀՆԱ-ի աճի ապահովման համար: Պայմանավորված հիմնականում անբարենպաստ կլիմայական գործոնով՝ ոլորտը համարվում է բարձր ռիսկային, ինչի արդյունքում գյուղացիական տնտեսությունները վերջին տարիների ընթացքում շարունակաբար կրում են էական վնասներ՝ կապված բերքի կորստի հետ: ՀՀ-ում գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրության համակարգի ներդրումը պայմանավորված է ՀՀ-ում գյուղատնտեսական և ապահովագրական ոլորտներում առկա խնդիրներով, մասնավորապես՝<br>1) գյուղատնտեսական ոլորտի բարձր ռիսկայնություն և խոցելիություն.<br>2) բնական ռիսկերի ապահովագրության բացակայություն:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Անհրաժեշտ է ներդնել գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրության գործուն համակարգ՝ հիմնվելով «ՀՀ-ում գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրության համակարգի ներդրում» հաշվետվությունից բխող հիմնական մոտեցումների և միջոցառումների վրա: Համակարգի ներդրման միջոցառումները նախատեսվում են երկու փուլով. առաջին փուլ՝ 2016-2017 թթ. անհրաժեշտ նախադրյալների ստեղծման փուլ և երկրորդ փուլ՝ 2018-2019 թթ. պիլոտի իրականացում:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրության համակարգի ներդրում՝ ներառյալ կարգավորման դաշտի ստեղծումը, ապահովագրական համապատասխան գործիքների մշակումը և անհրաժեշտ ենթակառուցվածքների ստեղծումը:<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>ՀՀ ֆինանսական համակարգում գյուղատնտեսության ապահովագրության գործուն և էֆեկտիվ համակարգի ստեղծում, ինչը նպաստելու է գյուղացիական տնտեսությունների խոցելիության նվազմանը և պաշտպանությանը գյուղատնտեսական ռիսկերից: |
| **ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն** | |
| 35. | **«Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ նոր օրենքի նախագծի վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ֆինանսական համահարթեցման ՀՀ նոր օրենքի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորվում է |

նրանով, որ ֆինանսական համահարթեցման համակարգը գործում է 1998 թվականից, երբ տեղական ինքնակառավարման մարմինները նոր էին կազմավորվել և նրանց բյուջեների եկամտային մասերն ու ֆինանսական կարողությունները շատ փոքր էին: Բացակայում էին ֆինանսական կարողությունների համահարթեցման առավել բազմագործոն մեխանիզմներ կիրառելու համար անհրաժեշտ հաշվարկային տվյալները: Ներկայումս իրավիճակը փոխվել է, ինչով և պայմանավորված է ֆինանսական համահարթեցման նոր օրենքի ընդունման անհրաժեշտությունը:

1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Ելնելով Հայաստանի տեղական ինքնակառավարման առանձնահատկություններից և հաշվի առնելով ֆինանսական համահարթեցման նախորդ տարիների փորձը՝ առաջարկվող ֆինանսական համահարթեցման նոր համակարգը կառուցվելու է մի քանի հիմնարար սկզբունքների հիման վրա՝

- հաշվի առնելով ՀՀ համայնքների բյուջեներում սեփական եկամուտների ցածր մակարդակը՝ ֆինանսական համահարթեցման համար համայնքներին տրամադրվող դոտացիաները պետք է հատկացվեն ՀՀ պետական բյուջեի միջոցներից՝ բացառելով ավելի հարուստ համայնքների եկամտային մասից այդ նպատակի համար միջոցների գանձումը (բացասական դոտացիա),
- համահարթեցման սկզբունքով համայնքներին հատկացվող դոտացիաների հաշվարկման համար հիմք են ընդունվելու համայնքի հաշվարկային եկամտային ունակությունների և համայնքների պարտադիր լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ ծախսային կարիքները:

Նոր օրենքում մասնավորապես նախատեսվել է նոր չափորոշիչների (գործակիցների) կիրառում, օրինակ՝ տրանսպորտային մատչելիության (հեռավորությունը նախկին շրջկենտրոնից, մարզկենտրոնից և Երևանից, համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակը), բնակչության տարիքային կառուցվածքը, համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակը, համայնքի ծառայությունների որակը և համայնքի բարձրադիրությունը:

2. **Կարգավորման առարկան**

Օրենսդրական դաշտի կատարելագործում:

3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**

Ֆինանսական համահարթեցման համակարգի կատարելագործման նպատակով ՀՀ նոր օրենքի նախագիծը հնարավորություն կընձեռի ֆինանսական համահարթեցման դոտացիաները բաշխելու ավելի նպատակային՝ հաշվի առնելով համայնքների ծախսային կարիքները, հեռավորությունը մարզկենտրոնից, համայնքի բարձրադիրությունը, համայնքի բնակչության կառուցվածքը, համայնքի եկամտային հնարավորությունները և այլն:

36.

**«Հայաստանի Հանրապետության տարածքային զարգացման ռազմավարությանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի վերաբերյալ**

1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**

1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

2015 թվականին ավարտվում են ՀՀ տարածքային զարգացման հայեցակարգով սահմանված ժամկետները: Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ՀՀ կառավարության Հայաստանի Հանրապետության 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրով տարածքային զարգացումը համարվում է գերակա ուղղություն, ուստի ՀՀ կառավարության քաղաքականությունն այդ ուղղությամբ կարևորվում է:

1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Տարածքային զարգացման համատեքստում համապատասխան աջակցություններ է ցուցաբերվում ԵՄ-ի կողմից: Առաջիկա տարիների համար նախատեսվում է նշված նպատակով բյուջետային աջակցության

| | |
|---|---|
| | տրամադրում: Անհրաժեշտություն է նաև մարզերի սոցիալ-տնտեսական քառամյա զարգացման ծրագրերի մշակման մեթոդաբանության վերանայումը, որի հիման վրա կթարմացվեն մարզային ծրագրերը: Ինչպես նաև անհրաժեշտություն է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի ՀՏԶՀ-ի կարողությունների զարգացումը՝ որպես տարածքային զարգացման կարևորագույն գործիքակազմ:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Կարգավորման առարկան հանդիսանում է մարզերի սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավումը:<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ռազմավարության գործունության արդյունքում նախատեսվում է մարզերում կրճատել աղքատությունը, զարգացնել ենթակառուցվածքները, որոնցով պայմանավորված կբարելավվեն մարզերի սոցիալ-տնտեսական պայմանները: |
| 37. | **«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ Սահմանադրության 210-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Տեղական ինքնակառավարման մասին օրենքը համապատասխանեցվում է Սահմանադրությանը և ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:»:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>ՀՀ Սահմանադրության 9-րդ գլխում կատարվել են մի շարք փոփոխություններ, որոնք անհրաժեշտ է արտացոլել տեղական ինքնակառավարման բնագավառի օրենսդրության մեջ: Նախատեսվում է կատարել փոփոխություններ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում և անհրաժեշտ այլ իրավական ակտերում: Բացի դրանից՝ կկատարվեն լրացումներ՝ միտված համայնքներում սոցիալական աշխատողի ինստիտուտի ներդրմանը:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Օրենսդրական դաշտի կատարելագործում:<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Տեղական ինքնակառավարման բնագավառի օրենսդրությունը կհամապատասխանեցվի ՀՀ Սահմանադրությանը: |
| 38. | **«Հայաստանի կոշտ կենցաղային թափոնների կառավարման ոլորտի ռազմավարական ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>1.1.**Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի կոշտ կենցաղային թափոնների կառավարման ոլորտի ռազմավարական ծրագիրը մշակվել է Ասիական զարգացման բանկի տեխնիկական աջակցության շրջանակում «Հայաստանի կոշտ կենցաղային թափոնների կառավարման բարելավում» ներդրումային ծրագրի շրջանակում:<br>Ազգային ռազմավարության տեսլականն է Հայաստանում ունենալ ժամանակակից կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգ, որն ընդգրկելու է ամբողջ երկիրը՝ լավագույն միջազգային փորձին և ԵՄ-ի չափանիշներին համապատասխան՝ նպատակ ունենալով աջակցելու ժամանակակից թափոնների ենթակառուցվածքների զարգացմանը՝ տեխնիկական, ֆինանսական և էկոլոգիապես կայուն կերպով |

| | |
|---|---|
| | ծախսաարդյունավետ ծառայություններ մատուցելու համար:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունը նախատեսում է 2016 թ. մեկնարկել Հայաստանի կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի արդիականացման աշխատանքները:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Ազգային ռազմավարական փաստաթուղթը թույլ կտա Հայաստանի կոշտ կենցաղային թափոնների կառավարումն իրականացնել 5 սանիտարական տարածաշրջանային աղբավայրերի միջոցով:<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Կոշտ կենցաղային թափոնների կառավարման բարելավում՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների որակի բարձրացում, որը ենթադրում է աղբահանության ենթակառուցվածքների զարգացում և արդիականացում: |
| 39. | **«Հայաստանի Հանրապետության գյուղական համայնքների 6-րդ համաժողովի նախապատրաստման ու անցկացման նպատակով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությանը գումար հատկացնելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Գյուղական համայնքների համաժողովը Հայաստանում առաջին անգամ անցկացվել է տեղական ինքնակառավարման համակարգի ներդրման 15-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակներում: Այն տեղի է ունեցել 2011 թվականի հոկտեմբերի 10-11-ին՝ Ջերմուկ քաղաքում:<br>Համաժողովի նպատակը գյուղական համայնքների կայուն զարգացմանն աջակցություն է՝ ոլորտում գործող բոլոր դերակատարների երկխոսության, փորձի փոխանակման, իրականացվող ծրագրերի և քաղաքականությունների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման միջոցով: Հաշվի առնելով անցկացված համաժողովների արդյունավետությունը՝ նպատակահարմար գտնվեց այն դարձնել շարունակական:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունը նախատեսում է 2016 թվականին նույնպես կազմակերպել և անցկացնել գյուղական համայնքների համաժողով:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Նմանատիպ համաժողովների անցկացումը թույլ է տալիս ուշադրությունը կենտրոնացնել գյուղի և նրա հիմնախնդիրների վրա, համատեղ քննարկել առկա հարցերը:<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Տարածքների համաչափ զարգացում, որը բազմաթիվ այլ ուղղությունների շարքում ենթադրում է նաև անհրաժեշտ ենթակառուցվածքների և արդյունավետ գյուղատնտեսության զարգացում: |
| 40. | **«Աղետների ռիսկի նվազեցման ազգային ռազմավարությանը և աղետների ռիսկի նվազեցման 2016-2020 թվականների գործողությունների ծրագրին հավանություն տալու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի մարտի 7-ի N 281-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Սենդայի 2015-2030 թթ. շրջանակային գործողությունների ծրագրի իրավական հիմքի ստեղծում: |

| | |
|---|---|
| | **1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>2015 թվականին, որպես ՄԱԿ-ի անդամ երկիր, Հայաստանի Հանրապետությունը միացել է Սենդայի շրջանակային 2015-2030 թթ. գործողությունների ծրագրին, որը սահմանում է աղետների ռիսկի նվազեցման բնագավառում պետությունների կողմից անհրաժեշտ ոլորտային և միջոլորտային նպատակաուղղված գործողություններ՝ տեղական, ազգային, տարածաշրջանային և գլոբալ մակարդակներում:<br>Աղետների ռիսկի նվազեցման ռազմավարությունը բխում է Սենդայի 2015-2030 թթ. շրջանակային գործողությունների ծրագրի գերակայություններից՝<br>1) աղետների ռիսկի գիտակցում.<br>2) աղետների ռիսկի պետական կառավարման ուժեղացում աղետների ռիսկի հաղթահարման համար.<br>3) ներդրում աղետների ռիսկի նվազեցման ոլորտում դիմակայունության հզորացման համար.<br>4) աղետների պատրաստվածության ամրապնդում՝ արդյունավետ արձագանքում և ավելի արդյունավետ վերականգնում և վերակառուցում ապահովելու համար:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հայաստանի Հանրապետությունում աղետների ռիսկի նվազեցման ռազմավարության նպատակն է ձևավորել աղետակայուն երկիր՝ ապահովելով անհատի, հասարակության անվտանգության աստիճանական բարձրացումն ու կայուն զարգացումը, ինչը կնպաստի՝<br>1) աղետներից համընդհանուր մահացության նվազեցմանը.<br>2) համընդհանուր մակարդակով տուժած մարդկանց թվի նվազեցմանը.<br>3) աղետների պատճառած ուղղակի տնտեսական վնասի նվազեցմանը.<br>4) կարևոր նշանակության ենթակառուցվածքներին աղետների պատճառած վնասի և հիմնական ծառայությունների, այդ թվում՝ առողջապահական և կրթական հաստատությունների աշխատանքի խափանման նվազեցմանը:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Սենդայի 2015-2030 թթ. շրջանակային գործողությունների ծրագրի շրջանակում ՀՀ կողմից ստանձնած պարտավորությունների կատարում:<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ունենալ աղետների ռիսկի նվազեցման ազգային ռազմավարություն, որը կնպաստի Աղետների ռիսկի նվազեցման Սենդայի 2015-2020 թթ. գործողությունների ծրագրի իրագործմանը: |
| **Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության միգրացիոն պետական ծառայություն** | |
| 41. | **«Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց, ինչպես նաև երկարաժամկետ միգրանտների ինտեգրման քաղաքականության հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը** (նպատակը)<br>ՀՀ-ում փախստական ճանաչված, ինչպես նաև երկարաժամկետ միգրանտների ինտեգրման խնդրի լուծման անհրաժեշտությանն անդրադարձ է կատարվել ՀՀ կառավարության կողմից հաստատված մի շարք իրավական ակտերում, մասնավորապես՝<br>• ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի նիստի N 51 արձանագրության 33-րդ կետով հավանության արժանացած՝ Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգ: Հայեցակարգը, ի թիվս այլոց, 9–րդ կետով նախատեսում է. «Օտարերկրյա |

քաղաքացիներին փախստական ճանաչելու դեպքում նրանց Հայաստանի Հանրապետության հասարակությանն արդյունավետ ինտեգրման ապահովում»:

- ՀՀ կառավարության 2011 թվականի նոյեմբերի 10-ի N 1593-Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի իրականացման 2012-2016 թթ. գործողությունների ծրագիր: Ծրագիրը, ի թիվս այլոց, 9.3-րդ կետով սահմանում է՝ օտարերկրյա քաղաքացիներին փախստական ճանաչելու դեպքում՝ նրանց ինտեգրմանն ուղղված ծրագրերի մշակում և իրականացում:
- ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 17-ի N 769-Ն որոշմամբ հաստատված՝ ՀՀ միգրացիայի ոլորտը կանոնակարգող ՀՀ օրենսդրությունը միջազգային չափանիշներին, այդ թվում՝ Եվրամիությունում և Միասնական տնտեսական տարածքում ընդունված մոտեցումներին և սկզբունքներին համապատասխանեցնելուն ուղղված գործողությունների 2014-2016 թվականների ծրագիր՝ ծրագրի ժամանակացույցի 2.3-րդ կետով նախատեսվում է ապաստան հայցողներին և փախստականներին տրամադրվող ծառայությունների ընդլայնում և հստակեցում հետևյալ ուղղություններով՝

ա. մասնագիտական վերապատրաստման, այդ թվում՝ որակավորումը բարձրացնելու համար նախատեսված վերապատրաստման ապահովում,

բ. անչափահասների կրթություն,

գ. ինտեգրման միջոցների ապահովում (լեզվի դասընթացներ, մշակութային կողմնորոշման դասընթացներ, առօրյա կյանքին վերաբերող տեղեկատվություն, հանրային կյանքին մասնակցություն և այլն):

- ՀՀ կառավարության 2014 թ. փետրվարի 27-ի «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 303-Ն որոշում: Սույն որոշումով նախատեսվել է աշխատանքներ տանել փախստականների և երկարաժամկետ միգրանտների ինտեգրման ուղղությամբ: Մասնավորապես, այդ որոշման 8.3-րդ կետով նախատեսված է «փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց, ինչպես նաև երկարաժամկետ միգրանտների՝ Հայաստանի Հանրապետությունում լիարժեք ինտեգրման համար նպաստավոր պայմանների ստեղծման վերաբերյալ համապատասխան իրավական ակտի նախագծի մշակում:

### 1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

1988-1992 թթ. Ադրբեջանից բռնի տեղահանվեց ավելի քան կես միլիոն հայ, որից 360000-ը հաստատվեցին Հայաստանի Հանրապետությունում: ՀՀ կառավարությունը նրանց նկատմամբ որդեգրեց ինտեգրման քաղաքականություն և այդ ուղղությամբ իրականացվեցին մի շարք միջոցառումներ, սակայն նրանք կրում էին հատվածային բնույթ, և սիստեմավորված միասնական քաղաքականության փաստաթուղթ այդ ժամանակ չմշակվեց: Նման փաստաթուղթ չմշակվեց հետագայում ևս արդեն Իրաքից, Սիրիայից, Ուկրաինայից և այլ երկրներից նոր ճանաչված փախստականների, ինչպես նաև երկարաժամկետ միգրանտների ինտեգրումն ապահովելու համար:

Խնդիրները, որոնց բախվում են փախստականները կարելի է բաժանել մի քանի խմբի՝

ա. **սոցիալ-տնտեսական** (բնակարանային ապահովում, սոցիալական ենթակառուցվածքներից օգտվելու մատչելիության բարձրացում, զբաղվածության ապահովում, կենսամակարդակի բարձրացում և այլն),

բ. **իրավաքաղաքական** (իրավունքների ու շահերի պաշտպանությանն ուղղված օրենսդրության բարելավում, դրանց իրագործման պետաիրավական երաշխիքների ապահովում, գոյություն ունեցող հասարակաքաղաքական համակարգի և պետաիրավական հարաբերությունների ընդունում, դրանց հետ հոգեբանական նույնացում և այլն),

գ. **հոգևոր-մշակութային** (հայոց լեզվի տիրապետման պայմանների և որակյալ կրթություն ստանալու

| | |
|---|---|
| | ապահովում, հայաստանյան հասարակությունում տարածված սովորույթների ու ավանդույթների յուրացում, հոգևոր, մշակութային արժեքներից լիարժեքորեն օգտվելու պայմանների ապահովում և այլն),<br>դ. **բարոյահոգեբանական** (բռնի տեղահանության ժամանակ ապրած բարոյահոգեբանական ցնցումների, նոր միջավայրում օտարի, միայնակ զգացողության հաղթահարում, նոր սոցիալական կապերի հաստատում, սեփական նշանակության զգացման վերականգնում, շրջապատի փոխհարաբերությունների հոգեբանական նրբերանգների ընկալում, ինքնապաշտպանության հնարավորությունների մեծացում և այլն):<br>Նման խնդիրների, որոշակի այդ խմբին բնորոշ տարբերությամբ, բախվում են նաև երկարաժամկետ միգրանտները:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հայեցակարգի նախագիծն առաջարկում է 1.1-ին կետում թվարկված խնդիրների լուծումները, որոնք ավելի կկոնկրետանան սույն հայեցակարգի ընդունումից հետո մշակվելիք գործողությունների ծրագրում:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Նոր ճանաչված փախստականների և երկարաժամկետ միգրանտների ինտեգրման ապահովումը:<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հայեցակարգը հիմք կապահովի նոր ճանաչված փախստականների և երկարաժամկետ միգրանտների ինտեգրման քաղաքականության իրագործմանն ուղղված գործողությունների ծրագրի մշակման և իրականացման համար: |
| **Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն** | |
| 42. | **«Հարավային ջրավազանային կառավարման պլանը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>2002 թվականի հունիսի 4-ին ՀՀ ջրային օրենսգրքի ընդունմամբ ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության բնագավառում, Հայաստանի Հանրապետությունն առաջնորդվում է ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման սկզբունքով, որի բաղկացուցիչ մասն են հանդիսանում ջրավազանային կառավարման պլանների մշակման, կազմման և իրագործման աշխատանքները:<br>Հարավային ջրավազանային տարածքի կառավարման պլանը մշակվել է ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալության «Մաքուր ջուր և էներգիա» ծրագրի աջակցությամբ՝ հիմք ընդունելով ՀՀ ջրային օրենսգրքի, «Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» և «Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքների պահանջները:<br>Հարավային ավազանային կառավարման տարածքը, համաձայն ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 9-ի N 1749-Ն որոշման, զբաղեցնելով մոտավորապես 4498 քառ. կմ մակերես, ներառում է Որոտան, Ողջի, Մեղրի գետերն իրենց ջրհավաքներով, որոնք տեղաբաշխված են ՀՀ Սյունիքի մարզի վարչական տարածքում: ԱՄՆ-ի ՄԶԳ-ի աջակցությամբ նախ և առաջ մշակվել են Որոտանի, Ողջիի և Մեղրի գետի գետավազանային կառավարման պլանները, որոնք հետագայում հիմք հանդիսացան Հարավային ջրավազանային կառավարման պլանի մշակման համար:<br>Ջրավազանային կառավարման պլանի հիմնական նպատակն է հավասարակշռել ջրօգտագործողների՝ ներառյալ համայնքների, էներգետիկայի, արդյունաբերության, գյուղատնտեսության և շրջակա միջավայրի փոխկապակցված հարաբերությունները: Այն նպատակ ունի նաև աջակցելու ջրային ռեսուրսների կառավարման համար պատասխանատու մարմիններին ջրային ռեսուրսների ոլորտում որոշումներ ընդունելուն: |

| | |
|---|---|
| | 1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հարավային ջրավազանային տարածքի կառավարման պլանի ընդունումը հնարավորություն կտա Հարավային ավազանային կառավարման տարածքում հավասարակշռելու ջրային ռեսուրսների առաջարկը և պահանջարկը, բացահայտելու ջրավազանում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը, դրանց կանխարգելման և նվազեցման միջոցառումները:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հարավային ջրավազանային տարածքի կառավարման պլանի ընդունումը հնարավորություն կտա հավասարակշռելու ջրային ռեսուրսների առաջարկը և պահանջակը՝ ներառյալ խմելու-կենցաղային, արդյունաբերական, ձկնաբուծության և այլ նպատակներով:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Պլանի մշակումը և իրագործումը հնարավորություն կտա ըստ ոլորտների գնահատելու ջրի վրա բնական և մարդածին (այդ թվում կլիմայի փոփոխության ազդեցությունը), բացահայտելու ջրավազանում ցանկալի վիճակին հասնելուն ուղղված միջոցառումները, բացահայտելու ջրավազանում արտակարգ իրավիճակների կանխարգելման հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման միջոցառումները, որոշելու ջրային ռեսուրսի պահպանության և օգտագործման գերակայությունները:<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հարավային ավազանային տարածքում ջրային ռեսուրսների ավելի արդյունավետ և համապարփակ կառավարում: Ջրավազանային կառավարման պլանը նախապայման կհանդիսանա ջրային ռեսուրսների կառավարման ապակենտրոնացման համար: |
| 43. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի N 1079-Ն և 2013 թվականի հունվարի 10-ի N 22-Ն որոշումներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը** (**նպատակը**)<br>«Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի N 1079-Ն և 2013 թվականի հունվարի 10-ի N 22-Ն որոշումներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի մշակման անհրաժեշտությունը բխում է Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի 61-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 2014 թվականի մայիսի 19-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 511-Ա որոշման 2.4.4-րդ «Բնապահպանությունը» մասի 1-ին ենթակետի պահանջներից, որի նպատակն է սահմանել նախնական հաշվարկված և հանքի փակման ծրագրում ներառված գումարների տարբերությունների վճարման մեխանիզմներն ու երաշխիքները:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ընդերքի մասին Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված են մի շարք ընդերքօգտագործման վճարներ, այդ թվում՝<br>- շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրման (ռեկուլտիվացիոն)՝ ընդերքօգտագործման ընթացքում խախտված հողերի վերականգնման համար,<br>- մշտադիտարկումների իրականացման՝ օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման համար:<br>Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրման և մշտադիտարկումների իրականացման վճարների չափերի հաշվարկման և վճարման կարգերը սահմանված են համապատասխանաբար Հայաս- |

| | |
|---|---|
| | տանի Հանրապետության կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի N 1079-Ն և 2013 թվականի հունվարի 10-ի N 22-Ն որոշումներով: <br> 1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** <br> Ընդերքի մասին Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 49-րդ հոդվածով նախատեսված է նաև հանքավայրի շահագործման աշխատանքների ավարտից 2 տարի առաջ հանքի փակման վերջնական ծրագրի կազմում, որում ներկայացվող խախտված հողերի վերականգնման և մշտադիտարկումների իրականացման ճշգրտված վճարները կարող են տարբերվել օգտակար հանածոների շահագործման/ ուսումնասիրության նախագծերում/ծրագրերում ներկայացված գումարներից: <br> «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի N 1079-Ն և 2013 թվականի հունվարի 10-ի N 22-Ն որոշումներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի մշակմամբ նախատեսվում է սահմանել նախնական հաշվարկված և հանքի փակման ծրագրում ներառված գումարների տարբերությունների վճարման մեխանիզմներն ու երաշխիքները: <br> 2. **Կարգավորման առարկան** <br> «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի N 1079-Ն և 2013 թվականի հունվարի 10-ի N 22-Ն որոշումներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի մշակումն ու կիրառումն իրավական նախադրյալներ կապահովեն խախտված հողերի վերականգնման և մշտադիտարկումների լիարժեք իրականացման համար անհրաժեշտ վճարների հաշվարկման և գանձման գործընթացի համար: <br> 3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը** <br> «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի N 1079-Ն և 2013 թվականի հունվարի 10-ի N 22-Ն որոշումներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է՝ <br> - շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրում, <br> - օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման համար անհրաժեշտ հատկացումների կատարում, <br> - բնապահպանական օրենսդրության պահանջների արդյունավետ իրականացում: |
| 44. | **«Հայաստանի Հանրապետությունում «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի կոնվենցիայի իրականացման գործողությունների ազգային ծրագրի** 2016-2020 **թվականներին իրականացվելիք միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի վերաբերյալ** <br><br> 1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը** (նպատակը) <br> Հայաստանի Հանրապետությունը 2003 թվականին վավերացրել է «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի կոնվենցիան և այդ թվականից ի վեր իրականացնում է կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների կատարումը: <br> 1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** <br> Նշված պարտավորություններից մեկն էլ Հայաստանի Հանրապետությունում «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի կոնվենցիայի իրականացման ազգային ծրագրի մշակումն էր, որը հավանության արժանացավ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից՝ 2005 թվականի |

| | |
|---|---|
| | հունվարի 13-ի նիստի N 1 արձանագրության 3-րդ կետով:<br>Ծրագրում ամրագրված են կայուն օրգանական աղտոտիչների (ԿՕԱ) հիմնախնդիրները, ԿՕԱ–ների օգտագործման դադարեցմանը, դրանց արտանետումների կրճատմանը և ԿՕԱ–ներ պարունակող թափոնների ոչնչացմանն ուղղված գործողությունները:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Կոնվենցիայով կարգավորվող վտանգավոր նյութերի ցանկը պարբերաբար լրացվում է նոր նյութերով, այսպես ցանկում 2010 թվականին ներառվել է 10 նոր նյութ (քլորդեկոն, հեքսաբրոմդիֆենիլ, $\alpha$-հեքսաքլոր-ցիկլոհեքսան, β-հեքսաքլոր-ցիկլոհեքսան, լինդան, քառաբրոմդիֆենիլեթեր և պենտաբրոմդիֆենիլեթեր (առևտրային պենտաբրոմդիֆենիլեթեր), հեքսաբրոմդիֆենիլեթեր և հեպտաբրոմ-դիֆենիլեթեր (առևտրային օկտաբրոմդիֆենիլեթեր), գերֆտորօկտանային սուլֆոնաթթու, դրա աղերը և գերֆտորօկտանային սուլֆոնիլֆտորիդ, պենտաքլորբենզոլ, էնդոսուլֆան), որոնց հանդեպ նույնպես պետք է կիրառվեն կարգավորիչ միջոցներ:<br>Ստոկհոլմի կոնվենցիայի 7-րդ հոդվածին համապատասխան՝ Կոնվենցիայի կողմ երկիրը պարտավոր է վերանայել և նորացնել «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի կոնվենցիայի իրականաց-ման ազգային ծրագիրը՝ ներառյալ կոնվենցիայի հավելվածում ընդգրկված 12 նախնական և 10 նոր ԿՕԱ-ները:<br>2. **Կարգավորման առարկան**<br>«Հայաստանի Հանրապետությունում «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի կոնվենցիայի իրականացման ազգային ծրագրի վերանայման արդյունքում մշակվել է փաստաթուղթ, որն իրենից ներկայացնում է կայուն օրգանական աղտոտիչների կառավարման ազգային ծրագրի 2016-2020 թթ. նորացված տարբերակը, որը ներառում է Ստոկհոլմի կոնվենցիայի հավելվածում ընդգրկված նախնական 12 ԿՕԱ-ների հետ կապված հետագա միջոցներն ու միջոցառումները և 10 նոր ԿՕԱ-ների հետ կապված իրակա-նացման ենթակա նախատեսվող գործողությունները, որոնք նպատակաուղղված են ԿՕԱ-ների հիմնախնդիր-ների լուծմանը:<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>ՀՀ կառավարության որոշման ընդունումը կնպաստի Ստոկհոլմի կոնվենցիայով ստանձնած պարտավո-րությունների կատարմանը, կոնվենցիայով կարգավորվող վտանգավոր նյութերի էկոլոգիապես անվտանգ կառավարմանը, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա դրանց հնարավոր վնասակար ազդեցության նվազեցմանն ու անվտանգության ապահովմանը: |
| 45. | **«Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման միջոցառումների** 2017 **թվականի տարեկան ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը** (նպատակը)<br>«Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների 2017 թվականի տարեկան ծրագրին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետ-տության կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը կապված է լճի և դրա ջրհա-վաք ավազանի ներկայիս վիճակի բարելավման խնդրի հետ, որի համար անհրաժեշտ է ապահովել Սևանա լճի և դրա ջրհավաք ավազանի էկոհամակարգերի պահպանությանը, լճի էկոլոգիական հավասարակշռության վերականգնմանն ու Սևանա լճի ջրհավաք ավազանի բնական պաշարների կայուն օգտագործմանն ուղղված 2017 թ. նախատեսված ծրագրերի ու միջոցառումների պարտադիր կատարումը:<br>Սկսած 2001 թվականից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից յուրաքանչյուր տարի |

հաստատվում է Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման միջոցառումների տարեկան ծրագիրը: Տարեկան ծրագրի ընդունման անհրաժեշտությունը բխում է «Սևանա լճի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ, 13-րդ և 14-րդ հոդվածների պահանջներից և «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված նպատակներից ու խնդիրներից:

1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Առաջնային են Սևանա լճի մակարդակի բարձրացման և նրա ջրհավաք ավազանի բնական պաշարների պահպանության և կառավարման հարցերը, որոնք 2001 թվականից դրվել են օրենսդրական հիմքի վրա և կարգավորվում են «Սևանա լճի մասին» և «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունիսի 24-ի N 876-Ն որոշմամբ:

Օրենքներում ամրագրված են Սևանա լճի էկոհամակարգի կայունության, ջրի դրական հաշվեկշռի ապահովման և բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման դրույթները, որոնց կատարման անհրաժեշտ պայմաններից է լճի մակարդակի բարձրացումն առնվազն 6 մետրով: Լճից բաց թողնված ջրի քանակը յուրաքանչյուր տարի հաստատվում է Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշմամբ:

Ջրի տակ մնացող օրգանական նյութերի մեծ զանգվածները վտանգում են լճի վիճակը՝ ջրի աղտոտման տեսակետից: Լուրջ խնդիրներ են առաջացնում նաև ջրի տակ մնացած բազմաթիվ շինությունները և ենթակառուցվածքները: Միաժամանակ ջրի բարձր որակն ապահովելու համար կարևոր է կտրուկ բարելավել վիճակը՝ կապված մեծ քանակի չմաքրված կեղտաջրերի լիճ թափվելու հետ:

Սևանա լճի ձկնաշխարհն աչքի է ընկել ինքնատիպությամբ, սակայն, լճի մակարդակի իջեցումը, կենսապաշարների գերօգտագործումը և դրանց կանոնավոր մոնիթորինգի բացակայությունը նպաստեցին լճի կենսաբազմազանության փոփոխմանը, ձկնապաշարների կտրուկ անկմանը՝ էնդեմիկ ձկնատեսակների, հատկապես Սևանի իշխանի ենթատեսակների անհետացմանը և սիգ ձկնատեսակի արդյունագործական ծավալների նվազեցմանը: Հայաստանի կարմիր գրքի (2010 թ.) մեջ են գրանցվել Սևանի իշխանը, Սևանի կողակը և Սևանի բեղլուն: Ձկնատեսակների թվի կրճատման հետևանքով լճի էկոհամակարգում տեղի է ունենում օրգանական նյութերի ինտենսիվ կուտակում և ճահճացմանը հանգեցնող գործընթացների արագացում, ինչը ևս բացասաբար է անդրադառնում Սևանա լճի էկոհամակարգի վրա: Հիմնական խնդիր է նաև լճում բնական և արհեստական եղանակներով էնդեմիկ ձկնատեսակների պոպուլյացիայի մեծացումը մինչև կայուն ու կենսունակ աստիճանը:

1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Սևանա լճի հիմնախնդրի լուծումը Հայաստանի բնապահպանական քաղաքականության կարևորագույն մասն է: Հիմնական ջանքերը կենտրոնանում են հետևյալ խնդիրների լուծման վրա՝ լճի մակարդակի շարունակական բարձրացում, Սևանա լճի ջրհավաք ավազանի ջրային ռեսուրսների անարդյունավետ օգտագործման կանխարգելում, փաստացի ջրօգտագործման պայմանների նկատմամբ վերահսկողության համակարգի կատարելագործում, լճի ջրհավաք ավազանի ջրի որակի բարելավում, կենսաբանական ռեսուրսների պահպանում և վերականգնում, Սևանա լճի ափամերձ տարածքների ջրածածկման հետ կապված խնդիրների լուծում, թափոնների կառավարման կատարելագործում:

2. **Կարգավորման առարկան**

«Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանման, վերարտադրման, բնականոն զարգաց-

| | |
|---|---|
| | ման և օգտագործման միջոցառումների 2017 թվականի տարեկան ծրագրին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի կարգավորման նպատակն է Սևանա լճի՝ որպես ազգային և տարածաշրջանային նշանակության քաղցրահամ ջրավազանի պահպանումը, էկոլոգիական հավասարակշռության վերականգնումը և Սևանա լճի ջրհավաք ավազանի էկոհամակարգերի բնականոն ներդաշնակ զարգացմանն ու կայուն օգտագործմանն ուղղված 2017 թ. նախատեսված ծրագրերի ու միջոցառումների պարտադիր կատարման ապահովումը:<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է՝<br>- Սևանա լճի մակարդակի բարձրացում,<br>- Սևանա լճի և դրա ջրհավաք ավազանի էկոհամակարգերի կենսաբազմազանության պահպանություն և կենսապաշարների կայուն օգտագործման բարելավում,<br>- ափամերձ ջրածածկ տարածքներից անտառաշերտերի, բազմաթիվ շինությունների և ենթակառուցվածքների մաքրում,<br>- ռեկրեացիայի արդյունավետ զարգացում,<br>- կենցաղային թափոնների կառավարման բարելավում,<br>- կառավարման համակարգի բարելավում: |
| 46. | **«Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված մի շարք բնապահպանական միջազգային կոնվենցիաներից բխող՝ Հայաստանի Հանրապետության պարտավորությունների կատարման միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը** (**նպատակը**)<br>Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է մի շարք միջազգային բնապահպանական կոնվենցիաներ և արձանագրություններ, մասնավորապես՝<br>• ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիա<br>• ՄԱԿ-ի «Օզոնային շերտի պահպանման մասին» Վիեննայի կոնվենցիա<br>• ՄԱԿ-ի «Կենսաբազմազանության մասին» կոնվենցիա<br>• «Կենսաբանական անվտանգության մասին» Կարթագենյան արձանագրություն<br>• ՄԱԿ-ի Անապատացման դեմ պայքարի կոնվենցիա<br>• ՄԱԿ-ի ԵՏՀ «Արդյունաբերական վթարների անդրսահմանային ներգործության մասին» կոնվենցիա<br>• «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» (CITES) կոնվենցիա<br>• Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին կոնվենցիա (Բեռնի կոնվենցիա)<br>• ՄԱԿ-ի «Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» Բազելի կոնվենցիա<br>• ՄԱԿ-ի «Միջազգային առևտրում առանձին վտանգավոր քիմիական նյութերի և պեստիցիդների վերաբերյալ նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգի մասին» Ռոտերդամի կոնվենցիա<br>• ՄԱԿ-ի «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի կոնվենցիա<br>• ՄԱԿ-ի ԵՏՀ-ի «Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» Էսպոյի կոնվենցիա և այլն՝ |

| | |
|---|---|
| | ստանձնելով դրանց իրականացման հետ կապված համապատասխան պարտավորություններ:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Նշված պայմանագրերի իրականացումը պահանջում է համաձայնեցված և համակարգված մոտեցում համապատասխան քաղաքական, ռազմավարական և իրավական փաստաթղթերի մշակման, համապատասխան գործողությունների կատարման, ինչպես նաև ծրագրավորված գործողությունների կատարումն ապահովող ֆինանսավորման հարցերի լուծման ուղղությամբ:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>«Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված մի շարք բնապահպանական միջազգային կոնվենցիաներից բխող՝ Հայաստանի Հանրապետության պարտավորությունների կատարման միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, հանդիսանալով բնապահպանական միջազգային կոնվենցիաների պահանջների իրագործման կարճաժամկետ (2017-2022 թթ. համար) գործողությունների ցանկը հաստատող հերթական 4-րդ փաստաթուղթը (ՀՀ կառավարության 25.02.1998 թ. N 115-Ն որոշումը, ՀՀ կառավարության 02.12.2004 թ. N 1840-Ն որոշումը, ՀՀ կառավարության 10.11.2011 թ. N 1594-Ն որոշումը) նպատակ ունի հստակեցնելու մի շարք բնապահպանական կոնվենցիաներից բխող Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած պարտավորությունները և ապահովելու համապատասխան աշխատանքների համակարգված իրականացումը:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Որոշման կարգավորման առարկա են հանդիսանում մի շարք բնապահպանական կոնվենցիաներով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարման գործընթացները:<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Որոշմամբ հաստատված միջազգային բնապահպանական կոնվենցիաներից բխող Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած պարտավորությունների հստակեցում, ճյուղային գերատեսչությունների հետ համատեղ միջոցառումների համակարգված իրականացում, ինչը հնարավորություն կընձեռի բարելավելու երկրի էկոլոգիական իրավիճակը՝ խուսափելով անհրաժեշտ միջոցառումների իրականացմանն ուղղված գործողությունների կրկնողություններից, որոշման ընդունումը կնպաստի նաև բնապահպանական խնդիրների լուծմանն ուղղված ֆինանսական միջոցների ներգրավմանը: |
| 47. | **«Դիլիջան» ազգային պարկի** 2016-2025 **թվականների կառավարման պլանը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Դիլիջան» ազգային պարկի 2016-2025 թվականների կառավարման պլանը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի մշակման անհրաժեշտությունը ծագել է 2015 թ. ընթացքում մշակված «Դիլիջան» ազգային պարկի 2016-2025 թթ. կառավարման պլանի առկայությամբ: Նախորդ՝ «Դիլիջան» ազգային պարկի կառավարման պլանի 2004-2006 թթ. ընթացքում ՀՀ բնապահպանության նախարարության Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման ծրագրի շրջանակներում Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի տրամադրած դրամաշնորհի միջոցներով մշակված, 2011 թ. գործողության ժամկետի ավարտից հետո դեռևս առկա են մի շարք հիմնախնդիրներ, որոնք զգալիորեն խոչընդոտում են կառավարման գործընթացների արդյունավետ իրականացմանը և անբավարար են գիտական ուսումնասիրությունների իրականացման համար, որոնք իրենց հերթին հիմք են հանդիսանում կառավարման վերաբերյալ որոշումների ընդունման համար: |

| | |
|---|---|
| | 1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Կառավարման պլանի բացակայության պատճառով թերի է իրականացվում մոնիթորինգի համակարգի գործունեությունը, որի պատճառով ամբողջությամբ չեն վերահսկվում կենսաբազմազանության վիճակի զարգացման միտումները և հետևողականորեն չեն գնահատվում տարբեր ճնշումների ազդեցությունն ազգային պարկի տարածքների վրա:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Կառավարման պլանի շրջանակներում կատարված աշխատանքները գնահատելու և նշված հիմնախնդիրները լուծելու համար վերանայվել ու մշակվել է «Դիլիջան» ազգային պարկի 2016-2025 թթ. կառավարման նոր պլանը, որում ներառվել է երկարաժամկետ գործողությունների ծրագիր (օպերացիոն պլան)՝ կառավարման վերաբերյալ որոշումներն իրագործելու նպատակով:<br>Ծրագիրն իրականացվել է Կովկասի բնության հիմնադրամի կողմից հատկացված դրամաշնորհի ֆինանսական միջոցների հաշվին:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Պլանի մշակումը և նրանում ներառված միջոցառումների իրագործումը հնարավորություն կտա «Դիլիջան» ազգային պարկի տարածքում առավել արդյունավետ վերահսկելու կենսաբազմազանության վիճակի զարգացման միտումները և հետևողականորեն գնահատելու տարբեր ճնշումների ազդեցությունը:<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>«Դիլիջան» ազգային պարկի կառավարման պլանի մշակման արդյունքում կընդունվի երկարաժամկետ գործողությունների ծրագիր (օպերացիոն պլան)՝ կառավարման վերաբերյալ որոշումներն իրագործելու նպատակով, ինչպես նաև կամրապնդվի մոնիթորինգի համակարգը, որի արդյունքում կգնահատվի և կվերահսկվի կենսաբազմազանության վիճակը: |
| | **Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն** |
| 48. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներակայացնելը**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը բխում է քաղաքաշինության ոլորտում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված հետևողական քայլերի շարունակականության ապահովման, կառուցապատման ընթացակարգերի հետագա կանոնակարգման ու պարզեցման, ինչպես նաև կոռուպցիոն ռիսկերի նվազեցման անհրաժեշտությամբ:<br>Մասնավորապես, ներկայումս գործող կարգով՝ ավարտված շինարարության ընդունող հանձնաժողովը ձևավորվում է՝ ելնելով Հայաստանի Հանրապետությունում շինարարության օբյեկտների ռիսկայնության աստիճանի դասակարգումից՝ ավարտված շինարարական օբյեկտն ընդունելու վերաբերյալ սահմանված պահանջներին համապատասխան:<br>Նախագծով նախատեսվում է, բացառությամբ II ռիսկայնության աստիճանի դասակարգում ունեցող օբյեկտների, միջինից բարձր ռիսկայնության աստիճանի (III կատեգորիայի), բարձր ռիսկայնության աստիճանի (IV կատեգորիայի) հատուկ և կարևորագույն նշանակություն ունեցող շինարարական օբյեկտների, ինչպես նաև վտանգավոր և տեխնիկապես բարդ կամ երկու և ավելի պետությունների շահերին առնչվող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ բարձրագույն ռիսկայնության |

| | |
|---|---|
| | աստիճանի (V կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտների ավարտված շինարարության ընդունող հանձնաժողովի աշխատանքներում ներգրավել քաղաքաշինական պետական տեսչությանը:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Վերանայման և հստակեցման անհրաժեշտություն ունեն գործող իրավական ակտերով սահմանված՝ ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողովի կազմավորման և գործելու հետ կապված խնդիրները:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Գործող կարգը կլրացվի կառուցապատման թույլտվությունների տրամադրման ընթացակարգը հստակեցնող դրույթներով:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Նախագծի մշակման հիմնական նպատակը՝ ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողովի կազմավորման և գործելու հետ կապված ընթացակարգերի պարզեցմանն ուղղված հնարավոր ռեզերվների բացահայտումն է և, համապատասխանաբար, դրանց իրավական ամրագրումը: Կհստակեցվեն նաև քաղաքաշինական համալիր փորձաքննության իրականացմանը, էլեկտրոնային թույլտվությունների տրամադրմանը, ինչպես նաև կառուցապատման թույլտվությունների տրամադրման համակարգի հնարավորինս պարզեցմանն ուղղված այլ դրույթներ:<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունմամբ ակնկալվում է քաղաքաշինության ոլորտում ներդրողների համար ձևավորել հստակ և ամբողջական իրավական միջավայր՝ հնարավորինս պարզեցված պայմաններով՝ փոխկապակցված կառուցապատվող օբյետի ռիսկայնության աստիճանի հետ:<br>Ոչ պակաս կարևոր հանգամանք է ներկայացնում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված այնպիսի միջոցառումների իրականացումը, որոնք որևէ կերպ չեն վտանգի կառուցապատվող միջավայրի անվտանգությունը, կայունությունն ու հուսալիությունը: |
| 49. | **«Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեով նախատեսված հատկացումների հաշվին աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության միջոցառումները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ**<br><br>1.1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարության ծրագրով (ՀՀ կառավարության 2014 թվականի մայիսի 19-ի N 511-Ա որոշում, 2.2.6-րդ կետ, տասներկուերորդ պարբերություն) նախատեսված՝ աղետի գոտու բնակավայրերում 2008 թվականին մեկնարկած՝ երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովմանն ուղղված պետական աջակցության ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) շարունակական իրականացում<br>1.2. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ Շիրակի, Լոռու և Արագածոտնի մարզերի բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած, սահմանված կարգով համապատասխան համայնքների ղեկավարների կողմից հաշվառված և 2015 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ ծրագրի շահառու ճանաչված 5363 ընտանիքից 2008-2015 թվականներին լուծվել են 4398 ընտանիքի բնակարանային խնդիրները: Ընդ որում, նշված 4398 ընտանիքից Գյումրի քաղաքում շահառու ճանաչված 223 ընտանիքի հնարավորություն է ընձեռվել հոգալու իրենց |

բնակարանային խնդիրները ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1155-Ն որոշմամբ ՀՀ Շիրակի մարզպետարանին հատկացված 1.5 մլրդ դրամ միջոցների հաշվին 2014-2015 թթ. իրականացված՝ բնակարան (բնակելի տուն) ձեռք բերելու համար բնակարանների գնման վկայագրերի (ԲԳՎ) միջոցով ֆինանսական աջակցության տրամադրման ծրագրի 1-ին փուլի շրջանակներում:

Դրա հետ մեկտեղ, ՀՀ կառավարության 2015 թվականի նոյեմբերի 19-ի N 1363-Ն որոշմամբ կարգավորվել են Վանաձոր քաղաքում շահառու ճանաչված 14, ինչպես նաև ՀՀ Շիրակի և Լոռու մարզերի գյուղական բնակավայրերում բնակարանային պայմանների բարելավման իրենց իրավունքը դատական կարգով վերականգնած և մեկ սենյակի շահառու ճանաչված 15 ընտանիքների բնակարանային ապահովման հետ կապված հարցերը: Նույն որոշմամբ մեկնարկել է Գյումրի քաղաքի ԲԳՎ ծրագրի 2-րդ փուլը՝ ՀՀ կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 2-ի N 1151-Ն որոշմամբ Գյումրի քաղաքում ԲԳՎ ծրագրի 1-ին փուլի իրականացման համար ՀՀ Շիրակի մարզպետարանին հատկացված 1.5 մլրդ դրամից ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետարանում ՀՀ Շիրակի մարզպետարանի անվամբ բացված արտաբյուջետային հաշվին առկա 85,475.0 հազ. դրամ տնտեսված միջոցների հաշվին:

Արդյունքում, դեռ լուծում է պահանջում ծրագրի շահառու ճանաչված, սակայն բնակարանային պայմանները չբարելավված 922 ընտանիքի բնակարանային խնդիրը:

1.3. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Առաջարկվում է ՀՀ 2016 թվականի ընթացքում անդրադառնալ երկրաշարժի աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով բազմաբնակարան շենքերում բնակարան կորցրած և ծրագրի շահառու ճանաչված 183 ընտանիքի բնակարանային խնդրի լուծմանը, որոնցից՝

- 133 ընտանիքի (Գյումրի՝ 100 և Ախուրյան՝ 33) բնակարան (բնակելի տուն) ձեռք բերելու համար բնակարանների գնման վկայագրերի միջոցով ֆինանսական աջակցության տրամադրում (ԲԳՎ 2-րդ փուլի ծրագիր),
- Սպիտակ քաղաքում մեկ սենյակի շահառու ճանաչված 50 ընտանիքի ուղղակի ֆինանսական աջակցության տրամադրում:

Դրա հետ մեկտեղ, ՀՀ 2016 թվականի բյուջեով նախատեսված 798.0 մլն դրամ միջոցների հաշվին նախատեսվում է վերսկսել Ախուրյանի համայնքում ծրագրի շահառու ճանաչված 104 ընտանիքների համար համայնքում նախորդ տարիներին շինարարությունն սկսած 3 բազմաբնակարան շենքերի շինարարական աշխատանքները:

1.4. **Կարգավորման առարկան**

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեով նախատեսված 1,849,525.0 դրամ հատկացումների հաշվին Գյումրի և Սպիտակ քաղաքներում, ինչպես նաև Ախուրյանի համայնքում բնակարանային պայմանները բարելավելու իրավունք ունեցող ընտանիքներին տրամադրվող պետական աջակցության մոտեցումների և դրա հետ կապված հարցերի ամրագրում:

1.5. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**

Պետական աջակցության տրամադրման մոտեցումների հստակեցման արդյունքում ապահովվել Գյումրի և Սպիտակ քաղաքներում ու Ախուրյանի համայնքում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովմանն ուղղված պետական աջակցության ծրագրի շարունակական իրականացումը:

| | |
|---|---|
| 50. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության** 2003 **թվականի օգոստոսի** 8-**ի** N 997-Ն **և Հայաստանի Հանրապետության կառավարության** 2011 **թվականի դեկտեմբերի** 29-**ի** N 1920-Ն **որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության քննարկմանը ներակայացնելը**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը** ( **նպատակը**)<br>Հաշվի առնելով ընթացիկ տարվա դեկտեմբերին ընդունված «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունները (այսուհետ՝ օրենք), մասնավորապես, օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ կետի «բ» ենթակետով «մեկից ավելի համայնքների տարածքներ ընդգրկող միկրոռեգիոնալ մակարդակի տարածքային հատակագծման նախագծեր» նոր հասկացության՝ համակցված տարածական պլանավոր-ման փաստաթղթի սահմանումը, անհրաժեշտություն է առաջացել լրամշակել տարածքային հատակագծման ուրվագծի և նախագծի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման (ՀՀ կառավարության 2003 թվականի օգոստոսի 8-ի N 997-Ն որոշում) և գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման (ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշում) գործող իրավական ակտերը՝ համակցված տարածական պլանավորման փաստաթղթին առնչվող դրույթների մասով:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս գործող՝ նշված իրավական ակտերով կանոնակարգված են մարզերի համար նախա-տեսված տարածքային (ռեգիոնալ) մակարդակի և առանձին համայնքի գլխավոր հատակագծերի փաստաթղթի մշակման գործընթացը: Համակցված միկրոռեգիոնալ տարածական պլանավորման փաստաթուղթը ներառելու է մի քանի համայնքների տարածքներ և դրանով պայմանավորված՝ ունենալու է որոշակի տարբերություններ՝ ինչպե՛ս կազմին և բովանդակությանը, այնպե՛ս էլ ընթացակարգին վերաբերող մասով:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Գործող իրավական ակտերը կլրացվեն միկրոռեգիոնալ փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման գործընթացը, կազմը և բովանդակությունը սահմանող՝ օրենքից բխող դրույթներով:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Գործող իրավական ակտերի համապատասխանեցում ավելի բարձր իրավական ուժ ունեցող օրենսդրական ակտով սահմանված նորմերին:<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտերի կիրառման դեպքում ներկայացված կլինի օրենքով սահմանված հասկացությունը կիրառելու գործիքակազմը, ինչը հնարավորություն կտա լիարժեքորեն օգտագործելու միկրոռեգիոնալ մակարդակի տարածքային հատակագծման նախագծերը՝ զգալի չափով դյուրացնելով համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման գործընթացը և նախանշելով համայնքների տարածական զարգացման ուղղություններն ու կառուցապատման հիմնական չափորոշիչները: |
| 51. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության** 2009 **թվականի հունիսի** 26-**ի** N 728-Ն **և** N 792-Ն **որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներակայացնելը**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը** (նպատակը)<br>Որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը բխում է «Հայաստանի Հանրապետության |

| | |
|---|---|
| | Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնքի և հարակից տարածքների զարգացման և ներդրումների խրախուսման մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ օրենք) սահմանված՝ քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներում քաղաքաշինական գործունեության կանոնակարգման, դրանցում կառուցապատման հատուկ ռեժիմների սահմանման և գործառույթների պարզեցման ու հստակեցման անհրաժեշտությունից՝ ելնելով տվյալ հատուկ կարգավորման օբյեկտի առանձնահատկություններից:<br>Հաշվի առնելով, որ ՀՀ կառավարության որդեգրած քաղաքականության նպատակներից է պետության, համայնքի և մասնավոր կազմակերպությունների փոխգործակցության կապերի ամրապնդումը, իրականացվող ներդրումային ծրագրերին անհրաժեշտ աջակցության ցուցաբերումը, անհրաժեշտություն է առաջացել քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտներում կառուցապատման ընթացակարգերը կանոնակարգող իրավական ակտերը լրացնել օրենքից բխող դրույթներով:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի N 728-Ն ներկայումս գործող որոշմամբ Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմանում առանձնացվել են քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներ: ՀՀ կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի 792-Ն որոշմամբ հաստատվել է քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներում քաղաքաշինական գործունեության իրականացման կարգը:<br>Այնինչ, Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված ամբողջ տարածքն օրենքով համարվել է հատուկ կարգավորման օբյեկտ: Դրա հետ մեկտեղ, ստեղծվել է Դիլիջանի քաղաքաշինական և ներդրումների խրախուսման խորհուրդ, սահմանվել են վերջինիս իրավասությունները, այդ թվում՝ քաղաքաշինական գործունեությանն առնչվող մասով:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Գործող կարգերը կլրացվեն օրենքից բխող, այդ թվում՝ քաղաքաշինական փաստաթղթերի մշակման, համաձայնեցման, հաստատման և փոփոխման գործընթացը, ինչպես նաև կառուցապատման ընթացակարգերը սահմանող դրույթներով:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Գործող իրավական ակտերի համապատասխանեցում «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնքի և հարակից տարածքների զարգացման և ներդրումների խրախուսման մասին» ՀՀ օրենքի պահանջներին:<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում քաղաքաշինական հատուկ կարգավորման տարածքների կառուցապատման առանձնահատուկ ռեժիմի ներդրման միջոցով քաղաքի ծրագրավորված և հարատև զարգացման, պատմականորեն ձևավորված ճարտարապետական միջավայրի միասնականության, առողջ և գրավիչ կենսատարածքի ձևավորման ապահովում: |
| 52. | **«Հայաստանի Հանրապետությունում շենքերի սեյսմակայունության բարձրացման նպատակային ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելը**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Շենքերի սեյսմակայունության բարձրացման ուղղությամբ ժամանակակից մեթոդների կիրառմամբ նպատակային ծրագրի իրականացում: |

2. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Վերջին 25 տարիների ընթացքում, ֆինանսական միջոցների սղության պատճառով, հանրապետությունում անհրաժեշտ մակարդակով չեն ցուցաբերվել շենքերի պահպանմանն ուղղված համակարգված մոտեցումներ և պահանջվող ծավալով չեն իրականացվել շենքերի վերականգնման ու ուժեղացման աշխատանքներ, որի հետևանքով, ֆիզիկական մաշվածությունից և զանազան այլ օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների ազդեցությունից, շենքերի զգալի մասը հայտնվել է անբավարար կամ վթարային տեխնիկական վիճակում: Նման շենքերը սեյսմակայունության առումով հուսալի չեն և չեն կարող ապահովել բնակչության անվտանգությունը:

Այդ կապակցությամբ ՀՀ կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 26-ի նիստի N 53 արձանագրության 44-րդ կետով հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետությունում շենքերի սեյսմակայունության ապահովման հայեցակարգին և հայեցակարգից բխող միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին» արձանագրային որոշմամբ հավանության արժանացած՝ Հայաստանի Հանրապետությունում շենքերի սեյսմակայունության ապահովման հայեցակարգից բխող միջոցառումների ժամանակացույցի 7-րդ կետով նախատեսված է Շենքերի սեյսմակայունության բարձրացմանն ուղղված նպատակային ծրագրի մշակում:

3. **Կարգավորման առարկան**

Իրավական ակտով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության տարածքում շենքերի սեյսմակայունության բարձրացման լավագույն տարբերակների ընտրությամբ և ժամանակակից մեթոդների կիրառմամբ նպատակային ծրագրի իրականացում:

4. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**

Որոշման նախագծի ընդունմամբ ակնկալվում է Հայաստանի Հանրապետության տարածքում տարբեր նշանակության շենքերի սեյսմակայունության բարձրացմամբ երկրաշարժերից հնարավոր կորուստները նվազագույնի հասցնելը, ինչը կարևոր գործոն է հանդիսանում հանրապետության սոցիալ-տնտեսական կայուն զարգացման և ազգային անվտանգության համար:

53.

**«Հայաստանի Հանրապետությունում կիսակառույցների շինարարության ավարտման և հետագա օգտագործման ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը**

1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**

Իրավական հիմքի ստեղծում՝ ՀՀ պետական բյուջեի, ինչպես նաև դրամաշնորհային կամ այլ աղբյուրներից ֆինանսավորվող սոցիալական բնակարանաշինության ծրագրերում կիսակառույցների շինարարության ավարտման, քանդման և տարածքի բարեկարգման աշխատանքներն ընդգրկելու համար:

1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Հանրապետության մարզերում առկա են կիսակառույց օբյեկտներ, որոնց շինարարական աշխատանքներն սկսվել և դադարեցվել են 1988-1993 թվականներին: Շինարարական աշխատանքների դադարեցումից հետո 1990-ական թվականներին կիսակառույց օբյեկտները սահմանված կարգով չեն ենթարկվել կոնսերվացման և արտաքին միջավայրի, մթնոլորտային մշտական ազդեցության հետևանքով դրանց կոնստրուկտիվ տարրերը մեծ մասամբ ենթարկվել են քայքայման և ակնհայտորեն կորցրել են նախագծային ամրությունն ու հուսալիությունը:

Կիսակառույցների շինարարական աշխատանքների ավարտման, վթարայնության աստիճանը հաշվի առնելով՝ քանդման և տարածքի բարեկազման, կամ այլ նպատակով օգտագործման հարցերը որևէ

| | |
|---|---|
| | ֆինանսական ծրագրում չեն ներկայացվել և երկար տարիներ այդ խնդիրները մատնված են անուշադրության:<br>Քաղաքային և գյուղական համայնքներում կիսակառույցները զգալի տարածքներ զբաղեցնելով՝ փաստացի առաջ են բերում կառուցապատման համար պիտանի տարածքների ոչ նպատակային օգտագործման խնդիրներ:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Կիսակառույցների տեխնիկական վիճակի հետազննության եզրակացությունների վերլուծության արդյունքում լուծումներ կառաջարկվեն յուրաքանչյուր օբյեկտի շինարարական աշխատանքների ավարտման կամ քանդման ուղղությամբ:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Հայաստանի Հանրապետությունում 1990-ական թվականներից անավարտ մնացած կիսակառույցներին առնչվող խնդիրների կարգավորում:<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>1) բնակավայրի քաղաքաշինական միջավայրի բարելավում.<br>2) սոցիալական բնակֆոնդի համալրում սոցիալական բնակարաններով.<br>3) հասարակական և արտադրական նշանակության անհրաժեշտ օբյեկտների կառուցում: |
| **Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե** | |
| 54. | **«Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի՝ ըստ նպատակային նշանակության (կատեգորիաների) հողերի 2016 թվականի կադաստրային գները (արժեքները) և կադաստրային զուտ եկամտի չափերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>1.1. **կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Որոշման նախագծի ընդունումը բխում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերության և «Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի պահանջներից, ըստ որի հողերի կադաստրային գները՝ ըստ նպատակային նշանակության, յուրաքանչյուր տարի հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նկատի ունենալով այն հանգամանքը, որ գործող օրենսդրության համաձայն նախորդ տարիներին Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված հողերի կադաստրային գները չեն կարող կիրառելի լինել 2016 թվականի համար, ուստի, որոշման նախագծի ընդունումն անհրաժեշտ է:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Սույն որոշման նախագծի ընդունմամբ կկարգավորվեն Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի՝ ըստ նպատակային նշանակության (կատեգորիաների) հողերի 2016 թվականի կադաստրային գները (արժեքները) և կադաստրային զուտ եկամտի չափերը:<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտի կիրառման արդյունքում կսահմանվեն 2016 թվականի հողերի կադաստրային գների և կադաստրային զուտ եկամտի չափերը, ինչը կնպաստի հողի շուկայի զարգացմանը, հողի հարկի բազայի և համայնքային բյուջեների ձևավորմանը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կկիրառվի օտարման, վարձակալության, կառուցապատման իրավունքով տրամադրելու կամ այլ դեպքերում: |

| | |
|---|---|
| 55. | **«Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ 2016 թվականի հաշվետվության (հողային հաշվեկշռի) մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Որոշման նախագծի ընդունումը բխում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 34-րդ հոդվածի պահանջներից, համաձայն որի հողամասերն անկախ սեփականության ձևից ենթակա են պետական հաշվառման: Պետական հաշվառումն իրականացվում է հողամասերի որակի ու քանակի, նպատակային նշանակության, հողատեսքերի և գործառնական նշանակության, սեփականության ու օգտագործման սուբյեկտների մասին ամբողջական տվյալներ ստանալու նպատակով: Պետական հաշվառումն իրականացվում է անընդհատ՝ սկզբնական հաշվառման ելակետային տվյալների հիման վրա՝ տարվա ընթացքում կատարված իրավական, որակական և քանակական փոփոխություններն արտացոլելով հաշվառման տեքստային ու գրաֆիկական փաստաթղթերում: Հողամասերի պետական հաշվառման արդյունքում կազմվում է Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի տարեկան հաշվետվությունը (հողային հաշվեկշիռը)՝ յուրաքանչյուր տարվա հուլիսի 1-ի դրությամբ, որը հաստատում և հրապարակում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կատարվում են փոփոխություններ, այդ թվում՝ նպատակային նշանակությունների ու սեփականության սուբյեկտների, հողատեսքերի ու գործառնական նշանակությունների, ինչպես նաև ոռոգվող հողերի կազմում: Այս բոլոր ընթացիկ փոփոխությունները տարեկան կտրվածքով ենթակա են պետական հաշվառման և պետք է արտացոլվեն Հայաստանի Հանրապետության ընթացիկ հողային հաշվեկշռում:<br>Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թ. հոկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին» N 656 որոշման պահանջների՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2014 թվականի հոկտեմբերի 2-ի N 1080-Ն որոշմամբ հաստատել է Հայաստանի Հանրապետության 2014 թվականի հողային հաշվեկշիռը: Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի N 1189-Ն որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետության 2015 թվականի հողային հաշվեկշիռը: 2014 թվականի հուլիսի 1-ից մինչև 2015 թվականի հուլիսի 1-ը Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կատարված փոփոխություններն արտացոլելով Հայաստանի Հանրապետության 2015 թվականի հողային հաշվեկշռում:<br>Նպատակը Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր տարվա ընթացիկ հողային հաշվեկշռի, ըստ նպատակային նշանակության ու սեփականության սուբյեկտների, իսկ գյուղատնտեսական և անտառային նշանակության հողերը, ըստ հողատեսքերի, տվյալները նախորդ տարիների հետ համեմատելն է, վերլուծության հիման վրա առաջարկություններ ներկայացնելն է հողային պաշարների արդյունավետ օգտագործման և կառավարման, համայնքների սեփականաշնորհված հողերի միավորման ու խոշորացման ծրագրերին օժանդակելու համար:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Որոշման ընդունմամբ կկատարվի Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 34-րդ հոդվածի պահանջը՝ տարվա ընթացքում կատարված իրավական, որակական և քանակական փոփոխությունները կարտացոլվեն 2015 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմված Հայաստանի Հանրապետության հողային |

| | |
|---|---|
| | հաշվեկշռում:<br>Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ 2015 թ. հաշվետվության (հողային հաշվեկշիռ) նորացված և ճշտված տվյալներից կկարողանան օգտվել շահագրգիռ բոլոր պետական մարմինները, ոչ պետական կազմակերպություններն ու անձինք:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>«Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ 2015 թ. հաշվետվության (հողային հաշվեկշռի) մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման արդյունքում կկազմվի Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի տարեկան հաշվետվությունը (հողային հաշվեկշիռը): |
| **Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե** | |
| 56. | **«Ոռոգման նպատակով 2016 թվականին Սևանա լճից ջրառի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը**<br>«Ոռոգման նպատակով 2016 թվականին Սևանա լճից ջրառի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է «Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ օրենքով:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ կառավարության 2015 թվականի ապրիլի 22-ի «Ոռոգման նպատակով 2015 թվականին Սևանա լճից ջրառի մասին» N 466-Ա որոշմամբ ոռոգման նպատակով Սևանա լճից ջրառի չափաքանակ է սահմանվել 170 մլն խոր. մետր ջրաքանակը:<br>Առ 2015 թ. հոկտեմբերի 2-ի դրությամբ Սևանա լճից բաց է թողնվել 167.74 մլն խոր. մետր ջուր: Սևան-Հրազդան էներգետիկ-ոռոգման համակարգից սնվող ոռոգման համակարգերի իշխման տակ գտնվող հողերը ոռոգելու համար անհրաժեշտ է Սևանա լճից բաց թողնել համապատասխան ջրաքանակ:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ջրային օբյեկտներից հնարավոր ջրառի տարբերության չափով պահանջարկի բավարարում:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Սևան-Հրազդան ոռոգման-էներգետիկ համակարգից սնվող ոռոգման համակարգերի իշխման տակ գտնվող հողատարածքների վրա մշակվող գյուղատնտեսական մշակաբույսերի ոռոգման ջրի ապահովման գործընթացի իրականացում:<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ջրօգտագործողներին անհրաժեշտ քանակի ոռոգման ջրով ապահովում: |
| 57. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հոկտեմբերի 17-ի N 1678-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը**<br>«Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի N 1678-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է |

«Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» ՀՀ օրենքով:

1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ոռոգման համակարգի կազմակերպությունների գործունեության արդյունավետությունը բարձրացնելու, ինչպես նաև վերահսկողությունն ուժեղացնելու նկատառումներով ընդունվել է ՀՀ կառավարության 2015 թ. մայիսի 22-ի N 422-Ն որոշումը, որով ՀՀ ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների գործադիր մարմին է ճանաչվել ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեն: ՀՀ ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների միությունների գործունեությունը կանոնակարգող խորհրդի բնականոն աշխատանքների, ինչպես նաև գործառութային վերանայման առաջարկությունները համապատասխանեցնելու համար անհրաժեշտ է փոփոխություններ կատարել նաև ՀՀ ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների միությունների գործունեությունը կանոնակարգող խորհրդի կազմի մեջ, ինչով և պայմանավորված է նշված որոշման ընդունման անհրաժեշտությունը:

1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Ոռոգման ծառայությունների հուսալիության, մատչելիության և վերահսկողության ապահովում:

2. **Կարգավորման առարկան**

Ջրօգտագործողների ընկերությունների (միությունների) կայացումը, ոռոգման համակարգերը ջրօգտագործողների ընկերություններին (միություններին) անհատույց օգտագործման իրավունքով փոխանցելու գործընթացին աջակցելը, ոռոգման համակարգերը հանրային-մասնակցային կառավարման միջոցով արդյունավետ շահագործելը և ընկերությունների (միությունների) գործունեությունը համակարգելը:

3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**

Ոռոգման համակարգի կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացում և վերահսկողության ուժեղացում:

**Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն**

58.

**Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի անցկացման ապահովում**

1. **Միջոցառման անհրաժեշտությունը (նպատակը)**

Բնակչության առողջության ամրապնդում, ակտիվ հանգստի կազմակերպում, բնակչության շրջանում մարզական ընտանիքների թվի ավելացում, առողջ ապրելակերպի արմատավորում:

**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Համաձայն ՀՀ Նախագահի 2004 թվականի մայիսի 20-ի «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում հանրապետության Նախագահի մրցանակներ հիմնելու մասին» ՆԿ-113-Ն կարգադրության՝ 2004 թվականին «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթին մասնակցել է 54 ընտանիք, 2005-ին՝ 82, 2006-ին՝ 84, 2007-ին՝ 107 ընտանիք, 2008-ին՝ 126, 2009-ին՝ 171, 2010-ին՝ 347 ընտանիք, 2011-ին՝ 1122 ընտանիք, 2012-ին՝ 1475 ընտանիք, 2013-ին՝ 2041, 2014 թ. 2067 և 16 հաշմանդամ ունեցող, իսկ 2015-ին՝ 2065 և 19 հաշմանդամ ունեցող ընտանիքներ:

Մրցույթի արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ ոչ բոլոր ընտանիքներն են լավագույն ձևով նախապատրաստվում մրցույթին, որոշ ընտանիքներ ամբողջ տարվա ընթացքում մարզումներ չեն անցկացնում, պատշաճ մակարդակով չի կատարվում մրցույթի անցկացման քարոզչությունը համայնքներում:

| | |
|---|---|
| | 1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Տեղերում անցկացնել խորհրդակցություններ տեղական ինքնակառավարման մարմինների համապատասխան մասնագետների հետ, տրամադրել անհրաժեշտ մեթոդական օգնություն, տրամադրել գովազդային պաստառներ և գովազդային տեսահոլովակներ տեղական հեռուստակայաններով ցուցադրելու համար:<br>**2. Կարգավորման առարկան**<br>«Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի կազմակերպման և անցկացման միջոցով բնակչության ֆիզիկական դաստիարակության, ընդհանուր ֆիզիկական պատրաստության մակարդակի բարձրացման, ֆիզիկական կուլտուրայի շարժման քարոզչության, բնակչության շրջանում առողջ ապրելակերպի արմատավորման իրականացում:<br>**3. Ակնկալվող արդյունքը**<br>Բնակչության շրջանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի քարոզում, բնակչության ֆիզիկական դաստիարակության, ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համար նպաստավոր պայմանների ստեղծում, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցով ընտանեկան կապերի ամրապնդում և առողջ կենսակերպի գաղափարների արմատավորում, սոցիալական հավասարության խթանում, հաշմանդամների շրջանում բարոյահոգեբանական մթնոլորտի բարելավում, հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանում, մասնակից ընտանիքների թվի աճ՝ հասցնելով մինչև 2100-ի: |
| 59. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության** 2006 **թվականի մայիսի** 4-**ի** N 587-Ն **որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Նախագիծը մարզական կոչումների և մարզական կարգերի շնորհման չափորոշիչները միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու, ինչպես նաև մարզական կոչումների և մարզական կարգերի շնորհման չափորոշիչներն ու կարգերը ամբողջական դարձնելու նպատակ է հետապնդում:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 4-ի «Հայաստանի Հանրապետության մարզական կոչումների և մարզական կարգերի շնորհման չափորոշիչներն ու կարգը հաստատելու մասին» N 587-Ն որոշմամբ սահմանված են Հայաստանի Հանրապետության մարզական կոչումների և մարզական կարգերի շնորհման չափորոշիչները, որոնք նոր օլիմպիական պարբերաշրջանի հետ կապված միջազգային չափանիշներին համապատասխանեցման կարիք ունեն և, բացի դրանից, ընդգրկված են ոչ բոլոր մարզական կոչումները, մարզական կարգերը, դրանց շնորհման չափանիշներն ու կարգերը:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Մարզական կոչումների և մարզական կարգերի շնորհման չափորոշիչները համապատասխանեցնել միջազգային չափանիշներին: Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 4-ի «Հայաստանի Հանրապետության մարզական կոչումների և մարզական կարգերի շնորհման չափորոշիչներն ու կարգը հաստատելու մասին» N 587-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելով՝ ամբողջական դարձնել մարզական կոչումների և մարզական կարգերի շնորհման չափորոշիչներն ու կարգերը՝ ապահովելով համապատասխանեցումը միջազգային չափանիշներին:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Մարզական կոչումների և մարզական կարգերի շնորհման չափորոշիչների համապատասխանեցում միջազգային չափանիշներին, մարզական կոչումների և մարզական կարգերի շնորհման ամբողջական |

| | |
|---|---|
| | չափորոշիչների ու կարգերի սահմանում: <br> 3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը** <br> Միջազգային չափանիշներին համապատասխանեցված մարզական կոչումների և մարզական կարգերի շնորհման չափորոշիչներ, մարզական կոչումների և մարզական կարգերի շնորհման ամբողջական չափորոշիչներ ու կարգեր: |
| 60. | **«Հայաստանի Հանրապետության մանկապատանեկան մարզադպրոցները, մարզաձևերի ազգային ֆեդերացիաները և այլ մարզական հասարակական կազմակերպություններ գույքով ապահովելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ** <br><br> 1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)** <br> ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը նպատակ ունի ապահովելու Հայաստանի Հանրապետության մանկապատանեկան մարզադպրոցների, մարզաձևերի ազգային ֆեդերացիաների և այլ մարզական հասարակական կազմակերպությունների մարզակառույցները մարզագույքով: Քանի որ հանրապետությունում մարզագույքի պահանջարկն անցնում է 1 մլրդ դրամից, իսկ ՀՀ պետական բյուջեից վերջին տարիներին մարզագույքի ձեռքբերման համար հատկացվել է տարեկան 50 մլն դրամ (2013 թվականին՝ 100 մլն դրամ), իսկ 2008 և 2014 թվականներին գույքային ծրագիր չի իրականացվել, 2015 թվականի համար ՀՀ պետական բյուջեից մարզագույքի ձեռքբերման համար հատկացվել է 170 մլն դրամ: ՀՀ կառավարության 2015 թվականի մայիսի 27-ի N 559-Ա որոշմամբ 37 անվանում մարզագույք հատկացվելու է 41 մարզական կազմակերպություններին: Քանի որ տրված մարզագույքը միաժամանակ անց մաշվում է, ուստի այս գործընթացը կրում է շարունակական բնույթ: <br> **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** <br> Մարզական հերթափոխի և բարձրակարգ մարզիկների պատրաստման համար մարզակառույցները ժամանակակից մարզական գույքով ապահովելու, նրանց նյութատեխնիկական պայմանները բարելավելու նպատակով հանրապետությունում գործող 172 մանկապատանեկան մարզադպրոցների և այլ մարզական կազմակերպությունների ուսումնամարզական գործընթացը կազմակերպելու համար 2003 թվականից սկսած (միայն 2008 և 2014 թվականներին գույքային ծրագիր չի իրականացվել) յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին իրականացվում է մարզագույքի բաշխման ծրագիր: <br> **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** <br> Քանի որ մարզակառույցներում բացակայում է անհրաժեշտ մարզագույքը, իսկ այնտեղ, որտեղ այն կա, հիմնականում հնաոճ ու հնամաշ է, ուստի նախագծով նախատեսվում է ապահովել մանկապատանեկան մարզադպրոցները և այլ մարզական հասարակական կազմակերպություններ անհրաժեշտ և նորագույն մարզագույքով: <br> 2. **Կարգավորման առարկան** <br> ՀՀ կառավարության որոշման կարգավորման առարկան Հայաստանի Հանրապետության մանկապատանեկան մարզադպրոցների, մարզաձևերի ազգային ֆեդերացիաների և այլ մարզական հասարակական կազմակերպությունների՝ գույքով ապահովվածության մակարդակի բարձրացումն է: <br> 3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը** <br> ՀՀ կառավարության որոշմամբ կսահմանվեն ՀՀ մանկապատանեկան մարզադպրոցները, մարզաձևերի ազգային ֆեդերացիաները և այլ մարզական հասարակական կազմակերպություններ գույքով ապահովելու կարգը և քանակները: Ակնկալվում է, որ ամեն տարի լիարժեք կբավարարվի որոշակի թվով մարզադպրոցների մարզագույքի պահանջարկն ամբողջությամբ, ինչի արդյունքում պարզորոշ կերևա մարզագույքի պահանջարկի նվազումը: |

| | |
|---|---|
| 61. | **«Հրաձգություն մարզաձևի զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի ընդունման նպատակը հրաձգություն մարզաձևին բնակչության տիրապետման հնարավորության ապահովումն է:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս Երևանում կա ընդամենը երկու գործող հրաձգարան, որոնցից մեկը ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության «Երևանի հրաձգության մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ-ում և մյուսը՝ Բանակի, ավիացիայի և նավատորմի աջակցման կամավոր ընկերությունում (ДОСААФ՝ Добровольное общество содействия армии, авиации и флоту), որտեղ անցկացվում են ՀՀ կրթության և գիտության նախարարության «Հրաձգության հանրապետական մարզադպրոցի մարզումները:<br>Գյումրիում գործում է մեկ հրաձգարան, որը պատկանում է անհատի և տրամադրվում է վարձակալման սկզբունքով, Վանաձորում գործող հրաձգարաններ ընդհանրապես չկան: Նախկինում գործող բոլոր հրաձգարանները չօգտագործվելու պատճառով կամ փլատակների են վերածվել, կամ վաճառվել են:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նոր հրաձգարանների կառուցում Երևանում և հանրապետության բոլոր մարզերում՝ ոչ շուտ, քան սկսած 2017 թվականից, ինչպես նաև հրաձգային մարզասարքերի օգտագործում ռազմագիտության դասերին:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Հրաձգություն մարզաձևի զարգացումը ամբողջ հանրապետությունում, Երևան քաղաքում և հանրապետության բոլոր մարզերում բացօթյա հրաձգարաններ (10 մ և 50 մ) կառուցելու միջոցով: Հանրակրթական դպրոցներում և միջին մասնագիտական ուսումնարաններում ռազմագիտության դասի դասավանդման որակի բարձրացում՝ հրաձգային վարժասարքեր ձեռք բերելու միջոցով:<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում հրաձգարաններ կառուցելը հնարավորություն կընձեռի ամբողջ բնակչությանը տիրապետելու զենքով ինքնապաշտպանությանը, ավելի հուսալի կդարձնի իրավիճակը սահմանամերձ մարզերում, ինչը ռազմավարական նշանակություն ունի Հայաստանի Հանրապետության համար: Ռազմագիտության դասերի համար հրաձգային վարժասարքերի ձեռքբերումը կնպաստի աճող սերնդին կրակել և նշանառություն ուսուցանելուն, ինչն առաջին անհրաժեշտություն է տղաների և աղջիկների համար: |
| 62. | **Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար «Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» մրցույթի անցկացման ապահովում**<br><br>1. **Միջոցառման անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Հաշմանդամություն ունեցող անձանց առողջության ամրապնդում, առողջ ապրելակերպի արմատավորում իրենց կենցաղում, ֆիզիկական որակների զարգացում, հաշմանդամային սպորտի մասսայականացում, նրանց ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու պայմանների և սոցիալական վիճակի բարելավում:<br>1.1.**Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հաշմանդամություն ունեցող անձանց ֆիզիկական դաստիարակության և սպորտով զբաղվելու |

հարցերով հիմնականում զբաղվում են հասարակական կազմակերպությունները: «Հաշմանդամային սպորտին առնչվող ծառայություններ» ծրագրով իրականացվում է պետական աջակցություն հաշմանդամային սպորտով զբաղվող չորս հասարակական կազմակերպություններին (հենաշարժական համակարգի, տեսողության, լսողության հետ կապված մտավոր խնդիրներ ունեցող): ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից տրամադրվող գումարներն օգտագործում են հանրապետությունում մարզական միջոցառումների անցկացման, ինչպես նաև իրենց միջազգային մրցաշարերին (պարալիմպիկ խաղեր, սուրդլիմպիկ խաղեր, աշխարհի, Եվրոպայի առաջնություններ, վարկանիշային մրցաշարեր) մասնակցելու համար:

Հաշմանդամություն ունեցող անձանց ֆիզիկական ակտիվությունը հասարակության մյուս անդամների համեմատ ցածր է, այդ իսկ պատճառով նրանց համար չափազանց կարևոր է պահպանել ֆիզիկական ակտիվության հնարավորինս բարձր մակարդակը ոչ միայն առողջության ընդհանուր պահպանման և հիվանդությունների կանխարգելման, այլև հաշմանդամության հիմնական պատճառով պայմանավորված երկրորդական բարդությունների զարգացման վտանգը նվազեցնելու համար: Սակայն մարզակառույցների և մարզադպրոցների մեծ մասը մատչելի չեն հաշմանդամություն ունեցող անձանց համար: Հաշմանդամային սպորտի զարգացումը խոչընդոտող խնդիրների լուծումը կարող է տալ դրական արդյունքներ:

1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Առկա խնդիրների լուծման համար անհրաժեշտ է ավելացնել հաշմանդամային սպորտին ուղղված միջոցառումների քանակը և հաշմանդամային սպորտով զբաղվող հասարակական կազմակերպությունների ֆինանսական աջակցության չափը, մարզերում ակտիվացնել հաշմանդամային սպորտի հիմնահարցերով զբաղվող պետական ու հասարակական կազմակերպությունների աշխատանքները:

**2. Կարգավորման առարկան**

«Հայաստանի Հանրապետության Նախագահի 2004 թվականի մայիսի 20-ի ՆԿ-113-Ն կարգադրության մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության Նախագահի 2015 թ. հունիսի 4-ի N ՆԿ-83-Ն կարգադրության ընդունմամբ հիմնվեց ևս երկու նոր մրցանակ, մասնավորապես, «Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» մրցույթը: «Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» մրցույթին մասնակցում են Հայաստանի Հանրապետության 10 մարզերի և Երևան քաղաքի լսողական, տեսողական, հենաշարժողական խնդիրներ և մտավոր սահմանափակումներ ունեցող հաշմանդամություն ունեցող անձինք: Մրցույթի անցկացումն ուղղված է հաշմանդամություն ունեցող անձանց համար հասարակական կյանքի մարզական ոլորտում հավասար իրավունքների և հնարավորությունների ապահովմանը, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցով հաշմանդամություն ունեցող անձանց լիարժեք կյանք վերադարձին:

3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**

Ծրագիրը կնպաստի հաշմանդամների տարբեր խմբերի անձանց հասարակությանն ինտեգրման գործընթացի խթանմանը, հաշմանդամային սպորտի զարգացմանը, առողջ կենսակերպի գաղափարի արմատավորմանը, հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի լուծմանն ուղղված պետական և ոչ պետական մարմինների միջև գործընկերության արդյունավետ ապահովմանը, միջազգային մրցասպարեզներում, պարալիմպիկ, սուրդլիմպիկ ու հատուկ օլիմպիադաների խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում հայ մարզիկների կողմից բարձր նվաճումների հասնելուն:

| | |
|---|---|
| | **Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարություն** |
| 63. | **«Սփյուռք» ամառային դպրոցի կազմակերպման վերաբերյալ ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը** |
| | 1. **Անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2009 թ. օգոստոսի 20-ի նիստի N 34 արձանագրության 29-րդ կետով հավանության արժանացած «Հայաստան-սփյուռք գործակցության զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» արձանագրային որոշման հավելվածից:<br>**1.1. Ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Աշխարհասփյուռ հայության առջև այսօր ծառացած է հայապահպանության գերխնդիրը: Հեռու լինելով հայրենիքից՝ գոյատևման պայքարում հայը հաճախ կորցնում է իր ազգային նկարագիրը, իր լեզուն, հեռանում է ազգային արմատներից, ավանդույթներից, սովորություններից, դադարում է կրել դարերով ստեղծված հայկական մշակութային արժեքները: Դրա համար անհրաժեշտ է պայքար ծավալել լեզվամշակութային ուծացման դեմ, նպաստել հայ ազգային ինքնության միասնական բարենպաստ միջավայրի ձևավորմանն ու զարգացմանը, հայկական համայնքներում ազգային ինքնության պահպանմանն ու արմատավորմանը, հայապահպան գործունեությանը, մշակութային ժառանգության պահպանմանը, պաշտպանմանը, զարգացմանը և իրականացնել դրանց տարածման միջոցառումներ, նպաստել նաև Հայաստանի հետ սփյուռքահայության, հայկական կառույցների կապերի ամրապնդմանը և զարգացմանը, սփյուռքահայությանը նոր լիցքեր հաղորդելուն՝ խթանելով Հայաստան-սփյուռք գործակցության զարգացումը, սփյուռքի համար և համահայկական ծրագրերի մշակման ու իրականացման գործում անհատների, հայկական կազմակերպությունների մասնակցության շրջանակի ընդլայնումը, սփյուռքի համար մասնագետների պատրաստման և վերապատրաստման համակարգի շարունակական կատարելագործումը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Յուրաքանչյուր տարի ՀՀ սփյուռքի նախարարության կողմից իրականացվում է ամառային դպրոց, որին մասնակցում են սփյուռքյան համայնքների կողմից ընտրված ներկայացուցիչները՝ բարձրացնելով սեփական տեղեկացվածության մակարդակն ու գիտելիքները, հմտանալով հայոց լեզվի, հայագիտության, կրթության ու քաղաքականության բնագավառներում, ծանոթանալով համահայկական կառույցներին ու պետական ծրագրերին:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Ծրագրով հնարավոր կլինի նպաստել սփյուռքի գործիչների, համայնքների ներկայացուցիչների մասնագիտական գիտելիքների ընդլայնմանը:<br>**3. Ակնկալվող արդյունքները**<br>Սփյուռքի կազմակերպման մակարդակի բարձրացում, համայնքային կառույցների ներկայացուցիչների մասնագիտական վերապատրաստում, հայրենիքի հետ կապերի ամրացում: |
| 64. | **«Հայաստանի Հանրապետության անկախության 25-ամյակին նվիրված «Իմ Հայաստան» համահայկական փառատոնի կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը** |
| | **1. Անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2009 թ. օգոստոսի 20-ի նիստի N 34 արձանագրության 29-րդ կետով հավանության արժանացած «Հայաստան-սփյուռք գործակցության զարգացման |

| | |
|---|---|
| | հայեցակարգին հավանություն տալու մասին» արձանագրային որոշման հավելվածից:<br>**1.1. Ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Սփյուռքում վտանգված է հայապահպանությունը, հայկական մշակույթը: Սփյուռքի կենսունակության գրավականը հայրենիքի հետ մշակութային կապերն ու հարաբերություններն են, ազգային երգի, պարի, այլ մշակութային խմբերի այցելություններն են հայրենիք, իրենց արվեստի ներկայացումը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>«Հայաստանի Հանրապետության անկախության 25-ամյակին նվիրված «Իմ Հայաստան» փառատոնի ծրագրի մշակման ու իրականացման միջոցով հնարավոր է սփյուռքի մշակութային խմբերին, անհատ կատարողներին հնարավորություն տալ ներկայացնելու սեփական հմտությունները, անհրաժեշտ փորձ ձեռք բերել շփվելով հայրենիքի, սփյուռքյան այլ խմբերի, գործիչների հետ, աջակցել հայապահպանությանն ու հայ մշակույթի զարգացմանը, Հայաստան-սփյուռք կապերի ամրապնդմանը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>«Հայաստանի Հանրապետության անկախության 25-ամյակին նվիրված «Իմ Հայաստան» համահայկական փառատոնի իրականացումը թույլ է տալիս երկու տարին մեկ անգամ հայրենիքում հյուրընկալել հարյուրավոր սփյուռքահայերի, նրանց համար կազմակերպել համերգներ, ելույթներ Երևանում և տարբեր մարզերում:<br>**3. Ակնկալվող արդյունքները**<br>Հայաստան-սփյուռք կապերի ամրապնդում, հայ մշակույթի զարգացում և տարածում, ամուր կապ հայրենիքի հետ, մշակութային գործակցության խորացում և սփյուռքում հայապահպանություն, սփյուռքահայերի ներգրավում համահայկական ցանցերում և ծրագրերում: 2016 թ. մինչև 600 սփյուռքահայ կմասնակցի ազգային երգի ու պարարվեստի, ասմունքի օրերին, դուդուկի փառատոնին: Հայաստանյան բեմերում հանդես կգան սփյուռքի տարբեր համայնքներում վերջին շրջանում ստեղծված համույթներ, խմբեր, կիսպրոֆեսիոնալ տաղանդավոր, արվեստագետ ու արվեստասեր սփյուռքահայ երիտասարդներ: |
| 65. | **«Սփյուռքի երիտասարդների «Արի տուն» հայրենաճանաչության ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը**<br><br>**1. Անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2009 թ. օգոստոսի 20-ի նիստի N 34 արձանագրության 29-րդ կետով հավանության արժանացած «Հայաստան-սփյուռք գործակցության զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» արձանագրային որոշման հավելվածից:<br>**1.1. Ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Սփյուռքում վտանգված է հայապահպանությունը, հայոց լեզուն, հայկական մշակույթը: Սփյուռքի կենսունակության գրավականը հայրենիքի հետ երիտասարդության մշտական և բազմաբնույթ կապերն ու հարաբերություններն են, պատանիների ու աղջիկների Հայաստան ճանաչողական այցելություններն են, իրենց հասակակիցների հետ ծանոթություններն ու շփումները, հայկական հարուստ ժառանգության հետ նրանց մշտական առնչությունները:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>«Արի տուն» ծրագրի մշակման ու իրականացման միջոցով հնարավոր է սփյուռքի երիտասարդության համար ճանաչելի դարձնել սեփական հայրենիքը, լեզվամշակութային արժեքները, այդ ճանապարհով նպաստել Հայաստան-սփյուռք կապերի ամրապնդմանը, հայապահպանությանը սփյուռքում: |

| | |
|---|---|
| | 2. **Կարգավորման առարկան**<br>«Արի տուն» ծրագրի իրականացումը թույլ է տալիս յուրաքանչյուր տարի հայաստանյան ընտանիքներում հյուրընկալել հարյուրավոր սփյուռքահայ երիտասարդների, նրանց համար կազմակերպել ճանաչողական շրջայցեր ու դասընթացներ:<br>**3. Ակնկալվող արդյունքները**<br>Հայաստան-սփյուռք կապերի ամրապնդում, սփյուռքի երիտասարդության կողմից հայրենաճանաչություն և ամուր կապ հայրենիքի հետ, երիտասարդական գործակցության խորացում և սփյուռքում հայապահպանություն, երիտասարդների ներգրավում համահայկական ծրագրերում: 2016 թ. ծրագրով Հայաստան կայցելեն, հայաստանյան ընտանիքներում կհյուրընկալվեն, շրջագայությունների կմասնակցեն և ճամբարային հանգիստ կանցկացնեն տարբեր երկրների մինչև 1100 հայ երիտասարդներ: |
| **Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն** | |
| 66. | **«Վերարտադրողական առողջության բարելավման ռազմավարությանը և 2016-2020 թվականների գործողությունների ծրագրին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշման նախագծի վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Վերարտադրողական առողջության բարելավման 2016-2020 թվականների ազգային ռազմավարությանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը բխում էր վերարտադրողական առողջության բարելավումը երկրի հիմնական գերակայություն հռչակելու Ազգային անվտանգության ռազմավարության, ՀՀ Նախագահի «Դեպի ապահով Հայաստան» 2013 թ. նախընտրական ծրագրի, «Հայաստանի Հանրապետության 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2014 թ. մարտի 27-ի N 442-Ն որոշման դրույթներից, և նպատակ է հետապնդում նախատեսվող միջոցառումների իրականացման օգնությամբ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում բարելավել բնակչությանը ցուցաբերվող վերարտադրողական առողջության ոլորտում բժշկական օգնության և սպասարկման մատչելիությունը, հասանելիությունը, ապահովել բժշկական օգնության և սպասարկման արդյունավետ կազմակերպումը, որակի և արդյունավետության շարունակական կատարելագործումը:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Բնակչության վերարտադրողական առողջության իրավիճակը՝ երկրի սոցիալ-ժողովրդագրական զարգացման, ռազմավարական, սոցիալական կարևորագույն նշանակություն ունեցող բաղադրիչներից մեկն է, որի բնութագրական ցուցանիշները թույլ են տալիս գնահատել նաև տվյալ հասարակության զարգացման մակարդակը, իսկ վերարտադրողական վարքագիծն ազդում է հետագա սերունդների առողջության, վերարտադրման առանձնահատկությունների վրա:<br>Վերջին երկու տասնամյակների ընթացքում Հայաստանում տեղի ունեցած փոփոխությունները հանգեցրին ծնելիության և բնական աճի կրճատմանը, իսկ 90-ական թվականներին հաջորդող տարիներին բնակչության ծանր ապրելակերպն իր անդրադարձն ունեցավ բնակչության առողջության և հատկապես վերարտադրողական առողջության ցուցանիշների վրա:<br>Խնդրի կարգավորման նպատակով վերարտադրողական առողջության բարելավման, ծնելիության, բնական աճի ավելացման նպատակով Առողջապահության համաշխարհային կազմակերպության վերարտադրողական առողջության առաջին գլոբալ ռազմավարության հիման վրա 2006 թ. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից մշակվեց «Վերարտադրողական |

առողջության բարելավման ազգային ռազմավարությունը, ծրագիրն ու միջոցառումների ժամանակացույցը 2007-2015 թթ.», որն արժանացավ ՀՀ կառավարության կողմից հավանության և հաստատվեց 2007 թ. հուլիսի 26-ի N 29 արձանագրային որոշմամբ:
Նշված ռազմավարության և 2007-2015 թթ. համար հաստատված ծրագրի միջոցառումների կատարման ուղղությամբ մեծ աշխատանք է կատարվել, որոշակիորեն բարելավվել են վերարտադրողական առողջության ցուցանիշները, սակայն չնայած ձեռքբերումներին, հանրապետությունում վերարտադրողական և սեռական առողջության իրավիճակը դեռևս ցածր է ժամանակակից հնարավորությունների և արդիական պահանջների տեսանկյունից:
Մայրական, պերինատալ և մանկական հիվանդացության ու մահացության մակարդակը դեռևս բարձր է զարգացած եվրոպական երկրների համեմատությամբ: Հազարամյակի մայրական առողջության նպատակը՝ նվազեցնել մայրական մահացությունը ցածր 12/100000 կենդանածնի հաշվարկով, անհասանելի է:
Ընտանիքի առողջապահական ծառայություններից օգտվելու հնարավորությունները և մատչելիությունը սահմանափակ են, հատկապես բնակչության սոցիալապես անապահով, հատուկ կարիքներով և սահմանափակ հնարավորություններով խմբերի անձանց, դեռահասների համար:
Դեռևս բարձր է սեռավարակների մակարդակը, անհանգստացնող է ՄԻԱՎ վարակակիրների աճի տեմպերը: Առ 2015 թ. հունվարի 1-ը ՄԻԱՎ վարակակիր մարդկանց թիվը 2000 է, որի 1/3 կազմում են կանայք, որոնք հիմնականում վարակվել են սեռական ճանապարհով, ՄԻԱՎ վարակակրություն ունեն շուրջ 3 տասնյակ երեխաներ: Մտահոգող է, որ վերջին 3 տարում ՄԻԱՎ-ի նոր վարակակիր անձանց թիվը եռապատկվել է:
Անպտղության և հղիության կրելախախտի բարձր մակարդակը, ցածր քաշով նորածինների մահաբերության բարձր տոկոսը, նշանակալիորեն նպաստում են բնական աճի իջեցմանը, պայմանավորված առողջապահական գործոններով:
Դեռահասների սեռական և վերարտադրողական առողջության ոլորտում գիտելիքներ և ծառայություններ ստանալու իրավունքը ամենուր ապահովված չէ:
Աբորտը դեռևս օգտագործվում է որպես ընտանիքի պլանավորման մեթոդ, որը հաճախ ուղեկցվում է վերարտադրողական առողջության համար իրական սպառնալիքներով, ինչը հետագայում կարող է նպաստել ժողովրդագրական դիսբալանսի առաջացմանը:
Վերջին տարիներին արձանագրվել է մի նոր մարտահրավեր, սեռի խտրական ընտրությամբ պայմանավորված հղիության արհեստական ընդհատումներ, որը վերջին տարիներին հանգեցրել է երկրում նորածինների սեռերի անհամամասնության առաջացմանը:
Սեռական օրգանների քաղցկեղը և կրծքագեղձի քաղցկեղը ձեռք են բերել մեծ մասշտաբայնություն, հատկապես բարձիթող դեպքերի բարձրացման միտումը դարձնում է դրանց վաղ կանխարգելումն ու նվազեցումը լուրջ բժշկական և սոցիալական հիմնախնդիր:
Չկան ընտանեկան բռնության, սեռական ոտնձգությունների և մարդկային թրաֆիքինգի հետևանքների ամբողջական գնահատմանն ու կանխարգելմանն ուղղված համապարփակ ծրագրեր:
Տղամարդկանց վերարտադրողական և տարեցների սեռական առողջության խնդիրները համարյա անտեսված են: Հանրապետությունում սահմանափակ ու դժվարամատչելի են այդ ծառայությունները համարյա բնակչության բոլոր շերտերի համար:

1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Առաջարկվում է որոշման նախագծում սահմանել ռազմավարական ուղղություններ և դրանց հասնելուն ուղղված գործողությունները, մասնավորապես, բարելավել վերարտադրողական առողջության ծառայու-

թյունների նյութատեխնիկական բազան, տեղեկատվական բազան՝ առաջնահերթ խնդիրները որոշելու համար, խթանել առողջապահական համակարգի բարեփոխումները, բարելավել ծառայությունների որակն ու հասանելիությունը, նվազեցնել մայրական և պերինատալ հիվանդացությունն ու մահացությունը, ներդնել վերարտադրողական առողջության ոլորտում ապացույցների վրա հիմնված ժամանակակից մոտեցումներ, տեխնոլոգիաներ, նպաստել նորածինների սեռերի անհամամասնության նվազեցմանը, կանխարգելել և նվազեցնել անպտղության մակարդակը, վերարտադրողական օրգանների քաղցկեղը, ամրապնդել վերարտադրողական առողջության պահպանման մոնիթորինգի, գնահատման և հաշվետվության համակարգերը, իրականացնել վերարտադրողական ծառայություններ տրամադրող բուժաշխատողներին շարունակական կրթություն և հմտությունների զարգացում:

2. **Կարգավորման առարկան**

Նախագծի ընդունման նպատակն է վերարտադրողական առողջապահական համակարգի կառավարման նոր մոտեցումների ներդրմամբ համակարգում առավել նպատակային դարձնել առկա մարդկային, նյութական, ֆինանսական ռեսուրսների օգտագործումը, բարձրացնել առողջապահական ծառայությունների որակը և դրա կառավարման արդյունավետությունը, բարելավել ՀՀ բնակչության սեռական և վերարտադրողական առողջությունը՝ հնարավորություն տալով նրանց ամբողջ կյանքի ընթացքում հետամուտ լինել վերարտադրողական և սեռական առողջության ոլորտում իրենց ունեցած իրավունքներին:

3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**

«Վերարտադրողական առողջության բարելավման 2016-2020 թթ. ազգային ռազմավարությանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի ընդունմամբ վերարտադրողական առողջապահական համակարգի կառավարումը դարձնել առավել համաչափ և նպատակային, օպտիմալ օգտագործել մարդկային ներուժը, նյութական ռեսուրսները, առավել թիրախավորված օգտագործել պետական և մասնավոր հատվածի կողմից առողջապահության ոլորտին հատկացվող ֆինանսական միջոցները, նվազեցնել համակարգի կորուստները, ինչպես նաև ապահովել ՄԱԿ-ի Զարգացման աջակցության 2016-2020 թթ. ծրագրի արդյունք 8-ում սահմանված՝ մինչև 2020 թվականը որակյալ առողջության, ներառյալ սեռական և վերարտադրողական առողջության պահպանման ծառայությունները բոլորի, հատկապես խոցելի խմբերի համար դարձնել համընդհանուր հասանելի ու մատչելի և Առողջապահության համաշխարհային կազմակերպության եվրոպական տարածաշրջանի «Առողջություն 2020» համապարփակ քաղաքականության ռազմավարական գաղափարների ու դրույթների իրականացումը, այն է բուժօգնության տրամադրման հավասարություն, արդարություն, մատչելիություն, բժշկական օգնության որակի ապահովում, ապացուցահեն մոտեցումների և տեխնոլոգիաների ներդրում:

Բացի դրանից, առողջության պահպանման գործում կառավարության և անհատների նոր դերի սահմանումը, այդ գործընթացում պատասխանատվության տարանջատումը, ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործումը, հնարավորության դեպքում, լրացուցիչ միջոցների ընդգրկումը, որոնք կարտացոլվեն ռազմավարության մեջ, նույնպես կնպաստեն վերարտադրողական և սեռական առողջության բարելավմանը մայրական, մանկական մահացության ու հիվանդացության կրճատմանը, կնպաստեն ընտանիքների առողջության բարելավմանը, ծնելիության և բնական աճի ավելացմանը Հայաստանում:

| | |
|---|---|
| 67. | **«Երեխաների և դեռահասների առողջության բարելավման ռազմավարությանը և 2016-2020 թվականների գործողությունների ծրագրին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշման նախագծի վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը** (նպատակը)<br>«Երեխաների և դեռահասների առողջության բարելավման ռազմավարությունը և 2016-2020 թթ. գործողությունների ժամանակացույցը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշման նախագծով (այսուհետ՝ նախագիծ) նախատեսվող կարգավորումների կատարման անհրաժեշտությունը բխում է առողջապահության պետական քաղաքականության շրջանակներում երեխաների և դեռահասների առողջության և զարգացման ոլորտի գերակայությունից, «Առողջություն 2020» ԱՀԿ-ի ռազմավարության և ԱՀԿ-ի Երեխաների և դեռահասների առողջության բարելավման 2016-2020 թթ. ռազմավարության դրույթներից:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>2015 թ. վերջին ավարտվում է ՀՀ կառավարության արձանագրային որոշմամբ հավանության արժանացած Երեխաների և դեռահասների առողջության ռազմավարության և 2010-2015 թթ. միջոցառումների ժամանակացույցի գործողության ժամկետը, ուստի, գնահատելով նոխորդ ռազմավարության կատարման ընթացքում արձանագրված հաջողությունները և բացերը, անհրաժեշտություն է առաջացել սահմանել նոր նպատակներ և դրանց հասնելու նոր ուղղություններ: «Երեխաների և դեռահասների առողջության բարելավման ռազմավարությունը և 2016-2020 թթ. գործողությունների ժամանակացույցը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշման նախագծով նախատեսվող միջոցառումների կատարման հիմնական նպատակն է բարելավել երեխաների մահացությանը և հիվանդացությանն առնչվող հիմնական ցուցանիշները, երեխաներին մատուցվող առողջապահական ծառայությունների մատչելիությունն ու որակը, զարգացնել ինստիտուցիոնալ կարողությունները և մարդկային ռեսուրսները, իրականացնել բնակչությանն ուղղված հանրային իրազեկման աշխատանքներ՝ ուղղված երեխաների խնամքի, զարգացման և սնուցման, դեռահասների առողջ ապրելակերպի և վերարտադրողական առողջության պահպանման խնդիրների շուրջ իրազեկվածության ապահովմանը, երեխաների առողջության պահպանման ոլորտում միջգերատեսչական համագործակցության արդյունավետության բարձրացմանը:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ներկայացվող նախագծով նախատեսվում են միջոցառումներ, որոնք համահունչ են ԱՀԿ-ի կողմից առաջարկվող մոտեցումներին և ապացուցողական բժշկության դրույթներին:<br>2. **Կարգավորման առարկան**<br>«Երեխաների և դեռահասների առողջության ռազմավարությունը և 2016-2020 թթ. գործողությունների ժամանակացույցը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշման նախագծի նպատակն է շարունակաբար կրճատել մանկական և մինչև 5 տարեկան երեխաների մահացությունը, բարելավել երեխաների սնուցման կարգավիճակը, նվազեցնել երեխաների հիվանդացության ցուցանիշները, նպաստել երեխաների շրջանում առողջ վարքագծի ձևավորմանը:<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>«Երեխաների և դեռահասների առողջության բարելավման ռազմավարությունը և 2016-2020 թթ. գործողությունների ժամանակացույցը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշման նախագծով նախատեսվող միջոցառումների իրականացման արդյունքում |

| | |
|---|---|
| | ակնկալվում է՝<br>1) բարելավել երեխաների մահացությանը և հիվանդացությանն առնչվող հիմնական ցուցանիշները, երեխաներին մատուցվող առողջապահական ծառայությունների մատչելիությունն ու որակը.<br>2) զարգացնել ինստիտուցիոնալ կարողությունները և մարդկային ռեսուրսները.<br>3) իրականացնել բնակչությանն ուղղված հանրային իրազեկման աշխատանքներ՝ ուղղված երեխաների խնամքի, զարգացման և սնուցման, դեռահասների առողջ ապրելակերպի և վերարտադրողական առողջության պահպանման խնդիրների շուրջ իրազեկվածության ապահովմանը.<br>4) բարելավել երեխաների առողջության պահպանման ոլորտում միջգերատեսչական համագործակցության արդյունավետությունը: |
| 68. | **«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ**<br><br>1. **Անհրաժեշտությունը**<br>Նախագծի ներկայացումը պայմանավորված է՝<br>1) բժշկական գաղտնիքի հետ կապված պացիենտների իրավունքների պաշտպանությունը երաշխավորող մեխանիզմներ սահմանելու, հիվանդություններով պայմանավորված հասարակության մեջ խարան և խտրականություն առաջացնող դեպքերը բացառելու, անձնական կյանքի անձեռնմխելիությունը երաշխավորող օրենսդրական հիմքերը լրացնելու անհրաժեշտությամբ.<br>2) արտակարգ իրավիճակի կամ ռազմական դրության դեպքում բժշկական օգնության և սպասարկման առանձնահատկությունների իրավական կարգավորման անհրաժեշտությամբ:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>1) Բժշկական գաղտնի տեղեկությունների պահպանման պահանջն ամրագրված է ՀՀ առանձին օրենքներում: Մասնավորապես, «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի «գ» ենթակետի ուժով՝ «բժշկական օգնության դիմելիս, ինչպես նաև բժշկական օգնություն և սպասարկում ստանալիս յուրաքանչյուր ոք իրավունք ունի պահանջել բժշկի օգնությանը դիմելու փաստի, իր առողջական վիճակի, հետազոտման, ախտորոշման և բուժման ընթացքում պարզված տեղեկությունների գաղտնիության ապահովում, բացի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերից:<br>Բժշկական օգնության դիմած, ինչպես նաև բժշկական օգնություն և սպասարկում ստացող անձի նշված իրավունքը տրամաբանորեն հանգեցնում է բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների համապատասխան պարտականության, որը նախատեսված է «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի «ե» ենթակետով:<br>Թեպետ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով բժշկական գաղտնի տեղեկությունների պահպանումը սահմանված է թե' որպես բժշկական օգնություն և սպասարկում ստացող անձի իրավունք, և թե' որպես բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների պարտականություն, այնուամենայնիվ, որևէ իրավական ակտով հստակ սահմանված չէ բժշկական գաղտնիքի հասկացությունը, դրա շրջանակները, բժշկական գաղտնիք համարվող տվյալների փոխանցման դեպքերը, նաև այն անձանց շրջանակը, ովքեր իրավասու են ստանալ բժշկական գաղտնիք պարունակող տեղեկություններ և փաստաթղթեր.<br>2) ռազմական դրության կամ արտակարգ իրավիճակներում բնակչության բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպությունների գործունեությունը բնականաբար |

| | |
|---|---|
| | մի շարք փոփոխությունների է ենթարկվում, նկատի ունենալով, որ պայմանավորված վիճակով փոփոխվում են բժշկական օգնության և սպասարկման առաջնահերթությունները, կարգը և պայմանները, կտրուկ աճում է դիմելիության ծավալը: Այս պարագայում անհրաժեշտ են հստակ կարգավորումներ, որոնք անկախ բժշկական կազմակերպության սեփականության ձևից, կսահմանեն բժշկական կազմակերպությունների կողմից բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման գործընթացը, մինչդեռ գործող օրենքը նման կարգավորումներ չի նախատեսում:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Օրենքով կարգավորել բժշկական գաղտնիքի հետ կապված հարաբերությունների ամբողջ շրջանակը, սահմանել արտակարգ իրավիճակներում կամ ռազմական դրության ժամանակ բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման ամենահիմնական հարաբերությունները:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Օրենքի նախագծի ընդունման նպատակն է՝<br>1) ստեղծել անձի՝ բժշկի օգնությանը դիմելու փաստի, նրա առողջական վիճակի մասին հետազոտման, ախտորոշման և բուժման ընթացքում պարզված տվյալների գաղտնիության և դրանց իրավական պաշտպանության երաշխիքներ՝ ապահովելով պացիենտի օրինական իրավունքների և շահերի իրացումը, առողջապահության տվյալների բազաներում ներառվող անհատական (անձնական) տեղեկությունների մշակման համար սահմանել ՀՀ Սահմանադրությանը համապատասխան պահանջներ: Ըստ այդմ, առաջարկվում է սահմանել «բժշկական գաղտնիք» հասկացությունը, դրա՝ առանց անձի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության փոխանցման դեպքերը, նախատեսել սահմանված պահանջների խախտման և բժշկական գաղտնիքի ապօրինի փոխանցելու դեպքերում պատասխանատվության իրավական հիմքերը.<br>2) ռազմական դրության և արտակարգ իրավիճակներում բժշկական կազմակերպությունների կողմից բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման առանձնահատկությունները:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունմամբ ակնկալվում է՝<br>1) բժշկական գաղտնիք պարունակող տվյալների մշակման, փոխանցման համար իրավական կարգավորումներ սահմանելու միջոցով ապահովել քաղաքացիների անձնական կյանքը հարգելու և անձնական տվյալների գաղտնիության պահպանման սահմանադրական իրավունքը.<br>2) ապահովել համապատասխան իրավակարգավորումներ՝ բնակչության բժշկական օգնությունը և սպասարկումը ռազմական դրության և արտակարգ իրավիճակներում պատշաճ ձևով ապահովելու նպատակով: |
| 69. | **«Լաբորատոր համակարգի 2016-2020 թվականների զարգացման ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Լաբորատոր համակարգի 2016-2020 թվականների զարգացման ծրագրին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշման անհրաժեշտությունը պայմանավորված է Միջազգային առողջապահական (բժշկասանիտարական) կանոնների (2005 թվական)՝ Հայաստանի Հանրապետությունում ներդրման համար նշանակալի կարողության՝ լաբորատոր համակարգի շարունակական զարգացման ապահովմամբ:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայում ստեղծվում է համընդհանուր լաբորատոր ցանց և, միաժամանակ, Հայաստանն ունի բարդ լաբորատոր համակարգ՝ կազմված պետական և մասնավոր |

| | |
|---|---|
| | առանձին լաբորատորիաներից, դրանց գործունեությունը համակարգային դարձնելու և այն շարունակականորեն ապահովելու կարիք կա: Համակարգում ընդգրկված յուրաքանչյուր լաբորատորիայի պարտականությունները և գործառույթների շրջանակը սահմանելը, ինտեգրացված կառավարումը և գործունեությունը, միջազգային պահանջներին համապատասխանումը լաբորատոր կարողությունների առումով հնարավորություն կտան համապատասխանել Միջազգային առողջապահական (բժշկասանիտարական) կանոնների (2005 թվական) կենսաբանական քիմիական, ռադիացիոն գործոնների հայտնաբերման և արձագանքման, ինչպես նաև կենսաանվտանգության, որակի կառավարման ժամանակակից պահանջներին: Լաբորատոր ոլորտը կանոնակարգող օրենսդրությունը շարունակականորեն միջազգային մոտեցումներին համապատասխանեցնելու անհրաժեշտություն կա՝ ստանդարտ մեթոդների մշակում, գործողությունների ստանդարտ ընթացակարգերի շարունակական մշակում և ներդրում, ձեռնարկների մշակում և ներդրում և այլն: Կարիք կա միջազգային լաբորատոր ցանցերին անդամակցման գործընթացը զարգացնելու, նոր գործընկերներ գտնելու և համագործակցությունը կատարելագործելու: Լաբորատոր կադրային ներուժը, լաբորատոր գործընթացների ապացուցողական հիմքերի ապահովումը, ինժեներատեխնիկական սպասարկման գործընթացը, նյութատեխնիկական ապահովումը, կայուն ֆինանսավորման հիմքերի ստեղծումը ևս շարունակական գործընթաց են և անհրաժեշտություն ունեն անընդմեջ զարգանալու: Զարգացման գործընթացը կարևոր է նաև տարբեր ազդակների հայտնաբերման լաբորատոր կարողությունների զարգացման առումով:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>«Լաբորատոր համակարգի 2016-2020 թվականների զարգացման ծրագրին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշման նախագծի ընդունման դեպքում հնարավորություն կընձեռվի Հայաստանի Հանրապետությունում վարակիչ հիվանդությունների ախտորոշման, ինչպես նաև շրջակա միջավայրում վարակիչ ազդակների բացահայտման ուղղությամբ լաբորատոր կարողությունները շարունակականորեն պահպանել արդյունքվետ մակարդակի վրա և ապահովել դրա զարգացումը:<br>2. **Կարգավորման առարկան**<br>«Լաբորատոր համակարգի 2016-2020 թվականների զարգացման ծրագրին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշման նախագծի ընդունման դեպքում կկանոնակարգվեն լաբորատոր համակարգի տարբեր օղակներում և մակարդակներում լաբորատորիաների կայուն զարգացումը, շարունակականորեն նոր՝ ժամանակակից մոտեցումների ներդրումը, լաբորատոր գործողությունների վերահսկման մեխանիզմները, որակի կառավարման համակարգի համակարգված ներդրումը և դրա ապահովումը, կապահովվի համընդհանուր լաբորատոր ցանցի, ռեֆերենս լաբորատորիայի կայուն զարգացումը, նախադրյալներ կստեղծվեն գործող լաբորատորիաների հավատարմագրման կամ ակրեդիտացման համար:<br>3. **Ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունումը հնարավորություն կտա ծրագրային մոտեցում ցուցաբերելու լաբորատոր համակարգի շարունակական զարգացման համար: |
| 70. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 5-ի N 1936-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը** (նպատակը)<br>Իրավական ակտի ներկայացումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում պոլիկլինի- |

կաների (խառը, մեծահասակների և մանկական), առանձին մասնագիտացված կաբինետների, ընտանեկան բժշկի գրասենյակների, բժշկական ամբուլատորիաների, գյուղական առողջության կենտրոնների, բուժակ-մանկաբարձական կետերի, կանանց կոնսուլտացիաների և հիվանդանոցային մատուցված ծառայությունների որակի և մատչելիության մակարդակի շարունակական զարգացման, լիցենզավորման գործընթացի արդիականացման և արդյունավետության բարձրացման անհրաժեշտությամբ:

1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Արդի բժշկության զարգացումն արագընթաց պրոցես է և բժշկական օգնության և սպասարկման համար սահմանվող պարտադիր պայմանները և պահանջներն այդ զարգացմանը զուգընթաց փոփոխման կարիք ունեն: Չնայած Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 5-ի N 1936-Ն որոշմամբ սահմանված պահանջները 2002 թվականից հետո որոշակի փոփոխությունների ենթարկվել են, այդուհանդերձ, դրանց վերանայումը շարունակական, անընդհատ բնույթ պետք է կրի: Ներկայումս բժշկական օգնության և սպասարկման մի շարք տեսակների լիցենզավորման պարտադիր պայմանները և պահանջները, մասնավորապես, սարքավորումների և սարքերի մասով հնացած են, չեն կարող ապահովել բուժման արդյունավետություն, ավելորդ բեռ են լիցենզավորված սուբյեկտների համար, որոնք, համաձայն ՀՀ օրենսդրության, պարտավոր են ապահովել այդ սարքերի, սարքավորումների առկայությունը բժշկական կազմակերպություններում:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Լիցենզավորման պարտադիր պահանջների և պայմանների համապատասխանեցում նորագույն ժամանակակից բժշկության պահանջներին:

2. **Կարգավորման առարկան**

Նախագծով նախատեսվում է կարգավորել ոլորտի հետագա զարգացումը, շարունակելով լիցենզավորման գործընթացի հստակեցման և պարզեցման աշխատանքները, բժշկական օգնության և սպասարկման տեսակների լիցենզավորման պարտադիր պայմանների և պահանջների վերանայման, դրանց արդի բժշկության պահանջներին համապատասխանեցնելու աշխատանքների շարունակական իրականացմամբ:

3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**

Իրավական ակտի ընդունմամբ ակնկալվում է Հայաստանի Հանրապետությունում պոլիկլինիկաների (խառը, մեծահասակների և մանկական), առանձին մասնագիտացված կաբինետների, ընտանեկան բժշկի գրասենյակների, բժշկական ամբուլատորիաների, գյուղական առողջության կենտրոնների, բուժակ-մանկաբարձական կետերի, կանանց կոնսուլտացիաների և հիվանդանոցների կողմից տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման որակի բարձրացում, լիցենզավորման գործընթացի պարզեցում, լիցենզավորված անձանց գործունեությանը ներկայացվող չհիմնավորված պահանջների բացառում:

**Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն**

71.

**«Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը**

1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**

«Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները սահմանելու մասին» որոշման ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2014 թվականի դեկտեմբերի 1-ի ՀՕ-200 օրենքի ընդունմամբ:

| | |
|---|---|
| | 1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին, նրանց ծնողներին, հատուկ ու ներառական դպրոցների մանկավարժական աշխատողներին կանոնակարգված կերպով մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ է իրականացնում Երևանի հանրապետական բժշկահոգեբանամանկավարժական կենտրոնը՝ իր կանոնադրությանը համապատասխան: Որոշ ծառայություններ իրականացվում են նաև ներառական դպրոցներում, ինչը բավարար չէ: 2014 թվականի դեկտեմբերի 1-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեց «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքը (այսուհետ՝ օրենք) որի նպատակն է Հայաստանի Հանրապետությունում ապահովել համընդհանուր ներառական կրթության իրականացումը: Օրենքի 3-րդ հոդվածի 10.4-րդ ենթակետի համաձայն «մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ» հասկացությունը սահմանվեց որպես ուսումնամեթոդական, հոգեբանական և մանկավարժական աջակցություն, որը ցուցաբերվում է սովորող երեխային, նրա ծնողին և մանկավարժական աշխատողին: Նույն հոդվածի 10.6-րդ ենթակետի համաձայն սահմանվեց նաև «մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» հասկացությունը, իսկ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն սահմանվեց, որ երեխայի կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները տրամադրվում են երեք՝ դպրոցական, տարածքային և հանրապետական մակարդակներում: Այսպիսով, օրենքով առաջին անգամ նախատեսվեց տարածքային մակարդակ՝ տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի կողմից իրականացվող ծառայություններ: Միաժամանակ, օրենքի 8-րդ հոդվածի համաձայն սահմանվեց, որ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում ամրագրվել է, որ հատուկ դպրոցները պետք է փոխակերպվեն մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների, որոնք աջակցություն կտրամադրեն հանրակրթական դպրոցներին, կազմակերպելու համար կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը: Ինչպես նաև դպրոցները կհամալրվեն ուսուցչի օգնականի հաստիքներով, և մինչև 2025 թվականի օգոստոսի 1-ը հանրապետությունը պետք է հասնի օրենքով սահմանված համընդհանուր ներառմանը:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Որոշման նախագիծն ուղղված է օրենքով սահմանված եռամակարդակ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների սահմանմանը, յուրաքանչյուր մակարդակում դրանց կանոնակարգմանը և, վերջին հաշվով, համընդհանուր ներառական կրթության իրականացման գործընթացի ապահովմանը:<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ակնկալվում է, որ որոշման կենսագործումը կնպաստի ոչ միայն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններից օգտվող երեխաների կրթության իրավունքի լիարժեք իրացմանը, նրանց կրթական մակարդակի աճի ապահովմանը, այլ նաև Հայաստանում հանրակրթության որակի բարձրացմանը: |
| 72. | **«Տարածքային ու հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների գործունեության ֆինանսավորման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Մանկավարժահոգեբանական աջակցության տարածքային կենտրոնների գործունեության ֆինանսավորման կարգը նպատակ ունի կանոնակարգելու «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով սահմանված |

| | |
|---|---|
| | կարգով երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման, հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների կրթությանն աջակցող ծառայությունների մատուցման, խորը մտավոր հետամնացություն ունեցող երեխաների կրթության իրականացման համար վերապատրաստումների կազմակերպման նպատակով ՀՀ մարզերի տարածքում ստեղծվող մանկավարժահոգեբանական աջակցության տարածքային կենտրոնների գործունեության ֆինանսավորումը:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ մարզերում գործում են հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններ, որոնք նախատեսվում են վերակազմակերպվել մանկավարժահոգեբանական աջակցության տարածքային կենտրոնների: Մանկավարժահոգեբանական աջակցության տարածքային կենտրոնների ցանցի ձևավորումը կապահովի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կրթական կարիքների գնահատման և անհրաժեշտ աջակցող ծառայությունների հասցեականությունը և հասանելիությունը: Միաժամանակ, կապահովվի յուրաքանչյուր երեխայի համար կրթությանն աջակցող ծառայությունների շարունակական մատուցումն իր ուսումնական հաստատության կրթական միջավայրում:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>ՀՀ մարզերում գործում են հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններ, որոնք նախատեսվում են վերակազմակերպել մանկավարժահոգեբանական աջակցության տարածքային կենտրոնների: Մանկավարժահոգեբանական աջակցության տարածքային կենտրոնների ցանցի ձևավորումը կապահովի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կրթական կարիքների գնահատման և անհրաժեշտ աջակցող ծառայությունների հասցեականությունը և հասանելիությունը: Միաժամանակ, կապահովվի յուրաքանչյուր երեխայի համար կրթությանն աջակցող ծառայությունների շարունակական մատուցումն իր ուսումնական հաստատության կրթական միջավայրում:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մանկավարժահոգեբանական աջակցության տարածքային կենտրոնների գործունեության կազմակերպման համար անհրաժեշտ ֆինանսավորման կարգը հաշվարկային առումով կարող է լիարժեքորեն ապահովել տարածքային կենտրոնների բնականոն գործունեությունը և «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով և մանկավարժահոգեբանական աջակցության տարածքային կենտրոնների օրինակելի կանոնադրությամբ սահմանված ծառայությունների մատուցումը:<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մանկավարժահոգեբանական աջակցության տարածքային կենտրոնների գործունեության կազմակերպման համար անհրաժեշտ ֆինանսավորման կարգը հաշվարկային առումով կարող է լիարժեքորեն ապահովել տարածքային կենտրոնների բնականոն գործունեությունը և «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով և մանկավարժահոգեբանական աջակցության տարածքային կենտրոնների օրինակելի կանոնադրությամբ սահմանված ծառայությունների մատուցումը: |
| 73. | **«ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը** (նպատակը)<br>Համապատասխանեցում «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի պահանջներին: Սահմանված պահանջների ներառում գործող կանոնադրության մեջ:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելուց հետո գործող |

| | |
|---|---|
| | կանոնադրությունն ամբողջովին չի արտացոլում սահմանված պահանջները:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Համապատասխանեցում «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքին, իրավական ակտերի միասնականացում:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Իրավական ակտերի միջև առկա անհամապատասխանությունների հստակեցում:<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Կրթության բնագավառը կարգավորող օրենսդրության միասնական դաշտ: |
| 74. | **«Տարածքային և հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների օրինակելի կանոնադրությունները և ցանկը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը** (նպատակը)<br>Քանի որ կառույցները նոր ստեղծվող են, ուստի կարիք կա դրանց գործունեությունը կարգավորելու, իրավունքները, պարտավորությունները և գործառույթները նախանշելու:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս չկան նման կառույցներ, ուստի հարցը կարգավորված չէ:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Կենտրոնների գործունեության կանոնակարգում՝ կանոնադրությունների հաստատման միջոցով:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Կենտրոնների գործունեության կանոնակարգում՝ կանոնադրությունների հաստատման միջոցով:<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Անձի կրթության աջակցության մանկավարժահոգեբանական ծառայությունների կազմակերպման երկրորդ և երրորդ մակարդակների գործունեության կանոնակարգում: |
| 75. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 31-ի N 332-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը** (նպատակը)<br>Համաձայն Լյուվեն-Լյովեն կոմյունիկեի (2009) Բոլոնիայի անդամ երկրները պարտավորվել են մշակել իրենց որակավորումների ազգային շրջանակները և իրականացնել ինքնահավաստագրման գործընթաց: Որակավորումների ազգային շրջանակի ինքնահավաստագրման գործընթացի նպատակն է ցույց տալ որակավորումների ազգային շրջանակի համապատասխանությունը եվրոպական բարձրագույն կրթության տարածքի որակավորումների շրջանակի նկատմամբ (EHEA-QF):<br>Ելնելով ՀՀ որակավորումների ազգային շրջանակի ինքնահավաստագրման գործընթացից և հաշվի առնելով միջազգային փորձագետների եզրակացություններն ու առաջարկությունները՝ անհրաժեշտություն է առաջացել ՀՀ կառավարության 2011 թ. մարտի 31-ի N 332-Ն որոշմամբ հաստատված կրթության որակավորումների ազգային շրջանակի ընդհանրական բնութագրերում կատարել լրամշակումներ, իրականացնել մակարդակների փոփոխություններ:<br>Միաժամանակ ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի 450-րդ կետի նախատեսվում է Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի ինտեգրում՝ որակավո-րումների, դիպլոմների ու կրթական վերջնարդյունքների փոխճանաչման համակարգի ներդրմամբ: |

1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

ՀՀ բարձրագույն կրթության համակարգը եվրոպական բարձրագույն կրթական համակարգին ներդաշնակեցնելու և համադրելի դարձնելու նպատակով 2011 թվականին ՀՀ կառավարությունը հաստատեց Հայաստանի որակավորումների ազգային շրջանակը (ՈԱՇ): 2012 թվականին ՀՀ ՈԱՇ-ի ինքնագնահատման և հավաստագրման գործընթացի արդյունքում միջազգային և ազգային փորձագետների կողմից առաջարկվեց վերանայել գործող ՈԱՇ-ը՝ այն համադրելի դարձնելով եվրոպական որակավորումների շրջանակին և լինի միտված բարձրագույն կրթության և աշխատաշուկայի կարիքներին:

Ներկայիս հաստատված ՈԱՇ-ում խախտված է մակարդակների միջև աստիճանական առաջխաղացման (դասավորություն) սկզբունքը և որոշ մակարդակների բնութագրերը չեն համապատասխանում որակավորումներին, ինչպես նաև առկա են ակնհայտ տարբերություններ ազգային շրջանակի և ԵԲԿՏ-ՈՇ-ի մակարդակների բնութագրերի միջև:

Կրեդիտները ներառված չեն ՈԱՇ-ում, սակայն անհրաժեշտ է ընդգծել ուսումնառության արդյունքների և կրեդիտների փոխանցման և կուտակման եվրոպական համակարգի (ECTS) միջև փոխկապակցվածությունը:

1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում կվերանայվի ՈԱՇ-ը և կներկայացվի նոր խմբագրությամբ: Նոր խմբագրությամբ ՈԱՇ-ը նախատեսվում է նկարագրել հստակ սահմանված մակարդակներով և մեկ մակարդակից մյուսն անցնելու համապատասխան հիերարխիկ անցումներով, որտեղ յուրաքանչյուր մակարդակում սահմանված կլինեն ձեռքբերումները հավաստող ուսումնառության վերջնարդյունքները՝ գիտելիք, կարողություն և հմտություն տիրույթներում: ՈԱՇ-ում կներառվեն կրեդիտները:

2. **Կարգավորման առարկան**

ՈԱՇ-ի նպատակներից է կանոնակարգել և համակարգել ազգային որակավորումները՝ դարձնելով դրանք առավել թափանցիկ և պատկերավոր, ինչպես նաև նպաստել շարժունությանը սովորողների շրջանակներում: Միաժամանակ որակավորումների ազգային շրջանակը հիմք է հանդիսանում կրթական վերջնարդյունքների վրա հիմնված կրթական ծրագրերի մշակման համար: Խորացնել համագործակցությունը շահագրգիռ կողմերի միջև և առավել սերտ կապեր հաստատել աշխատաշուկայի և կրթություն իրականացնող ուսումնական հաստատությունների միջև, ինչպես նաև ուղղված է մրցունակ մասնագետների պատրաստմանը, շնորհվող որակավորումների համադրելիությանը և ճանաչմանը:

3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**

ՈԱՇ-ը հնարավորություն կտա՝

- համադրելի և ըմբռնելի դարձնել ՀՀ բարձրագույն կրթական համակարգի նկարագրությունը՝ ազգային և միջազգային մակարդակներում,
- հստակեցնել ՀՀ որակավորումների նկարագրերը, հիերարխիկ և հորիզոնական անցումների հնարավորությունները,
- նպաստել շարունակական կրթության իրագործմանը՝ տեսանելի դարձնելով ուսումնական ուղիների հնարավորությունները,
- ստեղծել հավաստի և վստահելի հղման հիմքեր ՀՀ բուհերի և Որակի ապահովման գործակալության համար՝ դասընթացների, կրթական ծրագրերի և որակավորումների պատշաճ որակն ապահովելու համար,
- օտարերկրյա որակավորումներով անհատներին աշխատել կամ շարունակել իրենց կրթությունը ՀՀ-ում, իսկ ՀՀ որակավորումներով անհատներին՝ արտերկրում:

Ամրապնդել համագործակցությունը կրթություն իրագործող կառույցների և աշխատաշուկայի միջև:

| | |
|---|---|
| 76. | **«Բարձրագույն կրթության մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Բարձրագույն կրթության մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է բարձրագույն կրթության զարգացմամբ և միջազգայնացմանն ուղղված միտումներով, ինչպես նաև Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի ինտեգրմամբ: Այն ներառում և պայմանավորված է բարձրագույն կրթության բնագավառում կրթության կազմակերպման, իրավակազմակերպական, ֆինանսական հարաբերությունների հստակեցման, անկախ բարձրագույն ուսումնական հաստատություն-ների կազմակերպաիրավական ձևից ու կարգավիճակից նրանց ակադեմիական, կառավարման, ֆինանսական հարաբերությունների ընդհանուր սկզբունքների, պայմանների և պահանջների հստակ սահմանման և ապահովման, ինչպես նաև բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ոլորտը կանոնակարգող «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներում առկա հակասությունների կարգավորման անհրաժեշտությամբ: Նշենք նաև, որ 2014 թվականից Եվրոպական միությունը ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ համատեղ իրականացնում է «Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության զարգացում՝ եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրվելու նպատակով» Թվինինգ ծրագիրը, որն իրականացվում է հինգ հիմնական ուղղություններով, որոնցից մեկն էլ ուղղված է Բոլոնիայի գործողություններին ու նախաձեռնություններին համապատասխան ՀՀ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ոլորտը կարգավորող օրենսդրության վերանայմանը:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Գործող «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ոլորտը կանոնակարգող «Կրթության մասին» ՀՀ օրենքով սահմանված համապատասխան դրույթները չեն ապահովում կամ մասնակի են ապահովում բուհերի կառավարման և ինքնուրույնության հետագա զարգացման ապահովման նպատակով նրանց ինքնավարության, ակադեմիական ազատությունների, ֆինանսավորման և հաշվետվողականության անհրաժեշտ լիարժեք մեխանիզմները: ՀՀ օրենսդրությամբ սահմանելու կամ դրանք լիովին վերանայելու կարիք ունեն մի շարք խնդիրներ, որոնք են՝<br>- բուհի առաքելությունից, խնդիրներից և գործառույթներից ու պետության կարիքներից բխող հիմնական պարտավորությունները (այդ թվում՝ բարձրագույն կրթության մակարդակում իրականացվող ուսուցման շրջանակին, որակին և արդյունավետությանը վերաբերող պարտականություններ),<br>- բուհերի ֆինանսավորման սկզբունքները և պայմանները, նրանց ինստիտուցիոնալ ինքնավարու-թյան և հաշվետվողականության պատշաճ հավասարակշռության ապահովման ընդունված պահանջների ու մեխանիզմների ներդրումն ու կիրարկումը, որը ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործման նպատակով կարևոր պայմաններից է,<br>- միջազգային օրենսդրությանը համապատասխան բարձրագույն կրթության բնագավառին վերաբերող հիմնական և կիրառվող հասկացությունների (համալսարան (այդ թվում՝ հանրային և մաս-նավոր), կրթական ծրագիր, աստիճան, կրկնակի աստիճանակարգ, որակավորում և այլն) սահմանումը,<br>- բուհերի լիցենզավորման ու հավատարմագրման պայմանների ու պահանջների, ներքին և արտաքին որակի ապահովման (ինչպես նաև՝ վերահսկողության մեխանիզմների) ու ընդլայնման հստակ ամրագրումը,<br>- ընդունելության նոր մեխանիզմների ու պայմանների ներդրումը,<br>- բուհերի կառավարման մոդելի բարեփոխման նպատակով բուհերի կազմակերպաիրավական ձևերի (այդ թվում՝ ստեղծման, վերակազմակերպման և լուծարման), կառավարման մարմինների ու |

դրանց գործունեության տարանջատման հստակեցումը և այլն:

1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Նշված խնդիրների կարգավորման նպատակով առաջարկվում է մշակել «Բարձրագույն կրթության մասին» նոր օրենք, որը կկանոնակարգի և կհստակեցնի բարձրագույն կրթության կազմակերպման, իրավակազմակերպական ու ֆինանսական հարաբերությունները, ինչպես նաև կհանդիսանա բարձրագույն կրթության որակի ապահովման և կատարելագործման ժամանակակից ու համապարփակ իրավական հենքը:

2. **Կարգավորման առարկան**

Իրավական ակտի կարգավորման նպատակն է միջազգային պահանջներին համապատասխան՝

- խթանել նորարարությունը, բարձրագույն ուսումնական հաստատությունների միջև մրցակցությունը և պատասխանատվությունը՝ համահունչ միջազգային (եվրոպական) չափանիշներին,

- ապահովել կրթական գործընթացի, այդ թվում՝ որակի ապահովման գործընթացների, անընդհատությունը, թափանցիկությունը և հրապարակայնությունը, ինչպես նաև մատչելի և հանրությանը հասանելի հաշվետվողականությունը,

- հստակ տարանջատել և սահմանել բարձրագույն կրթության բնագավառում ՀՀ կառավարության, լիազոր մարմնի և բուհերի պարտավորությունները և իրավասությունները, այդ թվում՝ բուհերի կառավարման մարմինների գործառույթները,

- ապահովել համապատասխանելիությունը եվրոպական բարձրագույն կրթության տարածքին այնպես, որ բուհերի բոլոր ներքին շահառուների համար ստեղծվի էլ ավելի լայն շարժունության, ՀՀ որակավորումների միջազգային ճանաչման և Հայաստանի Հանրապետության ու Բոլոնիայի մասնակից երկրների բուհերի միջև համագործակցության լայն հնարավորությունները,

- սահմանել բարձրագույն կրթության բնագավառում ՀՀ կառավարության և լիազոր մարմնի լիազորությունները, այդ թվում՝ պետական միջոցների հաշվին բուհերի կողմից իրականացվող բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների բաշխման պայմանները և սկզբունքները՝ նպաստելով բարձրագույն կրթության համակարգի ֆինանսավորման համար հատկացված պետական բյուջեի և այլ միջոցների արդյունավետ օգտագործմանը,

- սահմանել բարձրագույն կրթության որակի նկատմամբ վերահսկողության անհրաժեշտ մեխանիզմները՝ բարձրագույն կրթության բնագավառում միասնական պետական քաղաքականության և միջազգային չափանիշներին համապատասխան բարձրագույն կրթության ապահովման համար:

3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**

Իրավական ակտի նախագծի ընդունման դեպքում ամբողջական և հստակ կսահմանվեն՝

- բարձրագույն կրթության բնագավառում անհրաժեշտ քաղաքականության իրականացման հիմքերը և պայմանները,

- կրթական, հետազոտական, տեխնոլոգիական և նորարարական գործունեություն իրականացնող բարձրագույն ուսումնական հաստատություններին պետական աջակցության տրամադրման սկզբունքները և մեխանիզմները, այդ թվում՝ ուսման վարձերի և ուսանողական նպաստների հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների արտոնության տրամադրման,

- բարձրագույն ուսումնական հաստատության գործունեության թափանցիկության և հրապարակայնության համար անհրաժեշտ մեխանիզմները և պահանջները, որը կարտացոլի հաստատության պատասխանատվությունը և կատարողականությունը պետության ու հասարակության առջև,

- բարձրագույն կրթության բնագավառում միջազգային պահանջներին համապատասխան և անհրա-

| | |
|---|---|
| | ժեշտ պետական վերահսկողության իրականացման հիմքերը, սկզբունքները և մեխանիզմները: Իրավական ակտի նախագծի ընդունման դեպքում «Բարձրագույն կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը համահունչ կլինի բարձրագույն կրթության մասին միջազգային օրենսդրությանը և կնպաստի բարձրագույն կրթության համակարգի ու հաստատությունների միջազգայնորեն մրցունակությանը: |
| **Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն** | |
| 77. | **«Պատմամշակութային հուշարձանների պահպանության, օգտագործման և հանրահռչակման 2016-2020 թվականների ռազմավարական ծրագրին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնելը**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը** (նպատակը)<br>Հիմնական նպատակը պատմամշակութային հուշարձանների (այսուհետ՝ հուշարձաններ) պահպանության, օգտագործման և հանրահռչակման բնագավառում պետական քաղաքականության միասնական մոտեցումների մշակումը և իրականացումն է:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս պատմամշակութային հուշարձանների պահպանության, օգտագործման և հանրահռչակման բնագավառում առկա են մի շարք խնդիրներ՝<br>1) ՀՀ օրենսդրությունից բխող հուշարձանների պետական հաշվառման և պատմական միջավայրի պահպանման գործառույթների ամբողջական իրականացման գործիքակազմի բացակայություն.<br>2) հուշարձանների պետական ցուցակում ներառելու կամ հաշվառումից հանելու վերաբերյալ հստակ չափորոշիչների բացակայություն.<br>3) ժամանակակից տեխնիկական սարքաշարերի և միջոցների կիրառմամբ հուշարձանների միասնական կադաստրի կազմման և վարման համակարգի բացակայություն.<br>4) հուշարձանների վերանորոգման ոլորտի՝ զբոսաշրջության և տնտեսության զարգացման խնդիրների հետ փոխկապակցվածության բացակայություն.<br>5) հուշարձանների տարածքների թանգարանացման ծրագրերի, հնագիտական ուսումնասիրությունների իրականացման և դրանց արդյունքների գնահատման համար ժամանակակից տեխնիկական միջոցների արդիականացման անհրաժեշտություն.<br>6) ոլորտի զարգացմանը զուգընթաց համարժեք կառավարման, տեղեկատվական միասնական համակարգի բացակայություն.<br>7) կադրերի վերապատրաստման անհրաժեշտություն:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>1) օրենսդրական դաշտի արդիականացում.<br>2) հուշարձանների պետական ցուցակներում ներառման չափորոշիչների մշակում.<br>3) հուշարձանների հաշվառման գործընթացի կատարելագործում.<br>4) հնագիտական պեղումների արդյունքում հայտնաբերված հնագիտական գտածոների վերականգնում և թանգարանացում.<br>5) միասնական համակարգով հուշարձանների կադաստրի տվյալների կազմում և վարում՝ ժամանակակից նոր տեխնոլոգիաների կիրառմամբ.<br>6) հուշարձանների վերականգնման, օգտագործման և հանրահռչակման ծրագրերի մշակում՝ զբոսաշրջային գրավիչ միջավայրի ստեղծման նպատակով. |

| | |
|---|---|
| | 7) ծրագրերի սկզբունքներին համահունչ կադրերի ուսուցում և վերապատրաստում. <br> 8) հուշարձանների դիտանցման համակարգի ներդրում. <br> 9) ծրագրային բարեփոխումներով պայմանավորված արդի տեխնիկական միջոցների ձեռքբերում և համակարգի վերազինում: <br> **2. Կարգավորման առարկան** <br> Հուշարձանների պահպանության, օգտագործման և հանրհոչակման հարցերում պետական քաղաքականության սկզբունքների, մոտեցումների, բնագավառի հեռանկարային զարգացման միասնական հիմքերի ձևավորում և համակարգի արդիականացում: <br> 3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը** <br> Կիրականացվեն ռազմավարական ծրագրից բխող և կից ժամանակացույցով հաստատված միջոցառումներ, որոնց արդյունքում կապահովվեն՝ հուշարձանների պահպանության, օգտագործման, կառավարման մեխանիզմները, տեղեկատվական միասնական դաշտի ձևավորումը, հնագիտական հետազոտությունների հանրահռչակումը, հուշարձանների մշտադիտարկման համակարգի ներդրումը, հասարակության համար տվյալների մատչելիությունը, լիազոր մարմնի իրավասությանը վերապահված օրենսդրական որոշ գործառույթների հստակեցումը, ինչպես նաև տնտեսության զարգացմանն ուղղված զբոսաշրջային միջավայրի բարելավումը: |
| 78. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության** 2010 **թվականի մարտի** 11-**ի** N 310-Ա **որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնելը** <br><br> 1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը** (**նպատակը**) <br> «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 11-ի N 310-Ա որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունումը բխում է «Ոչ նյութական մշակութային ժառանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 8-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, ՀՀ կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 3-ի N 1173-Ն որոշման N 1 հավելվածի 2-րդ գլխի 10-րդ, 11-րդ կետերի, ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության մասին» կոնվենցիայի 12-րդ հոդվածի պահանջներից: <br> Նշված որոշման նախագծի նպատակը ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների առկա ցանկի համալրումն է: <br> 1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** <br> Ոլորտում իրավահարաբերությունները կարգավորվում են «Ոչ նյութական մշակութային ժառանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և դրա կիրարկումն ապահովող մի շարք իրավական ակտերով՝ ՀՀ կառավարության 2010 թ. սեպտեմբերի 3-ի N 1173-Ն, ՀՀ կառավարության 2010 թ. մարտի 11-ի N 310-Ա, ՀՀ կառավարության 2011 թ. հունվարի 20-ի N 36-Ն և ՀՀ կառավարության 2012 թ. մարտի 1-ի N 241-Ն որոշումներով: <br> Ստեղծված իրավական դաշտն ապահովում է 2006 թ. Հայաստանի Հանրապետության կողմից ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2003 թվականի «Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության մասին կոնվենցիայով» ստանձնած պարտավորությունների կատարումը: <br> Համաձայն «Ոչ նյութական մշակութային ժառանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի՝ ՀՀ պետական լիազոր մարմինը ՀՀ կառավարության հաստատմանն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության տարածքում առկա ոչ նյութական |

մշակութային ժառանգության արժեքների ցանկը: ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 11-ի N 310-Ա որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետության ոչ նյութական մշակութային արժեքների ցանկերի կազմման չափորոշիչները և ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների ցանկը:

Ներկայումս առկա խնդիր է՝

- նշված ցանկի համալրումը, որը կապահովվի ՀՀ կառավարության 2010 թ. սեպտեմբերի 3-ի N 1173-Ն որոշման N 1 հավելվածի 2-րդ գլխի 10-րդ, 11-րդ կետերի պահանջի կատարումը,
- համալրված արժեքներից ընտրությունը և ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ներկայացուցչական ցանկը համալրելու նպատակով դրանց ներկայացումը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 11-ի N 310-Ա որոշման հավելվածում համալրում իրականացնելու գործընթացը շարունակական բնույթ է կրելու:

1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Լրացում կատարելով՝ առաջարկվում է՝

- համալրել Հայաստանի Հանրապետության տարածքում առկա ոչ նյութական մշակութային արժեքների ցանկը,
- ապահովել ոչ նյութական մշակութային արժեքների գույքագրման, ուսումնասիրման, դասակարգման, պահպանության, հանրահռչակման, փաստաթղթավորման և համալրման գործընթացը:

1.3. **Կարգավորման առարկան**

Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 11-ի N 310-Ա որոշմամբ հաստատված չափորոշիչներին համապատասխան՝ առկա ցանկի համալրում, գույքագրման և փաստաթղթավորման գործընթացի կազմակերպում:

2. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունմամբ կապահովվի Հայաստանի Հանրապետության ոչ նյութական մշակութային արժեքների գույքագրման, ուսումնասիրման, դասակարգման, պահպանության, հանրահռչակման, փաստաթղթավորման և համալրման գործընթացի իրականացումը՝ էապես նպաստելով ոլորտում առկա հիմնախնդիրների լուծմանը:

79.

**«Բնակչության որոշ խավերի համար մշակութային կազմակերպությունների վճարովի ծառայություններից օգտվելու արտոնությունների կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնելը**

1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**

«Բնակչության որոշ խավերի համար մշակութային կազմակերպությունների վճարովի ծառայություններից օգտվելու արտոնությունների կարգ սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունումը բխում է «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներից: Նշված որոշման նախագծի նպատակը մշակութային կազմակերպություններում վճարովի ծառայություններից օգտվելու արտոնությունների սահմանումն է, որն ուղղված կլինի նախադպրոցական տարիքի երեխաներին, դպրոցականներին, ուսանողներին, կենսաթոշակառուներին, հաշմանդամներին, ժամկետային զինծառայողներին:

1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Մշակութային կազմակերպությունների վճարովի ծառայություններից օգտվելու արտոնությունները սահմանված են միայն թանգարանների ոլորտում, մասնավորապես, ՀՀ մշակույթի նախարարի 2009 թվականի օգոստոսի 3-ի «Թանգարանի մշտական ցուցադրության այցելության և բացատրության

(էքսկուրսիայի) տոմսերի գների և արտոնությունների մասին» N 458-Ա հրամանի 2-րդ, 3-րդ կետերով բոլոր այցելուների համար յուրաքանչյուր ամսվա վերջին շաբաթ օրը սահմանված է անվճար այցելության և դպրոցական տարիքի երեխաների, ուսանողների և թոշակառուների համար մշտական այցելության տոմսի արժեքի (ոչ ավելի, քան 300 դրամ) արտոնությունների կիրառումը: Գրադարաններում բոլոր այցելություններն անվճար են, իսկ նախարարության համակարգի թատրոններում և համերգային կազմակերպություններում, ըստ անհրաժեշտության, համագործակցելով հասարակական կազմակերպությունների հետ, աջակցում են կրթամշակութային ծրագրերի իրականացմանը:

1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

«Բնակչության որոշ խավերի համար մշակութային կազմակերպությունների վճարովի ծառայություններից օգտվելու արտոնությունների կարգ սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծով առաջարկվում է մշակութային կազմակերպություններում (նախարարության համակարգի թատրոններ և համերգասրահներ) սահմանել վճարովի ծառայություններից օգտվելու արտոնություններ, ինչը կապահովի նախադպրոցական տարիքի երեխաներին, դպրոցականներին, ուսանողներին, կենսաթոշակառուներին, հաշմանդամներին, ժամկետային զինծառայողներին մշակութային տարբեր միջոցառումներին ներգրավվածությունը:

1.3. **Կարգավորման առարկան**

Մշակութային կազմակերպություններում վճարովի ծառայություններից օգտվելու արտոնությունների սահմանում նախադպրոցական տարիքի երեխաների, դպրոցականների, ուսանողների, կենսաթոշակառուների, հաշմանդամների, ժամկետային զինծառայողների մշակութային տարբեր միջոցառումներին ներգրավվածության ապահովմամբ:

2. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**

Մշակութային կազմակերպությունների վճարովի ծառայություններից օգտվելու արտոնությունների սահմանմամբ կապահովվի նախադպրոցական տարիքի երեխաների, դպրոցականների, ուսանողների, կենսաթոշակառուների, հաշմանդամների, ժամկետային զինծառայողների մշակութային տարբեր միջոցառումներին ներգրավվածությունը:

**Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն**

80. **«Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին խնամատարության հանձնելու ընթացակարգի բարեփոխման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման ընդունման վերաբերյալ**

1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**

Հայեցակարգի մշակումը պայմանավորված է երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի ապահովմամբ և երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում իրականացվող բարեփոխումներով: Հայեցակարգի ընդունումը կնպաստի հանրապետությունում խնամատար ընտանիքների ձևավորման գործընթացին, որը կհամարվի այն երեխաների խնամքի կազմակերպման այլընտրանքային ձև, ովքեր տարբեր պատճառներով չեն կարող խնամվել կենսաբանական ընտանիքում կամ անհնար է ապահովել նրանց խնամքը ազգականների ընտանիքներում:

1.1 . **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

ՀՀ կառավարության կողմից 2008 թ. մայիսի 19-ի N 459-Ն որոշմամբ ընդունվել է երեխային խնամատար ընտանիք հանձնելու կարգը, որով կարգավորվել է առանց ծնողական խնամքի մնացած երեխայի խնամքն ու դաստիարակությունը ընտանեկան միջավայրում: Խնամակալության և հոգաբարձության մարմնի միջև կնքված պայմանագրի շրջանակներում խնամակալության և հոգաբարձության

մարմինների կողմից իրականացվում է վերահսկողություն խնամատար ընտանիքում գտնվող երեխայի խնամքի նկատմամբ: Երեխայի խնամքի և խնամատար ծնողի վարձատրության համար դրամական միջոցները տրամադրվում են ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով՝ պայմանագրի հիման վրա:

Առկա են հրատապ լուծում պահանջող հետևյալ խնդիրները՝

1. երեխային մանկատանը կամ այլ հաստատությունում տեղավորելու հարցը քննարկել միայն նրան խնամատար ընտանիք հանձնելու անհնարինության դեպքում,

2. երեխայի լավագույն շահի առաջնահերթությունը,

3. խնամատար ընտանիքի տեսակների և խնամատարության տևողության նախատեսումը՝ թիրախային պաշտպանություն, խնամք և դաստիարակություն իրականացնելու համար,

4. խնամատար ընտանիքների տվյալների բազայի առկայությունը, նրանց հաշվառման պարտադիր լինելը:

1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Նախագծով առաջարկվում է ընդունել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին խնամատարության հանձնելու ընթացակարգի բարեփոխման հայեցակարգ, որը հիմք կհանդիսանա՝

1) համապատասխանեցնել օրենսդրությունը միջազգային իրավական փաստաթղթերին.

2) ամրագրել երեխայի լավագույն շահի պարտադիր ապահովումը.

3) նախատեսել խնամատար ընտանիքի տեսակները և խնամատարության տևողությունը.

4) խնամատար ընտանիքում երեխայի խնամքի նկատմամբ վերահսկողության հիմնական սկզբունք-ների և ուղղությունների ամրագրումը.

5) հստակեցնել խնամատար ընտանիքներին ներկայացվող պահանջները և դրանց ընտրությունը:

2. **Կարգավորման առարկան**

Հայեցակարգի ընդունումը կնպաստի հանրապետությունում խնամատար ընտանիքների ձևավորման գործընթացին, որը կհամարվի երեխաների խնամքի կազմակերպման այլընտրանքային ձև:

3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**

Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է խնամատարության միջոցով ապահովել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների ընտանիքում ապրելու իրավունքը, հստակեցնել խնամատար ընտանիքի դերն ու նշանակությունը, սահմանել խնամատար ընտանիքների ձևերը և տեսակները, դրանց հիմքերը, սահմանել երեխայի և խնամատար ընտանիքի ընտրության և խնա-մատարության նկատմամբ վերահսկողությունը:

81. **«Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական իրավիճակի բարելավման 2016-2018 թվականների ազգային ծրագրին և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման ընդունման վերաբերյալ**

1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**

Նախագծի անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2014 թ. մայիսի 19-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 511-Ա որոշման հավելվածի «2.4.6.1. Ժողովրդագրությունը» կետի և ՀՀ Նախագահի 2013 թ. նախընտրական ծրագրի «Ապահովված ընտանիքներ» բաժնի «Առողջ ընտանիքներ» ենթաբաժնի դրույթներից, ինչպես նաև ՀՀ կառավարության 2009 թ. հուլիսի 2-ի «ՀՀ ժողովրդագրական քաղաքականության ռազմավարությունը և ռազմավարության իրականացումն ապահովող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» N 27 արձանագրային որոշումից:

Նախագծի նպատակն է ժողովրդագրական իրավիճակի համակողմանի գնահատման և իրականացվող նպատակային միջոցառումների շնորհիվ ժողովրդագրական բացասական զարգացումների հետևանքների մեղմումը, իրավիճակի կայունացման ու բարելավման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումը:

1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները**

Հայաստանի Հանրապետության ներկա ժողովրդագրական կացությունը երկրի սոցիալ-տնտեսական հետագա զարգացման և ազգային անվտանգության տեսանկյունից հանդիսանում է լուրջ մարտահրավեր, որը պայմանավորված է տարիներ շարունակ կուտակված խնդիրներով, որոնք հանգեցրել են բնակչության թվի նվազեցման: Դրանցից են՝

- ծնելիության ցածր մակարդակը
- մահացության, մասնավորապես, վաղաժամ մահացությունների բարձր մակարդակը
- ամուսնությունների թվի նվազումն ու ամուսնալուծությունների թվի աճը
- միգրացիայի, մասնավորապես, արտաքին ուղևորափոխադրումների բացասական մնացորդի աճը

1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Առկա ժողովրդագրական խնդիրների լուծման նպատակով առաջնահերթ կարևորվում են՝

1) ծնելիության մակարդակի բարձրացումը ծնունդների նյութական խրախուսման, ծնող լինելու և աշխատանքային գործունեության համատեղման հնարավորությունների մեծացման միջոցով.

2) մահացության, այդ թվում՝ մանկամահացության և մայրամահացության ցուցանիշի բարելավումը, մասնավորապես, վաղաժամ մահացությունների թվի նվազեցումը.

3) ժողովրդագրական զարգացման իրավական դաշտի հետագա կատարելագործումը, այդ թվում՝

ա. երիտասարդ ընտանիքների բնակարանային պայմանների ապահովման առկա կառուցակարգերի բարելավումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N 98-Ն որոշմամբ հաստատված «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու միջոցով,

բ. երեխայի խնամքի արձակուրդում գտնվող ծնողներին աշխատաշուկա վերադառնալու հնարավորությունների մեծացումը, աշխատանքային գործունեության և ծնողական պարտականությունների համատեղման միջոցով,

գ. երիտասարդ և բազմազավակ ընտանիքների աջակցության և զարգացման այլընտրանքային մոտեցումների և տարրերակների ներդրումը՝ ժողովրդագրական զարգացման ազգային հիմնադրամի ստեղծմամբ:

2. **Կարգավորման առարկան**

Նախագիծը կարգավորում է ժողովրդագրության ոլորտում 2016-2018 թթ. իրականացվելիք միջացառումների նախապատրաստման, հաստատման և իրականացման հետ կապված հարաբերությունները:

3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**

Նախագծի կիրառման դեպքում ակնկալվում է բնակչության վերարտադրության հիմնական բաղադրիչների աճի համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծում, այդ թվում՝

1) ծնունդների թվի և ծնելիության գումարային գործակցի աճ.

2) մահացությունների, մասնավորապես, վաղաժամ մահացությունների առավել տարածված պատճառ հանդիսացող հիվանդությունների կրճատման նպատակով թիրախային խմբի (35-68 տարեկան) բնակչության շրջանում նշված հիվանդությունների սկրինինգում ընդգրկվածության ցուցանիշի աճ.

3) մանկական մահացությունների կրճատում.

4) մայրական մահացության միջին եռամյա ցուցանիշի կրճատում.

5) ծնող լինելու և ուսումնական ու աշխատանքային գործունեության համատեղման համար նպաստավոր

| | |
|---|---|
| | պայմանների ստեղծում տարբեր տարիքային խմբերի պատկանող կանանց ուսումնառության և աշխատանքային շուկա վերադառնալու համար նպաստավոր պայմանների ստեղծմամբ.<br>6)երիտասարդ ընտանիքների բնակարանային ապահովության առկա նպատակային ծրագրի կատարելագործում.<br>7) բնակարանի կարիք ունեցող անձանց բնակարանով ապահովման պետական նպատակային ծրագրի (սոցիալական բնակարանային ֆոնդի) առկայություն.<br>8) երիտասարդ և բազմազավակ ընտանիքների աջակցության այլընտրանքային հնարավորությունների ներդրում՝ ժողովրդագրական զարգացման հիմնադրամի ստեղծում, իրականացվող միջոցառումների արդյունքների հիման վրա Հայաստանի Հանրապետությունից միգրացիոն հոսքերի աստիճանական կրճատում: |
| 82. | **«Օտարերկրացի աշխատողի համար գործատուին աշխատանքի թույլտվություն տրամադրելու ու մերժելու կարգը հաստատելու և աշխատանքի թույլտվություն տրամադրելու համար ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունման վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Սույն որոշման նախագծի մշակումը բխում է ՀՀ կառավարության 2014 թ. մայիսի 19-ի N 511-Ա որոշման հավելվածի 2.4.1-ին բաժնի դրույթներից, ինչպես նաև «Օտարերկրացի աշխատողի համար գործատուին աշխատանքի թույլտվություն տրամադրելու ու մերժելու կարգը հաստատելու և աշխատանքի թույլտվություն տրամադրելու համար ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի (այսուհետ՝ նախագիծ) ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) 22-րդ հոդվածի 3-րդ մասի և 24-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները**<br>Օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ ՀՀ գործատուներն իրավունք ունեն օտարերկրացի աշխատողի հետ աշխատանքային պայմանագիր (ծառայությունների մատուցման պայմանագիր) կնքելու և նրա աշխատանքն օգտագործելու՝ լիազորված մարմնի կողմից օտարերկրացի աշխատողի համար տրամադրված աշխատանքի թույլտվության հիման վրա: Վերջինիս տրամադրելու և մերժելու կարգը, ինչպես նաև ժամկետներն օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, նախատեսվում է սահմանել ՀՀ կառավարության որոշմամբ, որի բացակայությունը սակայն, բովանդակային առումով հանգեցնում է օրենքի նշված դրույթի կիրառման անհնարինության և լուրջ խոչընդոտ է հանդիսանում ինչպես գործատուների կողմից օտարերկրացիների աշխատուժը, մասնագիտական կարողություններն օգտագործելու, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում օտարերկրացիների աշխատանքի թույլտվության տրամադրման և մերժման հետ կապված հարաբերությունները կանոնակարգելու առումով:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվող նախագծով կսահմանվեն օտարերկրացի աշխատողի հետ աշխատանքային պայմանագիր կնքելու և նրա աշխատանքն օգտագործելու նպատակով աշխատանքի թույլտվություն տրամադրելու և մերժելու, նախքան ՀՀ մուտք գործելն օտարերկրացուն անվճար խորհրդատվություն տրամադրելու ընթացակարգերը, ժամկետները, օտարերկրացի աշխատողին աշխատանքի թույլտվությամբ նախատեսված աշխատատեղով չապահովելու դեպքում գործատուի կողմից ծախսերի կատարման հետ կապված հարաբերությունները: |

| | |
|---|---|
| | 2. **Կարգավորման առարկան**<br>Նախագծի կարգավորման առարկան օտարերկրացի աշխատողի համար գործատուին աշխատանքի թույլտվություն տրամադրելու և մերժելու հետ կապված հարաբերություններն են, աշխատանքի թույլտվություն տրամադրելու և մերժելու ժամկետների սահմանումը:<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունմամբ հնարավոր կդառնա օրենքի համապատասխան դրույթների կիրառումը, ինչն իր հերթին հնարավորություն կընձեռի գործատուներին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին և ընթացակարգին համապատասխան, օտարերկրացիների հետ կնքելու աշխատանքային պայմանագիր, օգտագործելու նրանց մասնագիտական կարողությունները: |
| 83. | **«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) մշակումը բխում է ՀՀ կառավարության 2014 թ. մայիսի 19-ի N 511-Ա որոշման հավելվածի 2.4.1-ին կետի քսաներորդ պարբերությունից և ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 2006 թ. դեկտեմբերի 13-ին ընդունված «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի պահանջներից (այսուհետ՝ կոնվենցիա), որը վավերացվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից և ուժի մեջ մտել 2010 թ. հոկտեմբերի 22-ից:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա իրավիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության հետ կապված հարցերը կարգավորվում են «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» 1993 թ. ընդունած ՀՀ օրենքով, որով հիմնականում սահմանվում են հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության սկզբունքները և մոտեցումները: Գործող օրենքում ամրագրված մոտեցումները չեն համապատասխանում հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման միջազգայնորեն ընդունված սկզբունքներին և մոտեցումներին:<br>Չնայած նրան, որ Հայաստանում սկիզբ է առել և աստիճանաբար արմատավորվում է հաշմանդամների նկատմամբ մարդու իրավունքների պաշտպանության վրա հիմնված քաղաքականություն, այնուամենայնիվ, ներկայումս հաշմանդամության հիմնահարցերի կարգավորումը հիմնված է բժշկական մոդելի վրա:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Կոնվենցիայի վավերացմամբ Հայաստանի Հանրապետությունը պարտավորություն է ստանձնել քաղաքականության սկզբունքներն ու ուղղությունները կառուցել հաշմանդամության սոցիալական մոդելի վրա, ինչը ենթադրում է հաշմանդամության դիտարկումն անձի առողջական խնդիրների և սոցիալական ու ֆիզիկական միջավայրի փոխազդեցության համատեքստում:<br>Մարդու օրգանիզմի ֆունկցիաների կամ կառուցվածքային խանգարումները սահմանափակում են նրա գործունեությունն ու մասնակցությունը հասարակական կյանքին, եթե շրջակա միջավայրը կառուցելիս հաշվի չեն առնվել նրա կարիքները: Մինչդեռ, հավասար հնարավորությունների և մատչելի ֆիզիկական, մշակութային, վերաբերմունքային և այլ սոցիալական բարենպաստ |

| | |
|---|---|
| | գործոնների առկայությունը հնարավորինս նվազեցնում է այդ ռիսկը:<br>Հետևաբար առաջարկվում է Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ու սոցիալական ներառման գործընթացում պետական քաղաքականության հիմնական սկզբունքները և մոտեցումները կառուցել սոցիալական ներառման տեսանկյունից:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Նախագծով կարգավորվում են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման հետ կապված հարաբերությունները և սահմանվում են պետական քաղաքականության հիմնական ուղղությունները՝ ամրագրելով հասարակական կյանքի գրեթե բոլոր ոլորտներում հավասար հնարավորությունների և պայմանների վերաբերյալ նորմեր:<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունումն անհրաժեշտ իրավական հիմքեր կստեղծի Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանն ու սոցիալական ներառմանն ուղղված քաղաքականություն իրականացնելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունները կատարելու համար: |
| 84. | **«Հայաստանի Հանրապետությունում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնամքի այլընտրանքային ծառայությունների զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման ընդունման վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Սույն միջոցառումը բխում է ՀՀ կառավարության 2014 թ. մայիսի 19-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 511-Ա որոշման հավելվածի 2.4.1-ին կետի քսաներեքերորդ պարբերության պահանջից: ՀՀ-ում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնամքի այլընտրանքային ծառայությունների զարգացման հայեցակարգի մշակման նպատակը երեխայի ընտանիքում ապրելու իրավունքի ապահովումն է, երեխաներին տրամադրվող այլընտրանքային ծառայությունների ցանցի զարգացումը:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս նախարարության համակարգի բնակչության սոցիալական պաշտպանության վեց հաստատությունում (մանկատուն) իրականացվում է առանց ծնողական խնամքի մնացած շուրջ 655 երեխայի խնամքը և դաստիարակությունը, իսկ երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ յոթ հաստատությունում՝ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված, սոցիալապես անապահով ընտանիքի 6-18 տարեկան շուրջ 730 երեխայի խնամքը և դաստիարակությունը:<br>Նախարարության համակարգում գործում է սոցիալական հոգածության 3 ցերեկային կենտրոն, որտեղ տարեկան կտրվածքով ծառայություններ են տրամադրում շուրջ 300 երեխայի, ինչպես նաև «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության 4 կենտրոններում ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորմամբ ծառայություններ են տրամադրվում շուրջ 250 երեխայի:<br>Ներկայումս խնդիր է այլընտրանքային ծառայությունների զարգացումը, բազմաբնույթ սոցիալական ծառայությունների տրամադրման ձևերի ու մեխանիզմների ընդլայնումը, բավարար չեն նաև ընտանիք վերադարձած երեխաներին տրամադրվող ծառայությունների քանակը և հնարավորությունները:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առկա խնդիրների լուծման նպատակով նախատեսվում է երեխաների խնամքի տրամադրման |

| | |
|---|---|
| | այլընտրանքային սոցիալական ծառայությունների համակարգի ներդրում և զարգացում, մասնավորապես, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների (մանկատուն և երեխաների խնամքի գիշերօթիկ հաստատություն) վերակազմակերպման միջոցով:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Համայնքային բազմաբնույթ ծառայությունների զարգացումը և դրանց համապատասխանեցումը միջազգային չափանիշներին:<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Կսահմանվեն կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին համայնքահեն բազմաբնույթ սոցիալական ծառայությունների տրամադրման ձևերն ու մեխանիզմները, իրականացվելիք միջոցառումները: |
| 85. | **«Պետության կողմից երաշխավորված՝ պետական մարմինների ենթակայության ներքո գտնվող սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների կողմից անվճար տրամադրվող սոցիալական ծառայությունների և սոցիալական աջակցության վճարովի (համավճարով) ծառայությունների մատուցման դեպքերը և ցանկերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունման վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Սույն որոշման նախագծի մշակումը բխում է ՀՀ կառավարության 2014 թ. մայիսի 19-ի N 511-Ա որոշման հավելվածի 2.4.1-ին բաժնի դրույթներից, մասնավորապես, այնտեղ ամրագրված է, որ սոցիալական քաղաքականության ոլորտում ՀՀ կառավարությունն ի թիվս այլ ծրագրերի, նախատեսում է նաև բնակչության սոցիալապես խոցելի և հաշմանդամություն ունեցող անձանց հասցեական և նպատակային ծառայությունների մատուցում: Նախագծի մշակման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև երեխաների պաշտպանության ոլորտում նախորդ տարիներին կատարված փոփոխությունների դինամիկայով, ՀՀ-ի կողմից որդեգրած բեռնաթափման քաղաքականության իրականացման, հատուկ կարիքներ ունեցող, ինչպես նաև կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված երեխաների կարիքների բավարարմանն ուղղված համայնքային ծառայությունների համակարգի զարգացման պահանջով:<br>Նախագծի մշակումը համահունչ է նաև ՀՀ կառավարության 2014 թ. սեպտեմբերի 18-ի նիստի N 39 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետությունում տարեցներին սոցիալական ծառայություններ տրամադրելու հայեցակարգի իրականացման 2015-2019 թթ. միջոցառումների ծրագիր-ժամանակացույցի 4-րդ կետի պահանջին:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Գործող համակարգում մինչ օրս տարեցներին տրամադրվող բոլոր սոցիալական ծառայություններն ուղղված են եղել միայնակ կենսաթոշակառուներին, այսինքն՝ ծառայությունների տրամադրման հիմքում դրվել է մարդու՝ որոշակի սոցիալական խմբին պատկանելու հանգամանքը (միայնակությունը, զավակ չունենալը), ծառայություններից օգտվելու նրանց արտահայտված ցանկությունը և գոյություն ունեցող առկա ծառայությունների ու հաստատությունների հնարավորությունները, սակայն տարեցների իրական կարիքների բազմակողմանի և լիարժեք գնահատում չի իրականացվել: Ընտանիքներում ապրող տարեցների խնդիրները, կարծես, անտեսվել են: Այս խնդրի լուծումն ակնկալվում է ստանալ համալիր սոցիալական ծառայությունների ներդրման արդյունքում, երբ սոցիալական դեպք վարողը կիրականացնի հաճախորդի սոցիալական կարիքների բազմակողմանի և համալիր գնահատում և դրանց առաջնահերթության որոշման հիման վրա կկազմի ու կվարի |

անհատական սոցիալական կարիքների գնահատման անձնագիր և տարեցի անհատական սոցիալական վերականգնման ծրագիր: Տարեցների՝ ըստ սոցիալական ծառայություններից օգտվելու սոցիալ-տնտեսական հնարավորությունների, խմբավորումը թույլ է տալիս հստակեցնել տարեցների այն ենթախմբերը, ովքեր ի վիճակի են իրենց կարիքների համար անհրաժեշտ սոցիալական ծառայությունների մատուցման դիմաց կատարել տարբեր չափերի նյութական փոխհատուցումներ, որն էլ կարող է նվազագույն սոցիալական ծառայությունների ցանկով սահմանված ծառայություններից դուրս որոշակի խմբերին տրամադրվելիք լրացուցիչ՝ վճարովի կամ համավճարով սոցիալական ծառայությունների ցանկի սահմանման, ապա նաև ընտրության հիմք դառնալ: Նման ցանկեր մինչ օրս Հայաստանի Հանրապետությունում չկա: Հաշվի առնելով տարեցների կարիքները, ուսումնասիրված միջազգային փորձը և ոլորտի զարգացման միտումները՝ նախատեսվում է ներդնել տարեց քաղաքացիներին տրամադրվող նոր լրացուցիչ՝ վճարովի կամ համավճարով սոցիալական ծառայություններ՝ անպայմանորեն պահպանելով և զարգացնելով այսօր հանրապետությունում գործող տարբեր կազմակերպությունների կողմից տարեցներին անվճար հիմունքներով տրամադրվող՝ պետության կողմից երաշխավորված անվճար սոցիալական ծառայությունների համակարգը:

Երեխաների պաշտպանության ոլորտում նշված խնդրի լուծումը հնարավոր է հաստատությունների վերակազմակերպման, ինչպես նաև համալիր սոցիալական ծառայությունների ներդրման արդյունքում: Նախատեսվում է ընդլայնել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, մասնավորապես, առանց ծնողական խնամքի մնացած և հաշմանդամ երեխաներին տրամադրվող անվճար և համայնքային ֆինանսավորման աջակցությամբ սոցիալական ծառայությունները՝ պահպանելով և զարգացնելով ներկայում հանրապետությունում գործող տարբեր կազմակերպությունների կողմից երեխաներին անվճար հիմունքներով տրամադրվող՝ պետության կողմից երաշխավորված սոցիալական ծառայությունների համակարգը: Դրան զուգահեռ նախատեսվում է զարգացնել երեխաներին տրամադրվող վճարովի և համավճարով ծառայությունները, որոնք պետք է տրամադրվեն ծնողների վճարունակության աստիճանի հիման վրա: Այդ նպատակով պետք է մշակվեն վճարունակության գնահատման չափորոշիչներ:

1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Սույն որոշմամբ կհստակեցվեն գործող համակարգի տարբեր կառույցների միջոցով ներկայումս հանրապետության տարեցներին և երեխաներին տրամադրվող սոցիալական ծառայությունների շրջանակը և կբացահայտվեն տրամադրվող սոցիալական ծառայությունների համապատասխանությունը տարեցների և երեխաների իրական կարիքներին (գործող համակարգի միջոցով ընդհանրապես լուծումներ չստացած կամ բավարար մակարդակում չլուծված հիմնախնդիրները):

2. **Կարգավորման առարկան**

Սույն որոշման կարգավորման առարկան տարեց մարդկանց և երեխաների սոցիալական ծառայությունների տրամադրման հետ կապված հարաբերություններն են և համայնքահեն ծառայությունների ֆինանսավորման այլընտրանքային մեխանիզմների ներդրումը:

3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**

Սույն որոշմամբ առաջին անգամ Հայաստանի Հանրապետությունում իրավական ակտով կհաստատվի տարեցներին և երեխաներին տրամադրվող՝ պետության կողմից երաշխավորված սոցիալական ծառայությունների, ինչպես նաև տարեցների վճարունակ խմբերին և վճարունակ ընտանիքների երեխաներին տրամադրվող լրացուցիչ՝ վճարովի կամ համավճարով սոցիալական ծառայությունների ցանկերը, ինչը թույլ կտա ընդլայնել ծառայությունների տեսականին, ներդնել ֆինանսավորման նոր մեխանիզմներ, այդ թվում՝ ներգրավելով ծառայությունների համար պոտենցիալ վճարունակ հաճախորդների ֆինանսական և նյութական ներդրումները, ինչպես նաև մասնավոր անձանց և

| | |
|---|---|
| | համայնքների ռեսուրսները: Արդյունքում, անկասկած, կբարձրանա մատուցվող ծառայությունների որակը: |
| 86. | **«Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2016-2021 թվականների համալիր ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման ընդունման վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Սույն որոշման նախագծի մշակումը բխում է ՀՀ կառավարության 2014 թ. մայիսի 19-ի N 511-Ա որոշման հավելվածի 2.4.1-ին բաժնի դրույթներից, որն է՝ սոցիալական քաղաքականության ոլորտում բնակչության սոցիալապես խոցելի և հաշմանդամություն ունեցող անձանց հասցեական և նպատակային ծառայությունների մատուցումը:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս տարբեր ոլորտներում (առողջապահություն, քաղաքաշինություն, կրթություն, մշակույթ, սպորտ, տրանսպորտ և այլն) հաշմանդամության հիմնախնդիրներին ուղղված միջոցառումներն ու դրանց ուղղությունները սահմանված են ՀՀ կառավարության 2005 թ. նոյեմբերի 3-ի «Հաշման-դամների սոցիալական պաշտպանության 2006-2015 թթ. ռազմավարությունը հաստատելու մասին» N 44 արձանագրային որոշմամբ և ՀՀՇՆ IV-11.07.01-2006 (ՄՍՆ 3.02-05-2003) «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար» շինարարական նորմերով: Հետևաբար, օբյեկտիվ անհրաժեշտություն է դառնում նոր համալիր ծրագրի մշակումը՝ հանրապետությունում որդեգրած նոր մոտեցումների և նոր սկզբունքների հենքի վրա:<br>Հայաստանի Հանրապետությունում վերջին տարիներին հիմնովին փոխվել են մոտեցումները հաշմանդամության գաղափարախոսությանը: Աստիճանաբար ներդրվում է հաշմանդամության սոցիալական մոդելը, ինչը ենթադրում է հաշմանդամությունը դիտարկել ոչ միայն անձի առողջական խնդիր, այլև միջավայրային գործոնների հետ այդ խնդիրների փոխազդեցություն: Հաշմանդամություն ունեցող անձանց լիարժեք մասնակցության համար անհրաժեշտ են մատչելի միջավայր, մատչելի տեղեկատվություն, մատչելի տրանսպորտ, մարզական և մշակութային կյանքին մասնակցելու հնարավորություն, հասարակության ոչ խտրական վերաբերմունք, կարծրատիպերի և խարանի վերացում, նրանց կարիքներին համարժեք սոցիալական, կրթական, մարզական և այլ ծառայությունների մատուցում: Ներկայումս տարբեր գերատեսչությունների կողմից իրականացվում են բազմաթիվ միջոցառումներ, սակայն դրանք ունեն առավելապես սոցիալական պաշտպանության միտում, այլ ոչ թե սոցիալական ներառման:<br>Այս նախագծով պետք է բոլոր գերատեսչությունների կողմից իրականացվող միջոցառումները նախագծել սոցիալական ներառման տեսանկյունից: Եվ որ ամենակարևորն է, հաշմանդամության հիմնախնդիրների կարգավորման հիմքում պետք է դրվի մարդու իրավունքների պաշտպանության գերակայությունը: Բոլոր մարդիկ պետք է պաշտպանված լինեն իրավական տեսանկյունից, իսկ վարվող քաղաքականությունը պետք է ուղղված լինի խտրականության բացառմանը և հասարակության մեջ բոլորի լիարժեք ներառման համար համապատասխան պայմանների ստեղծմանը:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Տարբեր ոլորտներում հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների կարգավորմանն ուղղված միջոցառումները պետք է միտված լինեն նրանց սոցիալական ներառմանը, բացառեն խտրականության դրսևորումները, ապահովեն հավասար իրավունքներ, մատչելի և հավասար |

| | |
|---|---|
| | պայմաններ:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանն ուղղված միջոցառումների իրականացմանն առնչվող հարաբերությունները:<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Սույն որոշմամբ կամրագրվեն տարբեր ոլորտներում հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև դրանց նպատակներն ու ուղղությունները: |
| 87. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունման վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը**<br>ՀՀ կառավարության 2014 թ. մայիսի 19-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 511-Ա որոշման հավելվածի 2.4.1-ին կետի վեցերորդ պարբերությամբ նախատեսվել է պետական նպաստների համակարգի օպտիմալացում:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>«Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքով սահմանված ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների տրամադրման հետ կապված հարաբերությունները՝ ընտանիքների անապահովության գնահատման կարգ, ընտանեկան, սոցիալական նպաստների և հրատապ օգնության նշանակում և վճարում, կարգավորվում են ՀՀ կառավարության 2014 թ. հունվարի 30-ի N 145-Ն որոշմամբ: Նշանակման և վճարման գործընթացում առաջացել են իրավակիրառական որոշ դրույթների հստակեցման անհրաժեշտություն:<br>Ի կատարումն «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի յուրաքանչյուր տարի իրականացվող տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված ընտրանքային հետազոտության արդյունքներով ներկայացվող առաջարկությունների հիման վրա մշակվում են ընտանիքի անապահովության բնութագրիչների թիրախային ցուցանիշները:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Կատարելագործել ընտանեկան, սոցիալական նպաստների և հրատապ օգնության նշանակման և վճարման գործընթացը, մասնավորապես փոփոխություններ կատարել ընտանիքների անապահովության գնահատման կարգում՝ անապահովության աստիճանի գնահատման համար օգտագործվող բնութագրիչների, այդ թվում ընտանիքի անդամների, սոցիալական խմբերի թվային արժեքների կամ որոշ դրույթների սահմանման, հստակեցման, ինչպես նաև հասցեականության մեծացման նպատակով:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Ընտանեկան, սոցիալական նպաստների և հրատապ օգնության նշանակման և վճարման բնականոն գործընթացի ապահովում, հասցեականության բարձրացում:<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նշված որոշման նախագծի ընդունմամբ կհստակեցվեն ընտանեկան, սոցիալական նպաստների և հրատապ օգնության նշանակման և վճարման հետ կապված հարաբերությունները: |

| | |
|---|---|
| 88. | **«Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագիրը և երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման ընդունման վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրի և երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրի միջոցառումների ժամանակացույցի մշակման նպատակն է երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում իրականացվող բարեփոխումների քաղաքականության շարունակականության ապահովումը:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Երեխաների սոցիալական պաշտպանության ոլորտի բարեփոխումների հիմնական միջոցառումներն իրականացվում են համաձայն ՀՀ կառավարության 2012 թ. դեկտեմբերի 27-ի N 1694-Ն որոշման: Այն միջգերատեսչական համապարփակ փաստաթուղթ է, որը կարգավորում է ոլորտի հիմնական ուղղությունները և քաղաքականության հիմնական սկզբունքները: Նշված ռազմավարական ծրագրի իրականացման ժամկետն ավարտվում է 2016 թ., ուստի անհրաժեշտ է մշակել ոլորտը կարգավորող նոր ռազմավարական ծրագիր: Առկա խնդիրներն են՝ երեխաների այլընտրանքային ծառայությունների զարգացումը, երեխաների բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններից (մանկատուն, երեխաների գիշերօթիկ խնամքի հաստատություն) երեխաների վերադարձն ընտանիք կազմակերպելը:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Սույն ռազմավարությամբ կամրագրվեն երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտի 2017-2021 թթ. հիմնական ուղղությունները և սկզբունքները, կմշակվեն նշված խնդիրներին ուղղված նպատակային ծրագրեր և միջոցառումներ:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Երեխայի ընտանիքում ապրելու իրավունքի ապահովումն է, այլընտրանքային ծառայությունների ցանցի զարգացումը, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում խնամքի պայմանների բարելավումը և երեխաների պաշտպանության ոլորտում իրականացվող քաղաքականության համապատասխանեցումը միջազգային չափանիշներին:<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Խնդրի լուծմանն ուղղված քայլերի իրականացման արդյունքում կապահովվի երեխայի սոցիալական պաշտպանության բարեփոխումների քաղաքականության շարունակականությունը, կսահմանվեն հիմնական ռազմավարական սկզբունքներն ու ուղղությունները: |
| **Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն** | |
| 89. | **«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունումը բխում է Հայաստանի Հանրապետության Նախագահի 2012 թվականի հունիսի 30-ի ՆԿ-96-Ա կարգադրությամբ հաստատված միջոցառումների |

| | |
|---|---|
| | ցանկի 3.6-րդ կետից:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ քաղաքացիական օրենսգրքի նորմերի գիտական վերլուծությունը և կիրառման պրակտիկան բացահայտեցին օրենսգրքում առկա բազմաթիվ թերություններ: Բացի դրանից, արդի պայմաններում անհրաժեշտություն է առաջացել կատարելագործել օրենսգրքի որոշ դրույթներ՝ դրանք համապատասխանեցնելով միջազգային լավագույն փորձին և առկա իրավահարաբերությունների ներկայիս վիճակին, ինչպես նաև օրենսգիրքը լրացնել ելակետային նշանակություն ունեցող որոշ ինստիտուտներով:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվող փոփոխությունների և լրացումների նպատակն է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում կորպորատիվ իրավահարաբերությունների ինքնուրույն բնույթի ամրագրումը, ձեռնարկատիրական գործունեության, իրավաբանական անձի, գործարքի հասկացության նորովի բանաձևումը, հանրային և մասնավոր իրավունքի իրավաբանական անձանց դասակարգման ներմուծումը, հարևանային իրավունքի ինստիտուտի ամրագրումը, տիրապետման իրավական կարգավորման հստակեցումը, վնաս պատճառելուց բխող պարտավորությունների համապարփակ և արդյունավետ կարգավորումը, անձնական սերվիտուտի նախատեսումը, բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող գույքի, մասնավորապես նկուղների և ձեղնահարկի օգտագործման իրավունքի իրացման մեխանիզմների ամբողջական կարգավորումը, մտավոր սեփականության ոլորտը կարգավորող բաժնի և մնացած դրույթների կատարելագործումը, ինչպես նաև միջազգային մասնավոր իրավունքի ընդունված սկզբունքների և մոտեցումների ամբողջական արտացոլումը ՀՀ իրավական համակարգում:<br>2. **Կարգավորման առարկան**<br>«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը կապահովի քաղաքացիաիրավական իրավահարաբերությունների համապատասխանությունը մասնավոր հարաբերությունների ժամանակակից մոտեցումներին:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունման արդյունքում օրենսգիրքն ամբողջապես կհամապատասխանի մասնավոր հարաբերությունների ժամանակակից մոտեցումներին, միջազգային լավագույն փորձին և առկա իրավահարաբերությունների ներկայիս վիճակին: |
| 90. | **«Պրոբացիայի մասին» և «Պրոբացիայի պետական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը և դրանցից բխող իրավական ակտերը ՀՀ կառավարություն ներկայացնելը**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Սույն իրավական ակտի անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ Նախագահի 2012 թվականի հունիսի 30-ի ՆԿ-96-Ա կարգադրությամբ հաստատված ռազմավարական ծրագրի 2.3-րդ կետով: Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ ՀՀ կառավարության 2014 թվականի մայիսի 19-ի N 511-Ա որոշման 2.3-րդ կետով սահմանվում է, որ կրկնահանցագործությունը կրճատելու, հանցանք կատարած անձանց հոգեբանական աջակցման և սոցիալական ինտեգրումը խրախուսելու նպատակով անհրաժեշտ է ստեղծել պրոբացիոն ծառայություն: |

| | |
|---|---|
| | **1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետությունում ներկայումս բացակայում է պրոբացիոն ծառայությունը: Ծառայության որոշակի գործառույթներ ներկայումս իրականացնում է քրեակատարողական ծառայության այլընտրանքային պատիժների կատարման ստորաբաժանումը: Պրոբացիոն ծառայության բացակայության պայմաններում պատժի կրումից պայմանականորեն ազատվելու դեպքում հսկողություն չի իրականացվում: Դատապարտյալների պատժի կրումից հետո որևէ մարմին չի ապահովում նրանց վերասոցիալականացումը: Բացակայում է տուժողների և հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձանց հաշտեցման ինստիտուտը:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Պրոբացիոն ծառայությունը գործառույթներ է իրականացնելու հետևյալ փուլերում, մասնավորապես, մինչդատական փուլում կալանքը որպես խափանման միջոց կիրառելիս խորհրդատվական զեկույց է տալու դատարանին, դատական փուլում ազատազրկումը որպես պատժատեսակ կիրառելիս՝ խորհրդատվական զեկույց է տալու դատարանին, պենիտենցիար փուլում՝ ապահովելու է ազատազրկման հետ չկապված պատիժների կատարումը, հետպենիտենցիար փուլում իրականացնելու է վերահսկողություն դատապարտյալների նկատմամբ:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Սույն միջոցառման իրականացումը կապահովի քրեակատարողական հիմնարկների բեռնաթափումը և ազատազրկման հետ չկապված պատժատեսակների կիրառումը: |
| 91. | **«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության նոր օրենսգրքի նախագիծը և դրանից բխող օրենքներում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Հայաստանի Հանրապետության Նախագահի 2012 թվականի հունիսի 30-ի ՆԿ-96-Ա կարգադրությամբ հաստատված միջոցառումների ցանկի 3.6-րդ կետի համաձայն՝ պետք է մշակվի Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Գործող օրենսգիրքն ընդունվել է 1986 թվականին, որը վկայում է, որ օրենսգիրքը համապատասխանել է այդ ժամանակվա քաղաքական-իրավական դրույթներին, հետևաբար, այն չի համապատասխանում ներկա մոտեցումներին: Ներկայումս վարչական պատասխանատվություն է սահմանվում 50-ից ավելի նորմատիվ իրավական ակտերով: Նախագծի նպատակն է մեկ միասնական օրենսգրքով համապարփակ կերպով նախատեսել բոլոր վարչական իրավախախտումները, իսկ այլ օրենքներից համապատասխանաբար հանել վարչական պատասխանատվություն սահմանող նորմերը: Բացի դրանից, նախագծով պետք է վերանայվեն սահմանված պատասխանատվության միջոցները՝ ելնելով արարքի և դրա համար նախատեսված պատասխանատվության համաչափության սկզբունքից: Նախագծով պետք է իրականացնել որոշ արարքների ապաքրեականացում և դրանք նախատեսել Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքում՝ որպես զանցանք: Դրա հետ միաժամանակ նախագծով որոշ արարքների համար ներկայումս նախատեսված վարչական պատասխանատվությունն ընդհանրապես պետք է հանվի:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է նախագծում սահմանել այնպիսի դրույթներ, որոնք կապահովեն օրենսգրքի |

| | |
|---|---|
| | համապատասխանեցումը հանրային իրավահարաբերությունների ժամանակակից մոտեցումներին:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Նախագիծը կապահովի վարչական իրավահարաբերությունների համապատասխանությունը հանրային հարաբերությունների ժամանակակից մոտեցումներին:<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունման արդյունքում կունենանք օրենսգիրք, որով կնախատեսվի միայն վարչական պատասխանատվություն, իրավաբանական անձը կսահմանվի որպես վարչական պատասխանատվության սուբյեկտ, այնպես էլ օրենսգիրքը կհամապատասխանի հանրային ոլորտի իրավահարաբերությունների ժամանակակից մոտեցումներին: |
| 92. | **Հայաստանի Հանրապետության նոր քրեակատարողական օրենսգրքի նախագծի վերաբերյալ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Հայաստանի Հանրապետությունում քրեական արդարադատության համակարգում հիմնարար բարեփոխումների նոր փուլի սկիզբը դրվեց վերջին ժամանակների հասարակական, քաղաքական և իրավական զարգացումներով: Դրանց թվում կարևոր նշանակություն ունեցավ Հայաստանի Հանրապետության Նախագահի 2012 թվականի հունիսի 30-ի «ՀՀ իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» կարգադրության ընդունումը:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Բարձր գնահատելով ՀՀ քրեակատարողական գործող օրենսգրքի դերը մեր երկրի իրավական համակարգում՝ միաժամանակ պետք է նշել, որ ժամանակակից պայմաններում այն օբյեկտիվորեն այլևս ի վիճակի չէ բավարար չափով իրացնել նորաստեղծ իրավական պետության ժողովրդավարական նվաճումները: Այս առումով, օրենսգրքի կիրառության շուրջ տասը տարիների ընթացքում երկրի հասարակական և քաղաքական կյանքում տեղի ունեցան մի շարք իրադարձություններ, որոնք անխուսափելի փոփոխություններ էին ենթադրում քրեական պատիժների կատարման և կրման հետ կապված հիմնական իրավական ակտում:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նոր քրեակատարողական օրենսգիրքը նպատակ ունի լուծելու հետևյալ խնդիրները՝<br>1) միասնական իրավական քաղաքականության ապահովումը քրեաիրավական հարկադրանքի միջոցների կիրառության ոլորտում.<br>2) մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային իրավաբանության պահանջների իրացումը ՀՀ քրեակատարողական նոր օրենսգրքի նախագծում.<br>3) ազատությունից զրկելու հետ կապված հարկադրանքի միջոցների ենթարկված անձանց նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերի համակարգի և դրանց կիրառության ընթացակարգի վերանայումը.<br>4) անչափահաս դատապարտյալների նկատմամբ կիրառվող քրեաիրավական հարկադրանքի միջոցների կատարման համակարգի բարեփոխումը.<br>5) ազատազրկման դատապարտված անձանց պահման ռեժիմների փոփոխության կանոնների վերանայումը.<br>6) կալանավորվածներին և դատապարտյալներին անջատ պահելու չափանիշների հստակեցումը, այդ անձանց վարքագծի ռիսկային գնահատման համակարգի ներդնումը.<br>7) պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման գործող համակարգի վերանայումը. |

| | |
|---|---|
| | 8) ՀՀ քրեակատարողական նոր օրենսգրքում այնպիսի իրավանորմերի նախատեսումը, որոնք կնպաստեն պրոբացիոն համակարգի ներդաշնակ գործունեությանը. <br> 9) ՀՀ քրեակատարողական ապագա օրենսգրքի համակարգային համապատասխանեցումը քրեական արդարադատության ոլորտի հիմնարար իրավական ակտերի հետ: <br> **2. Կարգավորման առարկան** <br> ՀՀ քրեական դատավարության և քրեական օրենսգրքերի օրինակով ՀՀ քրեակատարողական ապագա օրենսգրքի մշակման հիմքում ընկած է համարձակ նորարարությունն ու չափավոր պահպանողականությունը: Քրեակատարողական նոր օրենսգիրքն այդ առումով՝ իբրև քրեական արդարադատության համակարգի առանցքային ակտ, արձանագրում է զարգացման որակապես նոր փուլ՝ նպատակ ունենալով ապահովել քրեական և քրեադատավարական օրենսգրքով ստեղծվելիք համակարգերի արդյունավետ գործառությունը: <br> 3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը** <br> Բոլոր անհրաժեշտ նախադրյալների առկայության պայմաններում Հայաստանի Հանրապետությունում քրեակատարողական նոր օրենսգրքի ընդունմամբ տրամաբանական ավարտին կհասցվեն քրեական արդարադատության ոլորտի բարեփոխումները: Նոր քրեակատարողական օրենսգիրքը քրեական արդարադատության ոլորտում կիրառվող հարկադրանքի միջոցների պատշաճ կիրառություն ապահովող, միջազգային ժամանակակից իրավաբանության ու փորձի վրա հիմնված, ժամանակակից իրավամտածողությունն արտահայտող իրավական նոր սերնդի միասնական փաստաթուղթ է: |
| 93. | **Հայաստանի Հանրապետության նոր քրեական օրենսգրքի նախագծի վերաբերյալ** <br> **1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)** <br> Հայաստանի Հանրապետությունում քրեական արդարադատության համակարգում հիմնարար բարեփոխումների նոր փուլի սկիզբը դրվեց վերջին ժամանակների հասարակական, քաղաքական և իրավական զարգացումներով: Դրանց թվում կարևոր նշանակություն ունեցավ Հայաստանի Հանրապետության Նախագահի 2012 թվականի հունիսի 30-ի «ՀՀ իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» կարգադրության ընդունումը: <br> 1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** <br> Բարձր գնահատելով ՀՀ քրեակատարողական գործող օրենսգրքի դերը մեր երկրի իրավական համակարգում՝ միաժամանակ պետք է նշել, որ ժամանակակից պայմաններում այն օբյեկտիվորեն այլևս ի վիճակի չէ բավարար չափով իրացնել նորաստեղծ իրավական պետության ժողովրդավարական նվաճումները: Այս առումով, Օրենսգրքի կիրառության շուրջ տասը տարիների ընթացքում երկրի հասարակական և քաղաքական կյանքում տեղի ունեցան մի շարք իրադարձություններ, որոնք անխուսափելի փոփոխություններ էին ենթադրում քրեական պատիժների կատարման և կրման հետ կապված հիմնական իրավական ակտում: <br> **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** <br> Նոր քրեակատարողական օրենսգիրքը նպատակ ունի լուծելու հետևյալ խնդիրները՝ <br> 1) միասնական իրավական քաղաքականության ապահովումը քրեաիրավական հարկադրանքի միջոցների կիրառության ոլորտում. <br> 2) մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային իրավաբանության պահանջների իրացումը ՀՀ քրեակատարողական նոր օրենսգրքի նախագծում. |

| | |
|---|---|
| | 3) ազատությունից զրկելու հետ կապված հարկադրանքի միջոցների ենթարկված անձանց նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերի համակարգի և դրանց կիրառության ընթացակարգի վերանայումը.<br>4) անչափահաս դատապարտյալների նկատմամբ կիրառվող քրեաիրավական հարկադրանքի միջոցների կատարման համակարգի բարեփոխումը.<br>5) ազատազրկման դատապարտված անձանց պահման ռեժիմների փոփոխության կանոնների վերանայումը.<br>6) կալանավորվածներին և դատապարտյալներին անջատ պահելու չափանիշների հստակեցումը, այդ անձանց վարքագծի ռիսկային գնահատման համակարգի ներդնումը.<br>7) պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման գործող համակարգի վերանայումը.<br>8) ՀՀ քրեակատարողական նոր օրենսգրքում այնպիսի իրավանորմերի նախատեսումը, որոնք կնպաստեն պրոբացիոն համակարգի ներդաշնակ գործունեությանը.<br>9) ՀՀ քրեակատարողական ապագա օրենսգրքի համակարգային համապատասխանեցումը քրեական արդարադատության ոլորտի հիմնարար իրավական ակտերի հետ:<br>**2. Կարգավորման առարկան**<br>ՀՀ քրեական դատավարության և քրեական օրենսգրքերի օրինակով ՀՀ քրեակատարողական ապագա օրենսգրքի մշակման հիմքում ընկած են համարձակ նորարարությունն ու չափավոր պահպանողականությունը: Քրեակատարողական նոր օրենսգիրքն այդ առումով՝ իբրև քրեական արդարադատության համակարգի առանցքային ակտ, արձանագրում է զարգացման որակապես նոր փուլ՝ նպատակ ունենալով ապահովել քրեական և քրեադատավարական օրենսգրքով ստեղծվելիք համակարգերի արդյունավետ գործառությունը:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Բոլոր անհրաժեշտ նախադրյալների առկայության պայմաններում Հայաստանի Հանրապետությունում քրեակատարողական նոր օրենսգրքի ընդունմամբ տրամաբանական ավարտին կհասցնի քրեական արդարադատության ոլորտի բարեփոխումները: Նոր քրեակատարողական օրենսգիրքը քրեական արդարադատության ոլորտում կիրառվող հարկադրանքի միջոցների պատշաճ կիրառություն ապահովող, միջազգային ժամանակակից իրավաբանության ու փորձի վրա հիմնված, ժամանակակից իրավամտածողությունն արտահայտող իրավական նոր սերնդի միասնական փաստաթուղթ է: |
| 94. | **«Տեղեկատվության ազատության ոլորտի արդիականացման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Հայեցակարգի ընդունումը պայմանավորված է տեղեկատվության ազատության ոլորտում առկա խնդրահարույց հարցերի լուծման և դրանք ժամանակակից մոտեցումներին համապատասխանեցնելու անհրաժեշտության հետ:<br><br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>2014-2015 թվականներին նախարարությունը ձեռնամուխ եղավ և ավարտին հասցրեց «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքից բխող, տեղեկատվության տրամադրման, ինչպես նաև պահպանման և դասակարգման հարցերը կարգավորող երկու ենթաօրենսդրական ակտերի մշակումն ու ընդունումը: Ինչպես նաև նշված ժամանակահատվածում բոլոր պետական կառավարման մարմիններում ավարտվեց տեղեկատվության ազատության պատասխանատուների |

նշանակման գործընթացը, ինչը նույնպես սահմանվում էր «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով:

Այնուամենայնիվ, տեղեկատվության ազատության ոլորտի մի շարք կենսական հարցեր դեռևս մնում են չկարգավորված: Մասնավորապես, հետևյալ հարցերը՝

1. Նախնառաջ տեղեկատվության տրամադրման հետ կապված վճարների հարցը մնում է չկարգավորված և առկա է հակասություն տարբեր իրավական ակտերի միջև:
2. Առկա է անհրաժեշտություն էլեկտրոնային տեղեկատվություն ստանալու հարցումներն առավել բարձր իրավաբանական ուժ ունեցող և համապարփակ ակտով՝ ինչպիսին «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով կարգավորելու վերաբերյալ:
3. Անհրաժեշտ է նախատեսել տեղեկատվության ազատության ապահովման նկատմամբ պետական հսկողության իրականացման կարգն ու պայմանները, ինչպես նաև սահմանել լիազոր մարմնի գործառույթներն ու ձևավորման կարգը:

1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Նշված և այլ խնդիրների լիարժեք կարգավորման նպատակով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը 2016-2017 թվականների ընթացքում նախատեսում է՝

1. Ուսումնասիրել տեղեկատվության ազատության ՀՀ օրենսդրության բարեփոխման և հարմոնիզացիայի անհրաժեշտությունը և հիմնավորվածությունը՝ մշակելով տեղեկատվության ազատության օրենսդրության բարեփոխման հայեցակարգ:
2. Մշակել հայեցակարգից բխող իրավական ակտերի նախագծեր և կազմակերպել դրանց համակողմանի քննարկում:
3. Իրականացնել պետական կառավարման մարմինների տեղեկատվության ազատության պատասխանատուների վերապատրաստումներ՝ նոր ընդունված իրավական կարգավորումների գործնական կիրառման հմտություններ և գիտելիք փոխանցելու նպատակով:

2. **Կարգավորման առարկան**

Կարգավորման առարկան ներառում է տեղեկատվության ազատության հետ կապված հարաբերությունները, սահմանում է տեղեկատվության ապահովման բնագավառում տեղեկատվություն տնօրինողների իրավասությունը, ինչպես նաև տեղեկություններ ստանալու կարգը, ձևերը և պայմանները: Հայեցակարգն ուղղված է լինելու տեղեկատվության ազատության ոլորտի բարեփոխմանը:

3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**

Լիովին կկարգավորվեն տեղեկատվության ազատության ոլորտի մի շարք կենսական հարցեր, մասնավորապես՝

1. Կլուծվի տեղեկատվության տրամադրման հետ կապված վճարների հարցը և կվերանա կարգավորող տարբեր իրավական ակտերի միջև առկա հակասությունը:
2. Էլեկտրոնային տեղեկատվություն ստանալու հարցումները կկարգավորվեն օրենքով:
3. Կսահմանվեն տեղեկատվության ազատության ապահովման նկատմամբ պետական հսկողության իրականացման կարգն ու պայմանները, ինչպես նաև լիազոր մարմնի գործառույթներն ու ձևավորման կարգը:

Էականորեն կբարելավվի պետական մարմինների թափանցիկության և հաշվետվողականության մակարդակը:

95.

**«Հայաստանի Հանրապետության քրեակատարողական հիմնարկներում բժշկական ծառայությունների արդիականացման մասին հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի վերաբերյալ**

1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**

Քրեակատարողական հիմնարկների առողջապահական համակարգի բարելավման, տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման ընթացքում առաջացած խնդիրների լուծման, դատապարտյալներին տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման որակի բարելավման նպատակով անհրաժեշտ է ընդունել Հայաստանի Հանրապետության քրեակատարողական հիմնարկներում բժշկական ծառայությունների արդիականացման մասին հայեցակարգ:

1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Հայաստանի Հանրապետության քրեակատարողական հիմնարկներում բժշկական ծառայությունների ներկայիս վիճակի վերլուծությունը վկայում է մի շարք խնդիրների առկայության և անհրաժեշտ բարեփոխումների իրականացման մասին: Համակարգում առկա խնդիրներից է բուժաշխատողների մասնագիտական բժշկական անկախության ապահովումը, լիցենզավորման և որակավորման հստակ պահանջների բացակայությունը, առաջնային բուժօգնության համակարգում անհրաժեշտ նվազագույն անձնակազմի հավաքագրման հետ կապված դժվարությունները, անհրաժեշտ նյութատեխնիկական հենքի բացակայությունը և այլն: Նշված խնդիրների լուծման և քրեակատարողական հիմնարկների առողջապահական համակարգի բարելավման համար անհրաժեշտ է որդեգրել հստակ մոտեցումներ՝ վերլուծելով միջազգային լավագույն փորձը:

1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Հայեցակարգը ներառելու է քրեակատարողական հիմնարկների բժշկական ծառայությունների ներկայիս վիճակի նկարագրությունը, քրեակատարողական հիմնարկների բժշկական ստորաբաժանումների կողմից մատուցվող ծառայությունների շրջանակի որոշումը, արտահիվանդանոցային և հիվանդանոցային ծառայությունների մատուցման բարեփոխված մոտեցումների նկարագրությունը, լիցենզավորման և որակավորման հետ կապված լուծումների առաջադրումը, խոցելի խմբերին բժշկական ծառայությունների մատուցման վերաբերյալ մոտեցումների նկարագրությունը:

1.3. **Կարգավորման առարկան**

Հայեցակարգը նպատակ է հետապնդելու ամրագրել քրեակատարողական հիմնարկների բժշկական ծառայությունների արդիականացման հայեցակարգային մոտեցումները, վեր հանելու համակարգում առկա օրենսդրական և այլ խնդիրներ և առաջադրելու հնարավոր լուծումներ:

1.4. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**

Հայեցակարգով նախատեսվում է քրեակատարողական հիմնարկների բժշկական ծառայությունների արդիականացման հստակ ուղղությունների ամրագրումը:

96.

**«Հավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ**

1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**

Օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող անձանց իրավունքների ու ազատությունների իրականացման հավասար

հնարավորությունների երաշխավորման անհրաժեշտությունից, իրավական համապարփակ կարգավորում նախատեսելու անհրաժեշտությունից:

1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

«Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 27-ի N 303-Ն որոշմամբ հաստատված միջոցառումների ծրագրի 8-րդ կետի կատարման շրջանակում՝ ՀՀ արդարադատության նախարարության պատվերով Եվրասիա համագործակցության հիմնադրամն ապահովեց «Արդյոք անհրաժեշտ է խտրականության դեմ պայքարի մասին առանձին օրենքի ընդունումը» իրավագիտական հետազոտությունը: Անկախ փորձագետների կողմից իրականացված այդ հետազոտությունը ցույց տվեց, որ Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող անձանց իրավունքների ու ազատությունների իրականացման հավասար հնարավորությունների երաշխավորման (խտրականության դեմ պայքարի) վերաբերյալ օրենսդրական դրույթներն ապահովում են դրվագային իրավակարգավորում, ինչը չի երաշխավորում ոլորտում մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանությունը: Այս առումով, միասնական օրենքի ընդունումը կարող է ապահովել ինչպես խտրականության և դրա բոլոր դրսևորումների բացառումը, այնպես էլ համապատասխան կանխարգելումը:

Իրավական ակտի ընդունումը պայմանավորված է նաև մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Եվրոպական միության հետ Հայաստանի Հանրապետության համագործակցությամբ:

1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Անկախ փորձագետների իրականացրած հետազոտության արդյունքում հիմնավորվեց Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող յուրաքանչյուր անձի իրավունքների ու ազատությունների իրականացման հավասար հնարավորություններ երաշխավորելու (խտրականության դեմ պայքարի) մասին օրենսդրությունը կատարելագործելու և ոլորտը միասնական օրենքով կարգավորելու անհրաժեշտությունը: Նախատեսվում է մշակել միասնական օրենքի նախագիծ, որով կապահովվի խտրականության և նրա բոլոր դրսևորումների կանխարգելման, ինչպես նաև դրանց դեմ պայքարի միասնական իրավական կարգավորումը:

1.3. **Կարգավորման առարկան**

Օրենքի նպատակն է լինելու ապահովել Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող յուրաքանչյուր անձի և քաղաքացու իրավունքների ու ազատությունների իրականացման հավասար հնարավորություններ՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից:

Օրենքով կկարգավորվեն հասարակական կյանքի բոլոր ոլորտներում խտրականության բացառման երաշխիքները, խտրականության հասկացությունը և տեսակները, խտրականության բացառությունները, խտրականությունը կանխարգելելու և խտրականությունից պաշտպանվելու իրավական պաշտպանության միջոցները և եղանակները, կազմակերպաիրավական հիմքերը և մեխանիզմները:

2. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**

Օրենքով նախատեսվում է ապահովել խտրականության և նրա բոլոր դրսևորումների կանխարգելման, ինչպես նաև դրանց դեմ պայքարի միասնական իրավական կարգավորումը:

| | |
|---|---|
| 97. | **«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Նախագահի 2012 թ. հունիսի 30-ի ՆԿ-96-Ա կարգադրությամբ նախատեսվեցին դրույթներ՝ ուղղված քաղաքացիական արդարադատության արդյունավետության բարձրացմանը:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ընդունման պահից օրենսգրքում նախատեսված են մի շարք ինստիտուտներ, որոնք իրենց գոյության ամբողջ ընթացքում կամ չստացան իրական պրակտիկ կիրառում, կամ չապացուցեցին իրենց արդյունավետությունը: ՀՀ-ում անընդհատ կատարվող դատաիրավական փոփոխություններն անհրաժեշտություն էին առաջացնում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում համապատասխան փոփոխություններ կատարելու, որոնց մեծ մասը կատարվեց առանց հայեցակարգային մշակման և գիտական հիմնավորման: Տարիների ընթացքում փորձ չարվեց լուծել դատական ծախսերի, դատական ծանուցումների և պարզեցված վարույթի կատարելագործման հետ կապված խնդիրները, միջոցներ չձեռնարկվեցին դատարանների ծանրաբեռնվածության նվազման համար:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախատեսվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը շարադրել նոր խմբագրությամբ և քաղաքացիական դատավարությունում սահմանել վերադաս դատարանի կողմից դատական ակտը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու դեպքում ստորադաս դատարանում գործերի քննության կարգի առանձնահատկություններ, կենսագործել քաղաքացիական դատավարությունում մրցակցության և գործը ողջամիտ ժամկետում քննելու սկզբունքները, մշակել նախնական դատական նիստի առավել ամբողջական կանոններ, հստակեցնել և կատարելագործել ապացուցման գործընթացը կարգավորող կանոնները, դատավարական օրենսգրքերով հնարավորինս սպառիչ սահմանել նիստի հետաձգման հիմքերը՝ բացառելով նիստի հետաձգումը դրա համար չնախատեսված որևէ հիմքով, կատարելագործել դատական փորձաքննության նշանակման և անցկացման գործընթացը, ներդնել դատական վարույթների մասին ծանուցման առավել արդյունավետ մեթոդներ և դատական ծախսերի բաշխման արդար, թափանցիկ և հստակ համակարգ, կատարելագործել դատական քննության պարզեցված ընթացակարգերը և այլն:<br>2. **Կարգավորման առարկան**<br>«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը կապահովի քաղաքացիական արդարադատության արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցները:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունման արդյունքում ՀՀ քաղաքացիական դատավարությունում կապահովվի մրցակցության և գործը ողջամիտ ժամկետում քննելու խնդիրների կենսագործումը: |
| 98. | **«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի նախագիծ**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի ընդունումը բխում է Հայաստանի |

Հանրապետության Նախագահի 2012 թվականի հունիսի 30-ի ՆԿ-96-Ա կարգադրությամբ հաստատված միջոցառումների ցանկի 6-րդ գլխից: Առաջարկվում է նախատեսվող փոփոխությունները ներկայացնել նոր օրենքի նախագծի տեսքով:

1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

ՀՀ օրենսդրությամբ բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականություն հադիսացող գույքի օգտագործման իրավունքի իրացման մեխանիզմների թերի կարգավորված լինելը պրակտիկայում առաջացնում է մի շարք խնդիրներ: Բացի դրանից, օրենսգրքի և բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության օգտագործումը կարգավորող այլ իրավական ակտերի միջև ներկայումս առկա են մի շարք անհամապատասխանություններ:

**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Նախագծով առաջարկվում է հստակեցնել բնակարանների սեփականատերերի իրավունքներն ու պարտականությունները, նախատեսել յուրաքանչյուր բնակարանի սեփականատիրոջ կողմից իր մասնավոր սեփականության ծանրաբեռնումների և ծախսերի կրման առանձահատկությունները, կատարելագործել յուրաքանչյուր բնակարանի սեփականատիրոջ՝ ընթացիկ պահպանման և նորոգման համար անհրաժեշտ վճարումների կատարման և բնակարանների սեփականատերերի պայմանա-վորվածություններին առնչվող կարգավորումները, համատիրություն հասկացությունը և համատիրության գործունակությանը և գույքը կառավարելու ունակության դրույթները, օրենսդրորեն ամրագրելու բնակարանների սեփականատերերի՝ պատշաճ կառավարում պահանջելու իրավունքը, նախատեսել բնակարանների սեփականատերերի ժողովի գործունեությունը կարգավորող դրույթները:

**2. Կարգավորման առարկան**

Առաջարկվող փոփոխությունների ընդունմամբ կվերացվեն համապատասխան օրենքների և քաղաքացիական օրենսգրքի միջև հակասությունները, կհստակեցվի որոշումների ընդունման ընթացակարգը, կսահմանվեն բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության օգտագործման առավել արդյունավետ եղանակներ:

3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**

Կհստակեցվեն բնակարանների սեփականատերերի իրավունքներն ու պարտականությունները, կսահմանվի սեփականատիրոջ կողմից իր մասնավոր սեփականության ծանրաբեռնումների և ծախսերի կրման առանձնահատկությունները, սեփականատիրոջ՝ համատիրությանը վճարումների կատարման պարտավորությունները, բնակարանների սեփականատերերի կողմից, մասնավորապես, սեփականության օգտագործման կամ ծանրաբեռնումների և ծախսերի բաշխման վերաբերյալ պայմանավորվածությունների ընդունման հնարավորությունները: Կհստակեցվի համատիրության հասկացությունը, կսահմանվեն համատիրության գործունակությանը և գույքի կառավարման ունակության առանձնահատկությունները, բնակարանի սեփականատիրոջ պատասխանատվությունը:

99. **«Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ**

**1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը**

Շուկայական տնտեսության պայմաններում առաջանում են այնպիսի իրավիճակներ, երբ բացակայում է շուկայի մասնակիցների՝ իրենց կողմից ստանձնած պարտավորությունների կատարելու հնարավորությունը: Ուստի անհրաժեշտ է որոշակի իրավական գործիքների և կանոնակարգումների միջոցով պաշտպանել ինչպես պարտատերերի, այնպես էլ պարտապանների շահերը:

Եթե քաղաքացիական հայց ներկայացնելու միջոցով իրավունքների պաշտպանությունը հիմնականում անհատական շահերի պաշտպանության միջոց է, ապա սնանկության պարագայում նպատակը կոլեկտիվ շահերի պաշտպանությունն է, որը ներառում է ինչպես պարտատերերին, այնպես էլ պարտապանին, չնայած, որ, որպես կանոն, սնանկության վարույթներն սկսվում են առանձին անձանց դիմումների հիման վրա:

Այսպիսի իրավիճակները կարգավորվում են սնանկության միջոցով: Սնանկությունը հետապնդում է մի քանի նպատակ. ապահովել պարտատերերի՝ պարտապանին ուղղված պահանջների կատարումը, նպաստել ֆինանսական ծանր կացության մեջ գտնվող կազմակերպություններին պարտավորությունների կատարման՝ ֆինանսական առողջացման ծրագրի իրագործման միջոցով դուրս գալ սնանկացման գործընթացից և վերսկսել բնականոն գործունեությունը: Սնանկության իրավահարաբերությունների կարգավորման բեռի մեծ մասն ընկնում է «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի վրա (այսուհետ նաև՝ օրենք):

Օրենքում առկա են որոշակի բացեր, թերություններ, որոնք նշվել են ինչպես Համաշխարհային բանկի փորձագետների ուսումնասիրության արդյունքում տրված 2014 թ. եզրակացությամբ, այնպես էլ Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 2015 թ. հունվարի 27-ի որոշմամբ և օրենքի կիրառմանը մասնակցող պաշտոնյաների, մասնագետների ու այլ անձանց կարծիքներում:

Արդյունքում օրենքը պահանջում է որոշակի փոփոխություններ, որոնք կվերացնեն առկա թերությունները և բացերը, ինչը զգալիորեն կբարձրացնի օրենքի կիրառման արդյունավետությունը:

1.2. **Ներկա իրավիճակը և խնդիրները**

Ներկայումս սնանկության ոլորտում բացակայում է ճգնաժամային կառավարման (սնանկության վտանգի) մեխանիզմը, «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը պարտավորեցնում է պարտապանին դիմել դատարան՝ կամավոր սնանկության այն դեպքում, երբ պարտավորությունները գերազանցում են օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի և ավելի չափով գերազանցում են պարտապանի ակտիվների արժեքը:

Կամավոր սնանկության դիմումին հետևում են սահմանափակումները՝ մորատորիումը, ինչը գործնականում ստեղծում է դժվարություններ ընկերության հնարավոր առողջացման և շուկա վերադառնալու հրատապ քայլեր կատարելու համար: Կամավոր սնանկության դիմող պարտապանը օգնության ձեռք է փնտրում, որը նրան պետք է մատչելի լինի անմիջապես: Այսինքն,ճգնաժամում հայտնված պարտապանին այնպիսի աջակցություն է պետք, որը գործնականում հնարավորություն ընձեռի բանակցել և ստանալ պարտավորությունների կատարման նոր մեխանիզմ կամ ժամանակացույց, կամ այլ այնպիսի գործիքների կիրառում, որոնք կարող են փրկօղակի դեր կատարել և չստիպել պարտապանին ընկղմվել սնանկության բարդ ընթացակարգի մեջ:

Սակայն ճգնաժամային կառավարման հարցում օգնությունն ավելի արդյունավետ կլինի այն դեպքում, երբ պարտապանն արդեն իսկ կանխատեսում է սնանկության հնարավորությունը, սակայն դեռևս առկա չեն սնանկության հատկանիշները: Հենց այս փուլում հակաճգնաժամային կառավարման ինստիտուտի ներմուծումը սնանկությունների կանխման համար կարևոր միջոց կարող է դառնալ: Պարտապանի ճգնաժամային կառավարման համար համապատասխան իրավասություններ և գործիքներ պետք է տրվեն սնանկության կառավարիչներին, ովքեր իրենց փորձն ու գիտելիքները համատեղելով այն լրացուցիչ իրավունքների ու գործիքների հետ, որ կունենան օրենքով, կկարողանան օգնել պարտապանին հաղթահարել դժվարությունները և վերադառնալ բնականոն գործունեության:

Ընդ որում, հակաճգնաժամային կառավարման դեպքում կառավարիչների գործողությունները ցանկալի է վերահսկել դատական կարգով՝ այդ գործառույթը վերապահելով սնանկության գործեր

| | |
|---|---|
| | քննող դատավորներին, սակայն առանց անտեղի սահմանափակելու կառավարիչներին և միայն բողոքի դեպքում վերահսկելով նրանց գործողությունները և դրանց օրինականությունը: |
| | **2. Կարգավորման նպատակը և ակնկալվող արդյունքը** |
| | Սնանկության ոլորտը կարգավորող իրավական դաշտի ուսումնասիրման և օրենսդրական դաշտի կարգավորման նպատակով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2015 թվականի մարտի 10-ի N 191-Ա որոշմամբ ստեղծվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ, որի մասնակիցները համատեղ քննարկումների արդյունքում «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարել են հետևյալ լրացումները և փոփոխությունները՝ |
| | • «Սնանկության վտանգի» հնարավորության ներմուծումն առաջնահերթ կերպով հնարավորություն կտա շատ պարտապանների խուսափել վերահաս սնանկությունից և կառավարչի աջակցությամբ հաղթահարել դժվարությունները և վերադառնալ բնականոն գործունեության: Սա նաև կարող է զգալիորեն թեթևացնել դատարանների ծանրաբեռնվածությունը սնանկության գործերով: |
| | • Նոր ֆինանսավորողների ներգրավումը զգալիորեն կբարելավի սնանկության գործընթացի և, մասնավորապես, պարտապանի ֆինանսական առողջացման հնարավորությունը: |
| | • Ժամանակի սղությունը այլևս առողջացման ծրագրի ձախողման պատճառ չի լինի: |
| | • Կսահմանվեն ապահովված իրավունքի առարկայի իրացման արտադատական մեխանիզմները, որը հնարավորություն կընձեռի ապահովված պարտատիրոջն ավելի ճկուն և արագ իրականացնել իր իրավունքները՝ դրանով հանդերձ հավելյալ չծանրաբեռնելով դատարաններին: Ապահովված իրավունքների պարագայում մորատորիումը չի տարածվի ապահովված իրավունքի առարկայի վրա այն դեպքում, երբ դատարանը թույլատրել է վերջինիս իրացումն արտադատական կարգով: Նշված կարգավորումը կնախատեսի նաև բացառություններ՝ տրամադրելով համարժեք ապահովվածություն պարտատիրոջն այն պայմանով, երբ առանց ապահովված իրավունքի առարկայի օգտագործման պարտապանի ֆինանսական առողջացման ծրագիրը չի կարող իրականացվել: |
| | • և այլն: |
| | Տվյալ կարգավորումների ընդունմամբ կլրացվեն օրենսդրական բացերը, որոնք օրենքի տարաբնույթ մեկնաբանությունների և կիրառման տեղիք են տալիս: |
| | Պարտապաններին հնարավորություն կընձեռվի առանց սնանկության հասնելու վերադառնալ բնականոն գործունեության՝ հակաճգնաժամային կառավարման օգնություն ստանալով կառավարչի կողմից: |
| | Պարտապանի ֆինանսական առողջացման համար ավելի լայն հնարավորություններ կտրվեն ու ավելի երկար ժամկետներ, ինչը զգալիորեն կարող է մեծացնել ինչպես պարտապանի ֆինանսական առողջացման և շուկա վերադառնալու, այնպես էլ պարտատերերի շահերի պաշտպանության մակարդակը: Արդյունքում շահելու է նաև սնանկության վարույթի արդյունավետությունը: |
| | Սնանկության կառավարիչների գործունեությունը կդառնա առավել արդյունավետ և վերահսկելի ինչպես պարտապանների, այնպես էլ պարտատերերի շահերի պաշտպանության տեսանկյունից: Կլուծվեն սնանկության կառավարիչների վարձատրության հետ կապված որոշ խնդիրներ, իսկ ֆինանսական առողջացման համար սնանկության կառավարչի վարձատրության նոր կարգը կխրախուսի նրանց ավելի շատ հակվելու պարտապանի ֆինանսական առողջացմանը, քան լուծարմանը: |
| | Դատավորների մասնագիտացման խնդրի լուծումը թույլ կտա սնանկության գործեր քննող դատավորներին չծանրաբեռնվել այլ գործերով և ավելի շատ ժամանակ հատկացնել սնանկության գործերին, արդյունքում կբարելավվի ինչպես քննության որակը, արագությունը և |

| | |
|---|---|
| | արդյունավետությունը, այնպես էլ պարտատերերի ու պարտապանների շահերի պաշտպանության աստիճանը: |
| **Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն** | |
| 100. | **«Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ներկայացում**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքում ավելացնել հրամանատարների պարտականությունները զինվորական ծառայության անվտանգության ապահովման գործընթացում, հստակեցնել օրվա վերակարգի, հերթապահ ստորաբաժանումների, հսկիչ-անցագրային կետերի կողմից ծառայության իրականացման, մարտական դրոշի օգտագործման հետ կապված հարաբերությունները:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս հրամանատարի պարտականությունները սահմանող հոդվածներում նախատեսված չեն զինվորական ծառայության անվտանգության ապահովման ընդհանուր պարտավորությունները, օրվա վերակարգի, հերթապահ ստորաբաժանումների, հսկիչ-անցագրային կետերի կողմից ծառայության պատշաճ կազմակերպման ու իրականացման, մարտական դրոշի պահպանման և օգտագործման գործընթացում առաջ են գալիս խնդիրներ, որոնք հստակեցման կարիք ունեն:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Օրենքով ամրագրել հրամանատարների պարտականությունները զինվորական ծառայության անվտանգության ապահովման գործընթացում, հստակեցնել օրվա վերակարգի, հերթապահ ստորաբաժանումների, հսկիչ-անցագրային կետերի կողմից ծառայության իրականացման, մարտական դրոշի օգտագործման հետ կապված հարաբերությունները:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Օրենքի նախագծով հստակեցվում են զինվորական ծառայության անվտանգության ապահովման, զորամասում զինվորական ծառայության իրականացման հետ կապված պաշտոնատար անձանց պարտականությունները, մարտական դրոշի պահպանման և օգտագործման կարգը:<br>3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ապահովել զինված ուժերում ներքին ծառայության պատշաճ կազմակերպման ու իրականացման գործընթացը, այդ ուղղությամբ պաշտոնատար անձանց և զինծառայողների պարտականությունները: |
| 101. | **«Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կայազորային ու պահակային ծառայությունների կանոնագիրքը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ներկայացում**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Օրենքի նախագծի ընդունումը նպատակ ունի Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կայազորային և պահակային ծառայությունների կանոնագրքում հստակեցնել զորամասերում և մշտական տեղակայման վայրից դուրս պահակախմբերի և պարեկների կողմից պատշաճ ծառայության իրականացման, պահպանության տեխնիկական միջոցների ազդանշաններն ընդունող |

| | |
|---|---|
| | սարքավորումների գործունեության նկատմամբ հսկողության հետ կապված հարաբերությունները: <br> 1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** <br> Ներկայումս անհրաժեշտություն է առաջացել սահմանել այնպիսի գործառույթների համալիր, որը հնարավորություն կտա կրճատել պահակախմբերի մեջ ներգրավված անձնակազմի քանակը, որոշակի դեպքերում պահակային ծառայությունը փոխարինել պարեկային ծառայությամբ, հստակեցված չեն պահպանության տեխնիկական միջոցների ազդանշաններն ընդունող սարքավորումների գործունեության նկատմամբ պատասխանատու անձանց կազմը: <br> 1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** <br> Ապահովել զորամասերում և մշտական տեղակայման վայրից դուրս պահակախմբերի և պարեկների կողմից պատշաճ ծառայության իրականացումը, պահպանության տեխնիկական միջոցների ազդանշաններն ընդունող սարքավորումների գործունեության նկատմամբ հսկողությունը, այդ ուղղությամբ պատասխանատու անձնակազմի պարտականությունները: <br> 2. **Կարգավորման առարկան** <br> Օրենքի նախագծով հստակեցվում են պահակապետի պարտականությունները, հսկիչ-պահպանության խմբերի և պարեկների ծառայության իրականացման հետ կապված դրույթները, պահպանության տեխնիկական միջոցների ազդանշաններն ընդունող սարքավորումների գործունեության նկատմամբ հսկողության կարգը: <br> 3. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը** <br> Ապահովել զինված ուժերում կայազորային և պահակային ծառայությունների պատշաճ կազմակերպման ու իրականացման գործընթացը, այդ ուղղությամբ պաշտոնատար անձանց և զինծառայողների պարտականությունները: |
| **Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն** | |
| 102. | **«Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ** <br><br> 1. **Միջոցառման անհրաժեշտությունը (նպատակը)** <br> «Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է ոստիկանության ուսումնական հաստատությունում ընդունելությունը խթանելու, ոստիկանական մասնագիտական կրթության հասանելիությունն ապահովելու, ուսանողների սոցիալական աջակցության մեխանիզմներ ներդնելու անհրաժեշտությամբ: <br> 1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** <br> Ներկայումս ոստիկանության ուսումնական հաստատությունում ընդունելությունը խթանելու և ոստիկանությունում առաջացող թափուր հաստիքներն առավել արդյունավետ համալրելու անհրաժեշտություն է առաջացել: <br> 1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** <br> Առաջարկվում է օրենքի նախագծով կարգավորել առաջացած խոչընդոտներն առավել օպերատիվ և արդյունավետ կերպով ոստիկանությունում կադրերը համալրելու գործընթացում: <br> 2. **Կարգավորման առարկան** <br> Օրենքի ընդունմամբ հստակ կարգավորումներ կնախատեսվեն ոստիկանության ուսումնական |

| | |
|---|---|
| | հաստատությունում ընդունելությունը խթանելու, ոստիկանությունում առաջացող թափուր հաստիքներն առավել արդյունավետ համալրելու ուղղությամբ:<br>3. **Միջոցառման իրականացման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Օրինագծի ընդունման արդյունքում՝<br>1) կավելանա ոստիկանության ուսումնական հաստատությունում սովորելու ցանկություն ունեցող անձանց թիվը.<br>2) հնարավորություն կտրվի ոստիկանության թափուր պաշտոնները համալրել առավել որակյալ կադրերով (քանակից՝ որակ).<br>3) համապարփակ և ամբողջական լուծում կտրվի կադրային համալրվածության խնդրին.<br>4) սոցիալական լրացուցիչ երաշխիքներ կսահմանվեն ոստիկանության ուսումնական հաստատությունում սովորողների համար, որոնք օրենքի ուժով ունեն ոստիկանության ծառայողի կարգավիճակ.<br>5) կբարձրանա ոստիկանական մասնագիտության հեղինակությունը: |
| 103. | **«Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ**<br><br>1. **Միջոցառման անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Ոստիկանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է հանցագործությունների արդյունավետ բացահայտման նպատակով ՀՀ ոստիկանությունում ԴՆԹ-ի նմուշների շտեմարանի ստեղծման անհրաժեշտությամբ:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս անհրաժեշտություն է առաջացել հանցագործությունների բացահայտման և նախականխման նպատակով կիրառել նաև ԴՆԹ-ի նմուշների և դրանց վերաբերյալ իրականացված վերլուծությունների (փորձաքննությունների) արդյունքները:<br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Օրենքով ԴՆԹ-ի նմուշների շտեմարանի ստեղծման և վարման հիմքերի նախատեսում «Ոստիկանության մասին» ՀՀ օրենք:<br>2. **Կարգավորման առարկան**<br>Օրենքի ընդունմամբ հստակ կամրագրվեն ՀՀ ոստիկանությանը ԴՆԹ-ի նմուշների շտեմարան ստեղծելու և վարելու իրավունք վերապահող նորմեր:<br>3. **Միջոցառման իրականացման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>ՀՀ ոստիկանությունում ԴՆԹ-ի նմուշների շտեմարան ստեղծելու իրավական հիմքերի ամրագրում: |
| 104. | **«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ**<br><br>1. **Միջոցառման անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է օպերատիվ հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների համար հանցագործությունների արագ բացահայտման նպատակով հանցագործություն նախապատրաստող, կատարող կամ կատարած |

անձանց հեռախոսահամարները կամ օպերատիվ հաշվառման գործերով պարզված հեռախոսահամարների բաժանորդների տվյալներն արտադատական կարգով՝ օրենքի հիման վրա պարզելու և ձեռք բերելու հնարավորություն նախատեսելու անհրաժեշտությամբ:

1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ներկայումս հանցագործություն նախապատրաստող, կատարող կամ կատարած անձանց հեռախոսահամարները կամ օպերատիվ հաշվառման գործերով պարզված հեռախոսահամարների բաժանորդների տվյալները հնարավոր է պարզել միայն դատարանի որոշման հիման վրա, ինչը նվազեցնում է հանցագործությունների բացահայտման օպերատիվությունը (արագությունը):

1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Միջնորդման շրջանակներում նախատեսվում է «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով ամրագրել հանցագործություն նախապատրաստող, կատարող կամ կատարած անձանց հեռախոսահամարները կամ օպերատիվ հաշվառման գործերով պարզված հեռախոսահամարների բաժանորդների տվյալներն արտադատական կարգով ստանալու հնարավորություն:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950 թ. կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:»:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Առանց անձի համաձայնության նրա վերաբերյալ չի կարելի հավաքել, պահպանել, օգտագործել կամ տարածել այլ տեղեկություններ, քան նախատեսված է օրենքով: Արգելվում է անձին վերաբերող տեղեկությունների օգտագործումն ու տարածումը, եթե դա հակասում է տեղեկությունների հավաքման նպատակներին կամ չի նախատեսված օրենքով:»:

Ելնելով նշվածից և նկատի ունենալով, որ նշված տեղեկությունների ձեռքբերումը հեռախոսային խոսակցությունները լսելու հետ չի առնչվում, ինչպես նաև հնարավորություն չի տալիս վերահսկել անձի ֆիզիկական տեղաշարժը, ուստի ներկայացված միջնորդման շրջանակներում նախատեսվում է օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններին իրավունք վերապահել գրավոր և կոնֆիդենցիալ հարցումների հիման վրա կապի օպերատորներից ստանալու օպերատիվ հետաքրքրություն ներկայացնող հեռախոսահամարները և բաժանորդների տվյալները:

2. **Կարգավորման առարկան**

Օրենքի նախագծի կարգավորման առարկան օպերատիվ հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների կողմից արտադատական կարգով օպերատիվ հետաքրքրություն ներկայացնող հեռախոսահամարները և բաժանորդների տվյալների ձեռք բերելու հետ կապված հարաբերություններն են:

3. **Միջնորդման իրականացման դեպքում ակնկալվող արդյունքը**

Հանցագործությունների օպերատիվ-հետախուզական բացահայտման արդյունավետության բարձրացում:

| | |
|---|---|
| | **Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե** |
| 105. | «**Հայաստանի Հանրապետության կառավարության** 2001 **թվականի դեկտեմբերի** 24-**ի** N 1263 **որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Իրավական ակտի ընդունումը պայմանավորված է «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով, ինչպես նաև Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) կարգավորող մարմինների գործունեության միասնական դիտարկման 2015 թվականի մայիսի 31-ից հունիսի 12-ը տեղի ունեցած այցի շրջանակներում տրված R25 առաջարկության կատարման անհրաժեշտությամբ (ՀՀ կառավարության 2001 թվականի N 1263 **որոշումը ներկայացնելու համապատասխանության ԱԷՄԳ-ի նոր ստանդարտներին**):<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս գործում է **ՀՀ կառավարության** 2001 **թվականի դեկտեմբերի** 24-**ի** «Միջուկային և ռադիոակտիվ նյութերի փոխադրման հատուկ կանոնները հաստատելու մասին» N 1263 որոշումը, որը մշակվել էր ԱԷՄԳ-ի ST-1 անվտանգության ստանդարտի հիման վրա:<br><br>2012 թվականին ԱԷՄԳ-ի կողմից ընդունվել է միջուկային և ռադիոակտիվ նյութերի անվտանգ փոխադրման անվտանգության նոր ստանդարտ (SSR-6), որը զգալիորեն տարբերվում է ST-1 անվտանգության ստանդարտից, մասնավորապես, ամրագրվել են անվտանգ փոխադրման նոր պահանջներ և մոտեցումներ:<br><br>1.2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները և կարգավորման առարկան**<br>Նշված որոշման ընդունմամբ կսահմանվեն միջուկային և ռադիոակտիվ նյութերի անվտանգ փոխադրման ժամանակակից մոտեցումներին համապատասխանող պահանջներ:<br>2. **Իրավական ակտի կիրառման արդյունքում ակնկալվող արդյունքը**<br>Որոշման ընդունմամբ կհստակեցվեն միջուկային և ռադիոակտիվ նյութերի անվտանգ փոխադրման ապահովման նկատմամբ պահանջները, կնվազեցվի միջուկային ու ռադիոակտիվ նյութերի փոխադրման ժամանակ անձնակազմի ու բնակչության գերճառագայթահարման հավանականությունը: |
| 106. | «**Հայաստանի Հանրապետության կառավարության** 2012 **թվականի նոյեմբերի** 8-**ի** N 1411 -**Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Իրավական ակտի ընդունումը պայմանավորված է ԱԷՄԳ-ի նոր ստանդարտների (SSR 2/1 պահանջներ) ընդունմամբ և ԱԷՄԳ-ի կարգավորող մարմինների գործունեության միասնական դիտարկման առաքելության (IRRS- 2015 թ. մայիսի 30-ից հունիսի 12) տրված առաջարկության (R21) հիման վրա:<br>1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս գործող ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N 1411-Ն որոշման մեջ նախագծի ընդլայնված պայմանների նկատմամբ պահանջներ չկան: |

| | |
|---|---|
| | Ֆուկուշիմայի վթարից հետո մշակվել են նոր պահանջներ, որոնք պիտի ամրագրվեն նշված իրավական ակտում: 2. **Առկա խնդիրների առաջարկվող լուծումները և կարգավորման առարկան** Նշված որոշման ընդունմամբ կսահմանվեն ժամանակակից մոտեցումներին համապատասխանող պահանջներ՝ հաշվի առնելով Ֆուկուշիմայի վթարի դասերը: 3. **Իրավական ակտի կիրառման արդյունքում ակնկալվող արդյունքը** Նախագծի ընդունմամբ կամրագրվեն պահանջներ նախագծի ընդլայնված պայմանների նկատմամբ՝ լայն սպեկտորի վթարների կառավարման նպատակով և իրավական ակտը կհամապատասխանեցվի ԱԷՄԳ-ի անվտանգության նշված ստանդարտի պահանջներին: |
| 107. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 18-ի N 1489-Ն և 2009 թվականի հունիսի 4-ի N 631-Ն որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը** **1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)** Իրավական ակտի ընդունումը պայմանավորված է ԱԷՄԳ-ի «Ռադիոակտիվ թափոնների կառավարումը նախքան թաղումը» անվտանգության ընդհանուր պահանջների 5-րդ մասով, ինչպես նաև ԱԷՄԳ-ի կարգավորող մարմինների գործունեության միասնական դիտարկման առաքելության (IRRS- 2015 թ. մայիսի 30-ից հունիսի 12) տրված առաջարկության (R22) հիման վրա: 1.1. **Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** Ներկայումս գործող ՀՀ կառավարության նշված որոշումներով սահմանված չեն ռադիոակտիվ թափոնների բնութագրման պահանջներ, որոնք դժվարացնում են դրանց կառավարումը և հետագա թաղումը: 2. **Իրավական ակտի կիրառման արդյունքում ակնկալվող արդյունքը** Նախագծի ընդունմամբ կամրագրվեն թափոնների բնութագրման պահանջներ ԱԷՄԳ-ի անվտանգության նշված ստանդարտներին համապատասխան, հեշտացնելու դրանց կառավարումը և հետագա թաղումը: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 4
ՀՀ կառավարության 2016 թվականի
հունվարի 14-ի N 131 -Ն որոշման

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ Ն Ե Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ
ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ

| NN<br>ը/կ | **Հիմնավորումներ** |
|---|---|
| | **Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն** |
| 1. | **Տարածաշրջանային ինտեգրման ապահովման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br><br>Նոր էլեկտրահաղորդման գծերի կառուցման նպատակը Վրաստանի և Իրանի էներգահամակարգերի հետ կայուն աշխատանքի ապահովումն է՝ նպատակ ունենալով բոլոր երեք երկրների էներգահամակարգերի համատեղ աշխատանքը զուգահեռ ռեժիմում: Հայաստան-Վրաստան 400 կՎ լարմամբ էլեկտրահաղորդման օդային գծի կառուցմամբ զգալիորեն կխթանվի էներգետիկայի բնագավառում տարածաշրջանային հյուսիս-հարավ (ՌԴ-Վրաստան-ՀՀ-ԻԻՀ) փոխշահավետ համագործակցության զարգացումը: Իրան-Հայաստան 400 կՎ լարմամբ երկշղթա էլեկտրահաղորդման գծի կառուցումը նպատակաուղղված է գազ-էլեկտրաէներգիայի դիմաց ծրագրով հայկական կողմի ստանձնած պարտավորությունների կատարման ապահովմանը, ինչպես նաև տարածաշրջանային համագործակցության զարգացմանը:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br><br>Նոր էլեկտրահաղորդման գծերի կառուցմամբ նկատելիորեն կբարելավվի ծառայության որակը, զգալիորեն կխթանվի էներգետիկայի բնագավառում տարածաշրջանային փոխշահավետ համագործակցության զարգացումը, ինչպես նաև կստեղծվի նախապայման՝ ԱՊՀ երկրների էլեկտրաէներգետիկ համակարգի հետ զուգահեռ աշխատանք կազմակերպելու համար: Արդյունքում Հայաստան-Վրաստան էլեկտրաէներգիայի փոխանակման հզորությունը ներկայիս 200 ՄՎտ-ից վերջնական փուլում կհասցվի 1050 ՄՎտ-ի, իսկ Իրան-Հայաստան էլեկտրաէներգիայի փոխանակման հզորությունը ներկայիս 300 ՄՎտ-ից կհասցվի 1000-1200 ՄՎտ-ի: |
| 2. | **Հայկական ԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարաձգման աշխատանքների իրականացման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br><br>Հայկական ԱԷԿ-ի անվտանգ շահագործումն ապահովելու նպատակով ՀՀ կառավարությունը 2014 թ. մարտի 27-ի N 12 արձանագրային որոշման 11-րդ կետով հավանություն է տվել «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի երկրորդ էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարաձգման ծրագրին, որի համաձայն կիրականացվեն Հայկական ԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի սարքավորումների և շինու- |

| | |
|---|---|
| | թյունների համալիր զննման ու մնացորդային ռեսուրսի գնահատման աշխատանքները և կսկսվեն Հայկական ԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի լրացուցիչ ժամկետում շահագործման նախապատրաստական աշխատանքները:<br>2015 թ. մայիսի 12-ին ուժի մեջ են մտել Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև ստորագրված Հայկական ատոմային էլեկտրակայանի N 2 էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման հարցում համագործակցության մասին և Հայաստանի Հանրապետության տարածքում ատոմային էլեկտրակայանի շահագործման ժամկետի երկարաձգման աշխատանքների ֆինանսավորման համար Հայաստանի Հանրապետության կառավարությանը պետական արտահանման վարկ տրամադրելու մասին համաձայնագրերը:<br>2016 թ. ընթացքում կիրականացվեն Հայկական ԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարաձգման ծրագրի առաջին փուլի (սարքավորումների, համակարգերի և շինությունների համալիր զննման ու մնացորդային ռեսուրսի գնահատման) աշխատանքները՝ ըստ աշխատանքնային ժամանակացույցի:<br>**2. Գներակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հայկական ԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի սարքավորումների, համակարգերի և շինությունների համալիր զննման ու մնացորդային ռեսուրսի գնահատման աշխատանքների արդյունքում կմշակվեն իրականացվող աշխատանքների պլան-ժամանակացույցը, Հայկական ԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի անվտանգության բարձրացման միջոցառումների և համապատասխան սարքավորումների փոխարինման ցանկերը: |
| 3. | **Վերականգնվող էներգետիկայի ընդլայնման ծրագրի շրջանակում երկրաջերմային ծրագրի նախապատրաստական աշխատանքների իրականացման վերաբերյալ**<br>Կարկառի երկրաջերմային տեղանքում առաջնային էներգակրի պարամետրերի որոշման համար հորատանցքերի հորատման աշխատանքների կատարման կապալառուի ընտրություն և հորատման աշխատանքների մեկնարկ՝ ՀՀ Նախագահի 2015 թվականի հուլիսի 21-ի N ՆՀ-467-Ն հրամանագրով հաստատված՝ «Երկրաջերմային հետախուզական հորատման ծրագիր» դրամաշնորհի համաձայնագրի շրջանակներում:<br>1. **Գներակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N 836-Ն որոշման հավելվածի 9-րդ կետի և ՀՀ կառավարության 2009 թվականի հուլիսի 16-ի N 818-Ն որոշման 3-րդ կետի պահանջների կատարում:<br>**2. Գներակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հորատանցքերի հորատման աշխատանքների կատարման կապալառուի ընտրությունը և հորատման աշխատանքների մեկնարկը ուղղված են Կարկառի երկրաջերմային տեղանքում առաջնային էներգակրի պարամետրերի պատշաճ որոշման ապահովմանը: |
| 4. | **«Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ում առկա տվյալների թվայնացման և հրապարակման վերաբերյալ**<br>1. **Գներակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ում հավաքագրվող հանրապետության տարածքում կատարված ընդերքի երկրաբանական ուսումնասիրությունները, ինչպես նաև օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման ընթացքում ստացված երկրաբանական և այլ տեղեկատվությունը՝ համապատասխան փաստաթղթերի (տեղեկանքների, հաշվետվությունների, գծագրական նյութերի և այլն) տեսքով պահվում են թղթային կրիչների միջոցով, ինչը սահմանափակում է երկրաբանական տեղեկատվության հասանելիությունը հանրության համար: |

| | |
|---|---|
| | Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թ. հուլիսի 31-ի N 32 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության երկրորդ գործողությունների ծրագրի 1-ին կետով նախատեսված «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ում առկա տվյալների թվայնացում և հրապարակում» միջոցառման իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը բանակցում է ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալության (USAID) հետ՝ համապատասխան պայմանագրի կնքման և ֆինանսավորման շուրջ: Բանակցությունների նախնական փուլում ճշգրտվել են պահանջվող աշխատանքների ծավալները, իրականացման ժամկետը և անհրաժեշտ սարքավորումների ցանկը: Ֆինանսավորման վերաբերյալ վերջինիս կողմից ստացվել է առաջարկություն՝ ծրագիրն իրականացնել ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալության և ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ: ՀՀ կառավարության աշխատակազմի կողմից կազմվել է «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ում առկա տվյալների թվայնացում և հրապարակում» միջոցառման իրականացման աշխատանքների նախահաշիվ: Նախնական գնահատմամբ այն կազմել է 429605 ԱՄՆ-ի դոլար, որից 356205 ԱՄՆ-ի դոլարը նախատեսվում է ֆինանսավորել USAID-ի կողմից, իսկ 73400 ԱՄՆ-ի դոլարը՝ ՀՀ կառավարության: Նախահաշիվը ներկայացվել է USAID-ի քննարկմանը:<br>Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի գերակա խնդիրների կազմում «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ում առկա տվյալների թվայնացում և հրապարակում» գերակա խնդրի (5-րդ կետ) նախատեսումը կհանգեցնի ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի լրացուցիչ ծախսերի, իսկ ՀՀ կառավարության 2015 թվականի հուլիսի 8-ի N 755-Ն որոշմամբ հաստատված ՀՀ 2016-2018 թվականների պետական միջնաժամկետ ծախսային ծրագրով 2016 թվականի համար նշված միջոցառման գծով միջոցներ նախատեսված չեն եղել, քանի որ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության և ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալության հետ համապատասխան պայմանագիր դեռ կնքված չէ, և տրամադրվող գումարի չափը հստակեցված չէ: Նշված պայմանագրի կնքումից հետո, երբ կհստակեցվի ՀՀ պետական բյուջեից հատկացվող գումարի չափը, կներկայացվի բյուջեում կատարվող համապատասխան փոփոխությունը:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Կքարտեզավվի տեղեկատվության դյուրին հասանելիությունը հանրությանը: |
| **Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն** | |
| 5. | **Հարկային վարչարարության կատարելագործման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Հարկային վարչարարության շարունակական բարելավման, հսկողական աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով կարևորվում են հարկային համակարգի օպտիմալ կառուցվածքի սահմանմանը, համակարգված հարկային հսկողական մեխանիզմների ամբողջական ներդրմանն ուղղված շարունակական քայլերը՝ նպատակ ունենալով ապահովելու հարկային հսկողության հասցեական մոտեցումը:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հարկային վարչարարության բարեփոխումների շրջանակում նախատեսվում է սահմանել հարկային համակարգի օպտիմալ կառուցվածք, կատարելագործել հարկային մարմնի կողմից իրականացվող հսկողական մեխանիզմները, մեծացնել կիրառվող հսկողական գործիքների արդյունավետությունը: Արդյունքում կկատարելագործվեն հարկային հսկողության հիման վրա ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով չձևակերպված վարձու աշխատողների հայտնաբերման համար իրականացվող աշխատանքները: |

| | |
|---|---|
| | Միաժամանակ, ամբողջական ծավալով կօգտագործվեն կամերալ ուսումնասիրությունների արդյունքները, և կներդրվի ստուգման ակտերով պարտավորությունների առաջադրման համակարգը, մասնավորապես, ուշադրության կենտրոնում կլինեն շրջանառության հարկ վճարողների գործունեության ռիսկերի գնահատումը, գործարքների փաստաթղթավորման հարցերը: |
| 6. | **Արդիականացված սահմանային անցակետերի գործարկման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի նպատակն է՝<br>1) «Բագրատաշեն», «Գոգավան» և «Բավրա» պետական սահմանային անցումային կետերի ենթակառուցվածքների ու սարքավորումների արդիականացմանը զուգահեռ քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների համար ապահովել սահմանի կառավարման ոլորտի մարմինների արդյունավետ աշխատանքը և սահմանահատման սահուն գործընթացը.<br>2) ապահովել Հայաստանի Հանրապետությունում մաքսային հսկողության ներքո ապրանքների և տրանսպորտային միջոցների տարանցիկ տեղափոխման, ինչպես նաև ԵԱՏՄ-ի ապրանքների, ԵԱՏՄ-ի անդամ չհանդիսացող երրորդ երկրի տարածքով տարանցիկ տեղափոխման ԵԱՏՄ-ի գործող օրենսդրությանը համապատասխան տվյալների փոխանակման, մաքսային ձևակերպումների, հաշվառման և հսկողության էլեկտրոնային համակարգի ներդրումը:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծման արդյունքում ակնկալվում են միջազգային առևտրի խթանում և քաղաքացիների սահուն ու առանց խոչընդոտների սահմանահատման ապահովում: Բացի դրանից, կբարելավվի երկրով անցնող միջազգային տրանսպորտային միջանցքների արդյունավետ գործունեությունը, կմեծացվի մաքսային կետերում իրավախախտումների դեմ պայքարի արդյունավետությունը, ինչպես նաև կբարձրացվի Հայաստանի Հանրապետության հեղինակությունն արտերկրում, օտարերկրյա գործարարների և հասարակական կարծիք ձևավորող կառույցների շրջանում:<br>Գերակա խնդրի լուծման արդյունքում հնարավոր կլինի միասնականացնել, դյուրացնել և պարզեցնել պետական սահմանի անցման կետերում գործող սահմանային վերահսկողության և մաքսային հսկողության ընթացակարգերը՝ բացառելու համար գործառույթների կրկնությունները, անհարկի վերահսկողության կամ հսկողության իրականացումը:<br>Ներդրված համակարգի արդյունք է հանդիսանալու դյուրինացված հսկողության մեխանիզմի կիրառումը՝ ապահովելով պետական մարմինների միջև տեղեկատվության փոխանակումը և հաշվետվողականությունը: Համակարգն ապահովելու է բեռն ուղեկցող փաստաթղթերը և տարանցման հայտարարագրերն առաջին անգամ մաքսային մարմին ներկայացնելուց հետո՝ դրանցում առկա տեղեկատվությունը և ձևավորված հայտարարագրի տվյալները կամ դրանց մի մասն ըստ անհրաժեշտության մաքսային ծառայության այլ գործառնություններում կիրառելու հնարավորությունը:<br>Համակարգի ներդրման արդյունքում հնարավոր է դառնալու մինչև բեռի սահման հասնելը անհրաժեշտ փաստաթղթերն էլեկտրոնային տարբերակով ներկայացնելը, ինչը կհեշտացնի և կարագացնի սահմանային հսկողությունը՝ միաժամանակ հանգեցնելով լրացուցիչ հսկողական գործառույթների վրա ծախսվող մարդկային ու տեխնիկական ռեսուրսների խնայողությանը: |
| 7. | **Պետական ծախսերի կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով ծրագրային բյուջետավորման ներդրման համար իրականացվող բարեփոխումների վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի նպատակը ՀՀ կառավարության 2014 թվականի մայիսի 19-ի N 511-Ա որոշման հավելվածի (ՀՀ կառավարության գործունեության ծրագիր) «2.2.4. Բյուջետային համակարգ» ենթաբաժնի |

| | |
|---|---|
| | հինգերորդ պարբերության երկրորդ ենթակետով ամրագրված «ստեղծվելու են անհրաժեշտ նախադրյալներ լիարժեք ծրագրային բյուջետավորման անցման համար՝ սկսած 2018 թվականից» դրույթի կատարման ապահովումն է:<br>ՀՀ ֆինանսների նախարարությունը 2005 թվականից նախապատրաստական աշխատանքներ է իրականացնում բյուջետավորման՝ մուտքերի (ծառայությունների մատուցման համար օգտագործվող ռեսուրսների) վրա հիմնված եղանակից արդյունքների վրա հիմնված եղանակին աստիճանական անցման նպատակով անհրաժեշտ պայմանների ստեղծման համար:<br>Արդյունքում՝ նշված անցումային գործընթացում արդեն ընդգրկվել են բոլոր պետական կառավարման մարմինները: ՀՀ պետական բյուջեների նախագծերը, ավանդական ձևաչափին զուգահեռ, մշակվել են նաև ծրագրային բյուջետավորման պահանջներին համապատասխանող ձևաչափով և ներառվել են համապատասխան տարիների բյուջետային փաստաթղթերում:<br>ՀՀ 2012 թվականի բյուջետային գործընթացում փորձնական կարգով ներդրվել են ծրագրային բյուջետավորման պահանջներից բխող նոր տարրեր՝ (ա) ՀՀ պետական բյուջեով ծախսային ծրագրեր իրականացնող բոլոր գերատեսչությունների գծով նոր ծրագրային կառուցվածքի և այդ ծրագրերի նոր դասիչների համակարգը, որի համաձայն էլ կազմվել են 2012 թվականի և հետագա տարիների ՀՀ պետական բյուջեների նախագծերը, և (բ) ծրագրերի կառուցվածքի վերափոխման արդյունքում բյուջետային համակարգում շուրջ 860-ի փոխարեն ձևավորվել է 153 ծրագիր:<br>Բյուջետային տեղեկատվությունն օգտագործողների և հանրության համար առավել հետաքրքրություն ներկայացնող ծրագրերի համար, սկսած 2011 թվականից, ՀՀ ֆինանսների նախարարության առաջնորդությամբ, առանձին գերատեսչություններ փորձարարական կարգով արդեն իսկ կազմել են 35 բյուջետային ծրագրերի նկարագրեր (անձնագրեր): Նշենք, որ բյուջետային ծրագրի նկարագիրը (անձնագիր) մի գործիք է, որը հնարավորություն է տալիս ամփոփելու և ներկայացնելու տվյալ ծրագրի գծով ծախսերի պլանավորման համար անհրաժեշտ բոլոր կարևորագույն ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշներն ու թիրախները:<br>ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի նիստի N 53 արձանագրային որոշմամբ հաստատվել է բյուջետային ծրագրերի նկարագրերի (անձնագրերի) հետագա կազմման ժամանակացույցը, որի համաձայն կամրողջանա և կստեղծվի 83 բյուջետային ծրագրերի նկարագրերի (անձնագրերի) միասնական համակարգ:<br>Համաձայն նշված որոշմամբ հաստատված ժամանակացույցի՝ ընթացքի մեջ են համանման ևս 15 անձնագրերի կազմման աշխատանքներ, և 2015 թվականին դրանց թիվը հասել է 50-ի:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծման արդյունքում ակնկալվում է՝<br>- 16 գերատեսչության կողմից 2016 թվականին 17 բյուջետային ծրագրի նկարագրերը (անձնագրերը) ներկայացնելը,<br>- բյուջետային ծրագրերի նկարագրերի (անձնագրերի) կազմման հետ կապված խորհրդատվության տրամադրում համապատասխան գերատեսչություններին: |
| 8. | **Մեկ հարկային հաշվի ներդրման նախնական աշխատանքների իրականացման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Հնարավորինս պարզեցնել հարկ վճարողների կողմից ՀՀ պետական բյուջեի հանդեպ պարտավորությունների կատարման գործընթացը: Այդ նպատակով առաջարկվում է հարկային պարտավորությունների վճարման համար ներկայումս գործող բազմաթիվ գանձապետական հաշիվների փոխարեն բացել մեկ գանձապետական հաշիվ, որի դեպքում կկարգավորվեն մի շարք խնդիրներ: |

| | |
|---|---|
| | 2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախագծերի փաթեթի ընդունմամբ՝<br>- կրացառվի մեկ հարկատեսակի գծով նախատեսված հաշվի փոխարեն այլ հարկատեսակի համար նախատեսված հաշվին սխալ վճարում կատարելը,<br>- սխալ վճարումների հետևանքով տույժեր այլևս չեն հաշվարկվի,<br>- կվերանա մեկ հարկատեսակից այլ հարկատեսակին հաշվանցում կատարելու և դրանից բխող անհրաժեշտ փաստաթղթեր ներկայացնելու անհրաժեշտությունը (դիմումներ ներկայացնելը, եզրակացություններ կազմելը և այլն),<br>- կկրճատվեն հարկ վճարողների կողմից վճարված գումարների հաշվանցման ու վերադարձման գործող ընթացակարգերը և դրանց համապատասխան պահանջվող թղթատարությունը,<br>- կվերանա հարկ վճարողների մոտ «գերավճարների» կուտակման հնարավորությունը,<br>- կկրճատվի հարկային մարմին ներկայացվող հարկային հաշվարկների թիվը (հանվում է ակցիզային հարկի հաշվարկ ներկայացնելու պահանջը),<br>- եկամտային հարկի և արտոնագրային վճարների գծով ամսական վճարումները կդառնան տարեկան, իսկ հարկային գործակալի կողմից ոչ ռեզիդենտին վճարված եկամուտների գծով պահված (գանձված) շահութահարկի գումարների ամսական վճարումները կդառնան կիսամյակային,<br>- բոլոր հարկատեսակների և վճարների գծով կնույնականացվեն հարկային հաշվարկներ ներկայացնելու և հարկային պարտավորությունների վճարման ժամկետները,<br>- կհստակեցվի և կպարզեցվի հարկ վճարողների պարտավորությունների մարման մեխանիզմը,<br>- ԱԱՀ-ով հարկման ժամանակաշրջանում կուտակված դեբետային մնացորդները հարկ վճարողները կարող են օգտագործել նաև հարկման այլ դաշտում գտնվելու դեպքում,<br>- կհանվեն տուգանքների՝ օրենքով սահմանված ժամկետներում չվճարման դեպքում դրանց կրկնապատկման դրույթները,<br>- կհստակեցվի և կպարզեցվի հարկ վճարողների պարտավորությունների մարման մեխանիզմը: |
| 9. | **Հարկային մարմնում տվյալների մշակման և վերլուծությունների իրականացման գործառույթների կենտրոնացման, մոնիթորինգի հիման վրա ռիսկերի գնահատման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի սահմանումը պայմանավորված է հարկային համակարգում իրականացվող տվյալների մշակման աշխատանքների կենտրոնացման, համախմբման անհրաժեշտությամբ, ինչը կարևորվում է նաև ռիսկերի կառավարման համակարգի արդյունավետ գործարկման և կիրառության տեսանկյունից: Հարկային մարմնի կողմից շարունակվում է կարևորվել ռիսկերի վերհանման, գնահատման գործիքակազմի արդյունավետ կիրառությունը, ինչը պահանջում է նաև հարկային համակարգում վերլուծությունների իրականացման գործառույթների կենտրոնացում:<br>Բացի դրանից, ներկայումս, երբ հարկ վճարողների մասին տեղեկատվությունը հավաքագրվում և մշակվում է էլեկտրոնային եղանակով, խիստ կարևոր է դառնում այդ տեղեկատվության պահպանման հարցը:<br>Հարկ վճարողների հետ առցանց (online) աշխատելու պարագայում պակաս կարևոր չէ էլեկտրոնային կառավարման համակարգերի անխափան աշխատելու պայմանը, իսկ հնարավոր խափանման դեպքում՝ արագ և ճշգրիտ վերականգնման հարցը:<br>ՀՀ ֆինանսների նախարարության տեղեկատվական բազայի դեպքում՝ հավաքագրվող տեղեկատվության զգալի մասը հարկային գաղտնիք է, և անհրաժեշտ է լիովին վերացնել տեղեկատվության արտահոսքի հնարավորությունը: |

2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**

Գերակա խնդրի լուծման արդյունքում Երևան և Դիլիջան քաղաքներում կգործարկվեն տվյալների մշակման կենտրոններ: Գործարկված կենտրոնների միջոցով տվյալների մշակման, վերլուծական աշխատանքները կիրականացվեն կենտրոնացված կարգով, միաժամանակ, զգալիորեն կբարելավվեն իրականացված վերլուծությունների հիման վրա ռիսկերի գնահատման աշխատանքները, կբարձրացվի ռիսկերի կառավարման համակարգի արդյունավետությունը:

Բացի դրանից, տեղադրված սերվերների հզորությունները կապահովեն համակարգերի արդյունավետ աշխատանքը: Նախատեսվում է ապահովել աշխատանքների զուգահեռությունը երկու կենտրոնում, ինչը հնարավորություն կտա ցանկացած խափանման դեպքում շարունակելու առցանց աշխատանքը, խափանված մասի վերանորոգումը, տվյալների վերականգնումը: Կենտրոնների միջև առկա տարածությունը կապահովի աշխատանքը նաև հնարավոր աղետների դեպքում: Միջազգային չափանիշներին համապատասխան՝ կապահովվեն նաև տվյալների գաղտնիությունը և պահպանումը:

**Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարություն**

10. **Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության տեխնիկական ենթակառուցվածքների շահագործման ապահովման համար տեխնիկական լուծումների մշակման ավարտի վերաբերյալ**

1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**

Ներկայացվող առաջարկությունն ուղղված էպատերազմական, արտակարգ և չնախատեսված այլ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգությունն ապահովող տեխնիկական ենթակառուցվածքների ստեղծմանը: Արբանյակային ինտերնետ կապուղին դիտարկվում է որպես այլընտրանք՝ հարևան պետություններից Հայաստանի Հանրապետության տարածք մտնող՝ գոյություն ունեցող մալուխային կապի գծերին, որը նախատեսվում է օգտագործել մալուխային կապի գծերի հնարավոր խափանումների, վնասվածքների կամ արգելափակումների դեպքում, ինչն էլ հնարավորություն կտա շրջանցելու հարևան պետությունները և ինտերնետ կապ հաստատելու անմիջապես արտաքին աշխարհի հետ: 2016 թվականին նախատեսվում է իրականացնել տեղեկատվական անվտանգության տեխնիկական ենթակառուցվածքների շահագործման ապահովման համար տեխնիկական լուծումների մշակման գործընթաց, որոնց համար ֆինանսական միջոցներ չեն պահանջվում:

2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**

2.1. Հայաստանի Հանրապետությունն արտաքին աշխարհին կապող մալուխային կապի գծերի հնարավոր խափանումների, վնասվածքներիև արգելափակումներիպարագայում պետական գերատեսչությունների ինտերնետ կապն ապահովելու նպատակով առաջարկվում է ստեղծել համապատասխան տեխնիկական ենթակառուցվածք՝ այլընտրանքային արբանյակային ինտերնետ կապուղու համար:

Արբանյակային ինտերնետ կապուղու փորձարկումը հաջողությամբ իրականացվել է «Շանթ-2015» համապետական ռազմավարական հրամանատարաշտաբային զորավարժությունների շրջանակում և արժանացել բարձր գնահատականի:

| | |
|---|---|
| | 2.2. Հանրապետության հեռուստառադիոհաղորդիչ ցանցում կարևոր դեր և ռազմավարական մեծ նշանակություն ունեցող Երևանի հաղորդիչ կենտրոնի՝ շարքից դուրս գալու դեպքում՝ վերջինիս ֆունկցիոնալությունն ապահովելու նպատակով առաջարկվում է ստեղծել շարժական կայան, որի միջոցով ցանկացած պահի հնարավոր կլինի իրականացնել հեռարձակումը՝ ինչպես մայրաքաղաքում, այնպես էլ՝ Արարատյան դաշտավայրի բնակավայրերում՝ ընդգրկելով ՀՀ բնակչության շուրջ 55 տոկոսը: Շարժական կայանը համալրված կլինի ազդանշանների ընդունման, թվայնացման, փաթեթների ձևավորման, եթերային, արբանյակային և ինտերնետ հեռարձակման համապատասխան սարքավորումներով: Շարժական կայանում պետք է նախատեսվեն նաև 15-20 մետր բարձրությամբ արագ տեղակայման կայմ, անխափան և ավտոնոմ էլեկտրասնուցման համակարգեր: Շարժական կայանը պետք է ունենա հրատապ ռեպորտաժ պատրաստելու և հաղորդելու հնարավորություն:<br>2.3. Մարզային որևէ կայանի՝ շարքից դուրս գալու դեպքում՝ տվյալ հեռուստակայանի ընդգրկման գոտում հեռարձակումն ապահովելու համար առաջարկվում է ստեղծել շարժական հաղորդիչ կայան, որը համալրված կլինի արբանյակից ազդանշանի ընդունման և հեռարձակման համար նախատեսված սարքավորումներով, ինչպես նաև ավտոնոմ էլեկտրասնուցման համակարգով և արագ տեղակայման կայմով: Անհրաժեշտության դեպքում շարժական կայանը պետք է տեղադրվի խնդրո առարկա տարածքի որևէ ապահով գերիշխող բարձունքում և իրականացնի հեռարձակումը: Նկատի ունենալով մարզային կայանների մեծ թիվը (շուրջ 200)՝ առաջարկվում է կոմպլեկտավորել երկու նմանատիպ շարժական կայան:<br>Առաջարկվող տեխնիկական ենթակառուցվածքների ստեղծումը թույլ կտա պատրաստ լինել պատերազմական, արտակարգ և չնախատեսված իրավիճակներում բնակչությանն անխափան տեղեկատվություն հաղորդելուն: |

| 11. | **Հեռահաղորդակցության ոլորտում ծառայությունների աշխարհագրության ընդլայնման և նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ առաջարկվող ծառայությունների բազմազանության ու միջազգային չափանիշներին համապատասխան բարձր որակի ապահովման, մասնավորապես, Հայաստանի Հանրապետության տարածքում համացանցի օգտագործման հնարավորությունից օգտվողների մակարդակի աճի (առնվազն 5 տոկոսով) վերաբերյալ** |
|---|---|

1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**

ՀՀ կառավարության 2013 թվականի հունվարի 10-ի նիստի N 1 արձանագրության 21-րդ կետով հավանության արժանացած՝ Ինտերնետից օգտվողների թվի հաշվարկի մեթոդիկայի կիրառմամբ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում համացանցի օգտագործման հնարավորությունից օգտվողների մակարդակի առնվազն 5 տոկոսով աճի ապահովում:

Ինտերնետից օգտվողների թվի հաշվարկի մեթոդիկան սահմանված է ՀՀ կառավարության 2013 թվականի հունվարի 10-ի նիստի N 1 արձանագրության 21-րդ կետով հավանության արժանացած՝ «Ինտերնետից օգտվողների թվի հաշվարկի մեթոդիկան և ինտերնետից օգտվողների թվի հաշվարկի նպատակով անհրաժեշտ ցուցանիշների տրամադրման կամ հրապարակման պատասխանատու գերատեսչությունների ցանկին հավանություն տալու մասին» արձանագրային որոշմամբ, որտեղ սահմանված են հաշվարկի բանաձևը և պահանջվող ցուցանիշները, որով կատարվում է ինտերնետից օգտվողների թվի հաշվարկը:

Պահանջվող ցուցանիշներն են՝

1) ՀԲԹ (հաշվարկված բնակչության թիվը)՝ հաշվարկվում է 10-74 տարեկան բնակիչների թիվը՝ կիրառելով ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից իրականացվող տնային տնտեսությունների հետազոտությամբ հաշվարկված՝ հաշվետու տարվան նախորդող տարվա համար առկա բնակչության թվի գործակիցը.

2) ԲԹ (բնակչության թիվը)՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից հրապարակված մշտական բնակչության թվի վերաբերյալ տվյալները.

3) ՖԲԹ (ֆիքսված բաժանորդագրությունների թիվը)՝ հաշվարկվում է ֆիքսված (լարային) ինտերնետ կապի բաժանորդագրությունների ընդհանուր թիվը, որը ներառում է ընդհանուր ֆիքսված (լարային) լայնաշերտ և դայլ-ափ (dial-up) բաժանորդագրությունները (վերջին 3 ամսում ակտիվ բաժանորդագրությունները).

4) ԱՇԲԹ (առանձնացված շարժական բաժանորդագրությունների թիվը)՝ հաշվարկվում է առանձնացված շարժական կապով տվյալների փոխանցման ընդհանուր թիվը, որը ներառում է որպես ՅուԷսԲի (USB) մոդեմ (դոնգլ), նաև շարժական կապի ՎայՄաքս (WiMax) բաժանորդագրությունները.

5) ՇԲՔ (շարժական բաժանորդագրությունների քանակը)՝ հաշվարկվում են ստանդարտ շարժական կապի բաժանորդագրությունները՝ լայնաշերտ կապի 256 Մբ/վ և ավելի արագություններով տվյալների հաղորդման միջոցով (վերջին 3 ամսում օգտագործել են նշված ծառայությունը):

Ինտերնետից օգտվողների թվի (ԻՕԹ) հաշվարկը կատարել հետևյալ բանաձևով.

**ԻՕԹ= (ՖԲԹ+50% ԱՇԲԹ+10% ՇԲՔ)* ՀԲԹ+50% ԱՇԲԹ,**

իսկ մասնաբաժինը՝ հետևյալ բանաձևով.

**ԻՕԹ= [(ՖԲԹ+50% ԱՇԲԹ+10% ՇԲՔ)* ՀԲԹ+50% ԱՇԲԹ] /ԲԹ*100:**

Միաժամանակ բազային տվյալները հավաքագրվում են յուրաքանչյուր տարվա կամ տվյալ եռամսյակի կտրվածքով:

2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**

ՀՀ ամբողջ տարածքում համացանցի օգտագործման հնարավորությունից օգտվողների մակարդակի աճ:

| | |
|---|---|
| 12. | **Միասնական երթուղային ցանցի ձևավորման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Ներկայումս ոչ բոլոր համայնքներն են ապահովված ընդհանուր օգտագործման տրանսպորտային փոխադրումներով: Նախատեսվում է ուսումնասիրել նման բնակավայրերում ուղևորափոխադրումների ծառայությունների մատուցման բացակայության պատճառները և ձեռնարկել միջոցներ՝ առկա խնդիրների վերացման համար:<br>ՀՀ բոլոր բնակավայրերից կանոնավոր ուղևորափոխադրումների կազմակերպման, երթուղային միասնական ցանցի ձևավորման նպատակով տեղում անհրաժեշտ ուսումնասիրություններ իրականացնելու, առկա խնդիրները հայտնաբերելու և արդյունավետ լուծումներ տալու համար կձևավորվեն աշխատանքային խմբեր, որոնք կազմված կլինեն ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության ու համապատասխան մարզպետարանների ներկայացուցիչներից: Կիրականացվեն ուղևորահոսքի ուսումնասիրություններ, գործող չվացուցակները և ուղեգծերը կհամապատասխանեցվեն դրանց ծավալներին՝ ընդգրկելով նաև այն համայքները, որտեղից ներկայումս կանոնավոր ուղևորափոխադրումներ չեն իրականացվում:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>ՀՀ բնակչության ազատ տեղաշարժման հնարավորության ապահովում |
| | **Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն** |
| 13. | **Հանրապետության պարենային անվտանգության վիճակի բարելավման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Ներկայումս հանրապետությունում առաջնահերթ անհրաժեշտ պարենամթերքի ինքնաբավության մակարդակը՝ էներգետիկ արժեքով գնահատված, կազմում է գրեթե 60 տոկոս: Նշվածի հետ մեկտեղ՝ մի շարք պարենամթերքների ինքնաբավության մակարդակը հանրապետությունում չափազանց ցածր է: Դա հիմնականում վերաբերում է ցորենին, անասնապահական ծագում ունեցող մթերքներին (բացառությամբ մանր եղջերավորների մսի և ձվի): Հետևաբար, պարենային անվտանգության մակարդակի բարձրացումը կարևորագույն գերակա խնդիր է:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Կբարձրանա գյուղատնտեսության բնագավառում տնտեսավարողների՝ բարձր վերարտադրության սերմերով ապահովվածության մակարդակը, որը բուսաբուծական արտադրանքի ծավալների ավելացման և արդյունավետության բարձրացման կարևոր երաշխիքներից մեկն է:<br>Կավելանա գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը, նախադրյալներ կստեղծվեն անասնապահական մթերքների արտադրության ծավալների ավելացման համար:<br>Ձկնաբուծության ճյուղում ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության ֆինանսավորմամբ իրականացվող ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման ծրագիրը հնարավորություն կտա ավելացնելու ձկան արտադրության ծավալները:<br>Ձկնաբուծության ճյուղում ժամանակակից տեխնոլոգիաների ներդրումը հնարավորություն կտա ավելացնելու ձկան արտադրության ծավալները:<br>Կիրականացվեն տոհմային և անասնաբուժական աշխատանքների բարելավման միջոցառումներ: |

| | |
|---|---|
| | Գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորման և զարգացման միջոցառումների իրականացումը կնպաստի գյուղատնտեսական ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործմանը, տնտեսավարողների գործունեության պայմանների բարելավմանը, ընդլայնված վերարտադրության ապահովմանը, գյուղատնտեսական արտադրության և սպասարկումների առավել արդյունավետ կազմակերպմանը: |
| 14. | **Անասնապահության մասնագիտացում ունեցող գյուղական համայնքներին տրամադրվող աջակցության ընդլայնման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Հանրապետության գյուղական համայնքներում լիարժեք չի օգտագործվում առկա ռեսուրսային ներուժը: Դա առաջին հերթին վերաբերում է արտադրական բնական ռեսուրսների՝ արոտների, խոտհարքների անբավարար օգտագործմանը: Վերջինիս հետևանքով ցածր են անասնապահության արդյունավետությունը և անասնապահական տնտեսությունների եկամուտների մակարդակը:<br>Ստեղծված իրավիճակը պահանջում է բնական ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացման և անասնապահության արդյունավետ կազմակերպման միջոցառումների շարունակում և դրանցում նոր մարզերի և համայնքների ընդգրկում: Վերջինս հնարավոր է պետական աջակցության ծրագրերով համակարգված քայլերի իրականացման արդյունքում:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Կապահովվի գյուղական համայնքների հեռագնա արոտների անցանելիությունը:<br>Հանրապետության մարզերի համայնքներում կիրականացվեն ստեղծված արոտօգտագործողների սպառողական կոոպերատիվների կարողությունների հզորացման միջոցառումներ, կստեղծվեն համապատասխան կադրերով և տեխնիկական միջոցներով հագեցված անասնաբուժական սպասարկման կենտրոններ, կիրականացվեն տոհմային և անասնաբուժական աշխատանքների բարելավման միջոցառումներ:<br>Հանրապետության այլ համայնքների ընդգրկման արդյունքում կընդլայնվի նման ուղղվածություն ունեցող ծրագրերի շրջանակը:<br>Արդյունքում կբարելավվի բնական կերահանդակների օգտագործման վիճակը: Վերջինս կնպաստի անասնապահության արդյունավետության բարձրացմանը, գյուղացիական տնտեսությունների եկամուտների ավելացմանը: |
| 15. | **Ձկան և մեղրի մեջ մնացորդային նյութերի հսկողության մոնիթորինգային ծրագրի շարունակման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Ծրագրի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի «Հայաստանի Հանրապետության 2015-2017 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» N 700-Ն որոշման պահանջի ապահովմամբ, ինչպես նաև ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված սննդամթերքի անվտանգության ռազմավարության և դրանից բխող գործողություններով սահմանված տեղական արտադրության մեղրի ու ձկան արտահանման առաջնահերթությամբ և դրան ուղղված գործողությունների կատարմանպահանջով:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ծրագրի իրականացումից ակնկալվում է Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացնել ձկան և մեղրի մեջ մնացորդային նյութերի հայտնաբերման միջազգային ընդունված հետազոտություններ, բացահայտել Հայաստանի Հանրապետությունում արտադրվող և սպառվող |

| | |
|---|---|
| | ձկան և մեղրի մեջ մի շարք նյութերի սահմանային թույլատրելի քանակությունները, դրանց գերազանցումները և չթույլատրված նյութերի կիրառումը, բարձրացնել տեղական արտադրության սննդամթերքի անվտանգության ապահովման ու սննդային գործոնով պայմանավորված, մարդկանց առողջության պաշտպանության մակարդակը, բարելավել վտանգավոր սննդամթերքի հայտնաբերման ներկա իրավիճակը, անմիջականորեն և հիմնավոր բացահայտել վտանգավոր սննդամթերքը, տեղական շուկան ու տեղական սպառողներին ապահովել սննդամթերքի անվտագության միջազգային ընդունված չափորոշիչներին համապատասխանող սննդամթերքով, ստեղծել ձկան և մեղրի անվտանգ արտադրության ու պետական հսկողության ապահովման միջազգային ընդունելի գործելակերպ, որը կապահովի տեղական սպառողների առողջության պաշտպանությունը սննդային վնասակար և վտանգավոր գործոններից, տեղական արտադրության համար ճանապարհի կբացի դեպի ԵԱՏՄ, եվրոպական և այլ շուկաներ՝ խթանելով տեղական արտադրության ծավալների աճը: |
| **Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն** | |
| 16. | **Տնտեսական աճի ապահովման ներքին հնարավորությունների ընդլայնման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Համաշխարհային տնտեսության աճի՝ վերջին տարիներին նկատվող համեստ ու դեռևս վերականգնողական մակարդակում գտնվող տեմպերը, թերևս, պահպանվելու միտում ունեն, գոնե կարճ ժամկետում, ինչի մասին վկայում են նաև միջազգային տարբեր կառույցների տարբեր հրապարակումներն ու փորձագիտական շրջանակները: Այդ իմաստով համընդհանուր տնտեսական ակտիվության գործում նշանակալի խթանիչ դերակատարում ունեցող՝ արագ զարգացող երկրների ու տարածաշրջանների հետ նույնպես մեծ հույսեր չեն կապում: Հաշվի առնելով Հայաստանի տնտեսության զարգացման առկա սահմանափակումները՝ արտաքին շուկաներում ստեղծված իրավիճակը տևական դառնալու պարագայում կարող է լրջագույն մարտահրավեր լինել՝ տնտեսական աճի սպասումների իրականացման հեռանկարների առումով:<br>Նման իրողությունները պահանջում են տնտեսական աճի մոդելի վերաձևակերպում՝ արտահանմանն ուղղված արդյունաբերական զարգացման ու տնտեսության միջազգային մրցունակության բարձրացման նպատակադրումներին զուգահեռ՝ երկրի ներքին հնարավորությունների բացահայտման, մոբիլիզացման ու արդյունավետ իրացման համակարգ կառուցելով: Այս տեսակետից արտադրողականության մակարդակի բարձրացման, տեխնոլոգիական արդիականացման, արտաքին շուկաներում տեղական արտադրանքի մրցունակության բարձրացման քաղաքականության համալիրում կարևորելով պետության դերը՝ ՀՀ կառավարությունը հանդես է գալիս որպես բարենպաստ միջավայրի երաշխավոր, ընդհանուր քաղաքականության պատասխանատու և գործընկեր՝ առաջարկելով շարունակաբար ընդլայնվող աջակցության գործիքակազմ:<br>Արդյունաբերական զարգացման և տնտեսության արդիականացման առաջնային շարժիչներից են տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացումն ու դրա արդյունքների համատարած կիրառումը տնտեսության բոլոր ճյուղերում: ՏՀՏ հասանելիությունը և մատչելիությունը բարձրացնելու, մրցունակ ՏՏ ընկերություններ ու կարողություններ զարգացնելու պետական ծրագրերը կոչված են ապահովելու այդ սպասելիքը: Որպես տնտեսության առավել ճկուն և նորարարություններ յուրացնելու տեսակետից առավել ընկալունակ հատված՝ փոքր և միջին ձեռնարկությունների զարգացմանն ուղղված նպատակային քաղաքականությունը համալրում է գերակա խնդրի լուծմանն առնչվող քայլերի փաթեթը: |

| | |
|---|---|
| | Զբոսաշրջության՝ որպես Հայաստանի համար լուրջ ներուժ ներկայացնող ոլորտի զարգացման տեսլականը հենվում է երկրի պատմամշակութային հարուստ ժառանգության, յուրահատուկ սովորույթների ու ավանդույթների, զբոսաշրջային արդյունքի ժամանակակից բազմաձևությամբ աշխարհին ներկայանալու չիրացված հնարավորությունների վրա: Նպատակ ունենալով համաշխարհային զբոսաշրջային շուկայում Հայաստանի մրցունակության բարձրացման և զբոսաշրջային այցելությունների դինամիկ աճ ապահովելու՝ երկրում զբոսաշրջության ոլորտի հետագա զարգացումն ապահովելու և որպես տնտեսության առանցքային ոլորտ կայացնելու նպատակով կարևորվում են հետևողական ջանքերը՝ ենթակառուցվածքների և տեղական տնտեսության զարգացման ապահովման համար:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br><br>Տնտեսության աճի ներքին հնարավորությունների ընդլայնման նպատակով նախատեսվում է բազմաոլորտ ու համալիր քաղաքականության իրականացմամբ իրագործել նպատակային ծրագրեր, մասնավորապես՝<br>1) արտահանման վրա հիմնված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված ծրագրերի իրականացում.<br>2) «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման ծառայություններ» 2016 թվականի ծրագրի իրականացում.<br>3) ՓՄՁ պետական աջակցության 2016 թվականի ծրագրի իրականացում.<br>4) Համաշխարհային բանկի Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման վարկային ծրագրի մեկնարկ:<br>Գերակա խնդրի լուծման արդյունքում ակնկալվում է ոչ միայն առանձին ոլորտների մասով նոր հնարավորությունների ստեղծման ու գործարար ակտիվության խթանման շոշափելի արդյունքներ ունենալ, այլև՝ կայուն հիմքեր ձևավորել հետագայում տնտեսական աճի դրական դինամիկա ունենալու տեսանկյունից: |
| 17. | **Հայաստանի ներդրումային հեղինակության բարելավման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br><br>Վերջին տարիներին Հայաստանում ներդրումները, այդ թվում՝ օտարերկրյա ուղղակի ներդրումները, դրսևորել են տատանողական դինամիկա, մասնավորապես, մինչճգնաժամային շրջանում գրանցվում էր ներդրումների աճ, ինչին հաջորդեց ներդրումների կտրուկ անկումը 2009 թվականի ճգնաժամի ընթացքում, իսկ հետագայում դրսևորվեց անկայուն դինամիկա: Մյուս կողմից, ՀՀ-ում անկախացումից ի վեր, չնայած «բաց դռների» քաղաքականության իրականացմանը, ներդրումային քաղաքականությանն առնչվող գրեթե ոչ մի փաստաթուղթ չի ընդունվել՝ բացառությամբ 1994 թվականին ընդունված «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքի, որը ներկայումս որոշակի վերանայման կարիք ունի: Այս պայմաններում ներդրումների և, հատկապես, ՕՈՒՆ-ի ավելացումը, ներդրումային գործունեության ակտիվացումը, ներդրումային միջավայրի բարելավումն ապահովելու նպատակով խիստ կարևորվում է, և անհրաժեշտ է համապատասխան |

| | |
|---|---|
| | տեսլականի ու հստակ գործողությունների ծրագրի առկայություն, ինչը հնարավորություն կընձեռի ունենալու հստակ պատկերացում ներդրումների հետ կապված խնդիրների, դրանց լուծումների և ներդրումային միջավայրի բարելավման միջոցառումների վերաբերյալ: Այդ նպատակով ՀՀ կառավարությունը հաստատել է ՀՀ ներդրումային քաղաքականության հայեցակարգը, որի միջոցառումների ծրագիրը հիմք է հանդիսանալու փուլ առ փուլ լուծելու նշված խնդիրները՝ համապատասխան ռազմավարությունների և միջոցառումների իրականացման միջոցով:<br>ՀՀ կառավարությունն Ասիական զարգացման բանկի աջակցությամբ նախաձեռնել է «Հայաստան. ներդրումային համաժողով-2016»-ի իրականացումը, որը կնպաստի օտարերկրյա ներդրումների հոսքերի աճին, ինչպես նաև մրցակցային առավելություն ունեցող հայկական արտադրանքների արտահանմանը և կներկայացնի Հայաստանի ներդրումային հնարավորություններն ու գործարար միջավայրի գրավչությունը: Ներդրումային համաժողովը բարենպաստ հարթակ կհանդիսանա անդրազգային կորպորացիաների, ներդրումային կազմակերպությունների, ֆինանսական կառույցների, բանկերի և հայաստանյան հանրային ու մասնավոր հատվածների ղեկավարների միջև հնարավոր արդյունավետ համագործակցություն նախաձեռնելու համար:<br>Տնտեսության արդիականացման և ներդրումային յուրահատուկ միջավայր ձևավորելու համար մեծապես կարևորվում է երկրի դիրքավորումը տեխնոլոգիական համընդհանուր արժեշղթաներում: Նշված նպատակի իրագործման հենքը գիտության նվաճումները տնտեսության մեջ ներդնելու գործընթացի հաջորդական փուլերի միջև անցումն ապահովելն է, որի համար տնտեսական լուրջ շարժառիթներ ստեղծելու անհրաժեշտություն կա: Գործընթացը երկրի զարգացման քաղաքականության առանցքումդիրքավորմանն է կոչված ազգային համակարգի բաղադրիչների զարգացումը:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br><br>– Հայաստանի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների 2016 թվականի ծրագրի իրականացում<br><br>– ՀՀ ներդրումային քաղաքականության հայեցակարգի և հայեցակարգից բխող միջոցառումների ժամանակացույցի իրականացում<br><br>– Միջազգային ներդրումային ֆորումի անցկացման համար անհրաժեշտ գործընթացների ապահովում<br><br>– Ազգային ինովացիոն համակարգի բաղադրիչների զարգացում |

| Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն | |
|---|---|
| 18. | **Հայաստանի Հանրապետության օդային տարածքում և օդանավակայաններում քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ԻԿԱՕ) բնութագրերի վրա հիմնված նավիգացիայի (PBN) կոնցեպցիայի ներդրման վերաբերյալ**<br><br>Հիմք ընդունելով 2010 թվականին կայացածքաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ԻԿԱՕ)-ի 37-րդ ասամբլեայի A37-11 բանաձևով ընդունված պահանջը և շարունակական արդիականացումը՝ բնութագրերի վրա հիմնված նավիգացիայի (PBN) կոնցեպցիայի ներդրման վերաբերյալ, ինչպես նաև աերոդրոմի շրջանում իրականացվող թռիչքների նավիգացիոն շեղումները նվազեցնելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել ապահովելու՝<br>1) ԻԿԱՕ-ի բնութագրերի վրա հիմնված նավիգացիայի (PBN) կոնցեպցիայի ներդրումը «Շիրակ» աերոդրոմում.<br>2) «Զվարթնոց» աերոդրոմի ԻԿԱՕ-ի բնութագրերի վրա հիմնված նավիգացիայի (PBN) կոնցեպցիայի վայրէջքային սխեմաների արդիականացումը.<br>3) ՀՀ օդային տարածքում շրջանային նավիգացիայի (ԱՐՆԱՎ/RNAV) թարմացումը:<br>ԻԿԱՕ-ի բնութագրերի վրա հիմնված նավիգացիայի (PBN) կոնցեպցիայի ներդրումը «Շիրակ» աերոդրոմում, «Զվարթնոց» աերոդրոմի ԻԿԱՕ-ի բնութագրերի վրա հիմնված նավիգացիայի (PBN) կոնցեպցիայի վայրէջքային սխեմաների արդիականացումը և ՀՀ օդային տարածքում շրջանային նավիգացիայի (ԱՐՆԱՎ/RNAV) թարմացումը նպատակաուղղված են թռիչքների անվտանգության մակարդակի բարձրացմանը:<br>Գերակա խնդրի լուծումը Հայաստանի Հանրապետությունում կապահովի միջազգային կազմակերպությունների կողմից սահմանված պահանջների համապատասխանեցումը:<br>Բնութագրերի վրա հիմնված նավիգացիայի (PBN) կոնցեպցիան պարունակում է մի շարք առավելություններ, որոնք թույլ են տալիս՝<br>1) կոմերցիոն տեսանկյունից ավելացնել թռիչքների արդյունավետությունը՝ նվազեցնելով ճանապարհի երկարությունը երթուղիով և մոտեցման ընթացքում.<br>2) բարձրացնել արտադրողականությունը՝ նվազեցնելով տարածական բաժանման հետագծերը.<br>3) բարձրացնել անվտանգության մակարդակը՝ նավիգացիոն ճշգրտության բարձրացմամբ.<br>4) կատարելագործել ժամանման սխեմաները՝ օդանավակայաններում բոլոր եղանակային պայմաններում և պահպանել խոչընդոտների անցման կարևորագույն բարձրությունների պահանջները՝ օդանավի թռիչքի օպտիմիզացված ուղիների միջոցով.<br>5) նվազեցնել ուշացումներն օդային տարածքում ու օդանավակայաններում՝ ներդնելով հանգուցային շրջաններում լրացուցիչ զուգահեռ երթուղիներ և լրացուցիչ մեկնման ու ժամանման կետեր.<br>6) նվազեցնել կարգավարական և թռիչքային անձնակազմերի աշխատանքային ծանրաբեռնվածությունը, քանի որ շրջանային նավիգացիայի ժամանակ օդանավն իրականացնում է թռիչք նախատեսված հետագծով՝ առանց կարգավարի միջամտության.<br>7) վերացնել անհրաժեշտությունը նոր ժամանման, մեկնման, մոտեցման ընթացակարգերի մշակման, երբ տեղադրվում են նոր նավիգացիոն համակարգեր, որը կապված է էական ծախսերի հետ.<br>8) նշված կոնցեպցիայի ներդրումն ուղղված է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության համակարգի «Հայաերոնավիգացիա» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական գործառույթների իրականացման որակի բարձրաց- |

| | |
|---|---|
| | մանը և թռիչքների անվտանգության մակարդակի բարելավմանը, որը բխում է ԻԿԱՕ-ի համապատասխան բնութագրերի վրա հիմնված կոնցեպցիայի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ներդրումից:<br>Այդ աշխատանքներն իրականացվելու են «Հայաէրոնավիգացիա» փակ բաժնետիրական ընկերության հաշվին, և ՀՀ պետական բյուջեից որևէ լրացուցիչ ծախսեր չեն պահանջվելու:<br>ԻԿԱՕ-ի բնութագրերի վրա հիմնված նավիգացիայի (PBN) կոնցեպցիայի ներդրման «Շիրակ» աերոդրոմում, «Զվարթնոց» աերոդրոմի ԻԿԱՕ-ի բնութագրերի վրա հիմնված նավիգացիայի (PBN) կոնցեպցիայի վայրէջքային սխեմաների արդիականացման և ՀՀ օդային տարածքում շրջանային նավիգացիայի (ԱՐՆԱՎ/RNAV) թարմացման արդյունքում Հայաստանի Հանրապետությունը կհանդիսանա ԻԿԱՕ-ի անդամ առաջին պետություններից մեկը, որն ամբողջովին կհամապատասխանի 37-րդ ասամբլեայի A37-11 բանաձևով ընդունված պահանջներին: |
| **Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն** | |
| 19. | **Հայաստանի Հանրապետության տարածքում սեյսմիկ վտանգի գնահատման հուսալիության բարձրացման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Հայաստանում սեյսմիկությունն ունի բարդ պատկեր, որը պայմանավորված է բազմաթիվ ակտիվ բեկվածքների և բլոկների առկայությամբ: Գտնվելով տեկտոնական սալերի բախման գոտում՝ այստեղ անընդհատ տեղի են ունենում լարումների կուտակում և լիցքաթափում: Նախապատրաստվելով հնարավոր ուժեղ երկրաշարժի՝ կարելի է արմատապես նվազեցնել նրա ծանր հետևանքները, թույլ չտալ, որ այն վերածվի աղետի: Այս պարագայում սեյսմիկ մշտադիտարկման ապահովումը Հայաստանի սեյսմիկ անվտանգության հիմնախնդիրներից է:<br>ՀՀ կառավարության 2012 թվականի մարտի 15-ի N 374-Ա որոշմամբ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Երկրաբանական գիտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ-ին ամրացված Գառնիի երկրաֆիզիկայի դիտարանը (ԳԵԴ) հանձնվել է ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության «Սեյսմիկ պաշտպանության արևմտյան ծառայություն» ՊՈԱԿ-ին: Գառնիի երկրաֆիզիկական դիտարանի թունելախորշում գրունտի ուժեղ շարժումների լոկալ ցանցի ստեղծումը կնպաստի Գառնիի ակտիվ խզվածքի հատվածում համալիր երկրաբանաերկրաֆիզիկական հետազոտությունների ընդլայնմանը:<br>Հաշվի առնելով Գառնիի երկրաֆիզիկական դիտարանի թունելախորշի առանձնահատուկ տեղակայվածությունը՝ առաջարկվում է ձեռք բերել 3 ժամանակակից թվային գրունտի ուժեղ շարժումների սարքեր և Գառնիի ակտիվ խզվածքի գոտում գրունտի տատանումների առանձնահատկություններն ուսումնասիրելու համար տեղադրել դիտարանի թունելախորշում՝ հետևյալ բաշխվածությամբ. երկուսը՝ հյուսիսից հարավ ուղղությամբ՝ 200 մ հեռավորության վրա, երրորդը՝ դրանց ուղղահայաց՝ 25 մ հեռավորության վրա:<br>Սեյսմիկ պաշտպանության ծառայության դիտացանցն արդիականացվելու է ԱՄՆ-ի երկրաբանական ծառայության (համաշխարհային սեյսմոլոգիական ցանցի (GSN) IRIS համակարգի Գառնիի կայանի դոնոր կազմակերպություն), Ռուսաստանի Դաշնության գիտությունների ակադեմիայի երկրաֆիզիկական ծառայության (երկրակեղևի դեֆորմացիաները գրանցող կայանի՝ դեֆորմոգրաֆի դոնոր կազմակերպություն) և Չեխիայի գիտությունների ակադեմիայի լեռնային և կառուցվածքային մեխանիկայի ինստիտուտի (երկրակեղևի թեքվածությունը գրանցող կայանի՝ թեքաչափի դոնոր կազմակերպություն) աջակցությամբ: |

| | |
|---|---|
| | 2. **Գներակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Խնդրի իրականացումը կմեծացնի ստացվող տվյալների ճշտությունը և կբացահայտի անոմալ դաշտերի նուրբ փոփոխությունները, որոնք սեյսմիկ վտանգի գնահատման տեսակետից խիստ կարևոր են:<br>Գառնիի երկրաֆիզիկայի դիտարանի վերազինումը հնարավորություն կտա նոր և ավելի հուսալի դիտարկումների հիման վրա գնահատելու ՀՀ տարածքի երկրակեղևի լարվածադեֆորմացիոն վիճակը, ուսումնասիրելու երկրաշարժերի առաջացման մեխանիզմները, անջատելու երկրաշարժերի նախանշանները և, որպես հեռահար կարևորագույն գիտական և սոցիալական խնդիր, կանխատեսելու ուժեղ երկրաշարժերը: |
| 20. | **Համայնքների խոշորացման պիլոտային ծրագրերի շարունակականության ապահովման վերաբերյալ**<br><br>1. **Գներակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>2015 թվականին մեկնարկեց համայնքների խոշորացման գործնական փուլը՝ մայիսի 17-ին ՀՀ Լոռու մարզի Թումանյանի, ՀՀ Սյունիքի մարզի Տաթևի, ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի համայնքային փնջերում անցկացվեցին տեղական հանրաքվեներ, որոնց արդյունքները թույլտվեցին ենթադրել, որ անհրաժեշտ է ապահովել համայնքների խոշորացման գործընթացի շարունակականությունը, մասնավորապես, մշակել կիրարկումն ապահովող իրավական ակտերի նախագծեր: ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության կողմից մշակվել և ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել«Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծային փաթեթը:<br>2. **Գներակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>2016 թվականին նախատեսվում է շարունակել համայնքների խոշորացման պիլոտային ծրագրերի իրականացումը: Յուրաքանչյուր ծրագրի իրականացման ընթացքում անհրաժեշտու-թյուն է առաջանալու մշակելու խոշորացման գործընթացի կիրարկումն ապահովող անհրաժեշտ իրավական ակտեր, մասնավորապես, «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ նախատեսող իրավական ակտեր: |
| | **Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն** |
| 21. | **Սևանա լճում և նրա ջրահավաք ավազանում ձկան ու խեցգետնի պաշարների հաշվառման աշխատանքների իրականացման վերաբերյալ**<br><br>1. **Գներակա խնդրի անհրաժեշտությունը** (նպատակը)<br>Վերջին տարվա ընթացքում հիդրոակուստիկ դիտարկումները ցույց են տվել, որ Սևանա լճում տեղի է ունեցել սիգի զանգվածային բազմացում, որի արդյունքում լճում հայտնվել է բեղուն սերունդ, իսկ օտարածին տեսակ կարասը և խեցգետինը, որոնք հայտնվել են լճում շուրջ 30 տարի առաջ, շարունակում են իրենց զարգացումն ու աղապտացումը լճի պայմաններին: Սևանա լճի էկոհամակարգի կայուն զարգացման և իրավիճակը վերահսկելու համար անհրաժեշտ է ներկա վիճակի արդյունագործական պաշարների՝ սիգի, կարասի ու խեցգետնի պաշարների հաշվառման |

և գնահատման աշխատանքների իրականացում: Լճում այդ տեսակների պոպուլյացիայի չափա-տարիքային, սեռական կազմի ու թվի հետազոտությունների արդյունքում ստացված տվյալների հիման վրա հնարավոր կլինի համապատասխան միջոցառումներ մշակել՝ ձկան պաշարների օգտագործման ու Սևանա լճի էկոլոգիական հավասարակշռությունը վերականգնելու և պահպանելու միջոցառումների մշակման համար: Սևանա լճի ջրահավաք ավազանում էնդեմիկ ձկների վերարտադրության ապահովման համար անհրաժեշտ է կատարել ուսումնասիրություններ Սևանալճում և Սևանա լիճ թափվող հիմնական գետերում:

«Սևանա լճում և նրա ջրահավաք ավազանում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառման աշխատանքների իրականացում» ծրագրի իրականացումը նախատեսված է Հայաստանի Հանրապետության 2016 թ. պետական բյուջեի 05.04.01. «Սևանա լճում և նրա ջրահավաք ավազանում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառման ծառայություններ» հոդվածով ամրագրված՝ 7624.3 հազ. դրամ գումարի չափով, ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 9-ի «Սևանա լճի արդյունագործական և էնդեմիկ ձկնատեսակների վերականգնման ծրագիրը հաստատելու մասին» N 1755-Ն որոշմամբ հաստատված միջոցառումների ծրագրի 1-ին և 2-րդ կետերով: Ֆինանսավորման աղբյուրը ՀՀ պետական բյուջեն է:

2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**

Սևանա լճի ջրահավաք ավազանի կենդանական ռեսուրսների հաշվառման նպատակով անհրաժեշտ է շարունակել «Սևանա լճում և նրա ջրահավաք ավազանում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառման աշխատանքների իրականացում» ծրագիրը, այդ թվում՝

• Սևանա լճի ձկների (սիգ, կողակ, լճածածան, իշխան) ներկա վիճակի, տարածական տեղաբաշխման, կենսաբանական և էկոլոգիական հատկանիշների բացահայտումը՝ յուրաքանչյուր տարին մեկ անգամ.

• Սևանա լճի խեցգետնի պաշարների ներկա վիճակի, տարածական տեղաբաշխման, կենսաբանական և էկոլոգիական հատկանիշների բացահայտումը՝ յուրաքանչյուր տարին մեկ անգամ:

«Սևանա լճում և նրա ջրահավաք ավազանում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառման աշխատանքների իրականացում» ծրագիրը բաղկացած է 3 ենթաբաժնից՝

1) Սևանա լճում ձկան պաշարների հաշվառման ծառայություններ (հաշվետվություն)՝ մեկ հատ. հաշվետվության կազմում՝ հետևյալ տվյալների ընդգրկմամբ՝

- սիգի արդյունագործական պաշարների որոշում
- սիգի զիրացող վտառի գնահատում
- սիգի ձվադրող վտառի գնահատում
- սիգի գծային և քաշային աճը
- սիգի որսաչափի գնահատում
- կարասի արդյունագործական պաշարների որոշում
- կարասի բեղունության որոշում
- կարասի ձվադրավայրերի և ձվադրման ժամկետների որոշում
- կարասի գծային, քաշային աճիորոշում
- կարասի որսաչափի գնահատում

| | |
|---|---|
| | • իշխանի վտառի գնահատում:<br>Հաշվետու ժամանակահատվածում ձեռք բերված բոլոր ելակետային տվյալների միջանկյալ և վերջնական հաշվետվությունները ներկայացնելը.<br>2) Սևանա լճում խեցգետնի պաշարների հաշվառման ծառայություններ (հաշվետվություն)՝ մեկ հատ.<br>հաշվետվության կազմում՝ հետևյալ տվյալների ընդգրկմամբ՝<br>• խեցգետնի արդյունագործական պաշարների որոշում<br>• խեցգետնի սննդառությունը<br>• խեցգետնի սեզոնային բաշխվածությունն ըստ խորության և տարածքի<br>• խեցգետնի գծային և քաշային աճն ըստ տարիքաչափսային խմբերի<br>• խեցգետնի բեղունությունը<br>• խեցգետնի որսաչափի գնահատում:<br>Հաշվետու ժամանակահատվածում ձեռք բերված բոլոր ելակետային տվյալների միջանկյալ և վերջնական հաշվետվությունները ներկայացնելը.<br>3) Սևանա լճի ջրահավաք ավազանի գետերում ձկան և խեցգետնի կենսամիջավայրի պայմանների բացահայտման ծառայություններ (հաշվետվություն)՝ մեկ հատ.<br>հաշվետվության կազմում՝ հետևյալ տվյալների ընդգրկմամբ՝<br>Ձկնագետ, Գավառագետ, Լիճք, Արգիճի, Վարդենիկ, Մակենիս և Մասրիկ գետերում՝<br>• Սևանա լճի ջրահավաք ավազանի գետերի ձկների տեսակային կազմի որոշում.<br>էնդեմիկ ձկնատեսակների (գեղարքունի, ամառային իշխան, կողակ) ձվադրավայրերի վիճակի գնահատում.<br>• էնդեմիկ ձկնատեսակների (գեղարքունի, ամառային իշխան, կողակ) ձվադրման գնացող ժամկետների, քանակի, կենսաբանական վիճակի որոշում.<br>• էնդեմիկ ձկնատեսակների (գեղարքունի, ամառային իշխան, կողակ) ձվադրմանը խոչընդոտող պայմանների որոշում: |
| 22. | **Էկոտուրիզմի տեղեկատվական կենտրոնի ստեղծման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br><br>ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների (այսուհետ՝ ԲՀՊՏ) հարուստ կենսաբազմազանությունը, բազմաբնույթ գեղատեսիլ լանդշաֆտային տիպերը, բնապատմական ժառանգությունը և բազմաթիվ պատմամշակութային հուշարձանների առկայությունը հնարավորություն են տալիս կազմակերպելու զբոսաշրջության տարբեր ձևեր, համակցված տուրեր և արշավներ: ԲՀՊՏ-ներում և հարակից տարածքներում առանձին տեղ է զբաղեցնում առողջարանային զբոսաշրջությունը, ինչը հիմնված է առողջարարական և կլիմայական պաշարների վրա:<br>Զբոսաշրջության նախընտրելի ձևերն են էկոտուրիզմը, էթնոտուրիզմը, ագրոտուրիզմը, պատմամշակութային և գիտաճանաչողական զբոսաշրջությունը, որոնք կարող են զուգակցվել վայրի կենդանական, բուսական աշխարհի դիտարկման (wildlife watching, birdwatching) և այլ տուրերի հետ: Էկոտուրիզմի զարգացումն արդյունավետ միջոց է պահպանվող տարածքների և տեղական բնակչության համար լրացուցիչ և կայուն օգուտների ապահովման համար:<br>Հայաստանի Հանրապետության ԲՀՊՏ-ներում զբոսաշրջությունը գործնական հիմքերի վրա դնելու նպատակով սկզբնական փուլում անհրաժեշտ է ձևավորել համապատասխան ենթակառուցվածքներ, այդ թվում՝ ճանապարհային ցանց, ինչը հասանելի և մատչելի կդարձնի զբոսաշրջային պաշարները:<br>Հայաստանի Հանրապետության ԲՀՊՏ-ում զբոսաշրջային ենթակառուցվածքների ներկա վիճակը հնարավորություն չի ընձեռում ավելի մեծ թվով և բարձր վճարողունակությամբ զբոսա- |

| | |
|---|---|
| | շրջիկների սպասարկելու: Զբոսաշրջության կայուն զարգացման և զբոսաշրջային արդյունքի որակի շարունակական ապահովման համար անհրաժեշտ է ձևավորել և զարգացնել ոլորտն սպասարկող ենթակառուցվածքները, այդ թվում՝ «Հայաստանի բնության պետական թանգարան» ՊՈԱԿ-ի ենթակայության տակ և տարածքի վրա ստեղծելով Էկոտուրիզմի տեղեկատվական կենտրոն՝ միջազգային կազմակերպության ֆինանսավորմամբ:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br><br>Գերակա խնդրի լուծման արդյունքում կստեղծվի Հայաստանի Հանրապետության տարածքում բնական էկոհամակարգերի, այդ թվում՝ բնության հատուկ պահպանվող տարածքների զբոսաշրջային գրավչություն ունեցող պաշարների վերաբերյալ տեղեկատվական բանկ, և կբարձրանա բնակչության իրազեկությունը:<br>Կիրականացվեն բնական էկոհամակարգերում, այդ թվում՝ բնության հատուկ պահպանվող տարածքներում էկոտուրիզմի զարգացմանը նպաստող աշխատանքներ:<br>Կավելանա բնական էկոհամակարգերում, այդ թվում՝ բնության հատուկ պահպանվող տարածքներում էկոտուրիզմի և ռեկրեացիոն գործունեության զարգացմանը նպաստելու նպատակով տեղեկատվական նյութերի տարածումը, և կապահովվեն բնական էկոհամակարգերում, այդ թվում՝ բնության հատուկ պահպանվող տարածքներում էկոզբոսաշրջության զարգացման համար տեղական ու արտասահմանյան զբոսաշրջային կազմակերպությունների հետ կապերի հաստատումը և համագործակցությունը, ինչպես նաև էկոտուրիզմի վերաբերյալ գովազդի կազմակերպումը, գիտական ու գիտաճանաչողական գրականության և տեղեկատվական նյութերի պատրաստումն ու հրատարակումը: |
| | **Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն** |
| 23. | **Քաղաքաշինության ոլորտում ներդրումային միջավայրի գրավչության խթանման, կառուցապատման ընթացակարգերի պարզեցման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Նախարարության գերակա խնդիրների թվում նշված ծրագրի ներառումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում գրավիչ քաղաքաշինական ներդրումային միջավայրի շարունակական բարելավման միջոցառումների իրականացման միջոցով, եվրոպական ու միջազգային չափորոշիչներին համահունչ՝ կառուցապատման ներդրումային ծրագրերի ներգրավման, խրախուսման և արդյունավետ իրագործման անհրաժեշտությամբ:<br>Ծրագիրը նպատակաուղղված է պետություն-մասնավոր հատված գործընկերության զարգացմանը նպաստող մեխանիզմերի կատարելագործմանը՝ խուսափելով կառուցապատման գործընթացներում լրացուցիչ բեռ առաջացնող կարգավորումներից, մասնավորապես, ողջամտորեն պարզեցված պայմաններով (ըստ օբյեկտների ռիսկայնության աստիճանի) կառուցապատման թույլտվական համակարգի կատարելագործմանը:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Կառուցապատման ներդրումային ծրագրերի իրագործման արդյունավետությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է կիրառել համալիր լուծումներ՝ դրանց ծավալների աճը և շարունակական իրականացումը երաշխավորելու համար:<br>Մասնավորապես, գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվում է նախատեսել ՀՀ քաղաքաշինական պետական տեսչության պարտադիր ներգրավվածությունն ավարտված շինարարությունն |

| | |
|---|---|
| | ընդունող համաձնաժողովներում՝ ելնելով շինարարության օբյեկտների՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ռիսկայնության աստիճանի դասակարգումից:<br>Միևնույն ժամանակ, հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված նորմերը, անհրաժեշտություն կառաջանա պարզեցնելու շինարարության իրականացման և տեխնիկական հսկողության լիցենզիաների տրամադրման կարգերը, ինչպես նաև, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքով սահմանված նորմերին համապատասխան, հստակեցնելու քաղաքաշինական համալիր փորձաքննության իրականացման կարգը:<br>Քաղաքաշինական թույլտվությունների էլեկտրոնային մշակման և մեկ պատուհանից տրամադրման՝ ներկայումս ավարտված ծրագրին լիարժեք համապատասխանությունն ապահովելու նպատակով նաև կճշգրտվի կառուցապատման էլեկտրոնային թույլտվությունների տրամադրման կարգը (համաշխարհային բանկի կողմից տրամադրված դրամաշնորհի (ԻԶՀ No. TF012782) միջոցներով): |
| 24. | **Հայաստանի Հանրապետության համայնքներում քաղաքաշինական ծրագրային (տարածական պլանավորման) փաստաթղթերի համակարգի՝ դրանց մշակման և հաստատման գործառույթների օպտիմալացման ու պարզեցման նոր լծակների ամրագրման միջոցով համալրման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Նախարարության գերական խնդիրների թվում նշված ծրագրի ներառման անհրաժեշտությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության համայնքներում տարածական պլանավորման փաստաթղթերի լիարժեք բազայի ձևավորման, դրանց մշակման և հաստատման գործառույթների օպտիմալացման ու պարզեցման լծակների ամրագրման անհրաժեշտությամբ:<br>Հայաստանի Հանրապետության համայնքների զգալի մեծամասնությունն ապահովված չէ քաղաքաշինական ծրագրային (տարածական պլանավորման) փաստաթղթերով, ինչի հետևանքով բազմաթիվ համայնքներում կառուցապատումը կրում է չկանոնակարգված բնույթ, որն էլ իր հերթին սուբյեկտիվ որոշումների ընդունման հնարավորություն է ստեղծում:<br>Ծրագրի իրականացումը կպարզեցնի և կօպտիմալացնի համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման գործընթացը, կապահովի համայնքների ռազմավարական զարգացման պլանավորումը:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ակնկալվում է ապահովել Հայաստանի Հանրապետության համայնքներում տարածական պլանավորման փաստաթղթերի առկայությունը՝ կիրառելով նաև միկրոտարածաշրջանային փաստաթղթերի մշակման շրջանակներում խնդրո առարկա հարցերի լուծման հնարավորությունը, կանոնակարգել մինչև 15000 բնակիչ ունեցող համայնքների խմբերի (միկրոտարածաշրջանային միավորների) համար գլխավոր հատակագծերի և պարզեցված գոտևորման նախագծերի (հողօգտագործման ու կառուցապատման կանոնների) մշակման ու հաստատման գործառույթները, մեկ ընդհանուր՝ համակցված միկրոտարածաշրջանային տարածական պլանավորման փաստաթղթում դրանք ամփոփելու միջոցով:<br>Տարածական պլանավորման նոր լծակների կիրառումն էապես կնվազեցնի նշված փաստաթղթերի մշակման համար համայնքների կողմից տրամադրվող ֆինանսական միջոցները, ինչը ևս խթան կհանդիսանա Հայաստանի Հանրապետության համայնքները տարածական պլանավորման փաստաթղթերով ապահովելու հիմնախնդրի արդյունավետ լուծման համար: |

| | |
|---|---|
| 25. | **Կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Նախարարության գերական խնդիրների թվում նշված ծրագրի ներառման անհրաժեշտությունը պայմանավորված է պետություն-մասնավոր հատված համագործակցությամբ՝ Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման ներդրումային նախաձեռնությունների իրագործման աշխատանքները համակարգելու անհրաժեշտությամբ:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվում է մշակել համապատասխան տարածքների կառուցապատման հայեցակարգեր և ներդրումային փաթեթներ՝ ներառյալ նշված տարածքների ծավալատարածական և գործառութային համալիր լուծումները, համակարգել ներդրողների հետ բանակցային գործընթացները:<br>Կառուցապատման ներդրումային ծրագրերի իրագործման աշխատանքների հետևողական համակարգումն էական ազդեցություն կունենա այդ ծրագրերիբնականոն ընթացքի և շարունակականության ապահովման վրա: |
| 26. | **Շինարարական աշխատանքների արժեքի գնագոյացման նոր մեթոդաբանության մշակման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 23-ի N 879-Ն որոշմամբ հաստատվել է գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգը: Կարգը կազմվել է 1994-1995 թվականների մեթոդաբանության հիմքով, երբ դեռևս բացակայում էին շուկայական հարաբերությունները: Ներկայումս շինարարական աշխատանքների արժեքը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով 1984 թվականի նորմատիվ բազան, այդ թվում՝ աշխատավարձի և մեքենամեխանիզմների շահագործման արժեքը հաշվարկվում է նախկինում գոյություն ունեցող գներով՝ կիրառելով համապատասխան գործակիցներ: Ներկայումս գործող՝ նշված կարգով շինմոնտաժային աշխատանքների նախահաշվով նախատեսված ծախսերի և փաստացի ծախսերի միջև առկա են անհամապատասխանություններ: Նոր մեթոդաբանության մշակման նպատակն է շինարարական աշխատանքների արժեքը գնագոյացման արդի պահանջներին համապատասխանեցնելը:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծմամբ ակնկալվում է ունենալ շինմոնտաժային աշխատանքների իրատեսական արժեքը: |
| **Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե** | |
| 27. | **Հայաստանի Հանրապետությունում գույքահարկի և հողի հարկի** 2017-2019 **թվականների հարկման բազաների ձևավորման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջների համաձայն՝ անշարժ գույքի կադաստր վարող լիազոր մարմնի կողմից 2016 թվականի հուլիսի 1-ի դրությամբ հաշվառված տվյալներով կգնահատվեն (կվերագնահատվեն) գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող շենքերը, շինությունները՝ հաշվի առնելով շենքերի, շինությունների մաշվածությունը (շահագործման |

| | |
|---|---|
| | տնօրինություն) բնութագրող գործակիցները՝ 2016 թվականի դրությամբ, որի արդյունքում կձևավորվի Հայաստանի Հանրապետության գույքահարկի 2017-2019 թթ. հարկման բազան:<br>«Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի պահանջների համաձայն՝ անշարժ գույքի կադաստր վարող լիազոր մարմնի կողմից 2016 թվականի հուլիսի 1-ի դրությամբ առկա հաշվառման տվյալների հիման վրա կգնահատվեն (կվերագնահատվեն) հողի հարկով հարկվող օբյեկտ համարվող հողամասերը, որի արդյունքում կձևավորվի Հայաստանի Հանրապետության հողի հարկի 2017-2019 թթ. հարկման բազան:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>ՀՀ կառավարության 2003 թ. մայիսի 22-ի N 641 որոշմամբ հաստատված կարգի 2.3-րդ կետի «ա» ենթակետի և ՀՀ կառավարության 2007 թ. ապրիլի 19-ի N 465 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ կետի 1-ին ենթակետի պահանջների համաձայն՝ 2016 թվականի հուլիսի 1-ի դրությամբ գնահատման (վերագնահատման) արդյունքում ձևավորված գույքահարկի և հողի հարկի 2017-2019 թթ. հարկման բազաները կտեղադրվեն ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների համար հասանելի ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքում՝ սահմանված ամփոփ ցուցակների ձևատեսքով, որը տեղական ինքնակա-ռավարման մարմիններին հնարավորություն կընձեռի հաշվառելու և գանձելու 2017-2019 թթ. գույքահարկն ու հողի հարկը: |
| 28 | **Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների (շահառուների) համար Երևան քաղաքում բազային երկրատեղեկատվական համակարգի ներդրման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Սույն ծրագրի նպատակը Երևան քաղաքում ժամանակակից պահանջները բավարարող բազային երկրատեղեկատվական միասնական համակարգի ներդրումն է: Երևան քաղաքում ներդրվող բազային երկրատեղեկատվական համակարգը հիմք է հանդիսանալու գերատեսչական տարբեր բնագավառների, այդ թվում՝ քաղաքաշինական, բնապահպանական, արդյունաբերական, անշարժ գույքի կադաստրի, տարածքների պլանավորման, հողերի օգտագործման և գոտևորման սխեմաների կազմման, գույքահարկի և գնահատման բազաների ճշգրտման, վարչական ու տնտեսական գործունեության, անտառատնտեսության, արտակարգ իրավիճակների ժամանակ օպտիմալ և օպերատիվ որոշումների ընդունման, համայնքի ու առանձին տարածքների զարգաց-ման, օպտիմալ պլանավորման և այլ բնագավառների խնդիրների լուծման համար:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ծրագրի իրականացման արդյունքում կունենանք՝<br>1) շահառուների միջև փոխադարձ կապն ապահովելու և փոփոխությունները սահմանված կարգով իրականացնելու, բոլորի կողմից ստեղծված բազայից օգտվելու նպատակով բազային երկրատեղեկատվական համակարգի ներդրման ու վարման համար ծրագրային փաթեթի ձեռքբերում.<br>2) բազային և թեմատիկ ԵՏՀ-ի համար տվյալների շտեմարանի ստեղծում և ծրագրավորման աշխատանքներ.<br>3) նորմատիվ իրավական բազայի ստեղծում: |

**Առաջին տարում կունենանք՝**

1) բազային երկրատեղեկատվական համակարգի ստեղծման ու վարման համար ծրագրային փաթեթի ձեռքբերում.

2) բազային ԵՏՀ-ի համար տվյալների նույնականացում, համակցում՝ ըստ համայնքների, տեղափոխում նոր ծրագրային միջավայր.

3) բազային և թեմատիկ երկրատեղեկատվական համակարգերի ստեղծման ու վարման համար համապատասխան սերվերների և տվյալների պահոցի ձեռքբերում.

4) բազային երկրատեղեկատվական համակարգի թվային պայմանական նշանների մշակում և էլեկտրոնային դասակարգչի ստեղծում.

5) բազային և թեմատիկ ԵՏՀ-ի ստեղծման և ներդրման համար խորհրդատվական ծառայություններ.

6) ԵՏՀ-ի ստեղծման և վարման համար կադրերի ուսուցում.

7) Երևան քաղաքի բազային ԵՏՀ-ի քարտեզագրական հիմքերի տեղափոխումը WGS-84 կոորդինատային համակարգի UTM պրոյեկցիա.

8) բազային երկրատեղեկատվական քարտեզների և անշարժ գույքի տեղեկատվական համակարգի տվյալների փոխանակման կարգի մշակում, ծրագրային ապահովվածության ստեղծում.

9) երկրատեղեկատվական համակարգի ստեղծման և ներդրման համար անհրաժեշտ նորմատիվ իրավական ակտերի ստեղծում:

Աշխատանքների գումարն առաջին տարում կկազմի 554211000 դրամ:

**Երկրորդ տարում կունենանք՝**

1) բազային ԵՏՀ-ի համար տվյալների համար ծրագրավորման աշխատանքներ.

2) բազային երկրատեղեկատվական համակարգի թվային պայմանական նշանների մշակում և էլեկտրոնային դասակարգչի ստեղծում.

3) բազային և թեմատիկ ԵՏՀ-ի ստեղծման և ներդրման համար խորհրդատվական ծառայություններ.

4) ԵՏՀ-ի ստեղծման և վարման համար կադրերի ուսուցում.

5) Երևան քաղաքի բազային ԵՏՀ-ի քարտեզագրական հիմքերի տեղափոխումը WGS-84 կոորդինատային համակարգի UTM պրոյեկցիա.

6) բազային երկրատեղեկատվական քարտեզների և անշարժ գույքի տեղեկատվական համակարգի տվյալների փոխանակման կարգի մշակում, ծրագրային ապահովվածության ստեղծում.

7) երկրատեղեկատվական համակարգի ստեղծման և ներդրման համար անհրաժեշտ նորմատիվ իրավական ակտերի ստեղծում.

8) բազային երկրատեղեկատվական համակարգի տեղեկատվական բանկի ստեղծման, պահպանման, թարմացման, տեղեկատվության փոխանակման և տրամադրման կարգի մշակում:

Աշխատանքների գումարը երկրորդ տարում կկազմի 135200000 դրամ:

| | |
|---|---|
| | **Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե** |
| 29. | **Հայկական ԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարաձգման 1-ին փուլի լիցենզավորման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Հայկական ատոմային էլեկտրակայանի N 2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետը լրանում է 2016 թվականին: Էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարաձգման աշխատանքները պետք է իրականացվեն երկու փուլով՝ համաձայն ՀՀ կառավարության 2012 թ. օգոստոսի 23-ի «Հայկական ԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի շահագործման նախագծայինժամկետի երկարացման նկատմամբ պահանջները հաստատելու մասին» N 1085-Ն որոշման:<br>Նշված աշխատանքների կատարման ընթացքում ատոմային էներգիայի օգտագործման բնագավառը կարգավորող մարմինը (այսուհետ՝ կարգավորող մարմին) 1-ին փուլի լիցենզավորման ընթացքում՝<br>1) հավանություն է տալիս շահագործող կազմակերպության կողմից ներկայացված համալիր հետազոտման ենթարկվող էներգաբլոկի անվտանգության I, II և III դասերի տարրերի ցանկին.<br>2) վերլուծում և գնահատում է համալիր հետազոտման աշխատանքների ծրագրերը.<br>3) վերլուծում և գնահատում է շահագործող կազմակերպության կողմից կարգավորող մարմին ներկայացված 1-ին փուլի աշխատանքների արդյունքներն ամփոփող փաստաթղթերը՝<br>ա. էներգաբլոկի համալիր հետազոտման մասին հաշվետվությունը,<br>բ. ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի իրավական ակտերի պահանջներից էներգաբլոկի նախագծի և փաստացի վիճակի շեղումների վերլուծության մասին հաշվետվությունը,<br>գ. շահագործման լրացուցիչ ժամկետին էներգաբլոկի նախապատրաստման ծրագիրը.<br>4) հավանություն է տալիս 1-ին փուլի աշխատանքների արդյունքներին կամ շահագործող կազմակերպություն է ներկայացնում լրացուցիչ աշխատանքների իրականացման պահանջ:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Կարգավորող մարմնի համաձայնության հիման վրա հաստատվում է էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարաձգման տեխնիկական հնարավորությունը, և շահագործող կազմակերպությունն իրավունք է ստանում իրականացնելու էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման 2-րդ փուլի աշխատանքները: Տեխնիկական հնարավորություններն անբավարար լինելու դեպքում շահագործող կազմակերպությունն ընդունում է որոշում լրացուցիչ հետազոտություններ իրականացնելու կամ էներգաբլոկը շահագործումից հանելու վերաբերյալ: |
| | **Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե** |
| 30. | **Ջրամատակարարման տնողության աստիճանական ավելացման, ջրի կորուստների՝ շուրջ 7-10 տոկոսով կրճատման, Արմավիր և Մեծամոր քաղաքների համար կեղտաջրերի մաքրման կայանների կառուցման նախապատրաստական աշխատանքների իրականացման, ջրամատակարարման ու ջրահեռացման ոլորտներում շուրջ 300 կմ ջրագծերի և կոյուղագծերի վերանորոգման ու կառուցման աշխատանքների իրականացման, Արփա-Սևան թունելի առանձին վթարված հատվածների վերականգնման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի անհրաժեշտությունը պայմանավորված է հանրապետության մի շարք քաղաքների և գյուղական բնակավայրերի ջրամատակարարման բարելավմամբ, մատակարարվող խմելու ջրի որակի ապահովմամբ, կայուն և հուսալի ջրամատակարարմամբ, ջրի կորուստների կրճատմամբ, |

| | |
|---|---|
| | ջրամատակարարման տնտեսության աստիճանական ավելացմամբ, նոր վարկային ծրագրերի ներգրավման շուրջ բանակցությունների վարմամբ:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվում են ջրամատակարար կազմակերպությունների կողմից սպասարկվող տարածքներում հուսալի և անվտանգ խմելու ջրի մատակարարման հասանելիության ապահովում, բնակավայրերի ջրամատակարարման ներդրումային ծրագրերի մշակում և իրականացում:<br>Գործող վարկային ու դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում կիրականացվեն մի շարք քաղաքային և գյուղական բնակավայրերի ջրամատակարարման բարելավման, կոյուղաջրերի մաքրման կայանների շինարարական աշխատանքներ: Արփա-Սևան թունելի վերականգնման վարկային ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել գետերից՝ Սևանա լճի մակարդակի բարձրացման և բնապահպանական կայունության պահպանման նպատակով Սևանա լիճ ջուր տեղափոխող Արփա-Սևան հիդրոհամակարգային թունելի որոշ հատվածների վերականգնումը, վերանորոգումը և շինարարությունը: |
| 31. | **Ջրամբարաշինության (Վեդի, Կապս, Եղվարդ, Մաստարա) և ենթակառուցվածքների արդիականացման ծրագրերի նախապատրաստման վերաբերյալ**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Նոր ջրամբարների շինարարության և առկա ենթակառուցվածքների արդիականացումը ջրային տնտեսության ոլորտում կենսական նշանակություն ունի՝ կապված ջրային ռեսուրսների կուտակման, արդյունավետ բաշխման, ինչպես նաև համակարգի ընդհանուր շահագործման հետ:<br>Ջրամբարների և առկա ենթակառուցվածքների արդիականացման նպատակով անհրաժեշտ է համապատասխան դոնոր կազմակերպությունների հետ նոր ներդրումային ծրագրերի իրականացման շուրջ վարել բանակցություններ:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ջրամբարաշինության միջոցով հնարավորություն կստեղծվի ապահովելու ոռոգման համակարգերի սպասարկման տարածքում ընդգրկված և լրացուցիչ ոռոգելի հողերի ջրամատակարարման համար անհրաժեշտ ջրի քանակը: Միաժամանակ՝ նշված գերակա խնդրի լուծումն անհրաժեշտ նախադրյալներ կստեղծի ջրային համակարգերի օգտագործման արդյունավետության բարձրացման և կայուն զարգացման համար: |
| 32. | **«Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի օգտագործման իրավունքը վարձակալությամբ փոխանցելու գործընթացի իրականացման՝ վարձակալի ընտրության վերաբերյալ**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի անհրաժեշտությունը պայմանավորված է ջրային տնտեսության ոլորտում պետություն-մասնավոր հատված գործընկերության զարգացմանն ուղղված ջրային համակարգերի կառավարման արդյունավետության հետագա բարձրացմամբ, ջրային ոլորտի հետագա զարգացման ռազմավարական ծրագրերի մշակմամբ: Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 49-րդ հոդվածով սահմանվում են ջրային համակարգի օգտագործման իրավունքի փոխանցման ձևերը: Խմելու ջուր մատակարարող կազմակերպությունների կողմից սպասարկվող ջրային |

| | |
|---|---|
| | համակարգերի օգտագործման իրավունքի փոխանցման ձևի որոշումը և հետագա գործընթացի կազմակերպումը հնարավորություն կընձեռեն ապահովելու ջրային համակարգում մասնավոր կազմակերպման շարունակականությունը:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Խմելու ջուր մատակարարող կազմակերպությունների մասով հնարավոր կլինի ջրային համակարգերի օգտագործման իրավունքի փոխանցման շարունակման գործընթացը: Առաջարկվող լուծումները հնարավորություն կտան նպաստելու բաժանորդներին մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը, հուսալիության ապահովմանը, ջրամատակարար ընկերությունների ֆինանսական կայունությանը:<br>Միաժամանակ՝ նշված գերակա խնդիրը նպատակաուղղված է ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտում իրականացվող բարեփոխումների շարունակմանը, ջրային համակարգերի կառավարման գործում մասնավոր հատվածի հետ համագործակցության խորացմանը և սպառողներին մատուցվող ջրամատակարարման ու ջրահեռացման ծառայությունների որակի և արդյունավետության բարձրացմանը: |
| **Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն** | |
| 33. | **Երիտասարդական հասարակական կազմակերպությունների կարողությունների զարգացմանն աջակցության, մասնակցային գործընթացների խթանման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Երիտասարդական պետական քաղաքականության հիմնական սկզբունքներից է հասարակական կյանքի բոլոր ոլորտներում որոշումների ընդունման գործում երիտասարդների, երիտասարդական ակտիվ խմբերի, ինչպես նաև երիտասարդական հասարակական կազմակերպությունների անմիջական և միջնորդավորված ներգրավվածության ապահովումը:<br>Չնայած վերջին տարիներին արձանագրված որոշակի առաջընթացին՝ դեռևս նկատվում է երիտասարդների պասսիվություն երկրի հասարակական-քաղաքական գործընթացներին մասնակցության, նրանց տեղեկացվածության և մի շարք այլ գործընթացների առումով:<br>ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության երիտասարդական պետական քաղաքականության շրջանակներում 2010 թվականից գործող առցանց դրամաշնորհային համակարգի նպատակն է երիտասարդական հասարակական կազմակերպությունների նախաձեռնությունների իրականացմանն աջակցելը և երիտասարդական քաղաքականության իրականացման բոլոր փուլերում նրանց մասնակցությունը խթանելը: Առցանց դրամաշնորհային համակարգի գործարկման 5 տարվա ընթացքում ի հայտ եկած բազմաթիվ խնդիրներին լուծում տալու նպատակով անհրաժեշտություն է առաջացել արդիականացնելու առցանց դրամաշնորհային համակարգը՝ տեխնիկական և բովանդակային առումներով: Կատարվող փոփոխությունները կբարձրացնեն առցանց դրամաշնորհային համակարգի թափանցիկությունը և գործունեության արդյունավետությունը: |

| | |
|---|---|
| | 2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հասարակական կյանքի բոլոր ոլորտներում երիտասարդության մասնակցության մակարդակի, երիտասարդական քաղաքականության մշակման, իրականացման գործընթացների արդյունավետության բարձրացում, երիտասարդական հասարակական կազմակերպությունների գործունեության խթանում:<br>ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության երիտասարդական պետական քաղաքականության շրջանակներում գործող առցանց դրամաշնորհային համակարգում գրանցված փորձագետների ու հասարակական կազմակերպությունների վերապատրաստում և կարողությունների զարգացում: |
| 34. | **Հայաստանի Հանրապետությունում մանկապատանեկան սպորտի զարգացման խթանման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի նպատակը Հայաստանի Հանրապետությունում մանկապատանեկան սպորտի հիմնախնդիրների որոշակիորեն լուծումն է, այդ թվում՝ մանկապատանեկան մարզադպրոցներում աշխատանքի որակի, մարզական հերթափոխի պատրաստման համար անհրաժեշտ պայմանների բարելավումը, մանկապատանեկան սպորտի ոլորտի իրավական և մեթոդական դաշտի կատարելագործումը, նյութատեխնիկական բազայի բարելավումը, վերապատրաստված մարզիչ-մանկավարժներով համալրումը և այլն:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Մանկապատանեկան սպորտի հիմնախնդիրների որոշակիորեն լուծումները կնպաստեն Հայաստանի Հանրապետությունում մանկապատանեկան սպորտի ոլորտի զարգացմանը: |
| 35. | **«Հայկական ազգային կոխ» ըմբշամարտ» մարզաձևի զարգացման խթանման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Հայ ազգի մարզական և մշակութային ավանդության ու ժառանգության պահպանում, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացում, ԱՊՀ անդամ պետությունների ֆիզիկական կուլտուրայի և սպորտի խորհրդի Մինչև 2020 թ. անկախ պետությունների համագործակցությունում ազգային մարզաձևերի աջակցության և զարգացման ծրագրի դրույթների կատարում:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հայ ազգի մարզական և մշակութային ժառանգության պահպանում, «Հայկական ազգային կոխ» ըմբշամարտ» մարզաձևի պահպանում, զարգացում և տարածում Հայաստանի Հանրապետությունում, Արցախում և սփյուռքի հայկական համայնքներում: |
| **Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարություն** | |
| 36. | **Հայրենիք վերադարձող սփյուռքահայերի, այդ թվում՝ սիրիահայերի, հասարակությանն ինտեգրման գործընթացի և կառուցակարգերի կատարելագործման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Տարբեր երկրներից բազմաթիվ սփյուռքահայեր շարունակում են տեղափոխվել Հայաստան, հետևաբար, Հայաստանում սփյուռքահայերի ինտեգրման տարաբնույթ ծրագրերի մշակումն ու իրականացումը հնարավորություն է տալու նրանց ինքնադրսևորման նպաստավոր պայմաններ |

| | |
|---|---|
| | ստեղծելու: Նախատեսվում է, հաշվի առնելով Հայաստան ժամանած սփյուռքահայերի պահանջներն ու կարիքները, նրանց ինտեգրումը դյուրացնող՝ նախորդ տարիներին ընդունված իրավական ակտերի համաձայն կազմակերպել աջակցություն, իրականացնել ծրագրեր, միջոցառումներ՝ սոցիալական, իրավական, կրթական խնդիրների լուծման նպատակով:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հայաստանում սփյուռքահայերի ինտեգրման ծրագրերի իրականացման արդյունքում կմշակվեն ու կիրականացվեն սփյուռքահայերի, մասնավորապես, սիրիահայերի կրթական, մշակութային ինտեգրմանը նպաստող բազմաբնույթ միջոցառումներ, անհրաժեշտ աջակցություն կցուցաբերվի սիրիահայ դպրոցականների և ուսանողների կրթական գործընթացի կազմակերպմանը, մասնավորապես, ուսման վարձավճարների փոխհատուցմանը: Ակնկալվում է նաև խրախուսել Հայաստան տեղափոխված սփյուռքահայերի ծրագրային նախաձեռնությունները, օժանդակել Հայաստանում գործող սփյուռքահայերի հասարակական միավորումներին, սփյուռքահայերի հիմնախնդիրներով զբաղվող կառույցների առնվազն 3 միջոցառման կազմակերպմանը, լեզվական հարցերի կարգավորմանը:<br>Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է՝<br>1) մասնակցություն սփյուռքահայերի ինտեգրման, կրթական, մշակութային խնդիրների լուծմանը նպաստող ծրագրերի մշակմանը և իրականացմանը (արևելահայերենի և ռուսաց լեզվի դասընթացների կազմակերպում՝ առնվազն 30 անձի համար):<br>«Մշակութային միջոցառումների իրականացում» ծրագրի շրջանակներում իրականացվող Սփյուռքահայերի ինտեգրման ծրագիրը ֆինանսավորվում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին (ընդամենը 11000.0 հազ. դրամ).<br>2) աջակցություն սիրիահայ ուսանողների կրթական խնդիրների լուծմանը:<br>Սիրիահայ ուսանողների կրթական խնդիրների լուծմանն ուղղված աջակցությունը (372 ուսանողի համար) ֆինանսավորվում է ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացվող միջոցների հաշվին.<br>3) սիրիահայերի հիմնախնդիրներով զբաղվող կառույցների առնվազն 3 միջոցառմանն օժանդակություն.<br>4) աջակցություն Հայաստանում գործող սփյուռքահայերի հասարակական միավորումներին (3 կառույցի): |
| 37. | **Այլ պետություններում հայ երիտասարդության շրջանում հայոց լեզվի իմացության մակարդակի բարձրացմանը նպաստելու վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Սփյուռքի հայկական համայնքներում հայապահպանությունը շարունակում է մնալ գերխնդիր: Այսօր աշխարհասփյուռ հայության համար վտանգված է ազգային նկարագրի, մայրենիի իմացությունը, ավանդույթների, սովորությունների, հայկական մշակութային արժեքների պահպանումը: Ինքնության կորուստն սկսվում է լեզվի մոռացությունից: Մայրենի լեզվով չխոսելը, չկարդալը, չստեղծագործելը, չմտածելը հայեցի լեզվական մտածողության կորուստ է: Լեզուն է ազգային ինքնության պահպանման հիմքը, ազգային գոյատևման գլխավոր պատվարը: Սփյուռքի որոշ հատվածներում լեզվամշակութային ինքնության աստիճանական կորուստն այսօր արդեն ուղղակիորեն սպառնալիք է ստեղծում նրա լինելիության համար. համայնքներում |

| | |
|---|---|
| | աստիճանաբար պակասում է հայերեն խոսող հայերի թիվը, իսկ նրանց մի ստվար մասն ընդհանրապես չի տիրապետում մայրենիին: Գերակա խնդրի իրականացումը, որպես համալիր ծրագիր, նպաստելու է սփյուռքի հայկական համայնքներում, հատկապես երիտասարդության շրջանում մայրենի լեզվի տարածմանը, լեզվական վիճակի բարելավմանը, սփյուռքում հայերենի իմացության մակարդակի բարձրացմանը, հայոց լեզվի զարգացմանը, խոսելու, օտար միջավայրում և այլ լեզվամշակութային ազդեցությունների պայմաններում հայոց լեզվի գործածության, հաղորդակցության հնարավորությունների շրջանակների ընդլայնմանը՝ օգտագործելով հայրենիքում սփյուռքի համար ստեղծված դասագրքերը, ուսումնական և օժանդակ նյութերը, այդ թվում՝ էլեկտրոնային նյութերը, հեռավար ուսուցման ժամանակակից միջոցներն ու աղբյուրները:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է՝<br>1) մինչև 1100 սփյուռքահայ պատանիների և աղջիկների երկշաբաթյա այցելություն Հայաստան՝<br>ա. մայրենի լեզվի և հայրենագիտության 10-օրյա դասընթացի և 6-օրյա ճանաչողական շրջայցերի կազմակերպում,<br>բ. 13-18 տարեկան սփյուռքահայ և հայաստանցի մինչև 1300 երիտասարդների 5-օրյա հանգստի կազմակերպում «Արի տուն» ճամբարում, մայրենիով հաղորդակցվելու հնարավորությունների ստեղծում:<br>«Արի տուն» ծրագիրը ֆինանսավորվում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին (ընդամենը 100000.0 հազ. դրամ).<br>2) «Սփյուռք» ամառային դպրոց» ծրագրի շրջանակներում՝<br>ա. առնվազն 115 սփյուռքահայ երիտասարդի համար հայոց լեզվի (արևմտահայերենի և արևելահայերենի) արագացված դասընթացների կազմակերպում՝ 4 շաբաթ տևողությամբ,<br>բ. առնվազն 30 երիտասարդ առաջնորդների ամառային դասընթացի կազմակերպում՝ 2 շաբաթ տևողությամբ,<br>գ. աջակցություն սփյուռքահայ երիտասարդությանը՝ մայրենիի ուսուցման համացանցային հեռավար ծրագրերը համայնքներում տարածելու միջոցով:<br>«Մշակութային միջոցառումների իրականացում» ծրագրի շրջանակներում իրականացվող «Սփյուռք» ամառային դպրոցի կազմակերպում» միջոցառումը ֆինանսավորվում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին (ընդամենը 120000.0 հազ. դրամ, որից 58158.5 հազ. դրամը հատկացվում է սփյուռքահայ երիտասարդի համար հայոց լեզվի (արևմտահայերենի և արևելահայերենի) արագացված դասընթացների կազմակերպմանը, 7113.0 հազ. դրամը՝ երիտասարդ առաջնորդների ամառային դասընթացի կազմակերպմանը): |
| 38. | **Համայնքներում կրթական և մշակութային կյանքի զարգացմանն ու աշխուժացմանը նպաստելու վերաբերյալ,**<br>**այդ թվում՝**<br>**- Հայաստանի Հանրապետության անկախության 25-ամյակին նվիրված ծրագրերի իրականացում,**<br>**- «Սփյուռք» ամառային դպրոց» ծրագրի ընդլայնում,**<br>**- ՀՀ տնտեսության մեջ ներդրումային ծրագրերի մասին սփյուռքի տեղեկատվության մակարդակի բարձրացում** |

| | |
|---|---|
| | 1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Սփյուռքահայության ազգային ինքնության թուլացումը, լեզվամշակութային ուծացումն իրողություն է և դարձել է Հայաստանի ու հայ ժողովրդի համար գլխավոր մարտահրավերներից, իսկ դրա դեմ պայքարը Հայաստան-սփյուռք գործակցության զարգացման առաջնահերթություններից մեկն է: Սփյուռքի հայապահպանությունն ամենից առաջ պահանջում է լեզվի պահպանում, հայեցի դաստիարակություն, ազգային ինքնության գիտակցման ձևավորում, երիտասարդների շրջանում հայկական հոգևոր-մշակութային արժեքների տարածում, ազգային ավանդույթների և սովորույթների, ազգային որակների պահպանում: Համայնքների գործունեությունը հիմնականում ուղղված է այս խնդիրների լուծմանը, սակայն, առանց հայրենիքի աջակցության, համայնքների կրթական, մշակութային կյանքի զարգացման, հայ ինքնության արմատներին մոտ պահելու, հայապահպանության գործը չի կարող հաջողել:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Համայնքների կրթական խնդիրներին աջակցություն՝<br>1) հայոց լեզվի, հայագիտական առարկաների առնվազն 60 ուսուցչի վերապատրաստում՝ «Սփյուռք» ամառային դպրոց» ծրագրի շրջանակներում.<br>2) հայոց լեզվի և հայագիտական առարկաների առնվազն 50 ուսուցչի վերապատրաստում սփյուռքում.<br>3) «Մայրենի լեզվի ուսուցման խնդիրները Ռուսաստանի Դաշնության հայ համայնքներում» խորագրով հայոց լեզվի ուսուցիչների տարածաշրջանային գիտագործնական եռօրյա համաժողովի կազմակերպում (Ռուսաստանի Դաշնությունում).<br>4) սփյուռքի մեկօրյա դպրոցներում հայոց լեզվի դասավանդման նոր մեթոդների փորձարկում Ռուսաստանի Դաշնության և ԱՊՀ երկրների հայ համայնքներում.<br>5) սփյուռքի տարածաշրջանների առանձնահատկություններին համապատասխան, ինչպես նաև լեզուների հիմքով դասագրքերի, ուսումնաօժանդակ մեթոդական նյութերի, արագացված ուսուցման ձեռնարկների, զրուցարանների ձեռքբերում և տրամադրում հայկական կրթօջախներին.<br>6) հեռուստադպրոցի՝ մինչև 40 հաղորդման կազմակերպում.<br>7) հայկական վիրտուալ համալսարանի խմբերի անհատ ունկնդիրների ավելացում՝ մինչև 50 անձ.<br>8) տարբեր դպրոցների (մեկօրյա, ամենօրյա՝ արևմտահայերեն, արևելահայերեն) հայոց լեզվի ծրագրերի վերանայում և օրինակելի ծրագրերի առաջարկում՝ կոնկրետ համայնքներում.<br>9) արևելահայերեն-արևմտահայերեն փոխվերծանող ծրագրի զարգացում և սփյուռքահայ այցելուների շրջանակների ընդլայնում (առնվազն 5000 բառ).<br>10) «Քույր դպրոցներ» ծրագրով համագործակցության հաստատում Հայաստանի և սփյուռքի առնվազն 20 դպրոցների միջև:<br>«Մշակութային միջոցառումների իրականացում» ծրագրի շրջանակներում իրականացվող «Սփյուռք» ամառային դպրոցի կազմակերպում (ընդամենը 120000.0 հազ. դրամ, որից 32468.0 հազ. դրամը հատկացվում է հայոց լեզվի, հայագիտական առարկաների ուսուցիչների վերապատրաստմանը), կրթամշակութային աջակցություն հայ համայնքներին (ընդամենը 16000.0 հազ. դրամ, որից 1296.1 հազ. դրամը հատկացվում է հայոց լեզվի և հայագիտական առարկաների ուսուցիչների վերապատրաստ- |

| | |
|---|---|
| | մանը սփյուռքում (Հյուսիսային Ամերիկայում), Հայաստանի Հանրապետությունում համահայկական խորհրդաժողովների անցկացում՝ «Մայրենի լեզվի ուսուցման խնդիրները» խորագրով հայոց լեզվի ուսուցիչների տարածաշրջանային գիտագործնական եռօրյա համաժողով (Դոնի Ռոստովում 6000.0 հազ. դրամ) և Եվրասիական տնտեսական միության երկրների հայ համայնքների կրթամշակութային զարգացմանն աջակցություն (ընդամենը 26000.0 հազ. դրամ, որից 2000.0 հազ. դրամը հատկացվում է սփյուռքի մեկօրյա դպրոցներում հայոց լեզվի դասավանդման նոր մեթոդների փորձարկմանը՝ Ռուսաստանի Դաշնության և ԱՊՀ երկրների հայ համայնքներում): Միջոցառումը ֆինանսավորվում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին, սփյուռքի հայկական կրթական հաստատություններին ուսումնական գրականության և օժանդակ նյութերի մշակում ու տրամադրում (ընդամենը 100000.0 հազ. դրամ, որից 88500.0 հազ. դրամը հատկացվում է սփյուռքի տարածաշրջանների առանձնահատկություններին համապատասխան դասագրքերի, ուսումնաօժանդակև մեթոդական նյութերի, արագացված ուսուցման ձեռնարկների, զրուցարանների ձեռքբերմանն ու տրամադրմանը հայկական կրթօջախներին), տեղեկատվական և ուսուցողական կայքերի մշակման և սպասարկման ծառայություններ (ընդամենը 33036.0 հազ. դրամ, որից 3000.0 հազ. դրամը հատկացվում է արևելահայերեն-արևմտահայերեն փոխվերծանող ծրագրի զարգացմանը և սփյուռքահայ այցելուների շրջանակների ընդլայնմանը), Հայաստան-սփյուռք գործակցության թեմայով հեռուստահաղորդումների և տեսահոլովակների պատրաստում ու հեռարձակում, ձեռքբերում և բազմացում (ընդամենը 52600.0 հազ. դրամ, որից 2000.0 հազ. դրամը հատկացվում է հեռուստադպրոցի՝ մինչև 40 հաղորդման կազմակերպմանը): Ծրագրերը ֆինանսավորվում են ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին.<br><br>Նպաստում համայնքների մշակութային կյանքի զարգացմանը՝<br>1) Հայաստանի Հանրապետության անկախության 25-ամյակին նվիրված «Իմ Հայաստան» համահայկական փառատոնի կազմակերպում՝<br>սփյուռքի գեղարվեստական խմբերի և անհատ կատարողների մասնակցություն (ազգային երգ, պար, երգչախմբային արվեստ, ասմունք, դուդուկ), առնվազն 600 մասնակից.<br>2) սփյուռքի մշակութային գործիչներին նվիրված միջոցառումների, մեծարման երեկոների կազմակերպում.<br>3) «Մեր մեծերը» ծրագրի իրականացում:<br>«Մշակութային միջոցառումների իրականացում» ծրագրի շրջանակներում իրականացվող՝ Հայաստանի Հանրապետության անկախության 25-ամյակին նվիրված «Իմ Հայաստան» համահայկական փառատոն (ընդամենը 84000.0 հազ. դրամ), «Մեր մեծերը» խորագրով մշակութային միջոցառում (ընդամենը 4000.0 հազ. դրամ), սփյուռքի կառույցների և նշանավոր անհատների ծրագրերի իրականացում Հայաստանում, սփյուռքում (ընդամենը 24298.6 հազ. դրամ): Միջոցառումները ֆինանսավորվում են ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին: |
| **Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն** | |
| 39. | **Առողջապահական համակարգի արդիականացման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ մարզերի առողջապահական համակարգի զարգացումը շարունակում է մնալ որպես գերակա խնդիր: Հիմնանորոգվել և կառուցվել են ՀՀ մարզային բազմաթիվ բժշկական կենտրոններ ու առողջության առաջնային պահպանման հաստատությունների շենքեր: Բժշկական հաստա- |

տությունները նաև հագեցվել են արդի բժշկական սարքավորումներով և անհրաժեշտ կահույքով: Մինչդեռ ՀՀ մարզերում դեռևս առկա են անմխիթար պայմաններում աշխատող՝ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններ, որոնց թե՛ շենքային վիճակը և թե՛ տեխնիկական հագեցվածությունը չեն բավարարում միջազգային նորմերի պահանջները, ինչը բացասաբար է անդրադառնում նաև մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի վրա: Միաժամանակ՝ լուրջ խնդիր է արդիականացված մարզային բժշկական հաստատությունները որակյալ կադրային ներուժով ապահովելը: ՀՀ մարզային առողջապահության համակարգերի զարգացման նպատակը բնակչությանը տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման որակի ու մատչելիության մակարդակի բարձրացումն է:

2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**

Ոլորտի հետագա զարգացման և արդիականացման նպատակով 2016 թվականի ընթացքում նախատեսվում է շարունակել մարզային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների վերանորոգման (կառուցման) և հագեցման աշխատանքների իրականացումը: Մասնավորապես, ՀՀ Արագածոտնի մարզի Բյուրականի, ՀՀ Լոռու մարզի Ուռուտի, ՀՀ Վայոց ձորի մարզի Շատինի, ՀՀ Արարատի մարզի Մխչյանի և Լանջազատի համայնքներում 2015 թ. մեկնարկել էին բժշկական ամբուլատորիաների կառուցման աշխատանքները, և 2016 թ. նախատեսվում է շինարարական աշխատանքների ավարտը:

Հիմնանորոգման աշխատանքներ կիրականացվեն ՀՀ Արարատի մարզի «Արտաշատի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում (130 մահճակալ): Ներկայումս բժշկական կենտրոնի եռահարկ մասնաշենքը գտնվում է անբարեկարգ վիճակում: Կենտրոնում տեղադրված բժշկական սարքավորումները դեռևս խորհրդային տարիների արտադրության են՝ հնամաշ, որոնց մի մասը չի շահագործվում՝ անսարք լինելու պատճառով: Նպատակն է աջակցել Արտաշատի տարածաշրջանի բնակչությանը մատուցվող հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման որակի բարելավմանը:

ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքում նախատեսվում է կառուցել նոր հիվանդանոց (32 մահճակալ): Սևանի հիվանդանոցը տեղակայված է 1970-ական թվականներին կառուցված երկհարկանի և 1985 թվականին կառուցված եռահարկ մասնաշենքերում, որոնցից շահագործվում է միայն եռահարկ մասնաշենքը, որտեղ և տեղակայված են հիվանդանոցային ծառայությունները: Հիմնադրումից ի վեր շինությունը չի ենթարկվել կապիտալ հիմնանորոգման և ներկայումս գտնվում է անմխիթար վիճակում: Նորակառույց հիվանդանոցային մասնաշենքը հնարավորություն կընձեռի էապես բարելավելու մատուցվող բժշկական օգնության ու սպասարկման որակը, արդյունավետությունը և մատչելիությունը բնակչության համար: Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ ՀՀ Գեղարքունիքի մարզն զբոսաշրջային գոտի է, ժամանակակից առողջապահական ենթակառուցվածքները ևս կնպաստեն զբոսաշրջության զարգացմանը:

Մարզային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունները կհագեցվեն բժշկական ու ախտորոշիչ սարքավորումներով, նոր բժշկական ու հիվանդասենյակային կահույքով և այլ անհրաժեշտ պարագաներով:

Կմշակվեն արդիականացված մարզային բժշկական հաստատությունները որակյալ բժշկական կադրերով ապահովելուն ուղղված համալիր միջոցառումների իրականացման վերաբերյալ առաջարկություններ:

Գերակա խնդրի կարգավորման առարկան ՀՀ մարզերում որակյալ, մատչելի, արդի, միջազգային չափանիշներին համապատասխանող առողջապահական համակարգի ստեղծման միջոցով ՀՀ մարզերի համաչափ զարգացումն է:

40.

**Հայաստանի Հանրապետությունում արյունաբանական և ուռուցքաբանական բժշկական օգնության ու սպասարկման որակի բարելավման նպատակով ենթակառուցվածքների ստեղծման վերաբերյալ**

1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**

Արյունաբանական և ուռուցքաբանական հիվանդությունների բուժման արդյունավետության առումով կարևոր նշանակություն ունեն համապատասխան ենթակառուցվածքների ու ժամանակակից սարքավորումների առկայությունը, ինչպես նաև միջազգային չափանիշներին համապատասխանող բուժման մեթոդների կիրառումը: Ներկայումս գործող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների ֆիզիկական վիճակը, առկա ենթակառուցվածքները չեն համապատասխանում արդի պահանջներին, բժշկական սարքավորումները հնամաշ են և կարիք ունեն արդիականացման: Հայաստանում արյունաբանական ոլորտում առայժմ ներդրված չեն բուժման միօրինականացված պրոտոկոլներ և ստանդարտներ:

Վերջին տարիներին ՀՀ բնակչության շրջանում քաղցկեղով և արյունաբանական հիվանդություններով հիվանդացությունը նկատելիորեն աճել է:

2014 թվականին 2005 թվականի համեմատ արձանագրվել է քաղցկեղով հիվանդացության շուրջ 31 % աճ (198.8-277.6-ը՝ 100.000 բնակչի հաշվով):

Օնկոհեմատոլոգիական հիվանդություններով հիվանդացությունը ևս զգալիորեն աճել է: Մասնավորապես, 2003 թ. գրանցվել է 10.8 հիվանդ՝ 100.000 բնակչի հաշվով, 2007 թ.՝ 15.3, 2009 թ.՝ 15.5, 2010 թ.՝ 16.4, իսկ 2013 թ.՝ 16.2 հիվանդ:

Զգալի վատթարացում է նկատվում նաև այլ վիճակագրական տվյալների առումով՝ քաղցկեղի տարածվածությունը վերջին տարիներին աճել է՝ 2004 թ. 0.83%-ից 2014 թ. հասնելով 1.28%-ի, իսկ մահացությունը 4.497 դեպքից(139.9՝ 100.000 բնակչի հաշվով) 2004 թ. աճել է մինչև 5.685 դեպքի (188.63՝ 100.000 բնակչի հաշվով)՝ 2014 թ. մահացության պատճառների մեջ՝ գրավելով երկրորդ տեղը՝ սիրտ-անոթային հիվանդություններից հետո: Ներկայումս ՀՀ-ում ոչ վարակիչ հիվանդությունների պատճառով մահացության տոկոսն ամենաբարձրն է ընդհանուր մահացության կառուցվածքում:

Արյունաբանական և ուռուցքաբանական հիվանդությունների բուժման ոլորտում կարիք կա որակյալ բուժաշխատողների:

2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**

ՀՀ-ում առողջապահական ոլորտի արդիականացման և ոչ վարակիչ հիվանդությունների հետևանքով մահացության մակարդակի նվազեցման նպատակով Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող նոր վարկային ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել արյունաբանական ոլորտի արդիականացման ծրագիր:

Ոչ վարակիչ հիվանդությունների, այդ թվում՝ արյունաբանական հիվանդությունների վաղ հայտնաբերմանը և արդյունավետ բուժմանը անկասկած կարող է նպաստել արդի, միջազգային չափանիշներին համապատասխանող և անհրաժեշտ սարքավորումներով հագեցած համապատասխան կենտրոնի առկայությունը:

Հաշվի առնելով ՀՀ-ում վերջին տարիներին արյունաբանական հիվանդություններով հիվանդացության տարածվածության և մահացության ցուցանիշների զգալի աճը, ինչպես նաև նշված բնագավառներում մատուցվող ծառայությունների արդիականացման անհրաժեշտությունը՝ ՀՀ կառավարությունը նախատեսում է բարելավել արյունաբանական բնագավառում մատուցվող ծառայությունների որակը՝ արյունաբանական կենտրոնի արդիականացման և կենտրոնում ոսկրածուծի փոխպատվաստման նոր բաժանմունքի ստեղծման միջոցով: ՀՀ առողջա-

| | |
|---|---|
| | պահության նախարարության «Պրոֆ. Ռ. Հ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ-ում, այդ թվում՝ նաև ոսկրածուծի փոխպատվաստման ստեղծվող բաժանմունքում աշխատող բժիշկների համար կկազմակերպվեն համապատասխան վերապատրաստման դասընթացներ: |
| 41. | **Հայաստանի Հանրապետության բնակչության ռիսկային խմբերում ոչ վարակիչ հիվանդությունների վաղ հայտնաբերման և վերահսկման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ առողջապահական համակարգի շարունակական զարգացումն ապահովելու, ինչպես նաև հանրապետությունում տարեցտարի ավելացող ոչ վարակիչ հիվանդությունների (ՈՎՀ) կանխարգելման և բուժման արդյունավետության բարձրացման նպատակով մեկնարկել է Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» վարկային ծրագիրը: Ծրագրի նպատակն է բարելավել մոր և մանկան առողջության պահպանման ծառայությունները և առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) օղակում ընտրված ոչ վարակիչ հիվանդությունների վաղ հայտնաբերումը և վերահսկումը, ինչպես նաև ծրագրում ընդգրկված հիվանդանոցներում առողջապահական ծառայությունների որակը և արդյունավետությունը:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի կատարման արդյունքումնախատեսվում է Հայաստանի Հանրապետության բնակչության ռիսկային խմբերում իրականացնել ոչ վարակիչ հիվանդությունների (հիպերտոնիա, շաքարային դիաբետ, արգանդի պարանոցի քաղցկեղ) զանգվածային սքրինինգներ, որոնք ուղղված կլինեն նշված հիվանդությունների վաղ հայտնաբերմանը և վերահսկմանը, ինչպես նաև մահացության նվազեցմանը: Հիպերտոնիայի և շաքարային դիաբետիսքրինինգների մեջ ընդգրկված է բնակչության 35-68 տարիքային խումբը: Արգանդի պարանոցի քաղցկեղի վաղ հայտնաբերման նպատակով ընդգրկված է կանանց 30-60 տարիքային խումբը: |
| 42. | **Առանձին ոլորտներում Հայաստանի Հանրապետության բնակչության առողջապահական կարիքների գնահատման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Պետության կողմից առողջապահության ոլորտում մշակվող և իրականացվող քաղաքականության արդյունավետության կարևոր երաշխիքներից մեկն էլ բնակչության առողջապահական կարիքների վերաբերյալ համապարփակ և ճշգրիտ տվյալների առկայությունն է: Մինչդեռ ՀՀ առողջապահության ոլորտում ինչպես համապարփակ գնահատված և ամբողջական կարիքների, այնպես էլ՝ առանձին ոլորտներում կարիքների գնահատում կատարված չէ: Նկատի ունենալով այն, որ համընդհանուր առողջապահական կարիքների գնահատումը չափազանց ժամանակատար և ռեսուրսատար գործընթաց է, առաջարկվում է այն սկսել իրականացնել ՀՀ բնակչության շրջանում առավել տարածված ոչ վարակիչ հիվանդություններից շաքարային դիաբետի և ուղեղի արյան շրջանառության խանգարման հետևանքով առաջացած սիրտ-անոթային հիվանդությունների մասով՝ նախատեսելով հետագա տարիներին իրականացնել առողջապահական այլ ոլորտների կարիքների գնահատում ևս:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծման արդյունքում ակնկալվում է ունենալ բնակչության առողջապահական կարիքների գնահատման մեթոդաբանություն, որն սկզբնական փուլում նախատեսվում է կիրառել |

| | |
|---|---|
| | շաքարային դիաբետի և ուղեղի արյան շրջանառության խանգարման հետևանքով առաջացած սիրտ-անոթային հիվանդությունների մասով հանրապետության բնակչության (տնային տնտեսությունների) առողջապահական կարիքների գնահատման համար՝ հետագայում այն կիրառելով նաև այլ հիվանդությունների կարիքների գնահատման համար: Նշված հիվանդություններն ընտրվել են՝ հաշվի առնելով հանրապետության բնակչության հիվանդացության և մահացության պատճառներում դրանց զգալի տեսակարար կշիռը: Իրականացված աշխատանքները թույլ կտան առավել արդյունավետ մշակել առողջապահության ոլորտում քաղաքականությունը, տնօրինել ՀՀ պետական բյուջեից հատկացվող ռեսուրսները և մեծացնել դրանց ծախսման արդյունավետությունը: |
| 43. | **Առողջապահության տարբեր ոլորտների բարելավման նպատակով ընդունված և իրականացված ռազմավարությունների ու ծրագրերի արդյունավետության գնահատման վերաբերյալ**<br><br>1. **Գնրակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Վերջին տասնհինգ տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից առողջապահության ոլորտում գերակա համարվող ուղղություններով ընդունվել և իրագործվել են բազմաթիվ ռազմավարություններ ու ծրագրեր: Դրանցով՝ բազմամյա կտրվածքով նախատեսվել են բազմաթիվ միջոցառումներ, որոնք՝ հընթացս, սահմանված ժամկետներում իրականացվել են, սակայն դրանց կատարման արդյունավետության համապարփակ գնահատում չի իրականացվել: Նկատի ունենալով այն, որ առողջապահության ոլորտում ռազմավարությունները և ծրագրերը շարունակական բնույթ ունեն, արդիական են դառնում նոր ծրագրերի ու ռազմավարությունների մշակումը և իրականացումը՝ դրանց արդյունավետության՝ համապատասխան գործիքակազմով իրականացված գնահատման արդյունքների հիման վրա: Այդ նպատակով նախատեսվում է մշակել համապատասխան մեթոդաբանություն, առնվազն չորս ռազմավարության և ծրագրի (ՀՀ կառավարության 2007 թվականի հուլիսի 26-ի «Վերարտադրողական առողջության բարելավման ազգային ռազմավարությունը, ծրագիրն ու 2007-2015 թթ. միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին» N 29 արձանագրային որոշում, ՀՀ կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 10-ի «Երեխաների և դեռահասների առողջության ու զարգացման ազգային ռազմավարությանը և դրա ներդրման գործողությունների ծրագրին հավանություն տալու մասին» N 37 արձանագրային որոշում, ՀՀ կառավարության 2013 թվականի մայիսի 23-ի «Համընդհանուր լաբորատոր ցանցի ստեղծման ռազմավարական ծրագրին և 2013-2014 թվականների միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» N 20 արձանագրային որոշում, Սոցիալական կախվածություն և հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների բժշկական օգնության 2015 թվականի պետական նպատակային ծրագրերում ընդգրկված «Սրտի անհետաձգելի վիրահատության ծառայություններ» ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի «Առողջապահություն» բաժնի ծրագիր) արդյունավետությունը գնահատել և գնահատման արդյունքների հիման վրա որոշել նույն ոլորտներում նոր ռազմավարությունների ու ծրագրերի ընդունման կամ շարունակման անհրաժեշտությունը:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի իրականացման արդյունքում ակնկալվում է ՀՀ կառավարության կողմից նախկինում ընդունված և իրագործված ռազմավարությունների ու ծրագրերի գնահատման արդյունքներով մշակել միևնույն ոլորտում հաջորդ շրջափուլի համար նախատեսվող ռազմավարություններ և ծրագրեր, ինչի արդյունքում առաջնահերթությունների որոշմամբ առավել թիրախային ու հասցեական կդառնան ոլորտային քաղաքականության իրականացումը, առկա ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործումը: |

| | |
|---|---|
| | **Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն** |
| 44. | **Նախադպրոցական կրթության մատչելիության բարձրացման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի անհրաժեշտությունը պայմանավորված է պետական քաղաքականության նպատակով՝ ապահովել ավագ նախադպրոցական տարիքի երեխաների (հատկապես՝ սոցիալապես անապահով) համընդհանուր կրթությունը:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Շուրջ 30 նախակրթարանների հիմնում՝ առնվազն 600 երեխաների ընդգրկմամբ |
| 45. | **Հանրակրթության որակի և արդյունավետության բարձրացման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի անհրաժեշտությունը պայմանավորված է հանրակրթության որակի՝ միջազգային ընդունված չափանիշներին համապատասխանեցմամբ՝ ապահովելով հասարակության և գործարար միջավայրի բավարարվածությունը մատուցվող կրթական ծառայություններից՝ միևնույն ժամանակ պահպանելով և սերունդներին փոխանցելով ազգային արժեքները, ինչպես նաև ազգային փոքրամասնությունների դպրոցահասակ երեխաների՝ որակյալ հիմնական կրթություն ստանալու հնարավորությունների ընդլայնմամբ:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>- 12 ավագ դպրոցների հիմնանորոգման մեկնարկ,<br>- կրթության գերազանցության ազգային ծրագրի ներդնում,<br>- «Ազգային երգ ու պար» առարկայի ներդնում ՀՀ Շիրակի մարզի 163, ՀՀ Արմավիրի մարզի 118, Երևանի 100 ուսումնական հաստատությունների 5-րդ դասարաններում,<br>- «Տեղեկատվական տեխնոլոգիաներ», «Հեռահաղորդակցության հիմունքներ» և «Միկրոէլեկտրոնիկա» առարկաների ներդրում 10 ավագ դպրոցներում,<br>- ազգային փոքրամասնությունների դպրոցների համար 4 անուն դասագրքերի վերահրատարակում (եզդիերեն),<br>- հանրակրթական դպրոցների շուրջ 20 եզդիերենի և շուրջ 16 քրդերենի ուսուցիչների վերապատրաստում: |
| 46. | **Հայաստանի Հանրապետության նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության համակարգի զարգացման ու եվրոպական մասնագիտական կրթական տարածքին ինտեգրման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումներն ուղղված են ոլորտի զարգացմանը, կրթության որակի շարունակական բարելավմանն ու ապահովմանը, քաղաքացիների՝ կրթություն ստանալու համար հավասար պայմանների և իրավունքների ապահովմանը, ինչպես նաև կառավարման համակարգի արդյունավետության բարձրացմանը: Համակարգիարդյունավետ գործառության, առավել ևս անխոչընդոտ զարգացման ապահովման համար անհրաժեշտ է կառավարման համարժեք համակարգի առկայություն: |

| | |
|---|---|
| | 2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>ՄԿՈՒ-ի համակարգում կառավարման արդյունավետության բարձրացումը կնպաստի կառավարման թափանցիկության, հրապարակայնության և որակի ապահովմանը, արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների տնօրենների, փոխտնօրենների ու ադմինիստրատիվ օղակների աշխատողների կառավարչական ունակությունների բարելավմանը, կարողությունների հզորացմանը և հմտությունների կատարելագործմանը: |
| 47. | **Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության արդյունավետության՝ Բոլոնիայի գործընթացի սկզբունքների իրագործմամբ բարձրացման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ բարձրագույն կրթական համակարգը Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի (ԵԲԿՏ) ինտեգրմամբ և ճանաչելիության ապահովմամբ: ԵԲԿՏ-ում առանձնահատուկ կարևորություն է տրվում ուսանողակենտրոն ուսուցման խթանմանը, բուհերի կառավարման և ակադեմիական գործընթացներում ուսանողների մասնակցության բարձրացմանը: Ուստի, Հայաստանի բարձրագույն կրթության ոլորտում այս ուղղությամբ աշխատանքների տևականությունը, համադրելիության աստիճանի բարձրացումը դեռևս ոլորտի օրակարգային հարցեր են, որոնց լուծմանն էլ միտված են գերակա խնդիրները:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Բարձրագույն կրթությունը բոլոր մակարդակներում պետք է հիմնված լինի ժամանակակից հետազոտությունների վրա՝ դրանով իսկ խթանելով նորարարությունը և ստեղծագործական միտքը հասարակության մեջ: Կարևորելով բարձրագույն կրթության նորարարությունը խթանելու ներուժը՝ «Կրթության բարելավման ծրագիր» վարկային համաձայնագրի շրջանակներում նախատեսվում է առնվազն 4 բարձրագույն ուսումնական հաստատությունում նորարարական ծրագրերի իրականացում:<br>Վերջին տարիներին բարձրագույն ուսումնական հաստատությունները ձեռք են բերել ավելի մեծ ինքնավարություն՝ հասարակության կարիքներին արձագանքող և հաշվետու լինելու արագորեն աճող ակնկալիքների հետ միասին: Կարևորվում է պետական ֆինանսավորմամբ հիմնական գերակայությունը՝ երաշխավորելով արդար մուտքը դեպի ինքնավար բարձրագույն ուսումնական հաստատություններ և դրանց հետագա կայուն զարգացման համար հանդիսանալով կարևորագույն գործիք: Բարձրագույն ուսումնական հաստատությունների կազմակերպաիրավական գործող մոդելն ամբողջությամբ հնարավորություն չի ընձեռում բարձրագույն ուսումնական հաստատություններին լինելու ինքնավար՝ միևնույն ժամանակ բարձրացնելու վերջիններիս հաշվետվողական մոդելը: Բոլոնիայի գործընթացի անդամ երկրների բուհերի ներկա կազմակերպական կառուցվածքը, որը բնութագրվում է կառավարությունների, ակադեմիական համայնքի՝ իր ներկայացուցիչ կազմակերպությունների հետ միասին, և այլ գլխավոր շահագրգիռ կողմերի համագործակցությամբ, ամբողջությամբ ներդրված չէ ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում: Այս համատեքստում նախատեսվում է 2016 թվականի ընթացքում շարունակել բարձրագույն ուսումնական հաստատությունների անցումը կազմակերպաիրավական նոր ձևի՝ ընդլայնելով բուհերի ինքնավարությունը:<br>ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրմանը և միջազգայնացմանը, պրոֆեսորադասախոսական կազմի որակավորումներին |

| | |
|---|---|
| | ներկայացվող պահանջների վերանայման, ուսանողների և հիմնական շահակիցների՝ պրոֆեսոր-դասախոսական կազմի ու գործատուների դերի բարձրացման նպատակով կարևորվում է բարձրագույն ուսումնական հաստատությունների հավատարմագրման (ինստիտուցիոնալ, ծրագրային) գործընթացը: Նախատեսվում է բարձրագույն ուսումնական հաստատությունների ինստիտուցիոնալ կամ ծրագրային հավատարմագրում՝ շարունակելով բուհերում որակի բարձացման միջոցառումների իրականացումը: |
| **Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն** | |
| 48. | **Ժամանակակից հայ կերպարվեստի հանրահռչակման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Մշակույթի ոլորտում որպես պետական քաղաքականության ուղղություններ ամրագրվել և տարիների ընթացքում իրականացվել են թիրախային գործողություններ, որոնք են՝<br>- 2011 թվականին՝ *Մշակութային կրթության զարգացմանն ուղղված նպատակային ծրագրերը,*<br>- 2012 թվականին՝ *«Հայ գրատպության 500-ամյակ» ծրագիրը,*<br>- 2013 թվականին՝ *Հայկական գորգերի հանրահռչակման ծրագիրը,*<br>- 2014 թվականին՝ *երգչախմբային արվեստի զարգացման ծրագրերը,*<br>- 2015 թվականին՝ *թատերական արվեստի զարգացման ծրագրերը:*<br>2016 թվականին իրականացվող միջոցառումներն ու գործընթացները նպատակաուղղված կլինեն Հայաստանում և միջազգային ասպարեզում հայ ժամանակակից կերպարվեստի հանրահռչակմանը, ինչպես նաև հայ կերպարվեստի զարգացման ապահովմանը, հայ ժամանակակից անվանի արվեստագետների ստեղծագործական գործունեության վերաարժևորմանը, ստեղծագործողների շրջանում հայ կերպարվեստի հանդեպ հետաքրքրության առաջացմանը և հանրության գեղագիտական ճաշակի բարձրացմանը:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծման արդյունքում ակնկալվում է ապահովել հայ կերպարվեստի հանրահռչակումն արտերկրում՝ ժամանակակից ստեղծագործողների միջազգային ցուցահանդեսներին մասնակցությամբ, Հայաստանում՝ առաջին երևանյան միջազգային բիենալեի անցկացմամբ ու նպատակային ցուցահանդեսների կազմակերպմամբ: Իրականացվող միջոցառումները կնպաստեն ստեղծագործական ներուժի խթանմանը, թանգարանային ֆոնդերի համալրմանը և ժամանակակից հայ նկարիչների ստեղծագործությունների թվայնացմանն ու տեղեկատու շտեմարանի ստեղծմանը: |
| 49. | **Հայ մշակույթի զարգացմանն ուղղված ժամանակակից գործընթացների խթանման վերաբերյալ**<br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի հիմնական նպատակն է հայ մշակույթի և ազգային ինքնության պահպանման, զարգացման, տարածման, հանրահռչակման, նորովի ներկայացման, սերունդներին փոխանցման ապահովումը, ինչպես նաև թանգարանների ցուցադրական տարածքների ընդլայնումն ու արդիականացումը,մշակութային շտեմարանների համալրումը, նոր ցուցադրությունների կազմակերպումը, երաժշտարվեստի, թատերարվեստի, կինոարվեստի ոլորտներում ստեղծագործական և հրատարակչական ծրագրերի իրականացման խթանումը:<br>Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառում, ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան, հուշարձանների պետական հաշվառման գործառույթների իրականացումը, մասնավորապես, դրանց կադաստրի կազմումն ու վարումը: |

| | |
|---|---|
| | **2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծման արդյունքում ակնկալվում է ընդլայնել ժամանակակից գործընթացներում հայ մշակույթի ազդեցության շրջանակները, մասնավորապես, թանգարանների ոլորտում թանգարանային ցուցադրական տարածքների ընդլայնմամբ և արդիականացմամբ վերանորոգված տուն-թանգարանների վերաբացումը (Մարտիրոս Սարյանի, Դերենիկ Դեմիրճյանի, Ջաքար Ջաքարյանի, Համո Սահյանի տուն-թանգարաններ), նոր մշտական ցուցադրությունների կազմակերպումը, արվեստի տարբեր ոլորտներում հայկական մշակութային ժառանգության հանրահռչակումը՝ արտերկրի հեղինակավոր մշակութային հարթակներում միջազգային ցուցահանդեսների կազմակերպմամբ, հրատարակչական ծրագրերի իրականացմամբ, համատեղ կինոարտադրության խթանմամբ, ֆիլմերի թվայնացմամբ, տեղեկատվական շտեմարանների ստեղծմամբ և համալրմամբ:<br>Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանության ու օգտագործման բնագավառում պետական միասնական կադաստրի ստեղծում և վարում՝ համապատասխան տվյալների ձեռքբերման, պահանջվող ձևաչափով (թվային) տվյալների մշակման, նորերի կազմման, դրանց ներդրման ու տրամադրման ապահովմամբ: |
| 50. | **Հայաստանի Հանրապետության անկախության 25-րդ տարեդարձի շրջանակներում ստեղծագործական ծրագրերի իրականացմանն աջակցման վերաբերյալ**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Իրականացվող միջոցառումներն ու գործընթացները նպատակաուղղված կլինեն հասարակության մեջ Հայաստանի Հանրապետության անկախության՝ իբրև քաղաքակրթական գաղափարի արժևորմանը, հայ ժողովրդի պատմականորեն ձևավորված ստեղծագործ առաքելության արարման միակ ուղեգծի նշանավորմանը, 25-ամյա պետության ձեռքբերումների ու նվաճումների լիարժեք բացահայտմանը և իրազեկմանը:<br><br>**2. Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծման արդյունքում Հայաստանի Հանրապետության անկախության 25-րդ տարեդարձին նվիրված ծրագրերը հնարավորություն կընձեռեն մշակույթի միջոցով ի մի բերելու և հանրությանը ներկայացնելու անկախության ժամանակաշրջանի ձեռքբերումներն ու նվաճումները, ինչը կնպաստի անկախության գաղափարի արժևորմանը և մատաղ սերնդի քաղաքացիական, հայրենասիրական դաստիարակությանը: |
| 51. | **Ավանդական մշակույթի արդիականացման վերաբերյալ**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գերակա խնդրի հիմնական նպատակն է ավանդական մշակույթի բնագավառներից մեկի՝ ազգային տարազի վերարտադրման միջոցով ստեղծել նպաստավոր պայմաններ ժամանակակից հագուստի մոդելավորման ու տարածման ոլորտում ավանդական հայկական հագուստի և նրա բաղկացուցիչների կիրառության խթանման համար: Ավանդական տարազը մարդու ազգային, սեռային պատկանելությունը ցույց տվող անձնագիր է, հասարակական նշանակությունը բնութագրող խորհրդանիշ: Այն կայուն հատկանիշներով յուրահատուկ էթնիկական ցուցիչ է, որը, կապված լինելով տվյալ էթնիկական ընդհանրության ծագման, զարգացման, պատմական ճակատագրի, որոշակի բնակլիմայական միջավայրի հետ, արտացոլում է տվյալ էթնոսի մշակութային ինքնատիպությունն ու ազգային խառնվածքի որոշ առանձնահատկություններ: Ժամանակի ընթացքում հայկական ազգային տարազը դուրս է մղվել կիրառությունից, ինչը վտանգի տակ է դրել ազգային խորհրդանշանային, ձեռարվեստի, մասնավորապես, կերպարվեստի տեսակների պահպանումը: Իրականացվող միջոցառումներն ու գործընթացները նպա- |

| | |
|---|---|
| | տականությունը կլինեն հասարակության մեջ ազգային տարազի համընդհանուր, ինչպես նաև հայկական ավանդական հագուստի նորովի ներկայացմանն ու կիրառման ապահովմանը, հագուստի մոդելավորման արդի գործընթացներում ազգային տարազի ներառմանն ու վերաարժևորմանը, երիտասարդ ստեղծագործողների շրջանում հայկական տարազի հանդեպ հետաքրքրության առաջացմանը:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծման արդյունքում հնարավոր կլինի ժամանակակից ստեղծագործողների հայացքն ու գործունեությունը բևեռել ավանդական մշակույթի կորսված կամ կորստի վտանգի տակ գտնվող այնպիսի բնագավառներին, ինչպիսիք են ազգային տարազը և դրան սերտորեն առնչվող ձեռարվեստի, դեկորատիվ կիրառական արվեստի ճյուղերը, մասնավորապես, հայկական տարբեր պատմաազգագրական շրջաններին բնորոշ կարատեսակները, ասեղնագործության, ժանյակի դպրոցները, ավանդական զարդերը: Իրականացվող միջոցառումները կապահովեն ազգային տարազի և դրա բաղադրիչների վերարտադրությունը, նորովի կիրառումը և համընդհանուրը: |
| **Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն** | |
| 52. | **Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանն ուղղված բարեփոխումների իրականացման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Հայաստանի Հանրապետությունը, 2010 թվականին վավերացնելով ՄԱԿ-ի 2006 թ. «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիան, ստանձնել է միջազգային պարտավորություն՝ գործող օրենսդրությունը համապատասխանեցնել կոնվենցիայի դրույթներից բխող պահանջներին, ինչպես նաև ստեղծել հավասար պայմաններ և ապահովել հավասար հնարավորություններ՝ հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման համար: Ելնելով վերոնշյալից՝ ՀՀ կառավարության 2015 թ. օգոստոսի 31-ի նիստի N 40 արձանագրային որոշմամբ 2016 թ. հայտարարվել է հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար հնարավորությունների տարի, և անհրաժեշտ է իրականացնել միջոցառումներ՝ ուղղված հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանը:<br>Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների հիմնահարցերին առնչվող խնդիրները կարգավորվում են «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» 1993 թ. ընդունված ՀՀ օրենքով, որով հիմնականում սահմանվում են հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության սկզբունքները և մոտեցումները: Գործող օրենքում ամրագրված մոտեցումները չեն համապատասխանում հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման միջազգայնորեն ընդունված սկզբունքներին ու մոտեցումներին, մասնավորապես, նշված կոնվենցիայի պահանջներին: «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» ՀՀ օրենքի նախագծի դրույթները հիմնված կլինեն առավելապես սոցիալական ներառման սկզբունքի վրա և կընդգրկեն հասարակական կյանքի գրեթե բոլոր ոլորտները՝ ամրագրելով հավասար հնարավորությունների և պայմանների վերաբերյալ նորմեր:<br>Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանն ուղղված 2016-2021 թթ. համալիր ծրագրի նպատակն է հաշմանդամություն ունեցող անձանց ներառումը հասարակություն, կյանքի բոլոր ոլորտներում նրանց լիարժեք մասնակցության ապահովումը:<br>ՀՀ կառավարության 2014 թ. հունվարի 9-ի N 1 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած՝ Անձի բազմակողմանի գնահատման՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման (այսուհետ՝ ԱՀԿ ՖՄԴ) |

| | |
|---|---|
| | սկզբունքների վրա հիմնված հաշմանդամության սահմանման մոդելի ներդրման հայեցակարգով նախատեսված է հանրապետությունում ներդնել հաշմանդամության սոցիալական մոդելը: Այս ուղղությամբ 2015 թ. ընթացքում մշակվել են հաշմանդամության սահմանման նոր չափորոշիչներ (գործիքներ), որոնց հիմքում ընկած են ԱՀԿ ՖՄԴ-ի սկզբունքները: Մշակված գործիքները երկու փուլով փորձարկվել են, իրականացվել են պրոսպեկտիվ և ռետրոսպեկտիվ փորձարկումներ, որոնց արդյունքում գործիքակազմը պարբերաբար լրամշակվել է: Նախատեսվում է 2016 թ. ևս իրականացնել գործիքների փորձարկում՝ նոր մոտեցմամբ հաշմանդամության գնահատման գործընթացին առնչվող խնդիրները վերհանելու, համապատասխան եզրակացություններ կատարելու և առաջարկություններ ներկայացնելու նպատակով:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվում է հետևյալ արդյունքը՝<br>1) հաշմանդամության բնագավառի օրենսդրության կատարելագործում, մասնավորապես, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» ՀՀ օրենքի և համապատասխան այլ իրավական ակտերի ընդունում.<br>2) հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2016-2021 թթ. համալիր ծրագրի առկայություն, որը ներառում է տարբեր ոլորտներում (առողջապահության, մշակույթի, մարզական, կրթության, զբաղվածության և այլ) հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանն ուղղված՝ կանոնակարգված ուղղություններ ու նախատեսված միջոցառումներ.<br>3) անձին հաշմանդամություն սահմանելու գործընթացում նոր մոտեցումների ամրագրում, մասնավորապես, անձին հաշմանդամության սահմանում առողջական, մասնակցության ու գործունեությանն միջավայրային գործոնների համատեքստում, ԱՀԿ ՖՄԴ-ի հիման վրա մշակված չափորոշիչների հաստատում: |
| 53. | **Ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման գիտելիքահենք գործընթացի ներդրման և համալիր սոցիալական ծառայություններ տրամադրող նոր տարածքային կենտրոնների ստեղծման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարության 2013 թվականի մայիսի 16-ի N 515-Ա որոշմամբ հաստատված և ՀՀ Ազգային ժողովի կողմից հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի համաձայն՝ սոցիալական քաղաքականության ոլորտի հիմնական ուղղություններից է սոցիալապես անապահով անձին (ընտանիքին) որակյալ և մատչելի, իր կարիքներին համարժեք, ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման ապահովումը՝ սոցիալական աշխատանքի առավել ժամանակակից մեթոդների կիրառման միջոցով:<br>«Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետով սահմանված է, որ սոցիալական աջակցության բնագավառում ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը կազմակերպում է «Սոցիալական աշխատանք» մասնագիտացման, ինչպես նաև սոցիալական աշխատանքի մասնագետների որակավորման բարձրացման դասընթացներ:<br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվում է հետևյալ արդյունքը՝<br>1) սոցիալական համագործակցության ինստիտուցիոնալիզացիայի նպատակով սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների, ՏԻՄ-երի և սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների միջև համագործակցության մեխանիզմներին վերաբերող հանդիպումների, կլոր սեղանների, սեմինարների, ուսուցման դասընթացների կազմակերպում. |

«Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով որպես սոցիալական աջակցության սկզբունք է սահմանվել նաև համագործակցությունը, մասնավորապես, այն հիմնարար նշանակություն ունի ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի գործարկման համար: Սոցիալական համագործակցության ապահովման համար օրենքի 34-րդ, 35-րդ և 36-րդ հոդվածներով սահմանվում են համագործակցության հիմնական դրույթները:

ՀՀ կառավարության 2015 թ. օգոստոսի 31-ի նիստում ընդունվել է «Սոցիալական համագործակցության ռազմավարական ուղղություններին և կազմակերպման ձևերին, ինչպես նաև սոցիալական համագործակցության ապահովմանն ուղղված՝ իրականացվելիք գործողությունների ցանկին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշումը, որով նախանշվում են սոցիալական համագործակցության ամբողջացված շրջանակը, մասնակիցները, հնարավոր ձևերը, դրանց կիրառման հնարավորությունները:

Հանդիպումների, կլոր սեղանների, սեմինարների, ուսուցման դասընթացների կազմակերպումը հնարավորություն կտա բարձրացնելու սոցիալական աշխատողների մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները սոցիալական համագործակցության մեխանիզմների կիրառման վերաբերյալ, որն էլ կհանգեցնի ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման արդյունավետության բարձրացմանը.

2) սոցիալական աշխատողների կատարելագործում (մասնագիտացում), «Սոցիալական աշխատանք» մասնագիտացման որակավորման բարձրացման դասընթացների կազմակերպում.

«Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված է, որ լիազորված պետական մարմնի աշխատակազմում չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմիններում, ինչպես նաև այդ օրենքի 13-րդ հոդվածով նախատեսված կազմակերպություններում «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև 2017 թ. հունվարի 1-ը ընկած ժամանակահատվածում՝ աշխատանքի ընդունված սոցիալական աշխատանքի մասնագետները նույն օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերով սահմանված «Սոցիալական աշխատանք» մասնագիտության հատուկ դասընթացները պետք է ավարտեն աշխատանքի ընդունվելուց հետո՝ առավելագույնը 12 ամսվա ընթացքում:

Նախատեսվում է վերապատրաստել սոցիալական աշխատողների և տրամադրել անհրաժեշտ հավաստագրեր.

3) սոցիալական աշխատողների ռեգիստրի ձևավորում.

Սոցիալական աշխատանքի ինստիտուտի կայացման գործում կարևորվում է սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմիններում, ինչպես նաև այլ կազմակերպություններում սոցիալական աշխատողների ռեգիստրի ձևավորումը, որում նախատեսվում է ներառել տվյալներ կադրային ռեսուրսների, սոցիալական աշխատողների ստաժի, մասնագիտական կրթության, զբաղեցրած պաշտոնի, որակավորման վկայականների (հավաստագրերի) առկայության և այլնի մասին: Ձևավորվող ռեգիստրը հնարավորություն կտա գնահատել սոցիալական աշխատողների համար վերապատրաստման անհրաժեշտ կարիքները, ժամկետները, պարբերականությունը և այլն.

4) համալիր սոցիալական ծառայություններ տրամադրող ևս 20 տարածքային կենտրոնների գործարկման պայմանների ապահովում.

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող սոցիալական պաշտպանության վարչարարության բարելավումների ծրագրի շրջանակներում համալիր սոցիալական ծառայությունների տրամադրման համար բավարար պայմաններ ստեղծելու նպատակով շարունակվելու են համապատասխան շենք-շինությունների վերանորոգման, տեխնիկապես վերազինման աշխատանքները:

| | |
|---|---|
| 54. | **Երեխաների խնամքի տրամադրման այլընտրանքային սոցիալական ծառայությունների զարգացման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Երեխաների խնամքի տրամադրման այլընտրանքային սոցիալական ծառայությունների ներդրման գործընթացը պայմանավորված է ընտանիքներում երեխաների ապրելու իրավունքի ապահովման, այլընտրանքային ծառայությունների ցանցի զարգացման, երեխաներին հասարակություն ներառելու անհրաժեշտությամբ:<br>Երեխայի պաշտպանության ոլորտի խնդիրներն են կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի սոցիալական պաշտպանության երաշխիքների ապահովումը, երեխայի և նրա ընտանիքի կարիքների բավարարումը, այլընտրանքայինծառայությունների ցանցի զարգացումը, երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի ապահովումը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ երեխայի խնամքն ընտանեկանին առավել մոտ պայմաններում կազմակերպելը:<br>Առկա խնդիրների լուծման նպատակով նախատեսվում է երեխաների խնամքի այլընտրանքային սոցիալական ծառայությունների համակարգի ներդրում և զարգացում՝ մասնավորապես, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների (մանկատուն և երեխաների խնամքի գիշերօթիկ հաստատություն) վերակազմակերպման միջոցով:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Կքարտեզագրվեն Հայաստանի Հանրապետությունում երեխաների խնամքի այլընտրանքային ծառայությունները, և կարիքները կգնահատվեն, որի հիման վրա կմշակվեն երեխաների խնամքի այլընտրանքային ծառայությունների զարգացման ծրագիրն ու ժամանակացույցը:<br>Ոլորտում իրականացվող բարեփոխումներին համահունչ կմշակվեն բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների (մանկատուն և երեխաների խնամքի գիշերօթիկ հաստատություն) վերակազմակերպման վերաբերյալ իրավական ակտերը:<br>Կմշակվեն հաստատությունների աշխատողների վերապատրաստման մոդուլները, դրան համապատասխան կիրականացվեն վերապատրաստման ու վերաորակավորման միջոցառումներ: |
| | **Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն** |
| 55. | **Հայաստանի Հանրապետության քրեակատարողական հիմնարկներում բժշկական ծառայությունների արդիականացման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Հայաստանի Հանրապետության քրեակատարողական հիմնարկներում բժշկական ծառայությունների արդիականացման նպատակն է բարելավել օրենսդրական հիմքերը և բուժօգնության տրամադրման ներկայիս մոդելը: Ոլորտի առաջնային խնդիրներից է քրեակատարողական հիմնարկների բուժմասերի նյութատեխնիկական պայմանների բարելավումը: Համակարգի արդիականացման շրջանակը պետք է ներառի նաև քրեակատարողական հիմնարկների բժշկական անձնակազմի մասնագիտական գիտելիքների, ինչպես նաև բժշկական էթիկայի և մարդու իրավունքների հարցերում եվրոպական չափանիշների վերաբերյալ իմացության կատարելագործումը՝ պարբերաբար իրականացվող վերապատրաստման ծրագրերի միջոցով:<br><br>2. **Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Քրեակատարողական հիմնարկներում բժշկական ծառայությունների մատուցմանը վերաբերող օրենսդրության արդիականացում, քրեակատարողական ծառայողների համար մարդու իրավունքների |

| | |
|---|---|
| | և բժշկական էթիկայի վերաբերյալ կրթական ծրագրերի մշակում, 800 քրեակատարողական ծառայողների համար մարդու իրավունքների և բժշկական էթիկայի վերաբերյալ դասընթացների իրականացում, 10 քրեակատարողական հիմնարկի բուժմասերի հագեցում առողջության առաջնային պահպանման ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ սարքավորում-ներով և պարագաներով: |
| **Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն** | |
| 56. | **Հայաստանի Հանրապետության զինված ուժերում «Հրամանատրում՝ առաջադրանքի միջոցով» համակարգի ներդրման վերաբերյալ**<br><br>1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ զինված ուժերի կառավարման համակարգում «Հրամանատրում՝ առաջադրանքի միջոցով» սկզբունքի ներդրման անհրաժեշտությունն առաջացել է ՀՀ պաշտպանության ռազ-մավարական վերանայման շրջանակներում ի հայտ բերված եզրահանգումների արդյունքում: Տեխնիկական ու տեխնոլոգիական առաջընթացը և ռազմական գործում հեղափոխությունն ու նոր տեսակի զենքերի ներդրումը հանգեցրել են զինված պայքարի ձևերի և եղանակների, հետևաբար՝ նաև պատերազմի բնույթի փոփոխմանը: Ժամանակակից սպառազինության, ռազմական տեխնիկայի հնարավորությունների և մեր տարածաշրջանում ձևավորված ուժերի իրական հարաբերակցության պայմաններում առաջ է եկել հավանական հակառակորդի քանակական առավելությունը որակական գերազանցությամբ չեզոքացնելու նպատակ: Այս նպատակին հասնելու ուղիներից է «Խելամիտ պաշտպանությունը», որն արտահայտվելու է ռազմական (մարտական) գործողությունների ձևերի ու եղանակների փոփոխությամբ և թույլ է տալու փոքր, բայց մեծ խնդիրների կատարմանն ունակ ստորաբաժանումներով իրականացնել ապակենտրոնացված ու տարատեղված ռազմական (մարտական) գործողություններ: Նպատակին հասնելու միջոցներից է «Հրամանատրում՝ առաջադրանքի միջոցով» սկզբունքը, որը «Դիտարկում-կողմնորոշում-որոշում-գործողություն» տիրույթում թույլ կտա առաջ անցնել հակառակորդից (վերջինիս ստիպելով ոչ թե գործել, այլ սոսկ արձագանքել) և կկրճատի մարտական խնդիրները կատարելու որոշումների կայացման ժամանակը:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նպատակին հասնելու միջոցներից է «Հրամանատրում՝ առաջադրանքի միջոցով» սկզբունքը, որը «Դիտարկում-կողմնորոշում-որոշում-գործողություն» տիրույթում թույլ կտա առաջ անցնել հակառակորդից (վերջինիս ստիպելով ոչ թե գործել, այլ՝ սոսկ արձագանքել) և կկրճատի մարտական խնդիրների կատարման որոշումների ընդունման ժամանակը: Գերակա խնդիրը պետք է իրականացվի 2016-2018 թթ. ժամանակահատվածում՝ դրա կատարմանն ուղղված քայլերի հետևյալ հաջորդականությամբ՝<br>1) պատերազմի (ռազմական և մարտական գործողությունների) վարման առավել արդյու-նավետ ձևերի ու եղանակների մշակում: Կատարման ժամկետը՝ մինչև 2016 թվականի վերջը.<br>2) «Հրամանատրում՝ առաջադրանքի միջոցով» սկզբունքին համահունչ՝ ՀՀ զինված ուժերի կառավարման համակարգում կառավարման մարմինների լիազորությունների և գործառույթ-ների շրջանակների որոշում: Կատարման ժամկետը՝ մինչև 2017 թվականի վերջը.<br>3) «Հրամանատրում՝ առաջադրանքի միջոցով» սկզբունքի շրջանակներում անձնակազմի վերապատրաստման համար գործընկեր երկրների ուսումնակրթական կենտրոններում անցկաց-վող դասընթացներին (անհատական պատրաստություն) և զորավարժություններին (հավա- |

| | |
|---|---|
| | քական պատրաստություն) ՀՀ զինված ուժերի ներկայացուցիչների և ստորաբաժանումների մասնակցության հնարավորությունների ստեղծում: Կատարման ժամկետը՝ 2016-2018 թթ.<br>4) ՀՀ զինված ուժերի կառավարման մարմինների, կառավարման կետերի կառուցվածքի և տեխնիկական միջոցներով հագեցվածության վերանայում, համապատասխան նորմատիվ-իրավական և ղեկավար փաստաթղթերում փոփոխությունների ու լրացումների կատարում (ըստ անհրաժեշտության՝ նոր փաստաթղթերի մշակում): Կատարման ժամկետը՝ մինչև 2018 թվականի վերջը: |
| **Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն** | |
| 57. | **Համայնքային ոստիկանության գործունեության ընդլայնման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Համայնքային ոստիկանության գործունեության ընդլայնումը որպես 2016 թվականին ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության կողմից իրականացվելիք գերակա խնդիր ներառելը պայմանավորված է ՀՀ կառավարության 2015 թվականի հուլիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության գործունեության ոլորտում 2015-2014 թվականների բարեփոխումների ծրագիրը և ժամանակացույցը հաստատելու մասին» N 871-Ն որոշման N 2 հավելվածում սույն միջոցառման ընդգրկմամբ և խնդրի կարևորմամբ:<br>Որպես 2016 թվականի գերակա խնդիր ներառելով համայնքային ոստիկանության գործունեության ընդլայնումը Երևան քաղաքում և հանրապետության մարզերում՝ ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանությունը նպատակ ունի մոտ ապագայում շոշափելի ձեռքբերումներով կատարելագործելու համայնքային ոստիկանության գործունեությունը խթանող սոցիալ-իրավական անհրաժեշտ պայմաններն ու նյութատեխնիկական բազան: Մասնավորապես, 2016 թվականի ընթացքում նախատեսվում է ստեղծել համայնքային ոստիկանության ևս 4 նոր հենակետ, ապահովել դրանք անհրաժեշտ գույքով և տեխնիկական միջոցներով և իրականացնել վերապատրաստումներ համայնքային ոստիկանության ծառայողների համար:<br>Սույն գերակա խնդիրը նախատեսվում է իրականացնել ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության համապատասխան արտաբյուջետային միջոցների հաշվին: Լրացուցիչ ֆինանսավորում ՀՀ պետական բյուջեից չի ակնկալվում:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի համակողմանի իրագործման արդյունքում ակնկալվում է համայնքային ոստիկանության նոր հենակետերի ստեղծում՝ տեխնիկական միջոցների ու գույքի ապահովմամբ, և համայնքային ոստիկանության ծառայողների վերապատրաստում: |
| 58. | **Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզում տրանսպորտային միջոցների գրանցման և հաշվառման ստորաբաժանման ենթակառուցվածքների ստեղծման, վարորդական վկայական հատկացնելու գործընթացի արդյունավետությունն ապահովող կազմակերպական միջոցառումների իրականացման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ մարզերում ճանապարհային ոստիկանության կողմից բնակչությանը մատուցվող ծառայությունների որակը բարելավելու համար անհրաժեշտ է ՀՀ մարզերում տեղակայված վարորդական վկայական հատկացնող և տրանսպորտային միջոցների հաշվառում իրականացնող ստորաբաժանումների կողմից ծառայությունը մատուցելու պահին հիմնական վարորդական վկայականի և |

| | |
|---|---|
| | հաշվառման վկայագրի հատկացումը, ինչը պայմանավորված է քաղաքացիներին որակյալ ու պարզեցված ընթացակարգով ծառայություններ մատուցելու անհրաժեշտությամբ:<br>Ներկայումս անհրաժեշտ տեխնիկական միջոցների բացակայության պատճառով ՀՀ մարզերում տեղակայված՝ վարորդական վկայական հատկացնող և տրանսպորտային միջոցների հաշվառում իրականացնող ստորաբաժանումների կողմից հիմնական վարորդական վկայականը և հաշվառման վկայագիրը հատկացվում են ծառայության մատուցումից հետո 5 օրվա ընթացքում՝ այդ ժամանակահատվածի համար հատկացնելով ժամանակավոր վարորդական վկայական կամ հաշվառման վկայագիր: Այսինքն՝ քաղաքացին ստիպված է լինում կրկին այցելել ճանապարհային ոստիկանության ստորաբաժանում և ստանալ հիմնական վարորդական վկայականը կամ հաշվառման վկայագիրը:<br>Որպես 2016 թվականի գերակա խնդիր՝ առաջարկվում է Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզում տեղակայված՝ վարորդական վկայական հատկացնող և տրանսպորտային միջոցների հաշվառում իրականացնող ստորաբաժանման կողմից ծառայության մատուցման պահին հիմնական վարորդական վկայականի և հաշվառման վկայագրի հատկացումը: Մասնավորապես, նախատեսվում է մինչև 2016 թվականի ավարտն իրականացնել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզում հաշվառման-քննական ստորաբաժանման վարչական շենքի ու քննական ավտոդրոմի կառուցման, ինչպես նաև հաշվառման-քննական ստորաբաժանման կողմից տրանսպորտային միջոցների գրանցման և հաշվառման՝ «հոսքագծի» եղանակով իրականացման աշխատանքներ:<br>Սույն գերակա խնդիրը նախատեսվում է իրականացնել ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության համապատասխան արտաբյուջետային միջոցների հաշվին: Լրացուցիչ ֆինանսավորում ՀՀ պետական բյուջեից չի ակնկալվում:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի իրականացումը կնպաստի Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզում ճանապարհային ոստիկանության կողմից բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարելավմանը: |
| 59. | **Հանցագործությունների նախականխման, կանխման և բացահայտման աշխատանքների արդյունավետության՝ տեղեկատվական շտեմարանների օգտագործմամբ բարձրացման վերաբերյալ**<br><br>1. **Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Հանցագործությունների նախականխման, կանխման և բացահայտման աշխատանքների արդյունավետության՝ տեղեկատվական շտեմարանների օգտագործմամբ բարձրացում» գերակա խնդրի իրականացումը պայմանավորված է ՀՀ տարածքում հանցագործությունների և այլ իրավախախտումների առավել արագ ու արդյունավետ բացահայտման անհրաժեշտությամբ:<br>Գերակա խնդիրը ենթադրում է հետևյալ միջոցառումների իրականացումը՝<br>1) ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանությունում օպերատիվ գործունեություն իրականացնող ստորաբաժանումների վարույթում առկա հաշվառման գործերի թվայնացման աշխատանքների իրականացում.<br>2) օպերատիվ-հետախուզական տեղեկատվական շտեմարանի ստեղծում.<br>3) դիմապատկերի միջոցով անձի նույնացման հնարավորության նախատեսում.<br>4) ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանությունում օպերատիվ-տեղեկատվական ստորաբաժանման ստեղծում:<br>ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանությունում օպերատիվ գործունեություն իրականացնող ստորաբաժանումների վարույթում առկա հաշվառման գործերի թվայնացման աշխատանքները, |

| | |
|---|---|
| | դիմապատկերի միջոցով անձի նույնացումը նախատեսվում է իրականացնել ռուսական «Պորտլանդ» ընկերության կողմից առաջարկվող համակարգի միջոցով:<br>Սույն գերակա խնդիրն իրականացվելու է ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության համապատասխան արտաբյուջետային միջոցների հաշվին: Լրացուցիչ ֆինանսավորում ՀՀ պետական բյուջեից չի ակնկալվում:<br><br>2. **Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գերակա խնդրի իրականացման արդյունքում հանցագործությունների և այլ իրավախախտումների բացահայտման ու կանխման աշխատանքները կիրականացվեն առավել արագ և արդյունավետ: |
| **Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն** | |
| 60. | **Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ուրվագծված արտաքին քաղաքական ուղենիշների, տրված հանձնարարականների և Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի կատարման աշխատանքների վերաբերյալ**<br><br>Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ուրվագծված արտաքին քաղաքականության ուղենիշների և տրված հանձնարարականների հիման վրա ՀՀ արտաքին գործերի նախարարության աշխատանքներն ուղղված են արցախյան հիմնախնդրի խաղաղ կարգավորմանը, Հայաստանի արտաքին անվտանգության ռազմաքաղաքական բաղադրիչի ամրապնդմանը, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը, պետության զարգացման համար արտաքին բարենպաստ պայմանների ապահովմանը, երկրի հեղինակության ամրապնդմանը, արտերկրում Հայաստանի Հանրապետության և նրա քաղաքացիների շահերի պաշտպանությանը, միջազգային ասպարեզում Հայաստանի դիրքորոշումները ներկայացնելուն, միջազգային կազմակերպություններում ու գործընթացներում ներգրավվածության խորացմանը, բարեկամ և գործընկեր երկրների հետ համագործակցության առավել ամրապնդմանը:<br><br>Հայաստանի Հանրապետության տնտեսության հզորացման, արտաքին շուկաներում մրցունակության բարձրացման, տնտեսական կառույցների այժմեականացման, Հայաստանի տնտեսական ներուժի բազմապատկման և կայուն զարգացման նպատակով ՀՀ արտաքին գործերի նախարարության աշխատանքներն ուղղված են միջազգային և տարածաշրջանային տնտեսական ու ֆինանսական կառույցների հետ հարաբերությունների զարգացմանը, Հայաստանի էներգետիկ անվտանգության ապահովմանը, հաղորդակցության ուղիների ապաշրջափակմանը, զարգացմանն ու դիվերսիֆիկացմանը, հայրենական արտադրանքի արտահանման համար նոր շուկաների բացահայտմանը և արտաքին ներդրումների խրախուսմանը: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ



Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ